



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1901
1902
1903

84

7-60

ՊԱՏԿԵՐԱԳԱՐԴ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԷՕԺԷՆ ՍԻԻ

ԵՕԹՆ ՄԱՀԱՅՈՒ ՄԵՂՔԵՐ

ԹԱՐԳՄԱՆԻԶ

ՊԵՏՐՈՍ ԱՏՐՈՒՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿԻԶՔ

Յ. ՋԵՆՃԻՐՃԵԱՆ ԵՒ ՆՁԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա.

ԲԱՐԿՈՒԹԻԽՆ

معارف و نظارت جلیله سنک رخصتیه طبع اولنمشدر — ۲ شباط سنه ۹۸ — نومرو ۱۰۷۷

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐ ԶԱՐԴԱՐԵԱՆ

1885

420-127

7

Ե Օ Թ Ն Մ Ա Հ Ա Ց Ո Ւ Մ Ե Ղ Ք Ե Ր



Բ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Խ Ն

ԹԻՉՕՆ Տ՝ԱՆՖԵՐ

Ա.

1801ի բարեկենդանին մէջտեղուանքն, երբ Պօնաբարթ Ֆրանսական Հանրապետութեան առաջին հիւպատոս էր և ժողովուրդն Լիւնէվիլի մէջ կնքուած դաշնագրութեամբ խիստ ուրախ, հետեւեալ տեսարանն տեղի կ'ունենար ամայի տեղ մը, Օրլէան քաղքին կիսաքանդ պատնէշներուն մօտ :

Առտուան ժամը եօթն էր. արեւը ծագելու սկսեր էր. մութ գոյն վերարկուով մարդ մը փողոցը կը պտըտէր. ցուրտը սաստիկ էր և օդը միգապատ. այս շրջագայոյն ատեն ատեն մատներուն մէջ կը փչէր, ոտները գետին կը զարնէր՝ տաքնալու համար, և դէպի մենաւոր ճամբայ մը կը նայէր : Տասը վայրկեան վերջը վերարկուի պլլուած ուրիշ մարդ մը երեւցաւ այդ փողոցին մէջ և շուտով մօտեցաւ առաջնոյն : Այն ատեն երկուքը հետեւեալ խօսակցութիւնն ըրին : «Վախցայ որ ուշ եմ մնացեր, ըսաւ երկրորդը : — Դեռ քաւորդ մը ժամանակ ունինք, յարեց միւսը. սուրերը բերիք : — Ահաւասիկ. ասոնց համար ուշացայ, վասն զի բաւական դժուարութիւն քաշեցի դտնելու : — Այս առտու իվօնը տեսա՞ք : — Ոչ. երեկ իրի-

կուն ըսաւ ինձ թէ ուղղակի հոս պիտի գայ : Վախցաւ որ եթէ այսպէս կանուխ իր աունն երթամ և միասին դուրս ելլենք՝ կինը անհանգիստ կ'ըլլայ ու կասկածի մը կ'երթայ. իրաւունք ալ ունէր : — Բայց, սիրելիս, մինչեւ որ իվօն գայ՝ սա դործը լաւ մը բացատրեցէք ինձ : Գիտէք որ երեկ իրիկուն իվօն ուշ մնացած ըլլալուն՝ հազիւ կրցաւ վեր ի վերոյ պատմել : — Շատ պարզ բան է. անցեալ օր Պ. Լօրան անուն փաստաբան մը դատաստանի ատեն մեր բարեկամին կարծեցեալ կողմնակալութեան վրայ բաց ակնարկութիւն մ'ըրեր է : — Ատ վատութիւն է. իվօն Բլօարէքի պրըթօնական ուղղութիւնն ամէնուն ծանօթ է : — Հարկաւ. բայց մեր բարեկամին ալ բնաւորութեանն անհաւատալի ցասկոտութիւնն գիտէք ա՛. մէկէն ի մէկ աթոռին վրայէն ցատկեր և փատաբանին խօսքն ընդմիջելով՝ գոչեր է. « — Պ. Լօրան, դուք վատ զրպարտչին մէկն էք. ես այս խօսքն իբր դատաւոր չեմ ըսեր ձեզ, այլ իբր պատուաւոր մարդ և « դատաստանէն վերջը նորէն պիտի կրկնեմ : » Մտածեցէք մէկ մը ատենին յուղումը : — Բայց խոստովանելու է թէ ասի դատաւորական ծանրութեան չի վայելեր : « — Լաւ, պարոն, պատասխանեց փատաբանն իվօնի, վերջէն զիրար կը գըտնենք : » Երբ դատը աւարտեցաւ և ատ-

եանը փակուեցաւ , դատաւորք ձեռքերնուն եկածը ըրին այս կռիւր մարելու համար : Բայց մեր բարեկամին երկաթի գըլուխը գիտէ՞ք ա : Լօրան փաստաբանն , որ հաստատամիտ մարդ մ'է , կը պահանջէր որ իվօն ներումն խնդրէ . այն ատեն կարծեցի որ իվօն բարկութենէն պիտի պայթէր : Վերջապէս այս առտուան ժամագրութիւնն որոշուեցաւ և սուր ընտրուեցաւ : — Մեր բարեկամին վշտանալուն իրաւունք կուտամ , բայց կը վախնամ որ այս մենամարտութիւնն իր դատաւորական դիրքին վնասէ : — Ես ալ նոյնպէս , թէև քիչ մ'ալ պատիւ կը բերէ իր կացութեան : Գէշն այն է որ , կ'ըսեն թէ իվօն քանի մ'անգամ իւր ատենին նախագահին հետ ծանր կերպով առեր տուեր է , և նախագահն ալ շատ ուղիղ մարդ մը չէ եղեր : Սա ալ ցաւալի է որ մեր բարեկամին բնաւորութեան ցասկոտութիւնն երկու անգամ պաշտօնատեղին փոխելուն առիթ եղած է : — Անանկ ազնիւ և չգտնուած սիրտ մը : — Այո՛ , բայց տեսա՛ր մի դու անոր անիծած գլուխն ու սատանայական բարկութիւնը , զոր չի կըրնար զսպել : — Եւ այդպիսի բնաւորութեամբ մը ելլել դատաւոր ըլլա՛լ : — Ի՛նչ ընէ . հայրը դատաւոր էր և ուզեց որ ինքն ալ դատաւոր ըլլայ : Իվօն , որ չափազանց կը սիրէր իր հայրը , հնազանդեցաւ : Երբ վերջէն հայրը մեռաւ , ա՛լ արուեստը փոխելու ատենն անցեր էր . ասկից զատ հարուստ չէ և իր դատաւորական ռոճիկովն կ'ապրի կնոջն ու զաւկին հետ : Ասոր համար հարկ է որ իր պաշտօնին մէջ մնայ : — Իրաւ է , բայց կը ցաւիմ վրան : — Բայց , ինձ նայէ՛ , իվօն լաւ սուսերամարտ է , չէ՞ մի : — Շատ լաւ , վասն զի երիտասարդութեանն ատեն մարմնոյ վարժութիւնները շատ կը սիրէր . բայց կը վախնամ որ

բարկութիւնը զինքը չի կուրցնէ և առանց զգուշութեան վտանգին դէմ նետուի : — Աւելի աղէկ կ'ըլլար որ քիչ մը պաղարիւն ըլլար : Էյ ոստին ի՛նչպէս մարդ է : — Լսեր եմ որ բաւական լաւ կը մարտնչի : — Զիս հոս բերող կառքը քսան քայլ անդին թողուցի . կարելի է պէտք կ'ըլլայ : Բարեբախտաբար իվօն մօտերս կը բնակի : — Ո՛հ , Աստուած չ'ընէ որ ձախորդութիւն մը պատահի , իվօնի կինը կը մեռնի : Գիտնայիք թէ ի՛նչպէս կը սիրէ զայն : Այս կինն շնորհաց և քաղցրութեան հրեշտակ մ'է : Իվօն ալ շատ անուշ կը վարուի հետը : Իրարու վրայ կը խենթեանն և եթէ դժբախտութիւն մը պատահի . . . : — Մարդու ձայն մը կը լսէ՞ք : — Այո՛ : Միւսները ըլլալու են : կը ցաւիմ որ իվօն անոնցմէ առաջ չ'եկաւ : — Կ'երեւնայ թէ կնկանը կասկած չտալու համար ձեռք առած զգուշութիւններն զինքը ուշացուցած են : — Հաւանական է , բայց մե՛ղք : »

Քիչ վերջն փողոցին բերանն երեք հոգի երեւցան և մօտեցան , սուքա էին իվօնի ոստին ու երկու վկայներն :

Սուքա քաղաքավարութեամբ եկան առաջիններուն քով և ներումն խնդրեցին ուշանալնուն . որու միւսներն պատասխանեցին թէ՛ ընդհակառակն Պ . Քլօարէք դեռ չ'էր եկած , բայց ուր որ էր կուգար :


Փաստաբանին վկայներէն մին , կարելի եղածին չափ քիչ ժամանակ կորսնցնելու համար , առաջարկեց որ , մինչեւ որ Պ . Քլօարէք գայ , մենամարտութեան տեղն որոշեն . այս առաջարկութիւնն ընդունուեցաւ և ընտրութիւնն հազիւ թէ եղեր էր՝ երբ իվօն երեւցաւ : Ճակտին վրայի քրտինքը և շնչառութեան դժուարութիւնն յայտնի կ'ընէին թէ շատ աճապարանօք եկած էր . մտերմօրէն իր երկու վկայից

ձեռքը սեղմեց և ցած ձայնիւ ըսաւ աւնոնց .

— Շատ նեղութիւն կրեցի առանց կընոջս կասկած տալու գուրս ելլելու համար : Ապա խօսքը իր ոտիսին ուղղելով և

բարկուն հանել . Քլօարէք ալ նոյն բանն ըրաւ , երբ վկայք սուրերը կը չափէին :

Յորչափ կը մօտենար կռուի վայրկեանն , իվօնի բարկութիւնն կ'աւելնար ու կ'եռար . ամբողջ մարմինն բուռն ցնցումներով կը



Երկաթի ձեռք անոր օձիքին բռնելով . . . Երես 9 :

այնպիսի ձայնով մը , զոր կը ջանար խաղաղ երեւցնել , յարեց .

— Ներումն կը խնդրեմ , պարոն , ձեզ սպասցնելուս . բայց հաւատացէ՛ք որ ահամայ էր :

Փաստաբանն բարեւեց և սկսաւ վե-

սարսռար , արիւնն ձեռքերը և դէմքը կը խուժէր , հրացայտ աչուրները քիչ քիչ կը կարմրէին . դէմքը տեսակ մը վայրի գոհունակութիւն կ'արտաշնչէր . երբ վտանգն կը մօտենար՝ նա կարծես հանգիստ շունչ կ'առնէր : Այս արիւնոտ մարդն , այս կը-

բակոտ և ցասկոտ բնաւորութիւնն , որ գրեթէ միշտ կաշկանդուած էր ընկերական պատշաճութիւններով , իր ամբողջ կարողութիւնն կ'ստանար կռուի , վտանգի և բարկութեան ատեն :

Իվօնի անհամբեր եւ բուռն եռանդն այնպէս էր որ , փաստաբանէն շուտ հանուեցաւ , և անոր վրայ պիտի յարձակէր , եթէ իր երկու վկայներն թեւերէն չի բռնէին :

Վերջապէս մենամարտութիւնն սկսաւ :

Վկայից մին գոչեց . « Օ՛ն , պարոնայք : »

Քլօարէք անանկ կատաղութեամբ յարձակեցաւ իր ոսոխին վրայ որ սա , այս շանթանման յարձակումէն շուարելով՝ ընկրկեցաւ եւ կրցածին չափ ինքզինքը պաշտպանեց . բայց երկու վայրկեան վերջը՝ Իվօնի սուրը նորա թեւն ճեղքեց և ակամայ ստիպուեցաւ սուրը թողուլ :

— Բա՛ւ է , պարոններ գոչեցին վկայք՝ մենամարտողաց մին անդէն տեսնելով :

Դժբախտաբար Պրըթօնն այնքան բարկացեր էր որ , չի լսեց այդ « Բա՛ւ է » բռն և ոսոխին դէմ յարձակումն կը կրկնապատկէր , երբ միւսը , որ քաջութեամբ վարուեր էր , տեսնելով որ այն կատաղիին հարուածներուն պիտի ենթարկուի՝ առանց պաշտպանութեան միջոց մ'ունենալու ի ձեռին , ետեւ ցատկեց , շուտ մը դարձաւ ու մէկդի փախաւ :

Կատաղի Պրըթօնն անոր ետեւէն կը վազէր , երբ իր վկայներն անոր վրայ յարձակեցան և զէնքը ձեռքէն առին , երբ փաստաբանին բարեկամներէն մին թաշկինակով մը վիրաւորելոյն թեւը կը կապէր , թէև վէրքը թեթեւ էր :

Քլօարէքի վկայն իր կառքն ընծայեց վիրաւորին , որ ընդունեց զայն , և երկու ոսոխք անկեղծ հաշտութեամբ մը զատուեցան իրարմէ :

— Իվօն , կ'ըսէր ցասկոտ դատաւորին բարեկամներուն մին՝ դէպի քաղքին դուռը երթալով , այդպէս յարձկել կ'ըլլայ՝ անդէն թշնամիի մը վրայ :

— Իրաւ է՛ , սատանայն ներսիդիդ մըտեր էր , սիրելիս , կ'ըսէր միւսը :

— Չէի կրնար հաւատալ որ այդքան շուտ լմնայ , յարեց Իվօն՝ վշտազին հառաչանք մը հանելով :

— Անիծա՛ծ , քու յարձակմանդ նայելով՝ հարկաւ երկար չէր կրնար տեսել :

— Ա՛հ , ինձի ժամ մը կռիւ պէտք էր և կարծեմ անկից վերջը երկար ատեն խաղաղ պիտի մնայի , ըսաւ Քլօարէք : Ամբողջ արիւնս դեռ կ'եռայ , եռանդս զիս կը լափէ : Եւ ես կը կարծէի որ ուղածս պիտի կարենայի ընել :

Իվօն անանկ միամիտ դժկամակութեամբ մ'ըրաւ այս խօսքերը որ , վկայները խընդալնին չի կրցին բռնել :

— Կրո՛ղ , գոչեց բարկացոտ Պրըթօնն զայրացոտ նայուածք մը նետելով երկու խնդացողներուն վրայ :

Ապա , այս ըրածին խպնելով , գլուխը ծռեց և լռեց , մինչդեռ իւր վկայից մին զուարթութեամբ կը յարէր .

— Իվօն , սիրելիս , չ'ելլես մեզի հետ կռուի բռնուիս : Չարժէր , վասն զի երկուքս հազիւ կրնանք տասը վայրկեան դիմանալ :

— Օ՛ն , Քլօարէք , խելքդ գլուխդ բեր , սիրելիս , ըսաւ միւսը : Ընդհակառակն ինքզինքդ բարեբախտ սեպէ՛ որ այս ձախորդ գործն այսպէս լմնցաւ : Դու վիրաւորեալ չ'ես և թշնամւոյդ վէրքն ալ թեթեւ է : Դեռ ի՛նչ կուզես :

— Իրաւունք ունի՛ , վասն զի երեւակայէ՛ անդամ մը մեր յուսահատութիւնը , Իվօն , եթէ այս միջոցին պարտաւորէինք

քեզ տունդ. տանիլ մահամերձ: Կի՛նդ, աղ-
ջիկդ չ'ե՛ս մտածեր:

— Կի՛նս, աղջիկս, գոչեց Քլօարէք սար-
սըռալով. ա՛հ, իրաւունք ունիք:

Եւ աչուրները լեցան:

— Ես խենթին ու կատաղին մէկն եմ,
ըսաւ: Բայց յանցանքն իմս չ'է. գիտէ՛ք
Պրըթօն առածն ինչ կ'ըսէ. «Շատ արիւն
ունեցողն շատ կը գործէ»:

— Ուրեմն ոտքդ մանանխի ջուրը դիր
եւ արիւն առնել տուր. բայց չ'ըլլայ որ
նշտրակի տեղ սուր գործածես և ուրիշ-
ներուն արիւնն վազցնես՝ պատճառ բռնե-
լով թէ քու արիւնդ շատ է, յարեց միւսն
խնդալով:

— Կամ թէ փիլիսոփայից գործերն կար-
դացէ՛ք, սիրելիս, յարեց միւսը, մանա-
ւանդ մտքերնիդ բերէ՛ք որ դատաւոր էք,
այսինքն ծանր ու խաղաղարար մարդ մը:

— Ձեզի համար դիւրին է այդպէս ը-
սելը, յարեց խեղճ Իվօն հառաչելով: Բայց
չ'էք գիտեր թէ ի՛նչ անտանելի բան է
կռնակը դատաւորի պատմութեան մը եւ
երակներուն մէջ չափազանց արիւն ու-
նենալը:

Եւ իւր վկայից մտերմաբար իւր շնոր-
հակալիքն յայտնելէ վերջը՝ Քլօարէք պատ-
րաստուեցաւ իր տունն երթալու:

— Ինձ նայէ՛, Իվօն, ըսաւ բարեկա-
մացը մին՝ զատուելու պահուն, այս իրի-
կուն քու նախագահիդ աներօջը ծպտեալ
պարահանդէսին մէջ կը տեսնուինք, չէ՞
մի: Կ'ըսեն թէ ձեր ատեանն ամբողջ հոն
պիտի ըլլայ: Թշնամուոյդ վէրքը թեթեւ է,
ուրեմն պատճառ մը չ'ունիս այս հան-
դիսին չ'գալու, որ խիստ գեղեցիկ պի-
տի ըլլայ:

— Առջի բերան միտքս չ'երթալ էր,
վասն զի կի՛նս քիչ մը տկար է, յարեց Ի-
վօն. բայց այնքան թախանձեց երթալուս

որ, հաւանեցայ, և քիչ մը պիտի գամ
այդ հանդէսը տեսնելու:

— Այս իրիկուն ուրեմն:

— Այս իրիկուն:

Իվօն տուն վերադարձաւ՝ զգալով որ
կրկին գորովանօք պիտի գրկէր կի՛նն ու
զաւակը:

Դրանը սեմին վրայ սպասուհի մ'եղաւ
դէմն և ըսաւ.

— Պարո՛ն, ձեր սենեկին մէջ մարդ մը
ձեզ կը սպասէ. խիստ ստիպողական գոր-
ծի մը համար է եղեր:

— Լա՛ւ. դուրս ելլելէս ի վեր կի՛նս զիս
հարցո՛ւց:

— Ո՛չ, պարո՛ն: Քիչ մ'առաջ տիկին
Ռօպէր՝ տիկնոջ սենեակէն ելաւ և ըսաւ
որ ոչ ոք մտնէ հոն, մինչեւ որ տիկինը չի
կանչէ. վասն զի այս առտու կ'ուզէ եղեր
քիչ մը քնանալ:

— Ձըլլայ որ հրամանին դէմ վարուիք,
ըսաւ Քլօարէք:

Եւ իր սենեակը մտաւ, ուր օտարական
մը իրեն կը սպասէր:

Ասի շուրջ քառասուն տարեկան գեր
մարդ մ'էր, ռամիկ դէմքով, հերակլեան
մարմնով և գեղջուկի հագուստով: Անկիրթ
բարեւ մը տալով Իվօնի՝ կարելի եղածին
չափ անուշ ձայնով մ'ըսաւ.

— Պ. Քլօարէք դատաւորը գո՛ւք էք:

— Այո՛, պարոն:

— Ես. պարո՛ն դատաւոր, փիէնցի հայր
Լըպլանի բարեկամներէն եմ. նա ձեզ կը
ճանչնայ:

— Այո՛, ատենով քանի մը փոքր ծա-
ռայութիւն մատուցի իրեն. աղնիւ մարդ
մ'է. ի՞նչպէս է:

— Շատ լաւ, պարո՛ն դատաւոր. ինքն
ըսաւ ինձ թէ. «Դու փորձանքի մէջ ես,
Պ. Քլօարէքի դիմէ, նա կը սիրէ խեղճե-
րուն օգնել»:

— Ի՞նչ կրնամ ընել ձեզ համար :

— Պարո՛ն դատաւոր , ես սրիկային մէկուն հայրն եմ , որու դատը քիչ օրէն ձեր դատարանը պիտի ելլէ :

— Ո՞ր դատին համար կ'ըսէք , պարո՛ն :

— Ժօզէֆ Բաթօյի դատը , ըսաւ գերմարդն՝ նշանացի ակնարկ մ'ընելով , դրամանենդ մը , պարզ դրամանենդ մը :

Քլօարէք , զարմանալով և դժգոհ ըլլալով որ այս հայրն այսպիսի կոպիտ անփութութեամբ մը կը խօսէր զաւելին վրայ ծանրացած նշաւակիչ ամբաստանութեան մասին , խստիւ պատասխանեց .

— Արդարեւ , պարո՛ն , ժօզէֆ Բաթօ դրամանենդութեամբ ամբաստանուած է և քիչ օրէն պիտի դատուի :

— Պարո՛ն դատաւոր , ես զանազան դարձուածքներ չեմ գիտեր . խօսքը մէջերնիս՝ տղաս այդ բանն ըրած է և աւանակի մը պէս ինքզինքը ձեռք տուաւ :

— Պարո՛ն , զգուշացէ՛ք և խօսքերնիդ կշռեցէ՛ք , վասն զի շատ ծանր են :

— Գործը չ'ուրացուիր , Պ. դատաւոր , վասն զի լուսոյ պէս յայտնի է . ապա թէ ո՛չ պիտի ջանայինք

— Հիմայ ի՞նչ ըսել կուզէք , պարո՛ն , ըսաւ Իվօն՝ որ երթալով կը զայրանար այս մարդուն կերպերուն և զգացմանցն :

— Լա՛ւ , պարոն դատաւոր . եթէ մասնաւոր պատճառներ չ'ունենայի , դորս չեմ կրնար ըսել ձեզ , բնաւ հոգս չէր եթէ տղաս դատապարտուէր . « Ինքզինքդ ձեռք տուիր , կ'ըսէի իրեն , էշու պէս , դնա՛ հիմայ քաշէ՛ . » բայց իմ շահս կը պահանջէ որ տղաս անմեղ ելլէ :

— Պարո՛ն , գոչեց Իվօն՝ զգալով որ իր բարկութիւնն կատաղութեան կը փոխուէր և արիւնը գլուխը կ'ելլէր , բա՛ւ է , ա՛լ մի՛ խօսիք :

— Իմ կարծիքս ալ այդ է , Պ. դատաւոր .

գործի նայինք , պատասխանեց գեղացին :

Ապա՛ նորէն նշանակիչ ակնարկ մ'ընելով և ձեռքը թաղարէ երկար բաճկոնին մէկ գրպանը խոթելով՝ ստակի ծրար մը հանեց , փթամատին ու ցուցամատին մէջ առաւ և Իվօնի ցուցունելով՝ խորամանկ ժպտով մ'ըսաւ .

— Ասոր մէջ յիսուն ոսկի կայ . ասի իմ տղուս արդարացման կանխավճարն է , յիսուն հատ ալ վերջը կուտամ :

Շատ մը օրինակներ ու պարագայներ կ'արդարացնէին այս կաշառելու վատ փորձըն . վասն զի Հասարակապետութեան առաջին ուղիղ եւ փառաւոր տարիներուն յաջորդեր էր բարուց ողբալի ապականութիւն մը . ասոր համար մեր գեղջուկն ամենայն ապահովութեամբ ստակներն դրաւ գրասեղանին մէկ անկիւնը : Քլօարէք , որ այս նախատանօք ինքզինքմէն դուրս ելեր էր , դէմքը բարկութենէն կասկարմիր եղած՝ կատաղութեամբ պիտի պայթէր , երբ աչքին հանդիպելով կնոջը կենդանագիրն , որ պատէն կախուած էր , մտածեց թէ մի՛ գուցէ աղմուկէն արթննայ ու վախնայ , վասն զի այն տեսարանն տեղի ունեցած սենեկին վրայի սենեակը կը պառկէր . Իվօն , գերբնական ճիգ մ'ընելով ինքզինքը բռնեց , գլխարկն առաւ և այլայլեալ ձայնիւ ըսաւ գեղջուկին ,

— Ստակնիդ առէ՛ք , դուրսը կը խօսակցինք :

Եւ նշան ընելով որ ետեւէն գայ՝ աճապարանօք տունէն դուրս ելաւ : Գիւղացին կարծելով որ կաշառել ուզած դատաւորն կը ցանկար տունէն դուրս խօսակցիլ այս գործին վրայ , ստակները գըրպանը դրաւ , առաւ իր խոշոր դաւազանն և Քլօարէքի ետեւէն դուրս ելաւ՝ առանց նորա դէմքը քննելու միջոց ունենալու ,

վասն զի եթէ քննած ըլլար՝ պիտի սոսկար
և կասկածէր :

— Պարոն դատաւոր , ո՛ւր կերթանք
այսպէս , ըսաւ Քլօարէքի՝ որու ետեւէն
հասնելու համար ներդուծիւն կը քաշէր ,
վասն զի դատաւորն կը փութար և կար-
ծես ցատկուտելով կը քալէր :

— Ասկի՛ց , պատասխանեց հեղձամըղ-
ձուկ ձայնով մը՝ փողոցին անկիւնէն դառ-
նալով , ասկի՛ց :

Այս կարճ փողոցին ծայրն էր Քլաս-
նէօլ հրապարակը , ուր տեղի վաճառանոցն
այն պահուն լեցուն էր : Երբ Քլօարէք ,
որ իր որոշումն ըրեր էր , բազմութեան
մէջտեղ հասաւ , մէկէն ի մէկ դիւղացիին
դարձաւ , որ վաղելով ետեւէն կուգար ,
և երկաթի ձեռք անոր օձիքէն բռնելով ,
որոտալի ձայնիւ դոչեց :

— Ժողովո՛ւրդ , աղէկ նայեցէ՛ք սա թըշ-
ուառականին և տեսէ՛ք իր պատիժն և սա
թող օրինակ ըլլայ :

Ժողովրդական յուզմանց ժամանակն դեռ
բոլորովին անցած չ'էր . ժողովրդական ազ-
դարարութիւնք եւ հրապարակային ա-
տենախօսութիւնք անսովոր բաներ չ'էին .
ուստի բազմութիւնն իվօնի ձայնն լսելով՝
հետաքրքրութեամբ խոնեցաւ դատաւո-
րին և դիւղացիին շուրջը : Գիւղացին , հա-
կառակ իր հերակլեան կազմուածքին և
հուժկու ճգանցն , չի կրցաւ ճողոպրիլ Քլ-
օարէքի ձեռքէն , որ կատաղութեամբ
թօթուելով զայն՝ շարունակեց ևս քան զևս
որոտալի ձայնիւ :

— Ես այս քաղաքին դատարանին մէջ
դատաւոր եմ . այս անամօթն եկաւ ինձ
ստակ առաջարկեց՝ ոճրագործին մէկն ար-
դարացնելու համար . այս է իր յանցանքն
և այս պիտի լինի պատիժը :

Եւ այս արտակերպոն դատաւորն , որու
բարկութիւնն անլուր ոյժ մը կուտար ի-

րեն , կը պատրաստուէր կորովի գեղջուկն
կռփակոծել , երբ սա բուռն յնցում մը
տալով՝ ազատեցաւ և դատաւորին չափ
ինքն ալ կատաղելով՝ քայլ մը ետ քաշուե-
ցաւ , գաւազանը վ'եր առաւ , որ ճշմա-
րիտ հեծան մ'էր և անով գուցէ մահա-
ցու հարուած մը պիտի իջեցնէր կրակոտ
Պրըթօնին գլխուն , եթէ սա , իր հայրե-
նակցաց ընտանի վարպետութեամբ մը ,
այդ հարուածէն չի խուսափէր ծռելով և
գլխիկոր յարձկելով իր ոտիսին վրայ այն-
պիսի կատաղութեամբ մը որ , գլուխը
ուժգին զարնելով նորա կուրծքին՝ կուշ-
տերն խորտակեց , բերնէն արիւն բերաւ
և գետին թաւալեց բոլորովին մարած :
Այն ատեն պարտելոյն շուրջը խոնուած
ամբօխին խռովութենէն օգտելով , Քլօա-
րէք քիչ մը պաղարիւնութիւն առաւ , փու-
թաց փախչիլ , անցաւ հրապարակէն և
պարապ կառք մը գտնելով՝ մէջը նետ-
ուեցաւ և Արդարութեան Պալատը գը-
նաց , վասն զի ատենին բացման ժամը հա-
սած էր :



Բ .

Զգենք որ Պ. Քլօարէք Արդարութեան
Պալատն երթայ և ըստ սովորութեան իր
աթոռին վրայ բազմի առաւօտեան յաղ-
թանակներէն վերջը , որք կրնային վար-
պետ ըմբշի մը պատիւ բերել , և քանի
մը խօսք ընենք այն ծպտեալ պարահան-
դէսին վրայ , որոյ մասին խօսած էին բար-
կացոտ դատաւորին վկայներն մենամար-
տութենէն ետքը :

Այս պարահանդէսն , որ մեծ դէպք
մ'էր քաղքին համար , նոյն իրիկուն տեղի
պիտի ունենար Պ. Պօնվալի տունը , որ հա-
րուստ վաճառական մը և իվօն Քլօարէքի

դատարանին նախագահին աներն էր . այս դատարանին բոլոր անդամք սոյն տօնին հրաւիրեալ էին և ծպտիլն անհրաժեշտ ըլլալով , որոշեր էին սեւ «օֆ» կամ ծանրը հազուատներ հագնիլ , դատաւորական պատկառանքն պահելու համար :

Ըսինք թէ Քլօարէք ալ հրաւիրեալ էր : Իւր մենամարտութեան լուրն և գիւղացւոյն կրած պատիժն , թէև դժբախտաբար արդէն տարածուեր էր քաղքին մէջ , բայց մինչեւ իրիկուն գեռ տիկին Քլօարէքի ականջը չէր հասած : Ուստի դատաւորին տունը բոլորովին հանդարտ էր . և , ինչպէս շատ մ' ուրիշ տանց մէջ , նոյնպէս և անդ երեկոյեան ծպտման պատրաստութեանց կզբաղէին , վասն զի այն ատեն դաւառաց մէջ հանդերձավաճառք հազուագիւտ էին : Համեստ բնակարանին սեղանատունն այն օրը դերձակի խանութ դարձեր էր . հօն կը տեսնուէին այլևայլ գոյնով կերպասներու կտորուանք , մետաքս և արծաթ բանուածքներու մասեր : Երեք մատաղ գործաւոր աղջկունք , կաշաղակի պէս շատախօս , կը շաղակրատէին և կ'աշխատէին շուրջ երեսուն տարեկան կնկան մը հսկողութեանն ներքեւ , որն որ անուշ և քաղցր անձ մ' էր : Գործաւորուհիք յարգանօք «Ե՛՛» Ռօպէր կը կոչէին զայն . այս աղնիւ կինն , որ առաջ Պ. Քլօարէքի աղջկանն ստնտուն էր , հիմայ տիկին Քլօարէքի քով սպասուհի կամ տեսչուհի էր , վասն զի իւր անձնուիրութեամբն ու ընտիր ծառայութեամբն իր ու տիրուհւոյն միջեւ տեսակ մը սիրային ընտանութիւն յառաջ եկած էր :

- Սա գլխարկին բանուած ժապաւէնն հիմայ կը փակչի , ըսաւ աղջկանց մին :
- Ես ուսընդանութը լմացուցի , ըսաւ ուրիշ մը :
- Այս բաճկոնին ալ քանի մը ար-

ծաթ կոճակները մնաց կարելու , ըսաւ երրորդը :

- Շատ աղէկ , աղջիկներս , ըսաւ տիկին Ռօպէր , ապահով եմ թէ Պ. Քլօարէքի հազուատն ամենէն աղուորներէն մին պիտի ըլլայ :
- Տիկին Ռօպէր , շատ ծիծաղելի բան է :
- Ի՞նչը :
- Ծպտեալ դատաւոր մը :
- Վա՛յ , ըսաւ ուրիշ մը , միթէ ամէն օր չ'ե՛ն ծպտիր , երբ պատմուճաննին կը հագնին :
- Գիտցէ՛ք , աղջիկներս , ըսաւ տիկին Ռօպէր խստիւ , թէ դատաւորի պատմուճանն ծպտ մը չ'է , այլ պաշտօնական հազուատ մը :
- Ներեցէ՛ք , տիկին Ռօպէր , ըսաւ աղջիկն՝ ականջներովս կարմրելով , այդ խօսքը գէշ մտքով չ'ըսի :
- Մե՛ղք որ տիկին Քլօարէք ծպտելու այս գեղեցիկ առիթն պիտի փախցնէ , յարեց ուրիշ գործաւորուհի մը՝ խօսակցութիւնն փոխելու համար :
- Ա՛հ , գոչեց ընկերուհիներէն մին ցաւագին և նախանձական հառաչանքով մը , եթէ ես տիկին Քլօարէքի տեղն ըլլայի՝ այս առիթը չ'էի փախցներ : Ծպտեալ պարահանդէս մը : Մարդ կեանքին մէջ մէկ անգամ ասանկ երջանկութեան կը պատահի :
- Եթէ գիտնայիք թէ ինչո՛ւ համար տիկին Քլօարէք այս հաճոյքէն կը զրկուի , յարեց տիկին Ռօպէր , այն ատեն չ'էիք զարմանար , օրիորդներ :
- Ինչո՞ւ համար տիկին Քլօարէք այդ պարահանդէսը չ'երթար , տիկին Ռօպէր :
- Ատի պղտիկ աղջկանց չ'ըսուիր , — պատասխանեց տեսչուհին հանդիսական կերպիւ , մինչդեռ գործաւորուհիք , աշխատութիւննին լմացներով , կը պատրաստուէին մեկնիլ , վասն զի գիշերը մօտ էր :

Այն պահուն որ երեք աղջկունք դուրս պիտի ելլէին, ուրիշ անձ մը մտաւ սեղանատունը :

— Ա՛հ, պարոն Սըկօֆէնն է, ըսին գործաւորուհիք ընտանի և հեղնական ձայնիւ : Է՛հ, բարիլոյս, պարոն Սըկօֆէն : Պ. Սըկօֆէն ի՛նչպէս է :

Այս նորեկն գրեթէ 40 տարու մարդ մ'էր, բարձրահասակ և անդիի ծայր նիհար. շատ երկար քիթ մ'ունէր՝ ծայրը ցցուած, ինչ որ տարօրինակ երեւոյթ մը կուտար իրեն. ասկից զատ երեսին գոյնն անանկ դեղնած էր և լերկ դէմքն միշտ այնպէս անայլայլ, որ կարծես Բիէրրօյի ալիւրոտ դիմակն էր. միայն երկու պզտիկ սեւ և սուր աչքեր, որք բաւական նենգամտութիւն կը պարունակէին, կ'ոգեւորէին այս ծաղրածուի դալուկ դէմքը. փոքր, կարճ, կլոր ու սեւ կեղծամ մը, որ հեռուէն մետաքսեայ գտակի մը կը նմանէր, կ'աւելցնէր այս բարեկենդանի ծպտի նմանութիւնն. մոխրագոյն և արծաթապատ կոճակներով երկայն վերարկու մը, կաղինի գոյն անդրավարտիք մը, որ վարի դիէն երիզով մը կապուած էր և ճերմակ ու կապոյտ գծերով գուլպայն ցոյց կուտար. սեւ կաշիէ կիսակօշիկներ՝ արծաթի խոշոր ծոպերով, այս էր Պ. Սըկօֆէնի սովորական հագուստն, որ ներս մտած ատեն թեւին տակ խոշոր կարմիր հովանոց մը և ձեռքն հին եռանկիւն գըլխարկ մը բռնած էր :

Քսան տարի Պ. Քլօարէքի հօրը քով ծառայութիւն ընելէ վերջը՝ Պ. Սըկօֆէն, նորա մահուքնէն յետոյ, որդւոյն քով մտեր էր, որու տղայութիւնն տեսած էր, և որու կը ծառայէր կատարեալ անձնուիրութեամբ մը : Ըսինք թէ մեր մարդն ներս մտաւ թէ չէ՞ գործաւորուհիք հեղնական կերպիւսա խօսքերով բարեւեցին զայն :

— Ա՛հ, պարոն Սըկօֆէնն է : Է՛հ, բարիլոյս, պարոն Սըկօֆէն :

Այս անձն, առանց շեղելու իր սովորական պաղարիւնութենէն, գլխարկն ու հովանոցը ամբողջ մը վրայ դրաւ, ապա գնաց իւր երկար թեւերուն մէջ սեղմեց լրջօրէն խնդացողներուն ամենէն փոքրը, և, հակառակ նորա ահաբեկ աղաղակացն ու ուժգին դիմադրութեանցն, նորա կլորիկ այտերէն ուժով մը համբուրեց : Այս յառաջարանէն գոհ ըլլալով՝ միւսներուն ալ պիտի ընէր նոյն բանն, երբ տիկին Ռօպէր, անոր հագուստին քղանցքէն քաշելով, բարկութեամբ գոչեց .

— Սըկօֆէ՛ն, Սըկօֆէ՛ն, ատ ի՛նչ անկրթութիւն է . . .

— Եղածն եղած է, ըսաւ Սըկօֆէն իւր ոսկրուտ ձեռներն անօթի մարդու մը սէս շրթանցը վրայէն անցընելով, մինչդեռ մատաղ գործաւորուհին ընկերուհեացն հետ կը մեկնէր, երեքն ալ խնդալով և ըսելով .

— Գիշեր բարի, պարոն Սըկօֆէն, գիշեր բարի :

Տիկին Ռօպէր մեր մարդուն հետ առանձին մնալով՝ գոչեց .

— Աշխարհի մէջ միայն դուք էք որ այդպիսի պաղարիւնութեամբ մը ատանկ անկրթութիւններ կ'ընէք՝ դատաւորի մը պատկառելի տանը մէջ :

— Վա՛յ, ըսաւ Սըկօֆէն անտարբերութեամբ, ի՛նչ կայ որ :

— Ինչպէս ի՛նչ կայ. աչքիս առջեւն այն աղջիկն համբուրե՛լ, մինչդեռ շարունակ քու սիրային յայտարարութիւններովդ կը հալածես զիս :

— Նախանձո՛տ :

— Նախանձո՛տ, ե՛ս. ատիկայ աւրէ՛ տետրակիդ մէջէն, Սըկօֆէն : Եթէ, Աստուած չ'ընէ, երբեք ամուսնանալու ըլլամ, քեզ հետ չ'եմ ամուսնանար :

— Նայինք :

— Ի՞նչպէս , ես չեմ գիտեր :

— Ըլլալիքը կ'ըլլայ . . . սիրելիս :

— Բայց

— Օ՛ն , օ՛ն , յարեց պաղարիւն մարդն Սիւզան Ռօպէրի խօսքն ընդմիջելով ամենաապահով կերպիւ , հետս կարգուելու փափաքով կը հալիս ու կը մաշիս , և պիտի կարգուիս : Ըլլալիքը կ'ըլլայ , այսչափ :

— Բիսո՛ւս Մարիամ , գոչեց սպասուհին՝ Սըկօֆէնի պաղարիւնութեանը բարկանալով :

Ապա , այս ըրածին խպնելով , հեզնական հանդարտութեամբ մը յարեց .

— Իրաւունք ունիք , պարոն Սըկօֆէն , ալ չի խօսինք այս յիմարութեան վրայ , ամենէն աղէկն այն է : Պարոնին վրայ խօսինք : Ահա՛ հագուստը աւարտեցաւ : Իւր սենեակը տարէ՛ք , վասն զի ուր որ է հիմայ դատարանէն կը վերադառնայ :

— Ա՛հ , ըսաւ Սըկօֆէն գլուխը ցնցելով , դատարանը

Եւ խոր հառաչ մ'արձկեց :

Այս անտարբեր մարդուն համար հառաչ մը այնքան հազուադիւտ բան էր որ , տիկին Ռօպէր , մէկէն ի մէկ անհանգիստ ըլլալով , աշխուժիւ ըսաւ .

— Ի՞նչու այդպէս կը հառաչէք , դուք որ սովորաբար չ'էք այլայլեր :

— Մտքէս կ'անցնէր , յարեց Սըկօֆէն՝ գլուխը նորէն ցնցելով : Ասի օր մը առաջ , օր մը ետքը պիտի պատահէր :

— Բայց ի՞նչ կայ , տէր Աստուած , ի՞նչ պատահեցաւ :

— Պ . Գլօարէք , ըսաւ Սըկօֆէն նոր հառաչ մ'արձկելով , պատուհանէն վար նետեց դատարանին նախադահլը :

— Ա՛հ , տէր Աստուած :

— Եղածը եղած է :

— Կարելի՞ է :

— Բայց շատ բարձր չ'էր . . . գրեթէ մէկ գրկաչափ , ըսաւ Սըկօֆէն , և նախադահլն , ըստ սովորութեան , չորս սաքի վրայ ինկաւ , վասն զի գիտցած վարպետորդիդ չ'է : Ամէն կողմ կրնայ դառնալ :

— Ինձ նայէ՛ , Սըկօֆէն , ըսածիդ չ'եմ հաւատար : Դարձեալ սուտ մը շինեցիր , և շիտակը չի վայլեր այդպէս կատակներ ընել պարոնին վրայ , որ ձեռքդ մեծցած է և քեզ այնքան կը սիրէ :

— Լա՛ւ , յարեց Սըկօֆէն պաղութեամբ , սեպէ՛ թէ կատակ կ'ընեմ : Բայց դու պարոնին հագուստը տուր , ըսաւ , որ զայն իր սենեակը տանիմ , վասն զի հիմայ պիտի գայ :

— Ափսո՛ս , իրա՛ւ է ուրեմն , գոչեց Սիւզան , այս անգամ հաւատալով Սըկօֆէնի տուած լուրին . ըսել է պարոնին և նախադահլն մէջ դարձեալ բան մը անցեր է :

— Բնական է , ըսաւ Սըկօֆէն անտարբերութեամբ , քանի որ զայն պատուհանէն վար նետեց :

— Տէ՛ր Աստուած , տէ՛ր Աստուած : Բայց այս անգամ պարոնը իր պաշտօնը պիտի կորսնցնէ :

— Ինչո՛ւ :

— Ի՞նչպէս ինչու : Դատաւորի մը կողմէ ասանկ գայթակղեցուցիչ դէպքէ մը վերջը՝ ապահով եմ թէ պաշտօնը ձեռքէն պիտի առնեն . հապա խեղճ տիկինը , նորէն դող պիտի ելլէ և այս վիճակին մէջ : Բայց տէ՛ր Աստուած , այս ապրիլ չ'է , այսպէս շարունակ դողի ու սարսափի մէջ խեղճը ամուսնոյն վրայ կը խենթենայ և ամէն վայրկեան կը վախնայ թէ անոր բարկացոտ բնութիւնն թշուառութեան մը պատճառ չ'ըլլայ :

— Սիրելիս , կը յիշե՞ս ամէն ատեն ի՞նչ կ'ըսէի քեզ՝ մեր երկրին առածին համե-

մատ , ըսաւ Սըկօֆէն . . . « Անտառը գայլին և աղաւնոցը տատարակին » . արդ պարոն իվօն . . .

— Բայց դու քու պաղարիւնութեամբդ և առածներովդ համբերութիւնս կը հատցընես , գոչեց Սիւզան : Գոնէ ըսէ՛ թէ այս գէպքը ի՛նչպէս պատահեր է :

— Ժամ մը առաջ նամակի մը պատասխանը պարոնին տանելու համար՝ դատարան գացի : Նայեցայ որ դատարանն տակն ու վրայ է :

— Ա՛հ , Աստուած իմ , անշուշտ պարոնին պատճառաւ :

— Մտիկ ըրէ՛ք : Փաստաբանք և ուրիշներ կը փորտային . « Չէ՞ք գիտեր : — Ո՛չ , ի՛նչ կայ : — Կ'երեւնայ որ դատաստանէն վերջը պարոն նախագահն պարոն Գըլօարէքը իր սենեակը կանչել տուեր է :

— Ա՛հ , այո՛ , իր մենամարտութեանն համար . . . »

— Իւր մենամարտութի՛ւնն . . . գոչեց տիկին Ռօպէր : Ի՞նչ մենամարտութիւն :

— Այս առտուանը , ըսաւ Սըկօֆէն պաղարիւնութեամբ :

Եւ սպասուհւոյն զարմանքէն օգտելով՝ շարունակեց .

— Ոմանք ալ կ'ըսէին . « Ոչ . նախագահը զայն կանչել տուեր է այն գիւղացիին համար , որու կուշտերը խորտակեր է և զոր խանութ մը փոխադրեր են » :

— Ի՞նչ գիւղացի , յարեց Սիւզան եւս քան զեւս այլայլելով :

— Յերեկուանը , պատասխանեց Սըկօֆէն : « Վերջապէս կ'երեւի թէ , կ'ըսէին , նախագահին սենեակը գացեր է , խնդիրն մեծցեր է և վերջապէս պատուհանէն վար նետեր է զայն » :

— Ա՛հ , տէ՛ր Աստուած , ըսաւ Սիւզան ձեռքերն իրար կցելով :

— Այն ատեն ես , ըսաւ Սըկօֆէն՝ ներքին

քին գոհունակութեան ժպտով մը , ես որ պարոնը լաւ կը ճանաչեմ , անմիջապէս ինքնիրենս ըսի . « Եթէ մէկը պատուհանէն վար նետուեր է , միւսը պիտի ըլլայ » . և իրաւունք ունէի , վերջապէս եղածը եղած է : Պարոնին հագուստը տանիմ :

— Եղածը եղած է . այս անտանելի խօսքն ալ բերնէդ չի պակսիր . հապա հետեւա՞նքը :

— Ըլլալիքը կ'ըլլայ :

— Աղուո՛ր միսիթարութիւն . անանկ չէ՞ . երեք անգամ է որ պարոնը իր պաշտօնը կորսնցնելու վտանգին տակ կիյնայ , իր ցասկոտ բնաւորութեան պատճառով . և գիտէ՛ք հիմայ ի՛նչ պիտի պատահի : Պարոնը պաշտօնանկ պիտի ըլլայ :

— Է՛ , եթէ պաշտօնանկ պիտի ըլլայ՝ կ'ըլլայ :

— Հաւանական է , և որովհետեւ այդ պաշտօնին պէտք ունի ապրելու համար , որովհետեւ կին մը և աղջիկ մ'ունի և քանի մ'ամսէն ուրիշ զաւակ մ'ալ պիտի ունենայ , քանի որ տիկինն յղի է , ինքն ու ընտանիքը ի՛նչ կ'ընեն : Ասոր ալ պատասխանէ՛ տեսնեմ քու առածներովդ :

— « Անտառը գայլին եւ աղաւնոցը՝ տատարակին » , ինչպէս որ կ'ըսէի քիչ մը առաջ , սիրելիս :

— Օ՛ն , գոչեց Սիւզան , դարձեալ այդ առեղծուածը : Բայց այդ ըսածդ ի՛նչ յարաբերութիւն ունի պարոնին հետ :

— Սա յարաբերութիւնն ունի որ պարոնը , որու ծնունդը տեսեր եմ , քանի որ Բէնհօէյի աւազներուն վրայ կը խաղար , և ձկնորսի լակոտներուն հետ կը կռուէր , միշտ ճշմարիտ Պրըթօնի մը պէս բարկացոտ էր . ասոր համար երբ բարկանայ և գլուխը տնկէ՛ պէտք է որ պայթի , սիրելիս . դժբախտաբար միշտ այսպէս է : Բայց մինչեւ հիմայ նախագահները պա-

տուհանէ վար նետած չ'ունէր. վերջապէս եղածը եղած է :

Եւ տիրոջը հազուստն առնելով՝ Սը-կօֆէն Սիւզանի ըսաւ .

— Բան մը պակաս չ'է :

— Ինձի նայէ՛, դո՞ւ ալ խելքդ կորուսիր : Պարոնը այդ հանդէսին պիտի երթա՞յ :

— Հարկաւ . ապսպրեց որ հազուստը պատրաստեմ, որպէս զի կարենայ շուտ հազուիլ :

— Ի՞նչպէս, այդ քիչ մ'առաջուան դէպքէն վերջը՝ դարձեալ պիտի երթա՞յ :

— Անշուշտ :

— Անկարելի է :

— Կը տեսնէ՞ք :

— Բայց այդ պարահանդէսը պարոն նախագահին աներոջը տունը տեղի պիտի ունենայ . . .

— Աւելի աղէկ ա՛ :

— Բայց անկարելի է . պարոնը այս աւուր պատահարներէն վերջը չի համարձակիր այն պարահանդէսը երթալ : Ասի բոլոր քաղաքն իրեն դէմ՝ յարուցանել է :

— Ինքն ալ այնպէս կը յուսայ :

— Կը յուսա՞յ մի :

— Հարկա՛ւ, և այդ բանը զինքը չի կասեցներ, յարեց Սըկօֆէն յաղթական կերպիւ : Նախագահին հետ ունեցած տեսակցութենէն վերջը տեսայ զինքը : « Սիրելիս պարոն իվօն, ըսի իրեն, չ'է՞ք վախնար որ ձեզ ձերբակալեն : — Ոչ ոք իրաւունք ունի իմ և նախագահին միջեւ անցած մասնաւոր բաներուն խառնուիլ, քանի որ ինքը չի գանգատիր, պատասխանեց պարոնը, և եթէ կրնայ՝ թող գանգատի, վասն զի այն ատեն իրեն դէմ բարկանալուս պատճառն յայտնել պէտք պիտի ըլլայ, և իր պատիւը պիտի կորսուի » : — Ահա՛ պարոնին խօսքերն : « Բայց,

հարցուցի իրեն, այս իրիկուան պարահանդէսին պիտի երթա՞ք : — Հարկաւ, ամենէն առաջ պիտի երթամ և ամենէն վերջը պիտի մեկնիմ : Ապա թէ ոչ պիտի կարծեն թէ՛ կամ ըրածիս կը զղջամ եւ կամ կը վախնամ : Եթէ այս հանդէսին երթալս միւս հրաւիրելոց անախորժ երեւի և իրենց դժգոհութիւնն յայտնեն կամ եթէ ես նշմարելու ըլլամ, պատրաստեմ հարկ եղած պատասխանը տալու, մի՛ վախնար . ուստի դու տուն գնա՛ և եկած ատենս հազուստս պատրաստ ըլլայ » :

— Ա՛հ, ի՛նչ մարդ, ի՛նչ երկաթի բընութիւն, ըսաւ Սիւզան հառաչելով : Միշտ նոյնն է . հապա խեղճ տիկի՛նը, որու մըտքէն իսկ չ'անցնիր :

— Հազուստները տանիմ, յաւելցուց Սըկօֆէն, և պարոնին սպասեմ իւր սենեակը, վասն զի անոր այս պարահանդէսին երթալը այնչափ ստոյգ է, որքան որ ստոյգ է օր մը ձեզ հետ ամուսնանալս, սիրելիս . այս բանը մտքերնիդ պահեցէ՛ք :

— Եթէ այդ փորձանքն երբեք պիտի պատահի, պատասխանեց տիկին Ռօպէր բարկութեամբ, պիտի ջանամ գոնէ բնաւ անոր վրայ չի մտածել :

Եւ Սըկօֆինի դուրս ելած դրանը դիմացի դռնէն դուրս ելլելով՝ ազնիւ կիներ, որու լսածները մեծ մտմտուք կը պատճառէին իրեն, գնաց իր տիրուհւոյն՝ տիկին Քլօարէքի սենեակը :

Գ.

Առջի բերան Սիւզան ուղեր էր իմաց տալ տիկին Քլօարէքի իվօնի ցասկոտ բնաւորութեանն պատճառաւ այն աւուր անցած ծանր դէպքերն . բայց մտածելով թէ

այդ լուրն ի՛նչ ցաւալի և անակնկալ հարուած մը պիտի ըլլայ խեղճ կնոջ, միտքը փոխեց և որոշեց իւր տիրուհին համոզել որ պատրուակ մը գտնէ պարոն Քլօարէքն այս պարահանդէսին չի ղրկելու, յանգուգն գործ մը, որ կրնար աղետաբեր հետեւանքներ ունենալ:

Սիւզան մեծ շփոթութեան մէջ էր. մէկ կողմէն պէտք էր որ այն աւուր դէպքերը տիրուհիէն ծածկէր և սակայն պիտի խրատէր զտիկին Քլօարէք որ իւր ազդեցութիւնն գործածէ՝ իւր ամուսինն այն իրիկուն վար դնելու համար:

Տիկին Ռօպէր այս մտմտուքներուն մէջ էր՝ երբ տիրուհւոյն սենեակը մտաւ: Տիկին Քլօարէք, թէև շատ գեղեցիկ չէր, բայց քաղցր և հրապուրիչ կերպարանք մը ունէր. իւր ազնիւ դիմաց դեղնութիւնն և նիհար կազմուածքը յայտնի կ'ընէին թէ շատ փափուկ առողջութիւն մ'ունէր, զոր յղութիւնն աւելի եւս կը ծանրացնէր:

Ժէննի Քլօարէք, օրօրոցի մը քով նըստած, որու մետաքսեայ փոքր վարագոյրներն գոցուած էին, ձեռագործի կը զբաղէր և ատեն ատեն իր փոքր ոտքին ծայրովն թեթեւ մը կը շարժէր իւր հինգ տարեկան աղջկան օրօրոցը: Գիշեր եղեր էր, կանթեղ մը կը լուսաւորէր այս շնորհալի պատկերն: Երբ Սիւզան նորա սենեակը մտաւ, տիկին Քլօարէք ձեռքովը նշան մը ըրաւ անոր և ցած ձայնիւ ըսաւ.

— Աղմուկ մի՛ հանէք, Սիւզան, Սապին քնանալու սկսաւ:

Սիւզան կամաց մը մօտեցաւ. Ժէննի Քլօարէք յարեց.

— Իվօն դեռ չ'եկա՞ւ:

— Ո՛չ, տիկին:

— Այս առտուան կանուխ երթալն զիս անհանգիստ ըրաւ, վասն զի ամուսինս եկած ատեն քնացեր էի եւ այսքան ա-

տեն զինքը չտեսնելու սովորած չ'եմ:

Ապա մատղաշ կինն ժպտելով ըսաւ.

— Աղէկ միտքս եկա՛ւ. Իվօնի հագուստը լմնցա՛ւ:

— Այո՛, տիկին:

— Կը տեսնե՛ս, Սիւզան, ինչպէս կը հընազանդիմ Իվօնի կամայն: Ինքզինքս բռնեցի եւ սեղանատուն չ'եկայ հագուստը տեսնելու, որպէս զի պարոն Քլօարէքի վրայ տեսնեմ զայն, ինչպէս որ ինքն կը փափագէր: Բայց, սիրելիս Սիւզան, գոնէ սա չափը կրնաս ըսել ինձ թէ հագուստը գեղեցիկ է:

— Շատ գեղեցիկ, տիկին:

— Շատ բաց չ'ըլլար, վասն զի ամուսնոյս դիրքն քիչ շատ պատշաճութիւն կը պահանջէ:

— Տիկին՛ն, անկարելի է աւելի շքեղ և միանգամայն աւելի ազնուական հագուստ մը գտնել:

— Կը կարծե՞ս որ Իվօնի վայլէ:

— Խիստ պիտի վայլէ, տիկին:

— Շիտակը, Սիւզան, հետաքրքրութիւնս այնքան կը գրգռես որ . . . վերջապէս մինչեւ վերջը պիտի համբերեմ. միայն թէ, քանի որ Իվօնի հագուստն այդքան գեղեցիկ է, պիտի ցաւէի այդ պարահանդէսին չ'երթալուս, եթէ խոհեմութիւնն և առողջութիւնս այս փոքրիկ զբրկումն անհրաժեշտ ըրած չ'ըլլային: Երբեք ծպտեալ պարահանդէս տեսած չ'եմ, շատ պիտի զուարճանայի. բայց գրեթէ նոյնքան պիտի զուարճանամ՝ երբ Իվօն ի դարձին եղածները պատմէ ինձ. միայն թէ շատ ուշ չի գայ, վասն զի այսօր շատ յոգնած և սովորականէն աւելի տկար եմ:

Խեղճ կնկան միամտութիւնն եւս քան զեւս տխրութիւն կը պատճառէր Սիւզանի. ի զուր կը ջանար քիչ քիչ տիրուհւոյն հետ փափաքած խօսակցութեան կարգը

բերել, վասն զի կը վախնար որ զինքը չափազանց կ'այլայլեցնէ, ինչ որ խիստ վրտանգաւոր էր նորա վիճակին մէջ:

— Ըսել է տիկինը ցերեկուան չափ հանգիստ չէ՞, հարցուց:

— Ինքզինքս բաւական տկար կ'զգամ, պատասխանեց ժէննի. բայց հոգ չ'է. ինչէն ըլլալը գիտեմ, ըսաւ անուշ ժրպտով մը՝ իր յղութիւնն ակնարկելով: Ասոնք այն սիրելի ցաւերէն են, որոնք նորանոր ուրախութիւններ կը խոստանան մարդու:

Եւ դեռատի մայրն զայս ըսելով՝ թիկնաթողին վրայէն ելաւ, կամաց մը օրօրոցին վրայ խոնարհեցաւ, և վարագոյրներն կէս մը բացաւ: Քանի մը վայրկեան այսպիսի քաղցր նկատողութեան մէջ մնալէ վերջը, նստեցաւ և ցած ձայնիւ յարեց:

— Սիրելի աղջիկս, հրեշտակի քունով կը քնանայ. ա՛հ, սիրելի Սիւզանս, ըսաւ, Իվօնի նման ամուսին մը և ասանկ աղջիկ մը ունենալէս վերջը՝ աշխարհի վրայ ինչի կրնամ փափագիլ, եթէ ոչ քիչ մ'աւելի առողջութեան, որպէս զի կարենամ երկրորդ զաւակս սնուցանել. վասն զի, Սիւզան, գիտե՞ս որ կը նախանձիմ քեզ փոքրիկ Սապինիս կէս մայրն ըլլալուդ: Վերջապէս՝ թո՛ղ առողջ ըլլամ, և ուրիշ բան չ'եմ ուզեր: Յայտնի է որ, յարեց կէս ժպտով մը, հիմայ Իվօնի կատաղութիւնն ու բարկութիւնն, որ ատենով այնքան վախ պատճառած էր ինձ, բարեբախտաբար քիչ մ'ատենէ ի վեր մեղմուած կ'երեւի: Խեղճ ամուսինս, քանի՛ անգամ տեսեր եմ որ մեծամեծ ճիգեր կ'ընէր յաղթելու համար իր բարկութեանը, որ մոլութիւն մը չ'է, այլ բնաւորութիւն մը. վասն զի եթէ մոլութիւն մ'եղած ըլլար՝ կը նուաճէր զայն: Վերջապէս, փա՛ռք

Աստուծոյ, հիմայ զինքը շատ աւելի հանդարտ կը գտնեմ:

— Անշո՛ւշտ, տիկին, յարեց Սիւզան, եւս քան զեւս շփոթելով, անշո՛ւշտ, պարոնը հիմայ առաջուան պէս բարկացուտ չէ:

— Եւ երբ կը մտածեմ թէ ինձի հետ ամէն ժամանակ անուշութեամբ և բարութեամբ վարուած է, ըսաւ ժէննի խանդաղատելով, երբ միտքս կը բերեմ թէ երբեք առիթ կամ առարկայ չ'եմ եղած այն սոսկալի բարկութեան, որու անձնատուր կ'ըլլար ուրիշ պատճառներով և որ շատ անգամ ցաւալի հետեւանքներ ունեցած է:

— Խե՛ղճ տիկին, մարդ կատաղի խենթ մ'ըլլալու է ձեզի դէմ բարկանալու համար. Աստուծոյ գառնը ձեզի չափ համեղ չ'է:

— Ամենեւի՛ն, շողոքո՛րդ, պատասխանեց ժէննի ժպտելով, իմ անուշութենէս չ'է, այլ զիս սիրելէն. և, քեզ բան մը ըսե՛մ, Սիւզան, երբեմն չ'եմ կրնար չի հըպարտանալ՝ մտածելով որ այս աննուաճ և ցասկոտ մարդն միշտ փափկութեամբ և կամակատարութեամբ վարուած է հետս:

— Իրաւ ալ, տիկին, պարոնն շատ համեղ է ձեզ հետ, և, ինչպէս որ ըսիք, բարկութիւնն ալ ձեռքը չ'է, վասն զի դժբախդաբար այս բնաւորութեան տէր մարդոց համար շատ հեղ պատրուակ մը, չնչին բան մը բաւ է սոսկալի պայթիւն մը յառաջ բերելու համար:

— Այդ այնքան ճշմարիտ է, Սիւզան, որ այն խեղճ Իվօնն, այդ օրինակ վտանգի մը չ'ենթարկուելու համար (և կը խոստովանիմ թէ ես ալ կրցածիս չափ կը խրախուսեմ այդ խոհեմութիւնն) ամէն իրիկուն իմ քովս կը կենայ, փոխանակ ուրիշներու պէս իր հաճոյքն և զբօսանքն ուրիշ տեղ բնտուելու, ուր իւր բարկու-

Թիւնը կրնայ ձախորդ արկածներու ենթարկել զինքն :

— Մտիկ ըրէ՛ք, տիկին, ըսաւ Սիւզան, վերջապէս ուզած առիթը գտնելով, ես

— Է՛յ, Սիւզան, ի՞նչու կեցաք, ի՞նչ կայ :

— Տիկի՛ն, սա կայ որ . . .

— Օ՛ն, խօսեցէ՛ք :



Տիկին Քլօարիք

ալ ձեզի պէս կը կարծեմ թէ, թէ՛ ձեր և թէ՛ պարոնին հանգստութեանը համար, փափագելի է որ բարկանալու առիթներէ խոյս տայ . ուստի, տիկի՛ն, եթէ ինձ կը հաւատաք . . .

— Տիկի՛ն, չէ՛ք վախնար որ այս իրիկուան ծպտեալ պարահանդէսը . . .

— Ի՞նչ :

— Մի՛ գուցէ պարոնին բարկութիւնը գրգռելու առիթ տայ :

- Ի՛նչ կ'ըսէք ,
- Վասն զի , տիկին , շատ մարդ պիտի գտնուի եղեր հոն :
- Լա՛ւ , բայց քաղքին ամենէն շնորհքով անձերը պիտի երթան , քանի որ այս պարահանդէսը ամուսնոյս դատարանին նախագահին աներոջը տունը տեղի պիտի ունենայ :
- Անշուշտ , տիկին , բայց վերջապէս կարծեմ թէ ծպտեալ պարահանդէսներու մէջ զիրար կը ծաղրեն , և եթէ պարոնն , որ ցասկոտ է , մէկէն ի մէկ բարկանայ . . .
- Իրաւունք ունիք , Սիւզան , ադ չի մտածեցի :
- Չէի ուզեր ձեզ անհանգիստ ընել , տիկին , և սակայն . . .
- Սա ալ կայ որ , ամուսինս կրթուած է և կրնայ այսպիսի պարահանդէսի մը մէջ ներելի եղած կատակներուն համակերպիլ , և իբր Պ. Պօնվալի փեսին դատարանին անդամ՝ չի կրնար այս պարահանդէսին չերթալիք ընել , որովհետեւ որոշուած է որ բոլոր դատաւորք պիտի երթան . ուստի Իվօնի բացակայութիւնը գրեթէ անկրթութիւն մը կրնայ նկատուիլ նախագահին նրկատմամբ , որու ստորագասեալն է վերջապէս ամուսինս :
- Ա՛հ , խեղճ տիկին , մտածեց Սիւզան , եթէ գիտնա՛ր թէ ամուսինն ի՛նչպէս կը վարուի իբր ստորագասեալ :
- Ո՛չ , ոչ , մի՛ վախնաք , Սիւզան , յարեց Ժէննի . նոյն իսկ պարոն նախագահին ներկայութիւնն , Իվօնի անկից ունեցած ակնածութիւնը զինքը կը զսպեն , և վերջապէս ասանկ տեղ մը ամէն բան աչքի կը զարնէ : Այն ատեն ամուսնոյս բացակայութիւնը ի՛նչի պիտի վերադրեն :
- Սակայն , տիկին . . .
- Ես Իվօնի կը պատուիրեմ որ խելօք կենայ , ըսաւ Ժէննի խնդալով , թո՛ղ եր-

- թայ վայելէ այս զուարճութիւնն , որ կրկնապատիկ անուշ պիտի երեւի իրեն՝ մեր վարած մենաւոր կեանքին պատճառաւ :
- Սիւզան , վախնալով թէ տիկնոջ ապահովութիւնը կրնայ գէշ հետեւանք ունենալ , հաստատամտութեամբ ըսաւ .
- Տիկին , պէտք է որ պարոնն այդ պարահանդէսին երթայ :
- Սիւզան , չեմ հասկնար :
- Տիկին , հաւատացէ՛ք ըսածիս :
- Բայց վերջապէս . . .
- Սիրելի տիրուհիս , ըսաւ Սիւզան ձեռքերն իրար կցելով , կը պաղատիմ ձեզ , յանձն ձեր զաւկին , մի՛ թողուք որ պարոնն այն պարահանդէսին երթայ :
- Սիւզան , ի՛նչ կայ . զիս կը վախցընես :
- Տիկին , գիտէք որ անձնուէր եմ ձեզ :
- Գիտեմ , բայց միտքդ հասկցո՛ւր :
- Գիտէք որ , տիկին , չէի համարձակեր ձեզ վախ պատճառել , եթէ խնդիրը ծանր չ'ըլլար : Լա՛ւ ուրեմն , հաւատացէ՛ք խօսքիս , շատ մեծ դժբախտութիւններ կրնան պատահիլ՝ եթէ պարոնն այն պարահանդէսին երթայ :
- Տիկին Ռօպէր ասկից աւելին չի կրցաւ ըսել : Գուռը բացուեցաւ և Իվօն Քլօարէք իր կնոջը սենեակը մտաւ :
- Սիւզան չի համարձակեցաւ կենալ , և պաղատական ու նշանակիչ նայուածք մ'ալ ձգելով տիրուհւոյն վրայ՝ դուրս ելաւ :

Դ .

Իվօն Քլօարէք գրեթէ երեսուն տարուէր . երեկոյեան պարահանդէսին համար

հագած պրըթօն հագուստը խիստ վայելեր էր իր ձեւաւոր և հուժկու մարմնոյն :

Այս վայելուչ և միանգամայն շքեղ հագուստը կը բաղկանար երկայն սեւ տափատէ մը , որու օձիքն ու թեղանիքը նարընջագոյն բանուած էին , և վրան արծաթի փոքրիկ կոճակներու շարք մը կարբաճկոնն , որ նոյնպէս սեւ էր և նմանօրինակ բանուածքներով ու կոճակներով զարդարուն , մէջքէն սեղմուած էր նարընջագոյն մետաքսեայ գօտիով մը . բալիքարի Յունաց ֆրանսէլներուն պէս լայն սպիտակ կտաւէ միջազգեստ մը մինչեւ ծունգերը կուգար և սրունքներուն փակած եղնիկի մորթէ երկայն ծնգապանները բաց կը թողուր : Իվօն գլուխը դրած էր գրեթէ տափակ գլխարկ մը , կլոր և եղերքները խիստ լայն , որու վրայ կար նարընջագոյն ժապաւէն մը՝ արծաթ բանուած , որու ծայրերն ուսերուն վրայ կը ծածանէին :

Այս Պրըթօն պրակտիկ հագուստին , իւր խարտեաչ երկայն մազերուն , կրակոտ դէմքին , ծովագոյն կապոյտ աչացն և հուժկու կազմուածքին շնորհիւ , Քլօարէք կենդանի տիպարն էր Արժօնի + + + մարդոց , ինչպէս որ կը կոչեն զանոնք ազգային ժամանակագիրք :

Իւր կնոջը սենեակը մտած ատեն՝ Իվօնի դէմքը դեռ քիչ մը տխուր էր , և թէև մեծամեծ ճիգեր քրեր էր այն խառնաչփոթ օրը զինքն յուզող այլ և այլ զգացումները զսպելու համար , բայց իւր կինըն , որ արդէն տիկին Ռօպէրի ըսածներէն կասկածի գացեր էր , ապշեցաւ ամուսնոյն դէմքը տեսնելով :

Իվօն , առանց գիտնալու Ժէննիի կասկածներն և այն աւուր արկածներն անկեց ծածուկ պահելու համար ամէն միջոց ձեռք առած ըլլալով , կամաց մը մօտե-

ցաւ և կնոջմէն քանի մը քայլ հեռուն կենալով՝ ժպտելով ըսաւ .

— Էյ , Ժէննի , հագուստս ինչպէս է , Յունամ թէ հաւատարիմ մնացեր եմ իմ բնիկ երկրիս հինօրեայ աւանդութեանց և Պրիթանիոյ կողմէն վայելուչ կերպիւ պիտի ներկայանամ այն հանդիսին , չէ՞ մի :

— Անշո՛ւշտ , բարեկամս , յարեց մատուղաչ մայրը շփոթելով , այդ քու երկրիդ հագուստն սքանչելի կերպիւ վայելեր է քեզ :

— Իրա՞ն . . լաւ ուրեմն , շատ գոհ եմ , ըսաւ Իվօն՝ գորովանօք իւր կինը համբուրելով և իւր տաժանելի մտահոգութիւնները մոռնալու աշխատելով : Սիրելի՛ս , գիտես որ ամենաչնչին բաներու մէջ իսկ քու հաւանութիւնդ կ'ուզեմ :

— Այո՛ , պատասխանեց տիկին Քլօարէք այլայլելով , այո՛ , գիտեմ թէ ո՛րքան կը սիրես զիս և ո՛րքան կը յարգես իմ ամենափոքր փափագներս իսկ :

— Շիտակը մե՛ծ արժանիք . գիտնայի՛ր թէ որքան անուշ բան է այս պրըթօնի անչահ գլուխը քու դէմք ծռել , Ժէննի՛ս և ըսել քեզ . « Բեզ համար ես իմ կամքս » մէկդի կը թողում . հրամայէ՛ և պիտի « հնազանդիմ » :

— Ազնի՛ւ Իվօն , գիտնայի՛ր թէ ո՛րքան երջանկութիւն կը պատճառես ինձ հետ այդպէս խօսելով , մանաւանդ այսօր :

Քլօարէք , առանց այս վերջին խօսքին ուշադրութիւն ընելու՝ յարեց .

— Բոլոր այդ փոքրիկ բարեբաստութիւնք , զորս ինձ կը պարտիս , ինչպէս որ կ'ըսես , ինչ են այն երկնային երանութեան բաղդատմամբ , զոր ես քեզ պարտաւոր եմ : Տե՛ս , ըսաւ դէպ ի օրօրոցը երթալով , սա փոքրիկ հրեշտակն , որ իմ կենացս ուրախութիւնն է . ո՞վ տուաւ զայն ինձ :

Եւ Գլօարէք վարագոյրները պիտի բանար, երբ կինը կամաց մը ըսաւ .

— Զգուշացի՛ր, Իվօն, կը քնանայ :

— Զգէ՛ որ քիչ մը երեսը նայիմ, վայրկեան մը միայն, որովհետեւ առտուընէ ի վեր չեմ տեսած :

— Կանթեղին լոյսէն կրնայ ըլլալ որ արթննայ, սիրելիս, և խեղճ հրեշտակը քիչ մ'առաջ շատ յուզեալ էր :

— Ս'հ, տէ՛ր Աստուած, ըսաւ Քլօարէք աշխուժիւ և օրորոցէն հեռանալով, միթէ վախու բա՞ն մը կայ :

— Բարեբախտաբար ո՛չ, բարեկամս, գիտես որ Սապին խիստ ջղուտ և դիւրագրդիւ է . այս մասին բոլորովին զիս է ելեր, յաւելցուց ժէննի մեղամաղձոտ ժրպտով մը :

— Եւ ես, փոխանակ ցաւելու աղջկանս այդպէս դիւրագրդաց ըլլալուն, ընդհակառակն կ'ուրախանամ. վասն զի կը յուսամ որ նա եւս, քեզի պէս, չափազանց զգայուն պիտի ըլլայ :

Նորատի կինը կամաց մը դուրսը շարժեց և ըսաւ .

— Վերջապէս տես ի՞նչ եղաւ . քիչ մը առաջ մեր խոշոր շունը հոս մտաւ և խեղճ աղջիկս այնպէս վախցաւ որ, շատ դժուարաւ կրցի քնացնել զինքը :

— Փա՛ւք Աստուծոյ, այդ վախը բան մը չէ : Բայց դու ի՞նչպէս էիր այսօր, ժէննի : Այս առտու կը քնանայիր և չուզեցի զքեզ արթնցնել, անո՛ւշ ժէննիս, յաւելցուց Իվօն գորովալից ձայնիւ : Գիտես որ քու առողջութիւնդ սիրելի ու թանկագին է ինձ համար . բայց մանաւանդ հիմայ ամէն ատենուընէ աւելի, յարեց ժպտելով, վասն զի հիմայ ԵՐԿՈՒ Է :

Ժէննի հասկնալով որ ամուսինն իւր յըղութիւնը կ'ակնարկէ, իւր սպիտակ ու փափուկ ձեռքն անոր երկնցուց :

— Քու սէրդ ո՛րքան ոյժ կուտայ ինձ, ըսաւ, եւ անոր շնորհիւ ամէն վշտի կը տոկամ :

— Բայց ըսել է այսօր հիւանդ էիր, գոչեց Իվօն անձկութեամբ : Կ'աղաչեմ, ժէննի, պատասխանէ՛ . ի՞նչու բժիշկ բերել չի տուիր :

— Այդչափ բարձր մի՛ խօսիր, սիրելիս, պատասխանեց երիտամարդ կինն՝ աչօքն օրօրոցը ցոյց տալով, տղան կ'արթընցնես :

Եւ ժպտելու ջանալով՝ յարեց .

— Ո՛չ, բժիշկ կանչել տալու պէտք չ'ունեցայ, վասն զի քովս մեծ և գիտնական տօքթօր մը կայ, որու վրայ մեծ վստահութիւն ունիմ, որ ամէն տեսակ խնամք կը մատուցանէ ինձ և ապահով եմ թէ, այսօր ալ չպիտի մերժէ զիս խնամել, եթէ պէտք ունենամ :

Եւ մանկամարդը զայս ըսելով՝ ամուսնոյն ձեռացը մին իր ձեռքերուն մէջ առաւ :

— Լա՛ւ, հասկցայ, ըսաւ Իվօն ժրպտելով, այն մեծ տօքթօրն ես եմ :

— Կրնամ աւելի հոգատար և անձնուէր բժիշկ մը գտնել :

— Օ՛, ո՛չ : Լաւ ուրեմն, ժէննի՛, ըսէ՛ տեսնենք, ի՞նչ ունիս :

— Սիրելիս Իվօն, այսօր թէև բացարձակապէս հիւանդ չէի, բայց տեսակ մը անորոշ և տխուր ու ժաթափութիւն զգացի և կ'զգամ տակաւին : Ո՛հ, մի՛ վախնար, թեթեւ բան է և դու կրնաս կատարելապէս բուժել զիս, սիրելի տօքթօ՛րս :

— Ի՞նչպէս նայինք, շուտ ըսէ՛ :

— Նախ ըսէ՛ թէ պիտի ուզե՞ս :

— Ս'հ, ժէննի . . .

— Վասն զի կը կրկնեմ թէ իմ բժըշկուիլս բոլորովին քենէ կ'ախեալ է :

— Աւելի աղէկ, վասն զի այն ատեն ա .

պահովաբար պիտի բժշկուիս : Օ՛ն , շո՛ւտ , ըսէ՛ , սիրուն հիւանդս :

— Քովս կեցիր :

— Էյ ո՞վ ըսաւ որ պիտի երթամ :

— Բայց , ըսաւ մատղաշ կինը վարանելով և սիրտն ուժգին տրոփելով , հապա այս իրիկուան պարահանդէսը :

— Կը տեսնես որ կանուխ հագուեցայ , որպէս զի կարենամ մինչեւ մեկնած ատենս քովդ մնալ :

Եւ իվօնի դէմքն , որ քիչ մը զուարթացեր էր , նորէն մթնցաւ :

Այս կէտը չվրիպեցաւ ժէննի աչքէն և եւս առաւել որոշեց ամէն ինչ ընել ամուսինը վար դնելու համար , վասն զի տիկին Ռօպէրի ներշնչած կասկածներն երթալով կ'ամբանային :

Ուստի մանկամարդն յարեց .

— Իվօ՛ն , զիս առանձին մի՛ ձգեր այս իրիկուն :

— Ի՞նչպէս :

— Այդ պարահանդէսն ինձ զոհէ՛ :

— Ի՞նչ կ'ըսես :

— Իմ քովս կեցիր :

— Բայց , ժէննի՛ , դու էիր պնդողն որ . . .

— Այդ հրաւերն ընդունիս , իրաւ է : Դեռ այս առտու ուրախ էի որ այս մեծաւոր կեանքիդ մէջ գեղեցիկ զուարճութիւն մը պիտի ունենաս գոնէ :

— Ուրեմն , ժէննի , ի՞նչէն յառաջ եկաւ այդ յանկարծական փոփոխութիւնն :

— Ես ալ չեմ գիտեր , ըսաւ ժէննի շքփոթելով : Իրաւ է թէ ասի անհեթեթ գաղափար մ'է : Բայց վերջապէս սա միայն գիտեմ թէ զիս չափազանց երջանիկ պիտի ընես , եթէ ուզես այս զոհողութիւնն ընել ինձ , որ անշուշտ տարօրինակ և ծաղրելի կ'երեւնայ քեզ :

— Խեղճ սիրելիս , ըսաւ իվօն գորո-

վանօք՝ պահ մը մտածելէ վերջը , կը հասկընամ . այդ վիճակիդ մէջ ասանկ հակասութիւններ խիստ պարզ բաներ են եւ շատ բնական է որ առտուան ուզածդ իրիկուան չ'ուզես : Միթէ կրնամ այս բանին համար զքեզ յանդիմանել :

— Օ՛ , իվօն , դու բարի ես , դու աշխարհի լաւագոյն մարդն ես , ըսաւ ժէննի , որու աչքերը լեցան ուրախութեան արցունքներով , վասն զի ապահով էր որ պիտի կարենայ ամուսինը վար դնել , և կը գթաս խեղճ կնկան մը վրայ , որ ո՛չ ուզածը գիտէ և ո՛չ չուզածը :

— Բայց ես , իբր տօքթօր , գիտեմ , ըսաւ իվօն կնոջը ճակտէն համբուրելով : Օ՛ն , ըսաւ ժամացոյցին նայելով , ժամը ինն է . տասը վայրկեան երթալու , տասը վայրկեան գալու , քառորդ մ'ալ այն պարահանդէսը մնալու համար , ընդ ամէնը շատ շատ երեք քառորդի գործ է և կը խոստանամ ժամը 10 էն առաջ վերադառնալ :

— Ի՞նչ կ'ըսես , իվօն : Անպատճառ կ'ուզե՞ս երթալ այն պարահանդէսին :

— Քանի մը վայրկեան երեւնամ հոն այնչափ :

— Իվօ՛ն , կը պաղատիմ :

— Ի՞նչ ըսել կուզես :

— Մի՛ երթար :

— Ի՞նչպէս , և ո՞չ իսկ վայրկեան մը :

— Սիրելի՛ս , կ'աղաչեմ , մի՛ թողուր զիս :

— ժէննի՛ , խեղճ գլուխդ բե՛ր :

— Կը պաղատիմ , այս բանն ըրէ՛ ինձ համար :

— Օ՛ն , ժէննի՛ս , տղայութիւն է . ի՞նչ կայ որ . շատ շատ ժամ մը բացակայ պիտի ըլլամ :

— Լա՛ւ , այո՛ , տղայութիւն է , մտահաճութիւն է , խենդութիւն է , բայց նո-

րէն կ'ըսեմ, նորէն կ'աղաչեմ, այս իրիկունքս մի՛ զատուիր:

— Ժէննի՛, կը ցաւիմ այսպէս պնդելուդ, վասն զի ի հարկէ ստիպեալ պիտի մերժեմ:

— Իվօ՛ն . . .

— Հաւատա՛ որ չեմ կրնար գոնէ վայրկեան մը այն պարահանդէսին չ'երթալիք ընել:

— Բարեկա՛մս . . .

Քլօարէքի ճակատն անհամբերութենէն կարմրեցաւ. սակայն ինքզինքն բռնեց և յանդիմանական անուշ ձայնով մը ըսաւ.

— Ժէննի՛, այս յամառութիւնդ զարմանք և վիշտ կը պատճառէ ինձ. գիտես որ ես սովորութիւն չ'ունիմ քեզի դէմ կենալու. միշտ ջանացեր եմ փափագներդ կատարել. ուստի մի՛ ստիպեր զիս որ կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով քեզ չ'ըսեմ:

— Տէ՛ր Աստուած, գոչեց մատաղ կինը վշտանալով, տէ՛ր Աստուած, այսքան կարեւորութիւն տալ հաճոյքի մը, երբ . . .

— Հաճո՛յք մը, գոչեց Իվօն դառնութեամբ և աչերէն կրակներ ցայտելով:

Ապա, նորէն ինքզինքն զսպելով, յարեց.

— Եթէ հաճոյք մ'եղած ըլլար, ժէննի, միթէ մէկ ըսելուդ չէի՞ զոհեր զայն քեզ:

— Ուրեմն եթէ հաճոյք մը զգալու համար չես երթար այդ պարահանդէսին, ինչո՞ւ համար կ'երթաս:

— Կ'երթամ, պատասխանեց Քլօարէք, կ'երթամ՝ վասն զի պատշաճութիւնն այնպէս կը պահանջէ:

— Միթէ անհնա՞ր է անգամ մը ինձ համար պատշաճութիւնը մէկ կողմ ձգել:

— Ինձի նայէ՛, ժէննի՛, ըսաւ Իվօն՝ որուն դէմքը կը կարմրնար, խօսքը կարճ կապենք: Պէտք է որ այս պարահանդէ-

սին երթամ և պիտի երթամ, ահա՛ այսչափ:

— Ես ալ կ'ըսեմ որ չպիտի երթաս, գոչեց կինը՝ չկարենալով այլ ևս իւր վախը կեղծել և արցունքներն բռնել, ո՛չ, վասն զի քանի որ այսպէս յամառութեամբ ոտք կը կոխես, դու որ ինձ հետ միշտ անուշութեամբ եւ բարութեամբ վարուած ես, ըսել է ծանր պատճառ մը կայ զոր կը ծածկես ինձմէ:

— Ժէննի՛, գոչեց Քլօարէք՝ ոտքը դետին զարնելով, վասն զի այս բուռն եւ դիւրացաս բնաւորութիւնը հակասութեան չէր դար, ալ մի՛ խօսիր:

— Ինձ մտիկ ըրէ՛, Իվօ՛ն, ըսաւ ժէննի ծանրութեամբ, ա՛լ չեմ կրնար կեղծել, վասն զի երկուքնուս ալ չի վայլեր: Ձեմ ուղեր որ այս պարահանդէսին երթաս, վասն զի կը վախնամ, վասն զի ըսին ինձ թէ քու հոն երթալդ կրնայ մեծամեծ ադիտից պատճառ ըլլալ:

— Ո՞վ ըսաւ այդ բանը ձեզի, ի՞նչ ըսին նայինք, պատասխանեցէ՛ք, գոչեց Քլօարէք եւս քան զեւս բարկանալով և այնպէս որոտալի ձայնիւ, որ օրօրոցին մէջ տղան արթնցաւ: Ինչո՞ւ կը վախնաք. ըսել է բան մը գիտէք:

— Տեսա՛ր, Իվօն, ըսել է բան մը կայ. աղաղակեց հէգ կինն եւս քան զեւս ահաբեկ, գուցէ սոսկալի բան մը կայ, զոր կը պահես ինձմէ:

Իվօն պահ մը լուռ և անշարժ կեցաւ եւ ներքին բուռն կռիւ մը տեղի ունեցաւ ի նա. այս անգամ ալ խոհեմութիւնն յաղթեց. կնկանք մօտեցաւ՝ չի մեկնած զայն համբուրելու համար և ըսաւ անոր.

— Հիմայ կուգամ, ժէննի՛, քեզ շատ չեմ սպասեցներ:

Ժէննի անմիջապէս ցատկեց և ամուսնոյն ժամանակ չի ձգելով որ շարժում մը

ընէ՛ դուռը վազեց , բանալին առաւ և յուսահատական ճգով մ'ըսաւ իվօնի .

— Ասկից դուրս չպիտի ելլես . տեսնենք պիտի համարձակի՞ս գալ և այս բանալին ձեռքէս յափշտակել :

Քլօարէք՝ Ժէննիի ըրածին նախ զարմանալով և ապա զայրանալով՝ ա՛լ ինքնիրմէն դուրս ելաւ . այտերուն կարմրութեանն յաջորդեց մեռելի դեղնութիւն մը և աչքերը հրացայտ , դէմքն տակն ու վրայ և անճանաչելի , քայլ մ'առաւ դէպ ի կինն և սոսկալի ձայնիւ մը գոչեց .

— Բանալի՛ն :

— Ո՛չ , պատասխանեց Ժէննի անվահեր , ո՛չ , ուզես չ'ուզես պիտի փրկեմ զքեզ :

— Թշուա՛ւ , որոտաց Քլօարէք ահարկու կերպիւ եւ քայլ մ'եւս մօտենալով Ժէննիի :

Խեղճ կինը կենացը մէջ երբեք ամուսնոյն բարկութեանն առարկայ չէր եղած . ասոր համար անհնար է նկարագրել զգացած սոսկումն , երբ տեսաւ որ իր վրայ յարձակելու կը պատրաստուի : Թէև պահ մը շանթահար մնաց այս կատաղի և արիւնացայտ նայուածքին ներքեւ , սակայն անշարժ կեցաւ և զգաց որ պիտի նուաղի : Յանկարծ պզտիկ աղջիկն , որ քանի մը վայրկեանէ ի վեր հօրը ձայնէն արթնցեր էր , օրօրոյն վարագոյրները բացաւ : Հայրը չի ճանչնալով և օտար մը կարծելով , որովհետեւ երբեք այս տարօրինակ հագուստներով տեսած չ'ունէր զայն , ահարեկ աղաղակներ արձկեց և գոչեց .

— Ո՛հ , սեւ մա՛րդը : կը վախնամ :

— Բանալի՛ն , կրկնեց Քլօարէք որոտընդոստ ձայնիւ և քայլ մ'եւս մօտենալով կնկանն :

Ժէննի , յանկարծական ներշնչմամբ մը , բանալին կուրծքը խոթեց , օրօրոցին վա-

զեց և աղջիկը թեւերուն մէջ առաւ , մինչդեռ տղան , եւս քան զեւս սարսափելով , կը հառաչէր , դէմքը մօրը կուրծքին վրայ կը պահէր և կը մրմնջէր .

— Ո՛հ , սեւ մա՛րդը , սեւ մա՛րդը , մայրիկս սպաննել կ'ուզէ :

Տկար՝ այլ սրտոտ կինն , ամբողջ ոյժը ժողուելով՝ աղաղակեց .

— Այս բանալին ձեռքէս առնելու համար՝ նախ պէտք է աղջիկս թեւերէս խլես :

— Բայց չ'ե՞ս գիտեր որ բարկութեանս մէջ ամէն բան կ'ընեմ , գոչեց թշուառն՝ կատաղութեան այն աստիճանին հասնելով , որ զմարդ կոյր ու խուլ կ'ընէ նոյն իսկ ամենէն նուիրական զգացմանց . ապա կատաղութեամբ կնոջը վրայ յարձակեցաւ և հէգն Ժէննի , ինքզինքն կորսուած կարծելով , աղջիկը թեւերուն մէջ սեղմեց , գլուխը ծռեց և գոչեց .

— Շնորհ , շնորհ զաւկիս համար :

Այս մայրենի անձկութեան և յուսահատութեան աղաղակն իվօնի աղեաց խորն հնչեց : Յանկարծ կանգ առաւ : Ապա բունն շարժմամբ մը և անդիմադրելի ոյժով մը գոց դրանք վրայ յարձակեցաւ և ուսը զարնելով՝ կոտրեց եւ աներեւութացաւ :

Տիկին Քլօարէք , դրան կոտրուելու աղմուկը լսելով , գլուխը վեր առաւ սոսկմամբ , վասն զի աղջիկը սոսկալի ջղաձգութեանց մէջ ինկած էր և կարծես ոգեւար էր ու հոգին պիտի փչէր :

— Օգնութի՛ւն , գոչեց Ժէննի նուաղկոտ ձայնիւ , օգնութի՛ւն , իվօն , զաւակնիս կը մեռնի :

Սրտակեղեք աղաղակ մը դրսէն պատասխան տուաւ Ժէննիի այս ոգեւար խօսքերուն , վասն զի խեղճին այն հիւանդոտ և երկիւղալի կացութեանը մէջ , այսօրինակ ահուգող մը կրնար սպաննել զինքն :

« Իվօն , զաւակնիս կը մեռնի » : Քլօա-
րէք , որ դեռ շատ հեռուն չէր , լսեր էր
կնոջն այս ողբալի աղաղակը :

Բարկութեան արբշուութիւնը մէկէն ի
մէկ ցնդեցաւ , երբ մտածեց թէ՛ « զա-
ւակս կը մեռնի » : Իվօն այն ատեն յուսա-
հատութեամբ կնկանը սենեակը վազելով՝
տեսաւ որ ոտքի վրայ կեցեր , բայց արդէն
ուրուականի մը պէս դալկացեր էր :

Այն ատեն ժէննի գերագոյն ճգամբ մը
երկու թեւերն երկնցուց՝ զաւակը ամուս-
նոյն յանձնելու համար՝ և ըսաւ .

— Ա՛ռ , ես կը մեռնիմ :

Իվօն մեքենաբար աղջիկը թեւերուն մէջ
սեղմեց . նա կարծես շանթահար եղած
էր . չէր լսեր , չէր տեսներ այլ եւս :

Ե .

Այս մեր պատմած դէպքերէն գրեթէ
տասներկու տարի ետքը , 1812ի Մարտ
ամսուն վերջերը , կէս օրէն ետքը ժամը
երկուքի միջոցին , հետիոտն ճամբորդ մը
եկաւ Կայսերական Արժուի պանդոկը , միակ
իջեւան Սօրվիլ աւանին , ուր կը գտնուէր
այն ատեն Տիէրէն Բարիզի ճամբուն վրայ
սուրհանդակի երկրորդ կայարանն :

Այս ճամբորդն , որ առնական տիոց
մէջ էր , մոմազօծ գլխարկ մը և խոշոր կա-
պոյտ վերարկու մը կը կրէր , որու պղնձէ
կոճակներուն վրայ խարխիս մը դրոշմուած
էր . այս անձը վաճառականական նաւու
ստորին պաշտօնէի մը երեւոյթն ունէր :
Մազերն ու կիսամօրուքը շէկ էին , երե-
սին գոյնը՝ դեղնօրակ , դէմքը խիստ և ան-
տարբեր . Փրանսէրէնը խիստ լաւ կը խօ-
սէր , թէև ինքն անկլիացի էր :

Այս մարդը , փոքր ինչ վարանելէ ետ-
քը , իջեւանին մեծ սրահը մտաւ և պան-
դոկապետին դիմելով , որն որ իւր բամ-
բակէ գտակէն և ճերմակ գոգնոցէն կը
ճանչցուէր , ըսաւ .

— Կրնա՞ք ըսել ինձ , պարո՞ն , թէ այս
առտու գրեթէ ինձ պէս հագուած ճամ-
բորդ մը եկա՞ւ մի հոս . դէմքը շատ թուխ
և խտալացւոյ պէս խօսող մարդ մը , որու
անունը Բիէթրի է :

— Այդ անուամբ և դէմքով մարդ չի
տեսայ հոս , պարոն :

— Ապահով էք :

— Շատ ապահով :

— Արդեօք այս աւանին մէջ ուրիշ ի-
ջեւան կա՞յ :

— Ո՛չ , ո՛չ , պարո՞ն , փա՛ռք Աստու-
ծոյ : Իմս միայն կայ . ասոր համար ճե-
պընթացներէն և սուրհանդակի կառքե-
րէն ելնողները բոլոր հոս կուգան , ինչ որ
ճամբորդներուն համար ալ մեծ հանգըս-
տութիւն է , որովհետեւ կառքերը դրանս
մօտ կ'իջնեն :

— Վա՛յ , ըսաւ անկլիացին՝ այս պա-
րագային ուշադրութիւն ընելով , կառ-
քերը ձեր դրան մօտ կ'իջնեն՝ հա՞ :

— Փողոցին միւս կողմը , գրեթէ մեր
դէմը :

— Կրնա՞ք ինձի սենեակ մը տալ և եր-
կու հոգւոյ համար նախաճաշ պատրաս-
տել . մէկուն կը սպասեմ , որ վարպետ Տիւ-
բօն պիտի հարցնէ , իմ անունս այս է :

— Լաւ , պարո՞ն :

— Երբ այդ անձը դայ՝ նախաճաշը բե-
րէ՞ք :

— Հասկցայ , պարո՞ն : Ձեր կահերն
ո՛ւր են :

— Ես կահ չ'ունիմ : Տիէրի շրջակայնե-
րէն շրջագայելով մինչեւ հոս եկայ :

— Անիծա՛ծ : Շիտակը , պարո՞ն , նա-

ւարկուի մը համար, վասն զի նաւարկու
ըլլալնիդ անմիջապէս հասկցայ . . .

— Նաւարկու ըլլալս իրաւ է :

— Ի՞նչ կ'ըսէի . . . նաւարկուի մը հա-
մար շատ ճամբայ է Տիէբէն մինչեւ հոս :

— Եւ ոչ մէկ հատ, պարո՛ն :

— Բարիզէն կամ Տիէբէն ամենեւին
կառք չ'եկաւ՝ հէ՞ :

— Ո՛չ, պարո՛ն . ո՛չ Բարիզէն և ո՛չ
Տիէբէն : Բայց Տիէբ ըսի՛ միտքս եկաւ .



— Ա՛ո, ես կը մեռնիմ : Երես 24

Անկլիացիին խնդալու և խօսելու տրամա-
դիր չէր երեւնար . փոխանակ պանդոկա-
պետին կատակին պատասխանելու՝ յարեց .

— Այսօր ասկից սուրհանդակի կառք
չատ անցա՛ւ :

քանի որ անկից կուգաք, ըսել է տեսաք
այն նշանաւոր դիւցազնն, որու վրայ կը
խօսի ամէն մարդ :

— Ի՞նչ դիւցազն :

— Սա հռչակաւոր ծովահէնն, որ

անկլիացւոց ժանտախտն է . Անտիւրսի (կործարասիր) անվեհեր նաւապետն . Ինչ ծովահէնի անուն . կ'երեւնայ որ իր Թիւր Տ'Աֆէր (գժոխային հրատ) երկկայմովն , որ ձկան պէս կը վազէ եղեր , ամենեւին անկլիական նաւ մը չի փախցներ , ամէնքն ալ կը կողոպտէ , օրինակի համար վերջին անգամուան ցորենը , զոր յափշտակեց ձեռուընուն՝ կատաղի ճակատամարտէ մը ետքն . Ինչ ալ յաջող բախդ . ցորենն այս տեղուանքը շատ սուղ էր , հիմայ պիտի աժննայ . սովի տեղ առատութիւն : Քաջ ծովահէն . Ինչ երջանկութիւն գիտնալ թէ սա աւազակ անկլիացիներն սպաննելու հետամուտ եղողներ կան , անանկ չ'է , պարոն : կ'ըսեն թէ Տիէբի մէջ յաղթանակօք տարեր են զինքը : Ասկից զատ , բաղդըն ալ շատ բաց է , վասն զի կ'ըսուի թէ , թէև առիւծի նման կը կռուի , բայց երբեք վիրաւորուած չ'է : Իրա՞ւ է արդեօք : կը ճանչնա՞ք զինքն . Ինչ ձեւ մարդ է . դէմքին վրայ գաղափար մ'իսկ չ'ունիմ , բայց սոսկալի ըլլալու է . կ'ըսեն թէ միշտ տարօրինակ հագուստներ կը հագնի : Դուք որ նաւարկու էք , այս դիւցազնը տեսած էք հարկաւ :

— Երբեք , պատասխանեց ճամբորդը , որ ծովահէնին համար պանդոկապետին զգացած հիացմանը մասնակից չ'էր երեւնար :

- Ապա յարեց .
- Զիս սենեակս տարէ՛ք և վարպետ Տիւրօնը հարցնողն ալ հոն բերէ՛ք : Զի մոռնա՛ք :
- Հասկցայ , պարոն :
- Այն անձը գալուն պէս՝ նախաճաշնիս բերէ՛ք :
- Լա՛ւ , պարոն . հիմայ ձեզ սենեակնիդ տանիմ :
- Փողոցին վրայ կը նայի :

— Այո՛ , պարոն , երկու գեղեցիկ պատուհան ունի փողոցին վրայ :

- Լաւագոյն գինիդ հանէ՛ մեզ ,
- Հանդարտ եղիք , ձեզ գոհ կ'ընեմ , պատասխանեց պանդոկապետն :

Օտարականն իր սենեակը տարաւ և դուրս ելլելով՝ ինքնիրենն ըսաւ .

— Զարմանալի բան , այս նաւարկուն կարծես կը նեղանար հռչակաւոր ծովահէնին վրայ աղեկ խօսելու , և սակայն արուեստակից են , քանի որ երկուքն ալ նաւարկու են : Բայց ես ալ ինչ ապուշ եմ . նոյն իսկ արուեստակից ըլլալուն համար է որ նեղացաւ՝ երբ միւսին վրայօք աղեկ խօսեցայ . ճիշդ ինձի պէս . եթէ դան ըսեն ինձ թէ պանդոկապետ մը կուզէ հոս հաստատուիլ , Աստուած գիտէ թէ ինչ բարեմաղթութիւններ կ'ընեմ :

Պանդոկապետն այս մտածմանց զբաղած էր , երբ երկրորդ ճամբորդ մը մըտաւ իջլանին մեծ սրահն : Այս անձն ալ նաւաստիի վերարկու մը հագած էր : Իւր պղնձի գոյնն , թանձր ու ընքուիներուն պէս սև մազերը , մանեկաձեւ լայն մօրուքը , խիստ և դրեթէ զազիր դէմքն ա՛նախորժ երեւոյթ մը կուտային իրեն . սա մալթացի էր և հնչմունքն իտալացւոյ հընչմունքին մօտ : Մեծ սրահին մէջ հետաքրքրական նայուածք մը նետելէ վերջը , այս նորեկն , անհասկանալի ֆռանսերէնով մը ըսաւ պանդոկապետին :

- Հոս ճամբորդ մը եկա՞ւ :
- Վարպետ Տիւրօն անուն ճամբորդ մը , չէ՞ մի :
- Այո՛ :
- Հետս եկէ՛ք , պարոն , ձեզ իւր սենեակը տանիմ :

Երբ անկլիացին ու մալթացին մէկ տեղ գտնուեցան , պանդոկապետն անոնց նա-

խաճաշը տարաւ և հրամայեցին իրեն որ կանչուած ատեն միայն գայ :

Երկու օտարականք առանձին մնալնուն պէս՝ մալթացին կատաղութեամբ սեղանին զարկաւ և անկլիերէն լեզուաւ գոչեց ,

— Գետինն անցնելիք մաքսանէնգը չի հաճիր . ամէն բան կորսուած է :

— Ի՞նչ կ'ըսես :

— Եղածը , և Աստուած վկայ սա դանակն ուրախութեամբ կը մխէի մեզ մատնող վատին սիրտը :

Եւ մալթացին , որ բարկութենէն դեղներ էր , դանակը սեղանին զարկաւ :

— Կրո՞ղ , գոչեց անկլիացին՝ իւր սովորական պաղարիւնութիւնը կորսնցնելով : Եւ այս իրիկուն , մթնշաղին , նաւապետը պիտի անցնի . . . :

— Ապահո՞վ ես :

— Այս առտու Տիէրէն ելած միջոցիս , մեր լրտեսն ըսաւ որ նաւապետը սուրհանդակի կայանէն ձիեր ուզեր էր կէսօրէն վերջը ժամը ևին համար , ըսել է հինգին վեցին հոս պիտի ըլլայ և մթուն հոն պիտի հասնի :

— Ռո՞ւմբ և կայծակ . ամէն բան յաջողեր էր և եթէ սա թշուառական մաքսանէնգը չըլլար : . . .

— Բիէթրի , ըսաւ անկլիացին հանդարտելով , գուցէ ամէն ինչ կորսուած չէ . բանութիւնը օգուտ չունի , պաղարիւնութեամբ խօսինք :

— Պաղարիւնութեամբ խօսի՛լ , երբ արիւնս գլուխս կը ցատկէ և զիս կը կուրցընէ :

— Կոյրը ճամբան չի տեսներ :

— Բայց ըսել է դու այդ մարդը չե՞ս ատեր որ այդպէս հանդարտ կը կենաս :

— Ե՞ս :

Անկարելի է բացատրել թէ անկլիացին ի՞նչպէս հնչեց այս միակ եւ բառը :

Պահ մը լռելէ վերջը , հանդարտ ձայնիւ շարունակեց :

— Ես զինքն ձենէ աւելի ատելու եմ , Բիէթրի , քանի որ չեմ ուզեր սպաննել զայն :

— Ճզմուած օձն ա՛լ չի խայթեր :

— Այո՛ , բայց չի ալ տառապիր , եւ պէտք է որ այս մարդը մահուրնէ աւելի գեշ ցաւեր քաշէ իր հպարտութեամբը , պէտք է տուժէ մեր երկրին հասուցած սոսկալի չարիքները այն անգութ ու լիրբ յաղթանակներն , որք մեր նաւուց սուկում և նախատինք պատճառեցին . պէտք է տուժէ երկու անգամ ինձ յաղթելու փառքը , պէտք է տուժէ վերջապէս իւր նախատական վեհանձնութեամբն ինձ ըրած թշնամանքը : Ի՛նչ , ըսել է ես այնքան չընչին թշնամի մ'եմ որ , զիս ազատ կը թողու այն վերջին ճակատամարտէն ետեւ , յորում այնքան ոսկի և արիւն կորուսինք , առանց իրմէն կաթիլ մ'արիւն վազելու . . . վասն զի կարծես այդ մարդն անխոցելի է . ո՛հ , դժո՛խք վկայ , կ'ուզեմ վրէժս առնել . կ'ուզեմ Անկլիոյ վրէժն առնել :

— Քիչ մ'առաջ , ըսաւ մալթացին չարամիտ ժպտով մը , Բուսէլ նաւապետը խօսքերուս բուռն ըլլալուն համար կը յանդիմանէր զիս , և ահա՛ հիմայ վրէժ կը գոչէ , երբ վրէժը ձեռքերնուս կը ճողոպրի :

— Իրաւունք ունիս , ըսաւ Բուսէլ հանդարտելով : Բարկութիւնը գեշ է , չի յուսահատինք : Նախ պատմէ՛ թէ ի՛նչ անցաւ քու և մաքսանէնգին մէջ :

— Այս գիշեր ձկնորսի նաւակով մը Տիէրէն ճամբայ ելայ և ծովեզերքէն նաւելով՝ առաւօտուն Նօզէյի ծոցը հասայ և գացի մաքսանէնգին խրճիթը , որ ծովուն եզերքն է : « Անուննիդ Պէզէլէ՛ք է , ըսի : — Այո՛ : — Ես վարպետ Քէլլէրի

կողմէն կուգամ: — Ի՞նչ է ձեր ճանչ-
 ւորութեան բառը: — Նստաւոր (Passe-
 -partout): — Լա՛ւ . . . ես ալ ձեզ կ'ըս-
 պասէի. իմ փոքրիկ երկկայմս պատ-
 րաստ է: Այս իրիկուն ժամը տասին ջու-
 րերը կը բարձրանան և հովը շատ յաջող
 է Անկլիա անցնելու համար, եթէ չի փոխ-
 ուի: — Պ. Քէլլէր խնդրոյն ի՞նչ ըլլա՞ն ը-
 սա՛ւ ձեզ: — Այո՛ . . . մէկը տարուի պի-
 տի եղեր ի Ֆօլքէնթըն: — Այո՛, կամայ
 կամ բռնի: — Այո՛, բայց ողջ առողջ, ա-
 ռանց կեանքին մնասելու: Ես մաքսանենդ
 եմ. բայց մարդ չեմ սպաններ: Ուտի այս
 իրիկուն այդ մարդը հոս բերէք, և ես կը
 խոստանամ վաղը, արեւը չի ծագած,
 Անկլիա հանել զայն: — Քէլլէր ըսա՛ւ որ
 պէտք է ինձ հետ տաք ձեր ամենէն քաջ
 նաւաստիներէն չորս հինգ հոգի: — Ին-
 չո՛ւ համար: — Որպէս զի յիշեալ մարդն
 ասկէց երեք փարսախ հեռուէն անցած
 ատեն՝ յափշտակենք: — Պ. Քէլլէր ատանկ
 բան մը չըսաւ ինձ, և ես ու իմ մարդիկս
 այդպիսի բաներու չենք խառնուիր. ատի
 մնասակար խաղ մ'է. դուք ճամբորդը
 հոս բերէք, ես զայն Անկլիա կը տանիմ.
 ահա՛ այնքան: Եթէ դէմ դնէ, կրնամ
 ենթադրել որ գինով է և թէ իր օգտին
 համար զինքը Անկլիա կը տանին. բայց
 մարդ յափշտակելու օգնե՛լ, երբեք: »
 Ահա՛ ասոնք են այն թշուառական մաք-
 սանենդին վերջին բառերը, թախանձանք,
 խոստում, սպառնալիք, ամէն ինչ անօ-
 դուտ եղաւ իր որոշումը փոխելու համար:
 — Ա՛հ, ասի ձախորդութիւն մ'է:
 — Կը տեսնե՞ս, Բուսէլ, այս միջոց-
 ները մէկ կողմ ձգելու ենք. մենք որքան
 ալ որ հաստատամիտ ենք, անկարելի է
 որ երկուքս առանձին այս բանն ընել փոր-
 ձենք, նոյն իսկ ենթադրելով որ կառա-
 պանը չեզոք մնայ: Մեր տեղեկութեանց

նայելով՝ նաւապետին հետ պիտի գըտ-
 նուի եղեր նաև իր թնդանօթապետը, այն
 անվեհեր ու անձնուէր մարդը, որ երբեք
 քովէն չի զատուիր ո՛չ ծովու և ո՛չ ցա-
 մաքի վրայ. երկուքն ալ ուժով են և
 հարկաւ աղեկ զինուած: Մարդ խենթ
 ըլլալու է որ այսպիսի բան մը փորձէ:
 — Իրաւ է, մրմնջեց անկլիացին ու-
 ժաթափ:
 — Բայց ուր որ ոյժն օգուտ չունի,
 նենդութիւնը կը յաղթէ, յարեց մալթա-
 ցին քիչ մը մտածելով, և կարելի է . . .
 — Միտքդ բացատրէ՛: . . .
 — Մտիկ ըրէ՛. . . ծովեղերքէն մինչև
 հոս եկած ատենս՝ ճամբան աղեկ մը քըն-
 նեցի: Այս աւանէն գրեթէ մէկ փարսախ
 հեռուն էր որ մեծ պողոտայն մտայ, այս
 տեղն, ուր քարէ խաչ մը տնկուած է,
 խիստ ցից զառիվեր մը կայ, որու կը յա-
 ջորդէ նոյնքան ալ ցից զառիվար մը:
 — Ետքը՛:
 — Ըսել է որ նաւապետն այս առա-
 նէն անցնելէ վերջը, փարսախ մը հեռուն
 նախ զառիվերին պիտի հանդիպի:
 — Լա՛ւ:
 — Մենք կ'երթանք այդ տեղ կը պահ-
 ուրտինք, մինչեւ այն ատեն կը մթնէ և
 ձիերը կը ստիպուին ծանր ծանր ելլել.
 որոշեալ վայրկենի մը՝ կառքին կը մօտե-
 նանք, և նաւահանգիստ դացող նաւաս-
 տիներ ձեւանալով, նաւապետէն օգնու-
 թիւն կը խնդրենք, ես մէկ դռնէն և դու
 միւս դռնէն, որպէս զի այս մարդն ու իր
 ընկերը խօսքի բռնենք: Այն ատեն ա-
 նոնցմէ վախ չկայ. մեր ատրճանակները
 լեցուն են, դաշոյննիս մէջքերնիս է, և . . .
 — Երբեք, գոչեց Բուսէլ, ես մար-
 դասպան չ'եմ. ես այն մարդուն մահը
 չ'եմ ուզեր. այս սպանութիւնն Անկլիոյ
 նախատինք է և իմ վրէժս կ'իսովին միայն

լուծուած կ'ըլլայ : Ա՛չ, ո՛չ, իմ ուղածս այս աննուած մարդուն կատաղութիւնն ու ամօթն է, երբ մեր ձեռքն իյնալով՝ բանտանաւք չի զրկուած, երկար ատեն առարկայ ըլլայ այն ժողովրդեան նախատինքներուն և եռանդներուն, որ կը սուկար իր անունէն : Երբեք վագր մը իր վանդակին մէջ այնքան կատաղութեամբ մօնչած չ'է : Այո՛, իմ ուղածս այս էր, և, հաւատա՛ խօսքիս, այս տանջանքն և բանտանաւի անտանելի գերութիւնը մահուրնէ հազարապատիկ սոսկալի պիտի երեւնային այն մարդուն : Բայց սա թշուառական մաքսանենդին մերժումը բոլոր դիտաւորութիւններս կը փճացնէ : Երբ այս կայարանն անցնինք՝ ա՛լ ծովուն մերձաւորութիւնն օգուտ չ'ունի, վասն զի պատրաստ նաւ չ'ենք կրնար գտնել, հետեւաբար մեր դիտաւորութիւնն անգործադրելի կը մնայ : Ի՞նչ ընենք :

— Իմ ըսածս ընենք, ըսաւ յամառ մալթացին . հաւատա՛ խօսքիս, մահը վրէժխնդրութեան չափ ծանր չ'է, բայց աւելի ապահով է . մանաւանդ որ հիմայ այդ վրէժխնդրութիւնն անհնար եղած է, մինչդեռ այս մարդուն կեանքը ձեռուրնիս է :

— Լռէ՛, պատասխանեց Բուսէլ կրնճուոտ դէմքով, լռէ՛, փորձիչ դո՛ւ :

— Միջոցն ի՛նչ փոյթ, կը բաւէ որ Անկլիա իւր ամենէն վտանգաւոր թշնամեաց մէկէն ազատի :

— Լռէ՛ կ'ըսեմ :

— Միտքդ բե՛ր այն խել մը բռնուած և այրուած նաւերը, այն արիւնահեղ ճակատամարտները, որոցմէ միշտ այս մարդն անմնաս և յաղթող ելաւ, թէև իւր գորութիւնը մերկններէն շատ վար էր :

— Թո՛ղ զիս :

— Միտքդ բեր թէ միմիայն իւր անունն ո՛րքան ահ կը պատճառէ մեր նա-

ւաստեաց, որք աշխարհի առաջին նաւատիներն են . սակայն մեր վերջի ճակատամարտին ատեն չի լսեցիր որ կ'ըսէին թէ այս անպարտելի մարդուն յաղթանակները գուցէ Անկլիոյ ծովային անկման նախաշաւիղներն էին և թէ ծովն ալ իւր նաբօլէօնն պիտի ունենար, ինչպէս ցամաքն : Միտքդ բեր անգամ մը ասանկ համոզման մը աղետաբեր հետեւանքներն, եթէ այդ համոզումը տարածուի այս միջոցին որ՝ Անկլիա վերջին ճիգ մը կ'ընէ Պոնաբարթը տապալելու և Ֆրանսան ճրգմելու համար :

— Բայց որոգայթ մը, սպանութիւն մը, վատ ոճրագործութիւն մը :

— Ոճրագործութիւն մի . ո՛չ, Անկլիա և Ֆրանսա պատերազմի մէջ են . ասանկ առթէ մը օգտելով թշնամին զարները՝ պատերազմի իրաւունք է :

Բուսէլ չի պատասխանեց, դէմքը ձեռացը մէջ ծածկեց և երկար ատեն մտախոհ մնաց :

Մալթացին ալ խորին մտածմանց մէջ կ'երեւնար :

Այս երկու մարդիկ լուռ մնացին մինչեւ այն վայրկեանն որ, հեռուէն լսեցին կառքի մը ձայնը, կառապանին խարազանին սոյլն և սուրհանդակի ձիոց զանգակներու աղմուկն, որ երթալով որոշ կ'ըլլար : Անկլիացին ժամացոյցը նայելով գոչեց .

— Ժամը հինգն է . . . ինքն ըլլալու է . այս կառքը Տիէբէն կուգայ :

Եւ երկուքն ալ պատուհանը վազեցին և վարագոյրները կէս մը բացին, առանց տեսնուելու դուրս նայելու համար :

Ի՞նչ մը վերջը տեսան տեսակ մը դեղին և փոշեպատ հին կառք, երկու ձիով լծուած, որ փողոցին միւս կողմը և գը-

ընթաց պանդոկին դիմաց սուրհանդակի կայանին առջև կեցաւ :

Քանի մը վայրկեան ետքն անկլիացին՝ կատաղութենէն դեղնելով և անողոք ատելութեան նայուածք մը ձգելով ապակիէն անդին՝ գոչեց .

— Ի՛նքն է , ի՛նքն է :

— Առանձի՛ն է , ըսաւ Մայթացին աշխուժիւ , առանձի՛ն է :

— Այս իջեւանը կը մտնէ :

— Ամէն ինչ յաջող է , իր թնդանօթապետը Տիէր իջած ըլլալու է , յարեց մալթացին : Մենք երկուք ենք , եւ նա առանձին է :

Յանկարծ թուսէլ ճակտին զարկաւ . իւր պաղ ու դալուկ դէմքը թեթեւ մը կարմրեցաւ . սատանայական ուրախութեան կայծ մը փայլեցաւ իւր մոխրագոյն աչքերուն մէջ և սոսկալի յուսով մը դողդողացող ձայնիւ ըսաւ ընկերոջն .

— Մաքսանենդն այս իրիկուն պատրաստ է :

— Այո՛ . ըսի իրեն որ սպասէ , որպէս զի պէտք եղած ատեն փախչելու միջոց մը ունենանք :

— Ամէն բան կորսուած չ'է , գոչեց թուսէլ զանդակը զարնելով : — Վստահութի՛ւն և քաջութի՛ւն :

— Ի՛նչ ըսել կուզես , հարցուց մալթացին , ի՛նչ ըսել կուզես :

— Վերջէն կ'իմանաս : Բայց լռէ՛ , մէկը կուգայ :

Պանդոկապետը սենեակը մտաւ :

— Նախաճաշնիս սքանչելի էր , ըսաւ թուսէլ . պարտքս ի՛նչ է :

— Սենեակն ալ մէկտեղ՝ վեց ֆռանք :

— Առէ՛ք . . . այս ալ տղուն վարձք :

— Շնորհակալ եմ , պարո՛ն : Նորէն հրամանեցէք :

— Հարկաւ : Բայց , ինձ նայեցէ՛ք ,

կարծեմ սուրհանդակի ձիեր կանգ առին հոս : Միթէ նոր ճամբորդ մ'եկաւ ձեր պանդոկն :

— Այո՛ , պարո՛ն , և պարտէզին վրայի գեղեցիկ կապոյտ սենեակը տուի իրեն :

— Ձեր հին յաճախորդներէն մին ըլլալու է , վասն զի այս պանդոկը մէկ մը եկողը նորէն կ'ուզէ գալ :

— Շատ ազնիւ էք , պարո՛ն բայց այս ճամբորդն առաջին անգամ է որ կուգայ :

— Շատ մարդ ունի՞ հետը . երկար ատեն պիտի կենայ հոս :

— Ո՛չ , պարո՛ն , պատառ մը բան պիտի ուտէ և երթայ : Հարուստ ալ չէ . առանձին կը ճամբորդէ եւ պարզ քաղաքացի մը կ'երեւի : Ակռաներուն մէջէն կ'երգէ , ապակիներուն վրայ դաշնակ կը զարնէ և զուարթ կ'երեւնայ . . . շատ սիրուն մարդ մը ըլլալու է :

— Դուք մեծ դիմագէտ մը կերեւնաք , պանդոկապետ , ըսաւ անկլիացին ժրպտելով :

Ապա ընկերոջը նշան մ'ընելով՝ ոտքի ելաւ և պանդոկապետին ըսաւ .

— Յտեսութի՛ւն : Սանկ անգամ մը աւանին մէջ պիտի շրջագայինք և Տիէր վերադառնանք :

— Եթէ կ'ուզէք՝ Բարիզու ճեպընթացին սպասեցէք , այս իրիկուն ժամը Տիին կ'անցնի , պարոններ :

— Շնորհակալ եմ : Մենք թէև նաւաստի ենք , բայց լաւ կը քալենք , և ուղըն ալ սքանչելի է :

— Յտեսութի՛ւն , պարոններ :

Եւ պանդոկապետն՝ այս օտարականներն ողջունելով՝ իւր պանդոկը մտաւ :



2.

Երկու օտարականք պանդոկէն ելլելով՝ քառորդի մը չափ աներեւութացան խորհրդակցելու համար, ապա, իբր անգործ հետաքրքիրներ, մօտեցան ձիերու կայարանին, որու դրան առջեւ մնացեր էր ճամբորդին կառքը. կ'երեւնար որ ճամբայ ելլելու կը պատրաստուէր, վասն զի կառապան մը ձիերը կը լծէր:

Բուսէլ նաւապետն և իւր ընկերը մօտեցան կառքին, որն որ, իրենց և կայարանի մէջ պանդոկին մէջ տեղ գտնուելով, զիրենք բոլորովին կը պահէր: Այն ատեն երկու օտարականք կայարանին դրան քովի քարէ նստարաններէն մէկուն վրայ նստելով՝ սկսան լծուած ձիերը դիտել:

— Բարեկամ, սա ձիդ որքան որ գեղեցիկ, նոյնքան ալ լաւ կ'երեւնայ, ըսաւ վերջապէս Բուսէլ քանի մը վայրկեան քրննելէ ետքը. ասանկ հուժկու կենդանի քիչ տեսեր եմ:

— Եւ շիտակն ալ այդ է . . . պարոն, պատասխանեց կառապանն՝ իւր ձիուն տրուած իրաւացի գովեստին հպարտանալով. երեւցածին չափ ալ կայ. անունը Քարօ (տէօրթ ճէհար) դրեր եմ, և անիծածը իւր անուանն արժանի է:

— Շիտակը, յարեց Բուսէլ, շատ գեղեցիկ կենդանի է. ի՞նչ կուրցը, ի՞նչ գաւակ, ի՞նչ զիտեր . . .

— Հապա գլուխը, ըսաւ Բիէթրի, արարական ձիու մը գլխուն կը նմանի:

— Օ, օ, գոչեց կառապանը, յայտնի է որ դուք ձիէ կը հասկնաք, պարոններ, ուստի կը հաւատաք եթէ ըսեմ ձեզ թէ այս Քարօ ու Սան — Բիւլօն, որ միւս

ձիուս անունն է, քառորդ փարսախի զանաւոր մը վազելով կ'ելլեն:

— Ձեմ զարմանար, և աղւոր բան է ասանկ ձի մը սրունքներուն տակ ունենալ:

— Հարկա՛ւ, վասն զի անանկ աղւոր կը քայլէ որ . . . ըսաւ կառապանը, կարծես նաւակ մ'է. ես Քարօնով մինչեւ Հըռովմ կ'երթամ:

— Թէև նաւարկու եմ, բայց շատ հեղ ձի նստեր եմ, յարեց անկլիացին. բայց երբեք ասանկ ձիու մը վրայ հեծնալու բարեբախտութիւնն ունեցած չեմ:

— Աղւոր չեմ զարմանար և կրնամ ապահովցնել զձեզ որ երբեք ալ հեծնելիք չունիք:

— Մե՛ղք:

— Է՛ . . . ի՞նչ ընենք:

— Բարեկամ . . . կ'ուզե՞ս քառասուն ֆռանք վաստկիլ, ըսաւ անկլիացին պահ մը լուռ կենալէ վերջը:

— Քառասուն ֆռանք, ըսաւ կառապանն ապշելով. քառասուն ֆռանք վաստկի՛մ, ե՞ս:

— Այո՛:

— Ի՞նչպէս նայինք, պարոն:

— Շատ պարզ միջոցով մը:

— Ի՞նչպէս:

Այն վայրկենին որ անկլիացին իր առաջարկութիւնը պիտի ըներ, պանդոկին սպասաւորներէն մին փողոցէն անցաւ եւ եկաւ կառապանին ըսաւ.

— Մի՛ աճապարեր, Ժան — Բիէն, վասրն զի կառքին տէրը դեռ ուշ կուգայ:

— Ինչո՞ւ համար ուրեմն այդպէս առաջուց ուղեց ձիերը:

— Ի՞նչ գիտնամ, պատասխանեց սպասաւորն. այս մարդը աղքատ կ'երեւնայ: Գինիի տեղ կաթ կը խմէ և երկու հաւկիթ ու հացի թան միայն կերաւ:

— Հացի թան և կաթ: Հասկցանք

ի՛նչ մարդ ըլլալը , ըսաւ ժան — Բիէռ :
Ապա յարեց .

— Բայց դու զիս խօսքի բռնեցիր եւ մոռցայ . . . :

Այն ատեն խօսքը Բուսէլի ուղղելով՝
— Ինձ նայեցէ՛ք , պարո՛ն , ըսաւ ,
քիչ մը առաջ առաջարկեցիք ինձ . . . :

Անկլիացին նշան մ'ըբաւ կառավարին՝
և աչքով պանդոկի սպասաւորը ցուցու-
նելով՝ ցած ձայնիւ ըսաւ .

— Կայարանին բակն եկէ՛ք , ձեզի խօսք
ունիմ :

— Անկարելի է Քարճ առանձին ձգել ,
պարո՛ն . Սա — Քիւլէի հետ աղւո՛ր բա-
ներ կ'ընէ : Տեսէ՛ք , ահա՛ կը սկսի՝ չա-
րաճճին , յարեց ժան — Բիէռ ձիերուն
մօտենալով , որք կը խխնչէին և կը տրո-
փէին : Է՛ , Քարճ , դոչեց , խելո՛ք կեցի՛ր ,
սրիկա՛յ . եթէ բան մը ընես . . . խերդ
կ'անիծեմ :

— Ուրեմն մտիկ ըրէ՛ք , ըսաւ անկլի-
ցին կառապանին ականջին ծռելով և քանի
մը վայրկեան ցած ձայնիւ խօսելով :

— Ա՛հ , յարեց կառապանը խնդալով ,
ահա՛ ծիծաղելի գաղափար մը :

— Է՛յ կ'ընդունի՛ք :

— Շիտակը . . .

— Եթէ կ'ընդունիք , ահա քսան ֆը-
ռանք . . . մնացածն ալ այն տեղ կու-
տամ . . . : Ձեզի համար բան մը չկայ
այս տեղ . աս մնասակար բան մը չէ :

— Ամենեւի՛ն : Բայց իրաւ տաի աղ-
ւոր գաղափար մ'է , ճշմարիտ նաւաստիի
մտահաճութիւն մը . . . : Ես Տիէբի կա-
յարանը կեցեր եմ : Տեսնելու բան էր թէ
այն ծովահէններն , երբ աւարէն իրենց
բաժինն առնէին , ի՛նչպէս «յ»ի կամ «չ»ի
մը համար ստակ կը նետէին : Օր մը ա-
նոնց մէկը մինչեւ քսանհինգ նաբօլէճն
տուաւ ծեր ու կուզիկ քահանայի մը , որ

պէս զի կնոջ պէս փետրաւոր գլխարկ մը
դնէ և ֆուլուլով շրջադգեստ մը հագնի և
իրենց հետ կառքով շրջագայի . . .

— Այնպէ՛ս է , սիրելիս , յարեց Բու-
սէլ ժպտելով , նաւաստիք քիչ անգամ
ցամաք ելլելուն , թող տալու է որ ու-
ղածնին ընեն , առանց սակայն մէկուն վը-
նասելու :

— Հարկա՛ւ :

— Ուրեմն որոշուեցա՛ւ :

— Պա՛հ , յարեց կառապանն . . . ա-
սանկ դինի չի խմող և հացի թան ուտող
յաճախորդի մը համար ատանկ բաներ չի
նայուիր . . . : Ասկից դատ , ան չի հաս-
կընար . . . : Որոշուեցա՛ւ , պարո՛ն :

— Ահա՛ քսան ֆրանք , ըսաւ Բուսէլ ,
ոսկին կառապանին ձեռքը տալով : Նոյն-
քան ալ վերջէն պիտի առնէք :

— Լա՛ւ . . . : Բայց շուտ ըրէ՛ք , վա-
սըն զի ասկից ինչուան հոն դրեթէ մէկ
փարսախս է . . . : Բայց ես ձեզի ժամա-
նակ կը ձգեմ . . . : Եթէ հացի թան ու-
տողն ըսէ թէ Սա — Քիւլէ ծանր կը բալէ ,
կ'ըսեմ որ ոտքը կոշկու ունի : Շուտ դա-
ցէ՛ք , պարո՛ն : Չախ դիու ուղին ձեռք
առէք , և շիտակ մեծ պողոտայն կ'ելլէք :

Երկու օտարականք անմիջապէս անե-
րեւութացան :

Գրեթէ մէկ քառորդ վերջը , յորում
կառապանը շատ դժուարութիւն քաշեց
Քարճն և ընկերը զսպելու , կայսերական Արժու-
պանդոկապետը դուռը ելաւ և կառա-
պանին դոչեց .

— Օ՛ն , տղա՛ս , շո՛ւտ , պատրաստը-
ուէ՛ , կառքին տէրը կուգայ :

— Անիծա՛՛ծ , ըսաւ ժան — Բիէռ ինքնի-
րեն , ծանր ծանր պատրաստուելով , շուտ
շուտ եկաւ սա կաթ խմողը . միւս երկուքն
դեռ հասած չ'են :

Կառապանն աս ըսելով կառքը պան-

դոկին դուռը տարաւ . պանդոկապետը
յենարանը իջեցուց ճամբորդին առջեւ և
դունակը գոցեց . ապա , գտակը հանելով ,
յարգանօք ողջունեց իր յաճախորդն եւ
կառապանին ըսաւ .

— Օ՛ն , ժան — Բիէ՛ռ , պարո՛նը շատ
գործ ունի :

— Թռչնոյ պէս պիտի տանիմ զինքն ,
պարո՛ն , պատասխանեց ժան — Բիէռ՝ խա-
րազանը հնչեցնելով :

Եւ ձիերը քշելով՝ շուտ մը անցաւ ա-
ւանէն և հասաւ մեծ պողոտայն . բայց
երկու հարիւր քայլ անդին մէկէն ի մէկ
կայնեցաւ , ետին դարձաւ և սպասեց :

Ճամբորդը զարմանալով՝ պատուհանին
մէկը բացաւ և ըսաւ .

- Ի՞նչ կայ , տղաս :
- Ի՞նչ կայ մի :
- Այո՛ :
- Չեմ գիտեր :
- Ի՞նչպէս , չե՞ս գիտեր :
- Ո՛չ :
- Ինչո՞ւ կեցար :
- Դուք կեցէ՛ք գոչեցիք :
- Ե՞ս :
- Այո՛ , պարո՛ն , ես ալ կեցայ :
- Կը սխալիս , տղաս , ես այդպէս
բան չըսի :
- Ըօիք , պարո՛ն :
- Բայց չէ՛ կ'ըսեմ :
- Պատուոյս վրայ կ'երդնում որ ըսիք .
դուք ուշադրութիւն չէք ըրեր :
- Նորէն կ'ըսեմ թէ կը սխալիս : Օ՛ն ,
ճամբայ ե՛լ , տղա՛ս , և կորսուած ժամա-
նակը ձեռք ձգենք :
- Հանդիստ եղի՛ք , պարո՛ն , կայծակի
պէս կ'երթանք . . . կայարանը հասած ա-
տեննիս կառքը կտոր կտոր պիտի ըլլայ :
- Եւ կառապանը քառատրոփ մեկնեցաւ :
Բայց երկու հարիւր քայլի չափ այսպէս

երթալէն վերջը , դարձեալ մէկէն ի մէկ
կանգ առաւ :

— Է՛յ , ըսաւ ճամբորդը , դարձեալ
ի՞նչ կայ :

— Շա՛նթ և հո՛ւր , գոչեց ժան —
Բիէռ ձիէն իջնելով և հայհոյանքները շա-
րունակելով , ու սկսաւ չուանները շտկել
կեղծել :

- Միթէ փո՞կ մը փրթաւ :
- Գետի՛նն անցնելիք :
- Չիուդ պա՛յտը ելաւ :
- Անիծա՛ծ :
- Բայց գոնէ եղածն ըսէ , տղաս :
- Բան չ'կայ , բան չ'կայ , պարո՛ն ,
ձիուն մէկուն չուանները խառնակեցան և
ժամանակ պէտք է որ շտկեմ :
- Ատ փոքր դժբաղդութիւն մ'է , ը-
սաւ ճամբորդը հանդարտութեամբ . բայց
գոնէ նայէ՛ որ անգամ մ'ալ չ'ըլլայ :
- Հիմայ թռչնոյ պէս պիտի թռչինք
պարո՛ն , ըսաւ ժան — Բիէռ՝ իւր տեղը
անցնելով :

Ապա ինքնիրենն ըսաւ .

— Հացի թան ուտո՞ղ մը քեզի՛ . . . :

Ահա՛ կաթ խմելը ասանկ բան մ'է :

Եւ չարածճին կառքը ճամբայ հանեց՝
խարազանն ուժով մը հնչեցնելով :

Մութը կոխելու կը սկսէր :

Քանի մը աստեղք արդէն կը սլալա-
յին արեւելքի կողմն և արեւը , որ քա-
ռորդէ մ' ի վեր մարը մտեր էր , մթնշաղի
լոյս մը միայն կ'արձակէր :

Հեռուն , ճամբուն ծայրը , կաւճուտ
հողին սպիտակ ցուրին շնորհիւ կը նշմար-
ուէր ցից զառիվեր մը , շուրջն ահագին
կնձնիներով , որոց դեռ եւս լերկ դաղա-
թունք օրօրոցի մը ձեւ ունէին :

Այս բնական գմբեթէն անդին , կա-
պոյտ և յստակ երկնքի մը մէջ կը տես-
նուէր լուսնոյ մահիկն :

Կառքն արագօրէն կը սահէր տասը վայրկեանէ ի վեր և կառապանը, կարծես դիտմամբ, ատեն ատեն խարազանն ուժով կը հնչեցնէր, երբ քիչ քիչ ձիերուն ընթացքը ծանրացաւ, և վերջապէս կառքը կանգ առաւ:

Ժան — Բիէռ վար իջաւ, Գարմի ետևի ոտքերէն մին նայեցաւ և գոչեց:

— Կրո՞ղ, հիմայ ալ ձիերուս մին կը կաղայ:

— Կը կաղա՞յ մի, ըսաւ ճամբորդն անայլայլելի հանդարտութեամբ մը, թէև այս դադարները կրնային մարդս կատղեցընել: — Կը կաղա՞յ հա՞:

— Անդի ծայր, ըսաւ Ժան — Բիէռ՝ ձիուն ոտքը երկու ձեռացը մէջ բռնած:

— Եւ ի՞նչպէս ասանկ մէկէն ի մէկ կաղցաւ, տղա՛ս:

— Չեմ գիտեր:

— Ուրեմն ճամբան պիտի մնամք:

— Ո՛չ, պարո՛ն, մի՛ վախնա՛ք: Գոնէ եթէ կարենայի տեսնել թէ ի՞նչու կը կաղայ. բայց մութ է:

— Շատ մութ, ըսաւ ճամբորդը: Չի մոռնաք լապտերները վառել յառաջիկայ կայարանին:

— Ա՛. մատս քսելով հասկցայ թէ ի՞նչ է, յարեց կառապանն. երկաթին և սըմբակին մէջտեղ քար մը մտեր է: Եթէ կարենամ հանել՝ բան չի մնար:

— Աշխատէ՛, տղաս, վասն զի գործերնիս ձախորդ երթալու վրայ է, պատասխանեց ճամբորդին հանդարտ ձայնն:

Սակայն կառապանը բարձրաձայն կը հայհոյէր քարին, զոր չէր կրնար հանել և քթին տակէն կը խնդար իր վարպետութեանը յաջողելուն, հաշուելով որ բաւական ժամանակ ձգած էր երկու օտարականաց՝ որոշեալ տեղը հասնելու համար. ուստի վարպետորդին քիչ մը վերջը

յաղթական աղաղակ մ'արձկեց և ըսաւ.

— Անիծեալ քարը վերջապէս ելա՛ւ. հիմայ թռչնոյ պէս պիտի թռչինք:

Եւ կառքը ճամբայ ելաւ աւելի արագութեամբ:

Մութը կատարելապէս կոխեր էր. բայց երկնից պայծառութեան և աստեղաց փայլին շնորհիւ՝ աղօտ լոյս մը կար:

Կառապանն այս անգամ մինչեւ զառիվերին ստորոտը գնաց:

Հոն իւր շնչասպառ ձիերը կեցուց և վար իջնելով՝ դռնակին մօտեցաւ և ճամբորդին ըսաւ.

— Ահա՛ հռչակաւոր զառիվերի մը առջեւ եկանք, պարո՛ն. ես ձիերուս քովէն պիտի քալեմ՝ զանոնք մեղմացնելու համար, և երբ զառիվերին դուրսն հասնինք, անիւները պիտի կապեմ, վասն զի զառիվարն ալ շատ ցից է:

— Լա՛ւ, տղաս, պատասխանեց ձայնը:

Արդարեւ կառապանը քանի մը վայրկեան ձիերուն քովէն քալեց. բայց քիչ քիչ իւր քալուածքը ծանրացուց, մինչդեռ կառքը ծանր ծանր զառիվերէն վեր կ'ելլէր, այնպէս որ կառքը Ժան — Բիէռէն առաջ անցաւ:

Այս միջոցին Բուսէլ և Բիէթրի ճամբու եզերքին թուփերուն ետեւէն ելան և շուտ մը կառապանին մօտեցան: Ժան — Բիէռ քալելով՝ հանեց իր դլխարկը, կարմիր օձիքով բաճկոնն և կօշիկներն. անկլիացին ալ իր նաւարկուի վերարկուն հանելով՝ հագաւ այս բաճկոնը, դլխարկը գլուխը դրաւ եւ ոտքը կօշիկներուն մէջ խոթեց: Կառապանը գոհ կերպով մը ժրպտելով, վասն զի նա այս բաները կատակ մը կը կարծէր, խարազանը Բուսէլի յանձնեց և ըսաւ.

— Կ'ըսե՛մ, նորէն կ'ըսեմ, շատ ծիծա-

ղելի բան մը մտածեցիք, ճշմարիտ նա-
ւարկուի գաղափար մը:

— Ի՞նչ բնեմ, բարեկամս, ձիերը կը
սիրեմ և մեծ հաճոյք պիտի զգամ գոնէ
քառորդ մը քու հուժկու և գեղեցիկ ձի-
ուդ վրայ հեծնելով: Անմեղ մտահաճու-
թիւն մ'է այս, չ'է՞ մի:

— Հարկա՛ւ, կառքին մէջի հացի թան
ուտողին ի՞նչ փսաս ունի: Շիտակը շատ
համբերող մարդ է եղեր, այնքան որ իր
համբերութեամբն իմ համբերութիւնս հա-
տուց:

— Իրա՞ւ, ըսաւ Բուսէլ կառքին մօ-
տենալով:

— Ասի նպարավաճառ մ'ըլլալու է և
չար չ'երեւնար: Օ՛ն, պարո՛ն, հիմայ դուք
իմ տեղս ձի պիտի հեծնէք. գիշերը մը-
թին է, այն կաթ խմողը չի նշմարեր իսկ:
Ես ձեր ընկերոջը հետ կառքին ետեւը կը
նստիմ, կայարանէն կէս փարսախս անդին՝
ուրիշ զառիվեր մը կայ:

— Ես այնտեղ կ'իջնեմ, ըսաւ Բուսէլ.
իմ հազուստներս կը հազնիմ, դուք ալ
ձերինները, ու ամէն բան կը լինայ. հի-
մայ ահա՛ խոստացած քսան ֆռանքս:

Եւ Բուսէլ ոսկի մը դնելով Ժան-Բիէռի
ձեռքը՝ քայլերը մեծցուց, զառիվերին
գլխուն քսան քայլ մնացած հասաւ ձիե-
րուն և սկսաւ անոնց քովէն քալել:

Գիշերը բաւական մութ ըլլալով՝ ճամ-
բորդը չի կրցաւ եղած փոփոխութիւնը
նշմարել. ասկից զատ բնաւ չ'էր զարմա-
ցեր քանի մը վայրկեան կառապանին իր
ձիերէն հեռանալուն, վասն զի ասի շատ
հեղ կը պատահի. սակայն՝ երբ կառքը
զառիվերին գլուխը հասաւ, ճամբորդն ը-
սաւ կառապանին.

— Տղա՛ս, անիւները լաւ կապելու չի
մտնաս:

— Հիմայ, պատասխանեց կեղծ կա-
ռապանը ցած ձայնիւ:

Ապա, կառքին ետին անցնելով, ցած
ձայնիւ ըսաւ մալթացիին և Ժան-Բիէռի.

— Դուք ետեւի տախտակին վրայ նըս-
տեցէ՛ք և ամուր կեցէ՛ք, անիւները պի-
տի կապեմ:

Երկու մարդիկ յիշեալ տեղը նստան՝
ձեռօք բռնելով զսպանակի երկաթը, մինչ-
դեռ Բուսէլ կապելու շղթային ձայնը հա-
նելով՝ կապել կը կեղծէր, բայց շղթայն
մէկ կողմ կը ձգէր, փոխանակ անիւին ան-
ցընելու:

Ապա անկլիացին իր տեղն անցնելով՝
մտրակները մղեց իր ձիուն կուշտն և սոս-
կալի արագութեամբ մը սկսաւ կառքը
քշել զառիվարէն դար վար:

— Անիծա՛ծ, կրո՛ղ, կորսուեցանք,
հացի թան ուտողն ալ միատեղ, գոչեց
Ժան-Բիէռ՝ լսելով որ շղթայն գետին կը
քսուի. ընկերնիդ աղէկ չէ կրցեր կապել:

Մալթացին փոխանակ պատասխանելու
կառապանին, ատրճանակին կոթոյն ա-
նանկ ուժով մը զարկաւ գլխուն որ, Ժան-
Բիէռ զսպանակը ձեռքէն ձգեց և ճամ-
բուն վրայ ինկաւ, երբ կառքը զառի-
վարին վրայ կ'աներեւութանար՝ փոշոյ
ամպի մը մէջ:

Է.

Շատ օրեր անցեր էին, յորմէ հետէ
մեր յիշած ճամբորդն ինկեր էր Բուսէլ
նաւապետին և անոր ընկերոջը լարած դա-
կարթին մէջ:

Ընթերցողը պիտի տանինք Հավրէն եր-
կու փարսախս հեռու՝ Լիօնվիլ փոքրիկ ա-
ւանին ծայրը գեղածիծաղ բնակարան մը:

Այս տեղը ծովեզերքին շատ մօտ ըլլալուն , ծովը կը տեսնուի հեռուէն :

Խոր հանդարտութիւն մը , առողջ օդ մը , բերրի և միանգամայն նկարչական երկիր մը , զով ստուերներ , պարարտ արօտներ և ովկիանոսի տեսքն ճշմարիտ երեւումը կը դարձնէին Լիօնիին ու շրջակայները՝ խաղաղութիւնը , մտախոհութիւնն և մենաւոր նկատողութիւնը սիրողներուն համար :

Ինչ որ ինչպէս ուրիշ շատ մը քաղաքաց , նոյնպէս և այս աւանին հանդարտ և զարմանալի տեսք մը կուտար՝ երբեք չըլլալն էր . կայսրութեան վերջին պատերազմները դրօշակի ներքեւ կոչած էին բոլոր առողջ երիտասարդները , եւ 1812 տարւոյ մարտի մէկ հրովարտակն ոտք հաներ էր ազգային պահագնդից պահեստի մասն , որու մէջ էին 18 էն մինչև 60 տարեկան բոլոր ֆռանսացիք :

Ուտի այն ատեն իբր Գեորգի մը կը նրկատուէր քսան և հինգ տարեկան երիտասարդ մը , որ իր քաղքին մէջ կը գտնուէր՝ առանց կուղ , կաղ կամ մէկ թեւը կորուսած ըլլալու :

Լիօնիի աւանն ունէր ասանկ հրաշալիք մը , այն է առ առաւելն 24 տարեկան գեղեցիկ երիտասարդ մը . սա ալ ըսենք թէ անփոյթ կ'երեւնար իւր Գեորգի ըլլալու առաւելութիւնները վայելելու . թէ՛ ճաշակով և թէ՛ վիճակով քաշուած կ'ապրէր :

Այս երիտասարդը մեր յիշած գեղածիծաղ և հանդարտ բնակարանին բնակչաց մին էր : Արդ , մեր ճամբորդը Տիէբի ճամբուն վրայ կեղծ կառապանի մը ձեռօք յափշտակուելէն շատ օր ետքը , հասուն տարիքով կին մը , աղջիկ մը և երիտասարդ մը (յիշեալ Գեորգի) իրիկուան ժողուուեր էին վայելուչ շտկուած գեղե-

ցիկ սրահի մը մէջ . ազուոր կրակ մը կը վառէր վառարանին մէջ , որովհետեւ դեռ գիշերները զով էին . ալապատէ գունդով կանդեղ մը իւր գեղեցիկ լոյսը կը սփռէր սենեկին մէջ , մինչդեռ չայնիքն , որ կրակին առջեւ դրուած էր , իւր թեթեւ աղմուկը կը հանէր :

Դիտող մը գուցէ նշմարեր թէ՛ այս սրահին զարդու և այլ առարկայից շատերն «նկուկ» էին , թէև այն ատեն ցամաքային օրէնքն անկլիական բերքերը խստիւ արգիլած էր : Մէկ խօսքով , այս բնակարանին մէջ կօտվուտի հողէ ամաններէն սկսեալ մինչեւ ամէնէն թափանցիկ և բարակ ներկուած յախճապակիներն , ամէն ինչ անկլիական արուեստի գործ էր . նոյնպէս նաև թէյի ամաններն , որք արծաթէ էին . միայն թէ ընդհանրապէս տեսակ տեսակ էին . օրինակի համար , թէյ շինելու համար եռացող ջուր լեցուած ամանին բերնին վրայ դքսական թագ մը կար , բայց բուն չայնիքին վրայ պարզ ասպետի սաղաւարտ մը և շաքարամանը զարդարուած էր երկու սկզբնատառերով : Հակառակ այս աննմանութեանց՝ արծաթեղէնը խիստ ճոխ էր , և շատ գեղեցիկ էր այս թուխ հայելիներուն՝ հրոյ ցոլքովն և կանթեղի լուսով փայլիլը տեսնել :

Միջին տարիքով կինը՝ զուարթ և աղնիւ դէմք մ' ունէր . ճիշդ քառասուն երկու տարեկան էր . բայց մազերը դեռ շատ սեւ էին , դէմքը թարմ , ակռայները սպիտակ , աչքերը կրակոտ , և զուարթ ժրպտին մէջ անուշութիւն կը փայլէր . գեղեցկաձեւ հասակը , փոքր ինչ գիրնալով՝ վայելչութենէն մաս մը կորուսեր , բայց վեհափառութիւնն աւելցեր էր . մէկ խօսքով այս ազնիւ խաթունն ամէնուն աչքին կը զարնէր , երբ , «նկուկ» տանթէլէ թարմ գտակ մը գլուխը , «նկուկ» նուրբ

կերպասէ վայելուչ շրջազգեստ մը հագած, ուսերուն վրայ անկէպէտ գեղեցիկ ցփախ մ'առած, աւանին եկեղեցին կ'երթար մատաղ աղջկան մը հետ, որու աւելի մտերմութիւն էր քան թէ խնամածուն:

Այս աղջիկը տասն և եօթը տարեկան էր. բարձրահասակ, նիհար, նուրբ և անդի ծայր ջղային և դիւրազգած կազմութիւն մ'ունէր:

Այս դիւրազգածութիւնն, որ շատ անգամ չտիազանց կ'ըլլար, սկզբնական պատճառ ունեցած էր շատ տարիներ առաջ պատահած աղետալի դէպք մը, որու դիխաւոր հետեւանքն եղած էր այս աղջիկն անդի ծայր վախկոտ ընել. յանկարծական աղմուկ մը, անակնկալ զարմանք մը, սոսկալի պատմութիւն մը զինքն ակամայ ահուդողի մէջ կը ձգէին, որոց համար կը խպնէր, բայց չէր կրնար յաղթել անոնց:

Դժուարին էր աւելի սիրուն և աւելի սրտազրաւ դէմք մը երեւակայել, և երբ երբեմն այն ակամայ վախին չկրնալով յաղթել մէկէն ի մէկ կը սարսփէր և սիրուն գլուխը վեր բռնելով՝ սրտատրոփ մտիկ կ'ընէր, իւր շնորհալի կեցուածքն, անուշ ու կապոյտ աչքերն ահաբէկ վիթ (gazelle) մը կը յիշեցնէին մարդուս:

Այս աղջիկն իւր ջղային և անդի ծայր դիւրազգած բնաւորութեանը պատճառաւ առողջ գոյն մը չ'ունէր: Սովորաբար շատ դեղնած էր, բայց ամենավտար այլայլութիւնը կը շիկնեցնէր զինքն. այն ատեն իր չքնաղ դէմքը շագանակագոյն և մետաքսանման մազերուն մէջէն կը փայլէր երկտասարդական բովանդակ թարմութեամբն: Իրաւ է թէ եթէ աւելի գոյն և լեցուն մարմին ունենար՝ նիւթական հրապոյրն պիտի աւելնար, բայց պիտի կորսնցնէր իւր սրտազրաւ, գրեթէ իսկ իտէական

դէմքին հրապոյրն, երբ ճերմակներ հագած, բարակ քող մը ձգած նուազկոտ դէմքին, ծանր ծանր կը շրջէր ծովեզերքը կամ տանը պարտէզին հովանուտ ծառուղիներուն մէջ:

Սրահին մէջ խմբուած երեք անձանց վերջինն էր ժամանակին գեղեցիկ, այսինքն որոշակի սակ չէ կանչած երեսասարդ և գեղեցիկ ողջ մը:

Այս փիւնիկն քսան և հինգ տարու էր, միջահասակ, նուրբ, բարեձեւ, կանոնաւոր և շնորհալի դիմօք. բայց իւր մտախոհ կերպարանքին վրայ տեսակ մը մեղամաղձոտ շփոթութիւն կը նշմարուէր, ինչ որ մեծ պակասութեան մ'արդասփէր էր, պակասութիւն մը, որ զինքն ազատեր էր զինուորական ծառայութենէ. այս երիտասարդն այնքան կարճատես էր որ, հազիւ կրնար ուղիղ քալել. ասկից զատ, զգայարանական տարօրինակութեամբ մը, բնաւ օգուտ մը չէր կրնար քաղել ակնոցներէ. թէև իր մեծ ու սեւ աչքերը թափանցիկ և բաց էին, նայուածքն անորոշ երեւոյթ մ'ունէր. խեղճ կարճատեսն երբեմն սրտաշարժ կերպարանք մը կ'առնէր, երբ աշխուժիւ առ քեզ դառնալով որպէս զի երեսդ նայի, կը յիշէր, աւա՛ղ, դառն տխրութեամբ մը թէ, իրմէ երեք քայլ անդին ամէն բան շփոթ և գրեթէ անստոյգ ձեւ մը կ'առնէր:

Սակայն պէտք խոստովանել թէ, թէև այս երիտասարդին պակասութիւնն երբեմն կարեկցութիւն կը ներշնչէր, երբեմն ալ անմեղ խնդումներու առիթ կ'ըլլար, վասն զի ազնիւ տղան շատ անգամ ծիծաղելի սխալներ կը գործէր:

Հարկ չէ ըսել թէ խնամածու կիսն աւելի ուշադրութիւն կ'ընէր իր քեռորդւոյն՝ կարճատեսին ծիծաղելի սխալներուն, մինչդեռ ընդհակառակն մատղաշ աղջիկն

աւելի կը կարեկցէր չէ՝ — չէր գրեթէ տաժանելի կացութեանն :

Վերջապէս դեռատի աղջիկն , որ շատ կը տառապէր իւր դիւրազգածութենէն , այն շղային երկուքէն , որու չէր կրնար յաղթել , և կարճատեան , այս երկու երկշոտ արարածք , ի հարկէ մեծ համակրութիւն պիտի զգային միմեանց համար և դաղտնի կապ մը պիտի գտնէին նոյն իսկ իւրեանց տկարութեան մէջ , որ երբեմն ժպտի և երբեմն ալ արտասուաց առիթ կ'ըլլար :

Այս երեք անձինքն այսպէս նկարագրելէ վերջը՝ մասնակցինք իրենց խօսակցութեանն :

Մատղաշ աղջիկը կ'ասեղնագործէր , խնամածուն կարմիր բուրդէ բան մը կը շինէր , որ ձմրան համար երկայն և տաքուկ փողպատ մը ըլլալու սահմանուած կ'երեւնար , մինչդեռ երիտասարդն , աչքին մօտ բռնած կայսրութեան Օրսէրին վերջին թիւը , զոր թղթատարն առաւօտուն բերեր էր , բարձրաձայն կը կարգար վերջին լուրերը , և իր ունկնդիրներուն իմաց կուտար Պ. տը Բէճճիօ դուքս մարաշախտին իր բանակը երթալը :

Խնամածուն վառարանին կողմէն թեթև պղպղակներու և շոգւոյ կայլակներու ձայն առնելով , հասկցաւ որ թէյի շուրը պէտք եղածին չափ տաքցեր էր , և ըսաւ իր քեռորդուոյն .

— Օնէղիմ , ընթերցումդ վերջէն կը շարունակես . շուրը կ'եռայ . թէյամանին մէջ լեցուր , բայց ձախաւելութիւն մը չընես :

Օնէղիմ լրագիրը սեղանին վրայ դրաւ , ոտքի ելաւ և դէպ ի վառարանն գնաց՝ տեսակ մը սրտի անձկութեամբ , վասն զի խեղճ կարճատեսը դժուարին ձեռնարկութեան մը պիտի սկսէր , վտանգաւոր ձեռ-

նարկութիւն մը , որու մէջ մեծամեծ արգելքներ գտնուին կը գուշակէր . օրինակի համար նախ պէտք էր ձախ կողմը գրտնուած թիկնաթուէն զգուշանալ , ապա աջ կողմի սեղանէն : Երբ այս խութերէն անցնէր , պէտք էր անցնիլ նաև վառարանին քով դրուած փոքրիկ կիսաթուի մը վրայէն և վերջապէս եռացող չայնիքը բռնել :

Արդէն ըսինք թէ դեռատի աղջիկը գրեթէ երբեք չէր խնդար Օնէղիմի ըրած սխալներուն . սակայն երբեմն այնքան ծիծաղելի բաներ կ'ընէր որ , աղջիկն ալամայ կը խնդար : Արդ՝ խեղճ տղան աշխարհի մէջ ամէն բանէ աւելի կը վախնար իւր մեքութեան ընկերոջն ծիծաղը շարժելէ , և , թէ և իր ըրած ձախաւելութեանց վրայ նախ և առաջ ինքը կը խնդար , բայց սիրտը կը սեղմուէր :

Ուստի կրնանք հասկնալ թէ Օնէղիմ ի՞նչ ուշադիր խոհեմութեամբ և շրջահայեցութեամբ ոտքի ելաւ՝ երթալ չայնիքը բերելու . ձեռքին մէկը դէպ յառաջ երկնցուցած՝ հասկցաւ ձախ կողմը թիկնաթու մը գտնուիլն . այս ժայռէն ազատեցաւ . սակայն քիչ մնաց սեղանին պիտի դարնէր , երբ միւս ձեռքն իմաց տուաւ իրեն այս երկրորդ խութին գոյութիւնն : Արդէն կ'ուրախանար առանց փորձանքի վառարանին մօտենալու , երբ կիսաթուին անակնկալ պատահումը զինքն սարսեց . ուզելով իր հաւասարակչութիւնը գտնել , երկու քայլ ետ քաշուեցաւ և ուժով մը դարնուեցաւ սեղանին , որ մէկէն ի մէկ տապալեցաւ :

Քանի մը վայրկեանէ ի վեր դեռատի աղջիկն , ասեղնագործն ընդհատելով , խոր մտածութեան մը մէջ ընկղմեր էր : Կարասիին իյնալու աղմուկէն յանկարծ սթափեցաւ . առանց աղմուկին պատճառը գիտնալու , և չկարենալով իր երկիւղին

յաղթել, ահարեկ աղաղակ մ'արձակեց, դեղնեցաւ և թիկնաթռոխն մէջ փռուեցաւ՝ ջղային դող մը գալով վրան:

— Աղջիկս, մի՛ վախնաք, գոչեց խրնամածուն. Օնէզիմին գործն է: Հանդարտեցէք:

Խեղճ աղջիկը հասկնալով այս աղմուկին պատճառը, ցաւեցաւ խեղճ կարճատեսին շփոթութիւնն ասանկով ակամայ աւելցնելուն, և իր դողին յաղթելու աշխատելով՝ ըսաւ.

— Ներէ՛, սիրելիս, ես յիմար եմ. բայց գիտես որ այս անտեղի վախին չեմ կըրնար յաղթել:

— Խեղճ աղջիկ. միթէ՛ յանցանքը քովդ է. չէ՞ մի որ այս ակամայ սուկումն ամենէ՛ աւելի քեզ ցաւ կը պատճառէ: Միթէ՛ ասոր համար ներում խընդրելո՞ւ ես. և եթէ քեռորդւոյս ձախաւելութիւնը չըլլար . . . :

— Լուէ՛, պէտք է որ ես շիկնիմ Պ. Օնէզիմի առջեւ, ըսաւ մատղաշ աղջիկն, այս տարիքիս մէջ դեռ ասանկ չնչին բաներէ վախնա՛լ, շիտակն ամօթ է:

Խեղճ տղան, ըրածին խայնելով, քանի մը ներման բառեր թօթովեց. ապա սեղանը շտկելով՝ կիսաթուր մէկ դի ըրաւ և վերջապէս բռնեց անիծած չայնիքն և բերաւ դայն, մինչդեռ տիկին Ռօպէր հոտեր շնչել կուտար խեղճ աղջկան:

Ապա Օնէզիմ սիրտ առաւ:

Մօրաքոյրը, տեսնելով որ երիտասարդը ջուրը պարպելու կը պատրաստուի, ըսաւ.

— Աստուածդ սիրես, դու չայնիքին մի՛ դպչիր, նորէն ձախաւելութիւն մը կ'ընես:

Օնէզիմ խայնելով և ուզելով իւր պատիւը վերահաստատել, պատասխան չի տրուաւ, մօրաքրոջն անուշադրութենէն օգ-

տելով՝ անոր հրամանացը հակառակ վարուեցաւ, կաթսային կափարիչը բացաւ, և ձախ ձեռքը սեղանին եզերքին կռթնցուցած՝ աջ ձեռքը վեր առաւ, որով չայնիքը բռնած էր, եռացող ջուրը պարպելու համար: Դժբաղդաբար Օնէզիմի կարճատեսութիւնը սխալեցուց զինքը, և նախ ջուրը սկսաւ դուրս լեցնել: Սոսկալիցաւ մը իմաց տուաւ իրեն այս նոր անյաջողութիւնն. իւր ձախ ձեռքն եռացող ջրով թրջեր և սաստիկ այրեր էր:

Օնէզիմ դիւցազնական ստոյիկութիւն մը ցոյց տուաւ: Ի բաց առեալ յանկարծական շարժում մը՝ որու պատճառն էր այս անակնկալ և սոսկալի ցաւը, բընաւ մրմունջ մը չի հանեց և իւր սխալին ցաւալի հետեւանքը խելքը գլուխը բերելով՝ յաջողեցաւ ամանը լեցնել. ապա կամաց մը ըսաւ.

— Մօրաքոյր, ամանը լեցաւ, կրնա՞մ թէյը պատրաստել. օրիորդը կարելի է թաս մը խմէ:

— Ի՛նչպէս, ամանը լեցուցի՞ր մի, ըսաւ խնամածուն՝ աշխուժիւ ետին դառնալով: Իրաւ է եղեր, և առանց անյաջողութեան: Ա՛հ, այս անգամ ծխնելոյզին վրայ խաշ մը քաշելու է, տղաս:

— Շիտակը, սիրելի՛ս, ըսաւ նորատի աղջիկը փափուկ յանդիմանական ձայնով մը, դու անիրաւ և անգութ ես:

Եւ խօսքն երիտասարդին ուղղելով՝ շարունակեց.

— Դուք անոր ականջ մի՛ կախէք, Պ. Օնէզիմ. այս չար մօրաքոյրնիդ շարունակ կը վշտացնէ, բայց ես պիտի պաշտպանեմ զձեզ: Հիմայ կը խնդրեմ որ թաս մը թէյ տաք ինձ:

— Տէ՛ր Աստուած, գոչեց խնամածուն խնդալով, թշուառը կտոր կտոր պիտի ընէ սա սպիտակ և վարդագոյն գեղեցիկ ըս-

պասը , զոր պարտը վերջին ճամբորդու-
թեանն ատեն բերաւ :

Բայց Օնէզիմ ի դերեւ հանեց մօրա-
քրոջը գեշ գուշակութիւնները , քաջու-
թեամբ և անվտանգ թաս մը թէյ բերաւ
նորատի աղջկան , որ ըսաւ իրեն .

— Շնորհակալ եմ , պարո՛ն Օնէզիմ :

Եւ այս բառերուն կցեց նաև ամենա-
անուշ ժպիտ մը , երբ իւր աչքերը պա-
տահեցան խեղճ կարճատեսին մեղամաղ-
ձոտ և քօղարկեալ մեծ աչքերուն , որք
մեքենաբար առ ինքն կը դառնային եւ
կարծես զինքը կը բնառէին : Այս անորոշ ,
տխուր և գրեթէ պաղատական նայուածքը
յուզեց խեղճ աղջիկը :

— Աւա՛ղ , կը մտածէր ինքնիրեն , չի
կրնար նշմարել թէ ժպտեցայ իրեն . իւր
խեղճ և անուշ նայուածքը կարծես միշտ
ներումն կը խնդրէ իւր պակասութեանը
համար :

Այս մտածումներն այնքան զգալի կեր-
պիւ տխրեցուցին զայն որ , խնամածուն
ըսաւ .

— Ի՞նչ ունիք , զաւակս , վշտացած
կ'երեւիք :

Օնէզիմ , մօրաքրոջն այս խօսքերը լը-
սելով , անմիջապէս աչքերն անհանգստու-
թեամբ դէպ ի իւր ընկերուհին դարձուց ,
կարծես նորա դիմաց արտայայտութիւնը
քննելու համար : Բայց միտքը գալով որ
իրեն համար անհնար էր բան մը զանա-
զանել , գլուխը խոնարհեց տխրութեամբ ,
եւ թաշկինակին ներքեւ պահեց այրած
ձեռքն , որ անլուր ցաւեր կը պատճա-
ռէր իրեն :

Նորատի աղջիկն , իր խնամածուին դի-
տողութենէն շփոթելով , պատասխանեց .

— Կը սխալի՛ս , սիրելիս , վշտացած
չ'եմ : Միայն թէ քիչ մ'առաջ հօրս խօսքն
ըրիւր և միտքս ձգեցիր ինչ որ երբեք չ'եմ

մտնար , այսինքն թէ քանի մ'օրէ ի վեր
եկած ըլլալու էր և դեռ չ'եկաւ :

— Հիմայ ալ ատոր համա՛ր ինքզինքդ
պիտի նեղես , աղջիկս : Առաջին անգա՛մն
է որ պարտն որոշեալ օրը չի գար :

— Յուսամ թէ այս յապաղումը վախ-
նալիք բան մը չ'ունի : Սակայն զիս ան-
հանգիստ կ'ընէ :

— Բայց , օրի՛որդ , չի՞ կրնար ըլլալ որ
պարտին առևտրական գործերը զինքն ու-
շացուցած ըլլան : Կը կարծէք որ մեծ քա-
նակութեամբ կերպասեղէնի առևտուրը ը-
նողը կրնա՞յ հաստատ օր մը որոշել իւր
վերադարձին : Չըլլա՞ր որ մեկնելու պա-
հուն նոր գործ մը պատահի և ստիպուի
կենալ :

— Մօրաքոյրս իրաւունք ունի , օրի-
որդ , ըսաւ Օնէզիմ , վաճառականութեան
մէջ անակնկալ պարագայներ կան :

— Այդպէս է , Պ . Օնէզիմ :

— Սա ալ չի մտնանք որ , յարեց խը-
նամածուն , պարտը ամէն անգամ հոս դա-
լուն կուզէ գեղեցիկ բաներ բերել ձեզ ,
ամէն ատեն ալ անկլիական ապրանքներ .
գիտէ՞ք ինչու . վասն զի աւելի հազուա-
գիւտ և յարգի են , իբր արգիլեալ պտուղ :

— Ո՛հ , այո՛ , բարի և ազնիւ հայրս
չավաղանց կը սիրէ զիս , և ամէն անգամ
ինձմէ զատուելուն՝ ինձի չափ ինքն ալ
կուլայ :

— Բայց պարտը գործը գիտէ , և ձեր
չահուն համար է որ կը ճամբորդէ , աղ-
ջիկս : « Կուզեմ որ աղջիկս հարուստ ըլ-
լայ , կ'ըսէր ինձ երկու ամիս առաջ ճամ-
բայ չ'ելած : — Եթէ մէկ երկու յաջող
ճամբորդութիւն ալ ընեմ՝ անոր օժիտը
կը շտկուի , և այն ատեն վաճառականու-
թեան խերն անիծե՛մ . ա՛լ սիրելի զաւկէս
չ'եմ զատուիր : »

— Աստուած տա՛ր որ այդ վայրկեանը

չուտով դար, յարեց աղջիկն հառաչելով .
մինչեւ որ հայրս միշտ բովս չի գտնուի ,
ես երջանիկ և հանգիստ չեմ ըլլար : Հե-
ռու եղած ատեն սնտոի վախեր կուզան
մարդուս միտքը :

Ժէն ուրիշ բան չի ճանչնար և լաւ կառ-
քով մը կը ճամբորդէ քաղաքէ քաղաք ,
ուզած տեղը կենալու համար : Նորէն
կ'ըսեմ՝ ի՞նչ կայ : Նա ցերեկ ատեն միայն
կը ճամբորդէ և դորժակատարն ալ միշտ



— Հանդարտ եղի՛ր , մօրաբո՛յր , ըսաւ երիտասարդը : Երես 743 :

— Վա՛խ մի : Բա՛յց , վախկո՛տ աղջիկ ,
ըսաւ խնամածուն գորովանօք , վախնալու
ի՞նչ կայ . ուրի՞նն պէս վաճառականի մը
համար ի՞նչ վտանգ կայ , որ իւր գոր-

հեան է . և գիտէք որ այն ծառայն ու-
րի՞նն համար լկրակը նետուելու պատ-
րաստ է , թէեւ մարդոց մէջ իրեն նման
անբաղդ չկայ :

— Խեղճ մարդ . իրաւ է , վասն զի հօրս մէն մի ճամբորդութեանն ատեն անոր դիտուն բան մը կուգայ :

— Պատճառն ի՞նչ է . վասն զի այս ծերուկը ամէն բանի կը դպչի և անդիի ծայր ալ անյաջողակ է (քեզ համար չեմ ըսեր , տղաս .) բայց ասով հանդերձ եթէ պարտը ճամբան հիւանդանալու ըլլայ , այս ծերուկը կատարելապէս կը խնամէ զինքը : Հիմայ ըսէք տեսնեմ ի՞նչ կայ այդպէս վախնալու , աղջիկս :

— Ո՛չինչ , իրաւունք ունիս :

— Մտքերնիդ բերէ՛ք թէ ի՞նչ պիտի ընէիք , եթէ ուրիշներուն պէս , ձեր հայրն ալ բանակին մէջ ըլլար :

— Ա՛հ , ի՞նչ կ'ըսես : Միթէ այս տկար և ջղային վիճակիս մէջ՝ կրնայի՞ այն յարատեւ անհանգստութեանց դիմանալ : Մըտածե՛լ ամէն վայրկեան թէ հայրս մեծամեծ վտանգներու , դուցէ իսկ մահուան ենթարկուած է : Ո՛հ , միմիայն այս գաղափարն

— Այո՛ , խեղճ աղջիկս , այս գաղափարը կը դեղնեցնէ զքեզ և կը դողացընէ : Ատոր չեմ զարմանար , դիտեմ թէ որքան կը սիրէք ձեր ազնիւ հայրը : Բայց մէկդի ըրէ՛ք այդ անշահ մտածումներն , և Օնէզիմ թո՛ղ լրագրին ընթերցումը շարունակէ՛ ձեր մտազբաղութիւնը փարատելու համար . կ'ուզէ՞ք :

— Անշո՛ւշտ , եթէ Պ . Օնէզիմ յոգնած չէ :

— Ո՛չ , օրիորդ , յարեց երիտասարդը , որ դերբնական ճգեր կ'ընէր ևս քան զևս սաստկացող ցաւին յաղթելու համար :

Լրագիրը կարելի եղածին չափ աչքին մօտեցնելով՝ կը պատրաստուէր կարդալու , երբ մէկէն ի մէկ ըսաւ .

— Ահաւասիկ պատմութիւն մը , որ

կարծեմ օրիորդին հետաքրքրութիւնը պիտի շարժէ :

— Ի՞նչ բանի վրայ է , Պ . Օնէզիմ :

— Օրիո՛րդ , դարձեալ այն Տիէբցի հըռչակաւոր ծովահէնին վրայ , զոր պարտաւոր Սնկէպցի մականուաներ են :

— Աղջիկս , մի դուցէ չափազանց այլայլութիւն պատճառէ ձեզ , ըսաւ խնամածուն . այսօր չափէն աւելի դրդուած են ձեր ջիղերը :

— Պ . Օնէզիմ , ըսաւ նորատի աղջիկը ժպտելով , արդեօք այդ պատմութիւնը շատ սոսկալի , շատ ահարկու է :

— Չեմ կարծեր , օրիորդ , վասն զի խընդիրը փախուստի մը վրայ է : Ահա՛ վերնագիրն :

Փախուստ անվերջ Սնտիւրսի ծովահէն նաւապետին , որ դժոխային մարտութեան մը զոհ երթալով՝ Պարսկական հողան վրայէն փոստեր էր անկէպցի լրտեսներու յետո՛ւ :

— Իրաւ ատի հետաքրքրական ըլլալու է : Հաճեցէ՛ք կարդալ , պարոն Օնէզիմ : Եթէ շատ ահարկու երեւնայ ինձ , այն ատեն կ'աղաչեմ որ ընթերցումնիդ ընդմիջէք :

— Ես ականջներս տնկեր եմ , յարեց խնամածուն հետաքրքրութեամբ , վասն զի ծովահէնի պատմութիւնները կը սիրեմ :

— Ո՛հ , դու քաջ ես , ըսաւ նորատի աղջիկը ժպտելով , դու սրտոտ ես :

— Առիւծի մը պէս : Եւ լրագրի մէջ եղած պատերազմի պատմութիւններն անյազութեամբ կը կարդամ . երբեմն վրաս դող կուգայ , բայց ետ չեմ քաշուիր : Ո՛հ , ես ձեզի պէս չեմ , սիրելի երկչոտս : Ինձ այնպէս կուգայ որ ամենէն դեղեցիկ արուեստն զինուորականութիւնն է : Օ՛ն , Օնէզիմ , սկսէ՛ կարդալ , և եթէ մէջը շատ սոսկալի բան մը պատահիս , անցի՛ր կամ կեցի՛ր :

— Հանդարտ եղի՛ք, մօրաքո՛յր, ըսաւ երիտասարդը:

Եւ սկսաւ հետեւեալ կերպիւ կարդալ Առիթունի նաւապետին փախուստի պատմութիւնն:

Ը.

« Ամբողջ Ֆռանսայի ծանօթ է Անտիւրսի նաւապետին անունն և դիւցադնական քաջութիւնն, որ 16 թնդանօթով թիշն «Անֆէր երկկայմին հրամանատարն է», շարունակեց Օնէզիմ՝ բարձրաձայն կարդալով կայսրութեան Օրհնէն, « Յայտնի է թէ այս ծովահէնը շատ մը փայլուն յաղթանակներ տարած է Բրիտանական տորմիդին դէմ և թիշն «Անֆէր շատ աւարտած է անկլիացիներէն՝ իւր վերջին ճակատամարտներուն մէջ:

« Քանի մ'օր առաջ Առիթունի նաւապետը Տիէբ մտաւ, ետեւէն քաշելով Հընդկաց ընկերութեան մէկ մեծ եռակայմն, 30 թնդանօթով զինեալ: Այս նաւն, որ ցորեն բեռցած քանի մը վաճառականական նաւուց կ'ընկերանար, միւսներուն հետ ինկեր էր անվեհեր ծովահէնին ձեռքն երեք ժամ կատաղութեամբ պատերազմելէ վերջը, յորում Ֆռանսայի նաւաստեաց կէսը մեռեր կամ վիրաւորուեր են: »

— Երեք ժամ պատերազմ, ըսաւ նորատի աղջիկը սարսուալով. այնքան քաջ մարդիկ մեռած կամ ողբեալ. ի՞նչ դարչելի պատուհաս է սա պատերազմը: Ահ, այս դիւցադն կոչուած անձն ինձ հիացում չ'ազդեր, այլ վախ, սոսկում:

— Այս մասին երբեք չպիտի համաձայնիք, ըսաւ խնամածուն ժպտելով, ես

որ Մեծ Բանակին խենթն եմ. բայց իրաւ է որ ծովահէններու պատերազմն աւելի սոսկալի ըլլալու է:

— Ո՛հ, այո՛, ըսաւ Օնէզիմ, անողոք և անգութ պատերազմ մը:

— Բայց, յարեց մօրաքոյրն, ընթերցողներուն համար ալ ամենէն անուշ կրտորն ճիշդ այդ է: Ի՛նչ մարդիկ են արդեօք սա ծովահէնները. և այս Առիթունի նաւապետն, որու վրայ այնքան կը խօսին, սոսկալի մարդ մը ըլլալու է: Գիտէ՞ք ես ինչպէս կ'երևակայեմ զինքը. երկար կարմիր մօրուք մը, կայծակնացայտ աչքեր, կատաղի դէմք մը և մէջքը դաշոյններ ու ատրճանակներ, սև հագուստներ հազած, որոց վրայ արծաթով մեռելի գլուխներ բանուած են:

— Կ'աղաչեմ, լռեցէ՛ք, սիրելիս, ըսաւ նորատի աղջիկն. ատանկ բաներ մտածողը սոսկալի երազներ կը տեսնէ:

— Օ՛ն, շարունակէ՛, Օնէզիմ, յարեց խնամածուն. բայց նշմարելով որ երիտասարդը թեթեւ մը դեղներ էր և քանի մը քրտինքի կաթիլներ կը փայլէին ճակտին վրայ, ըսաւ:

— Ի՞նչ ունիս, տղաս. կարծես մէկտեղդ կը ցաւի:

— Ո՛չ, մօրաքոյր, պատասխանեց Օնէզիմ, խպնելով որ չէր կրնար յաղթել իւր սոսկալի ցաւին եւ ակամայ դէմքին վրայ յայտնի կ'ընէր. ընթերցումը շարունակեմ, եթէ օրիորդը կը հաճի:

— Անշուշտ, պարո՛ն Օնէզիմ, բայց կարծեմ մօրաքոյրնիդ իրաւունք ունի, կ'երեւի թէ մէկտեղերնիդ կը ցաւի:

— Ամենեւին, օրիորդ, բան չկայ, պատասխանեց Օնէզիմ ժպտելով. միայն թէ ես ալ ձեզի պէս տխրեցայ՝ մտածելով թէ պատերազմն ի՛նչ սոսկալի շարիքներ կը բերէ հետն: Ափսո՛ս, ի՞նչու մարդիկ միշտ

դիրար կը սպաննեն , փոխանակ միմեանց օգնելու և մէկզմէկ սիրելու :

— Օնէզիմ , ըսաւ խնամածուն , դու կատարեալ վախկոտի մը պէս կը խօսիս , դո՛ւ որ գեղեցիկ պահակ մը կ'ըլլայիր , եթէ քիչ մ'աւելի հեռուն տեսնէիր :

— Ի՛նչու այդ խօսքը կ'ըսես , ըսաւ նորատի աղջիկն անողոք մօրաքրոջ , ընդհակառակն ինքզինքնիս բարեբաղդ սեպելու ենք մտածելով որ մեր սիրած անձինքն ո՛ր և է վտանգի ենթակայ չ'են : Բայց կ'աղաչեմ , Պ. Օնէզիմ , շարունակեցէ՛ք :

Երիտասարդն ընթերցումը շարունակեց :

« Անտուանի նաւապետին Տիէբի նաւահանգիստը մտնելը ճշմարիտ յաղթանակ մը եղաւ : Ամբողջ ժողովուրդը խռներ էր ծովուն եղերքը . անհատնում կեցցէ՛ներ և աղաղակներ սկսան՝ երբ ծովահէնին երկկայմը , վառօդէն սեւցած , թնդանօթէն մնասուած , առագաստները ծակծկած և եռագոյն դրօշին կտորը ծայրը գամուած ծանր ծանր սկսաւ յառաջանալ՝ իւր կողուպուաներուն հետ մէկտեղ :

« Անկլիական եռակայմն դրեթէ ամբողջապէս ջախջախուած էր . իւր վէրքերուն շատութիւնն ու ծանրութիւնը կ'ապացուցանէին թէ յարձակում և պաշտպանութիւն բուն եղած էին . կեցցէ՛ Փլանս . կեցցէ Անտուանի նաւապետն աղաղակները նորէն պայթեցան , երբ անվեհեր ծովահէնը նաւամատոյցն ոտք կոխեց . բայց նաւապետին յաղթանակն ա՛լ չափն անցաւ , երբ իմացուեցաւ թէ իւր յափշտակած եռակայմը ցորենի նաւեր կ'առաջնորդեր . Փռանսայի արմտիքի նուազութեան պահուն այսպիսի աւար մը ընդհանրական բարիք մ'է եւ այս պահուս յայտնուած է որ Անտուանի նաւապետը , դիմնալով որ քիչ օրէն ցորենի նաւեր պիտի անցնին , քանի մ'օր սպասեր էր , և

կարեւորութիւն չէր տուած աւելի ճոխ աւարներու , զորս գրաւելն այնքան վըտանգաւոր չէր . վերջապէս Անտուանի նաւապետին այս յաղթանակը միշտ փառաւոր անցք մը պիտի ըլլայ Տիէբ քաղքին համար : »

— Ասի հիանալի է , սքանչելի է , գուչեց խնամածուն . ա՛հ , կեանքէս տասը տարի կուտայի ասանկ դիւցաղնի մը մայրը , կինը կամ քոյրն ըլլալու համար . ի՛նչ պէս պիտի հպարտանայի :

— Իսկ ես , սիրելիս , յարեց նորատի աղջիկը , խոնարհաբար կամ թէ ուրախութեամբ կը խոստովանիմ թէ՛ ինքզինքս հաղարապատիկ երջանիկ կը սեպեմ կերպասեղէնի վաճառականի մը աղջիկն ըլլալու քան թէ այս ծովահէնին կամ ուրիշ պատերազմիկներու նման արիւնկղակ դիւցաղանց զաւակ ըլլան :

— Աստուած իմ , աղջիկս , դուք բնաւ փառասիրութիւն չ'ունիք : Ի՛նչպէս , միթէ չէ՞ք փափագիր ըսել . « Այս սոսկայի մարդը իմ հայրս է » . կամ թէ՛ « Ամուսինս է , եղբայրս է » :

— Եթէ ինձմէ հեռու ըլլար՝ միշտ անհանգիստ պիտի ըլլայի իւր վտանգներն աչքիս առջև բերելով , և երբ քովս ըլլար , ձեռքերուն վրայ միշտ արիւն պիտի կարծէի տեսնել , պատասխանեց նորատի աղջիկը դողալով և դեղնելով :

— Զաւակս , շիտակն անխելքութիւն է այդպէս դիւրագրգիռ ըլլալ , ըսաւ խռնամածուն , մե՛ղք ես :

— Օրիորդ , կուզէ՞ք որ ընթերցումն ընդհատեմ , ըսաւ երիտասարդը :

— Ո՛չ , ո՛չ , պարո՛ն Օնէզիմ , ներեցէ՛ք իմ տկարութեանս , որմէ ես ալ կը խպնիմ :

Ապա , ժպտիլ ջանալով , խնամածուին ըսաւ .

— Յանցանքը քուկդ է, այս խօսակցութեան պատճառը քու փառասիրական գողափարներդ են: Բայց կեցի՛ր, քու գողափարներդ ալ կը փոխուին, և փոխանակ Մեծ Բանակին դիւցազանց վրայ հիանալու, որ մը վերջապէս պիտի հաւանիս ամուսնանալ այն խեղճ անձին հետ, որ այսքան տարիներէ ի վեր զքեզ կը սիրէ:

— Ե՛ս, գոչեց խնամածուն, «արնին գործակատարին հետ ամուսնանա՛մ, այն ապուշին հետ, որ որքան անյաջող, նոյնչափ ալ վախկոտ է և «արնին ամէն մէկ ճամբորդութեանն ատեն՝ բան մը կը կորսնցնէ կամ կ'աւելցնէ անձին վրայ: Անգամ մը ջաղացքի անիւ մը իւր ոտքը կիսովին ճզմեր է, որով կաղ մնաց. ուրիշ անգամ մ'ալ երկու մատը մնացեր է մեքենայի մը մէջ, որու դպչիլ ուղեր է. վերջապէս որ մ'ալ, որ հարկաւ գինով է եղեր, շիշերու կոյտի մը վրայ ինկեր է և երեսին վրայ անանկ սպի մը մնացեր է որ, կարծես սուրի հարուածի մը հետեւանքն է:

— Լա՛ւ ուրեմն, մօրաքոյր, ըսաւ Օնէզիմ ժպտելով, գոնէ այս առնական վէրքին տեսքը թո՛ղ ձեր սիրտը շարժէ այն ազնիւ մարդուն ի նպաստ:

— Պ. Օնէզիմ իրաւունք ունի, յարեց նորատի աղջիկը խնդալով. այդ մարդը քու քովդ տեսնողը՝ զայն Մեծ Բանակին դիւցազուններէն պիտի կարծէ՝ զորս այնքան կը սիրես, և դու ալ պիտի կարենաս ուղածիդ պէս հպարտանալ:

— Ո՛չ, ատ իմ գործիս չիգար, ըսաւ խնամածուն զուարթօրէ՛ք, ես դիւցազունները կը սիրեմ. բայց չէ թէ ապիկար զինուորները: Հի՛նայ, Օնէզիմ, շարունակէ՛, հետաքրքի՛ եմ հասկնալ թէ անկլիացի ի՛նչպէս կ'ըցեր են այս սոսկալի

ծովահէնը յափշտակել Ֆուանսական հողուն վրայէն:

— Ահա՛, օրիորդ, այդ պատմութեան շարունակութիւնն, ըսաւ Օնէզիմ:

« Անտի-րո՛ւ նաւապետն իւր աւարը կարգադրելու համար երեք օր Տիէբ մնալէ ետքը, նաւահանգիստէն մեկնեցաւ եւ սուրհանդակի կառքով մը Բարիզու ճամբան ձեռք առաւ, դժբախդարար մէկ քանի գործի պատճառաւ Տիէբի մէջ ձգելով իւր թնդանօթապետն, իւր ամենահին զինակիցն, որ վերջին ճակատամարտին մէջ ծանր կերպիւ վիրաւորուեր էր: Հաւանական է որ եթէ այս քաջ նաւարկուն հետն ըլլար, Անտի-րո՛ւ նաւապետն ազատեր այն վատ դակարթէն, որու մէջ ինկաւ:

« Տիէբէն Բարիզի ճամբուն վրայ երկրորդ և երրորդ կայարաններուն միջև անհաւատալի կերպիւ յանդուգն յափշտակութիւն մը կատարուեցաւ երկու անկլիացի լրտեսներու ձեռօք, որք անշուշտ Անտի-րո՛ւ նաւապետը ձեռք ձգելու վայրկենին կը սպասէին: Կ'երեւնայ որ այս լրտեսք վարպետութեամբ մը սուրհանդակի կառքին կառապանին դիւրահաւանութեանէն օգտեր և համոզեր են զինքն որ իրենք կառքէն առաջ հասնին որոշեալ տեղ մը և գիշերուան մթութենէն օգտելով անոնց մին կառապանին տեղն անցնի և քիչ մ'ատեն կառքը վարէ:

« Դիտաւորութիւնը յաջողեցաւ: Կառապանը կարծեց թէ քանի մը վայրկենի համար էր. բայց անկլիացին սանձերը ձեռք անցընելուն պէս՝ ձիերը քչեց սոսկալի արագութեամբ մը, մինչդեռ միւս անկլիացին խեղճ կառապանը կիսամահ կը թողուր ճամբուն վրայ:

« Անտի-րո՛ւ նաւապետն, ի սկզբան զարմանալով կառքին այսպէս արագօրէն իջ-

ներուն զառիվարէն վար, կարծեց թէ կառապանը մոռցեր էր կառքին անիւր կապելու, և ձիերը կը քաշէին զայն: Բայց այս անխոհեմ զնացքը քիչ վերջը հանդարտեցաւ և կառքը սկսաւ ընթանալ շափաւոր արագութեամբ:

« Գիշերը շատ մթնելով, ծովահէն նաւապետը չի կրցաւ նշմարել որ կառքը, փոխանակ մեծ պողոտայէն երթալու, ուրիշ ուղղութիւն մը ձեռք կ'առնէր: Առանց ո՛ր և է կասկածի երթալու և կառավարի փոփոխութենէն բոլորովին անտեղեակ, նաւապետն այսպէս ճամբորդեց դրեթէ մէկ ու կէս ժամ և վերջապէս քնացաւ:

« Կառքը կեցաւ. ինքն ընդոտա արթընցաւ եւ կարծեց թէ կայարանը հասեր է. եւ կառքին մօտերն երկու երեք լապտերի փայլիլը տեսնելով՝ վար իջաւ առանց ո՛ր և է կասկածի. յանկարծ քանի մը հոգի անոր վրայ յարձակեցան և առանց շարժում մ'ընելու ժամանակ ձգելու անոր բերանը, ձեռքերն ու ոտքերը կապեցին և Հօգէյի փոքր նաւահանգստին եզերքը տարին, որ Տիէբէն 7 մղոն հեռու է և ծանօթ իբր որջ յանդուզն մաքսանենդներու:

« Նաւապետը չի կրնալով շարժիլ և բամ մը արտաբերել, փոքր երկկայմի մը մէջ դրուեցաւ և, առանց կապերը քակուելու, նաւուն շտեմարանը նետուեցաւ:

« Քանի մը վայրկեան վերջը՝ թեթեւնթաց նաւը, ջուրերու բարձրանալէն եւ յաջող հովէն օդտելով՝ Հօգէէն մեկնեցաւ և առագաստները բաց՝ սկսաւ դէպ ի Անկլիա նաւել:»

— Խեղճ նաւապետ, ըսաւ խնամածուն. ի՛նչպէս պիտի ազատի այս սոսկալի կացութենէն: Բայց փա՛ռք Աստուծոյ, ազատեր է, քանի որ լրագիրը անոր փա-

խուտը կը պատմէ: Ամենեւին մտքէս իսկ չ'անցնիր թէ ի՛նչ կերպով պիտի ազատի այն անիծեալ անկլիացւոց ձեռքէն: Ի՛նչ վատ մատնութիւն:

— Այո՛, բայց կարելի է փոխարինութիւն մ'էր ասի, ըսաւ նորատի աղջիկը հառաչելով: — Ափսո՛ս, այս արիւնըռուշտ և կռուասէր մարդոց ատելութիւնն անողոք ըլլալու է:

— Կ'երեւնայ որ Անտի-րո՛ի նաւապետն աչքերնիդ չի մտներ, աղջիկս, ըսաւ խղինամածուն:

Նորատի աղջիկը մելամաղձոտութեամբ գլուխը շարժեց, մինչդեռ Օնէզիմ իւր ընթերցումը կը շարունակէր:

« Անտի-րո՛ի նաւապետն այն մարդերէն չ'է, որք վտանգի առջեւ ուժաթափ կ'ըլլան. այս մասին կրնամք յառաջ բերել նաւապետին գրած մէկ նամակն իւր բարեկամներէն մէկուն, այն է իւր նաւատիրոջ, նամակ մը՝ յորում հետաքրքրական մանրամասնութիւններ կուտայ իւր փախստեան վրայ:

« Ահա այդ նամակին մէկ կտորը:

« Երբ շտեմարանին մէջ նետուեցայ, (կը գրէ Անտի-րո՛ի նաւապետը), շարժում մ'ընելու անկարող ըլլալով. կատաղի բարկութիւն մը զգացի, երբ միտքս բերի թէ՛ ի՛նչ վատ նենգութեան զոհ գացի: Եթէ բերնիս կապը հանած չ'ըլլային, կատաղութենէս պիտի խեղդուէի:

« Շտեմարանին մէջ զիս հին առադաստի կտորներու վրայ ձգեր էին. սրունքներս քով քովի ուժով մը կապուած էին բթամատի հաստութեամբ կպրաղօժ չուանով մը. ձեռքերս կռնակս կապեր էին, որով չ'էի կրնար ահռաներովս կապերս կրծել: Ծռելով փորձեցի սրունքներուս կապերուն հասնիլ, բայց անկարելի եղաւ: Երկկայմին շատ չի տատանելէն հասկցայ

որ ուժով հով կար և թէ շուտ և ուղ-
ղակի կը յառաջանայինք դէպ ի անկլիա-
կան ծովեզերքն :

« Իմ վիճակս գիտէի . զիս բռնող վա-
տերուն մէկ քանի խօսքերէն ամէն բան
հասկցեր էի . փոխանակ զիս անմիջապէս
սպաննելու , նախամեծար կը սեպէին բան-
աստուծոյ մէջ երկար ատեն տանջել . այն
անկլիացւոց մին ըսաւ իսկ թէ օրերով
զիս պիտի ենթարկէր ժողովրդեան նա-
խատանաց :

« Այս բանը մտածած ատենս՝ կարծեցի
թէ պիտի խենթեմ . կատաղութենէս
մանչելով ինկայ իմ անկողինս եղող հին
առագաստներուն վրայ :

« Երբ այս առաջին տենդն անցաւ ,
ԲԱՐԿՈՒԹԻՒՆ ամէն ատենուան պէս նո-
րանոր ոյժեր տուաւ ինձ . արիւնս կ'ե-
ռար , ուղեղս կը խուժէր և իրարմէ յան-
դուզն հազար դիտաւորութիւններ կը
ծնցնէր հոն . կզգայի որ իմ կենսական ոյ-
ժերուս այս անհաւատալի դրգիւր կը
տանապատկէր իմ ֆիզիքական և բարո-
յական զօրութիւնս :

« Ուստի ընդգրկեցի կատաղութեանս
արտադրած դիտաւորութիւններէն մին :

« Եթէ միտքս ուրիշ կացութեան մէջ
ըլլար , այս դիտաւորութիւնն անգործա-
դրելի պիտի երեւնար ինձ և կարծեմ թէ
անգործադրելի պիտի ըլլար նաեւ այն
մարդուն համար որ ինձ պէս գրգռուած
չէր բարկութեամբ , այն ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ
ՆԻ Ա.ՆԵՂ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ , ինչպէս կ'ըսէ Հըն-
դիկ բանաստեղծն : »

Քանի մը վայրկեանէ ի վեր նորատի
աղջիկն , որ հետզհետէ ուշադրութիւն
կ'ընծայէր այս պատմութեան , տաժանելի
մտադրաղութեան մը մէջ ինկած կ'երեւ-
նար . քանի մ'անդամ սարսուացեր էր , իբր
թէ ուղեւով հեռու մղել ցաւալի յիշատակ

մը . յանկարծ , լրագրի ընթերցումս ակա-
մայ ընդհատելով՝ գոչեց .

— Ա՛հ , այդ մարդը կը սարսափե-
ցընէ զիս :

— Ի՞նչու համար , հարցուց խնամա-
ծուն : Այս անվեհեր ծովահէնն առիւծի
մը պէս քաջ կ'երեւնայ ինձ :

— Այո՛ , բայց ի՞նչ երկաթի բնաւորու-
թիւն , յարեց նորատի աղջիկն ևս քան զևս
այլայլելով . ի՞նչ բռնութիւն . և կարծես
այս մարդը կը համարձակի ԲԱՐԿՈՒԹԻՒՆ
փառաւորել , աստուածացնել :

Ապա , նորէն սարսուալով , շարունակեց .

— Ա՛հ , բարկութիւնն ու բռնութիւնը
սոսկալի են :

Եւ , դեղնած ու սարսափահար , կրկնեց .

— Ո՛հ , բարկութիւնը սոսկալի է :

Խնամածուն , առանց մեծ կարեւորու-
թիւն տալու խեղճ աղջկան այլայլութեա-
նը՝ պատասխանեց .

— Ինձ մտիկ ըրէ՛ք , աղջիկս , կ'ըսէք
թէ բարկութիւնը սոսկալի է . գործը գի-
տէ . վասն զի վերջապէս եթէ այս քաջ
ծովահէնն այդ բարկութեամբ պիտի գտնէ
այս վատ անկլիացիներէն փախչելու մի-
ջոցը , շատ իրաւունք ունի , և եթէ ե՛ս
ալ իւր տեղն ըլլայի . . . բայց . . . տէ՛ր
Աստուած , գոչեց , տեսնելով որ թշուառ
աղջիկը սաստիկ կը դեղնէր ու աչքերը կը
գոցէր . բայց , տէ՛ր Աստուած , ի՞նչ կ'ըլ-
լաք , զաւակս :

Օնէզիմ մօրաքրոջն այս խօսքերն եւ
ոտքի ելլելու ձայնը լսելով , շարժում մը
ըրաւ իւր ընկերուհւոյն օգնելու համար .
բայց գլխիկոր վար նստեցաւ , վախնալով
որ անյաջողակութիւն մը կ'ընէ և վշտա-
նալով որ գոնէ նորատի աղջկան դէմքին
վրայ չ'էր կրնար կարդալ թէ իւր այլայ-
լութիւնը կ'աւելնա՞ր թէ կը հանդարտէր .
վասն զի քանի մը վայրկեան լռութիւն մը

տիրեց , որմէ վերջը խնամածուն անձկու-
թեամբ գոչեց .

— Զաւակս , չէ՛ք պատասխաներ . շըր-
թունքնիդ կը դողան , կուլաք . ա՛հ , ի՞նչ
ունիք :

Այս խօսքերը խեղճ աղջկան ական-
ջին չի հասան . նայուածքը յառած , իւր
մեծ աչքերը սոսկումէն աւելի եւս մեծ-
ցած , նշանացի կը ցուցունէր երեակայա-
կան երեւոյթ մը , և շնչասպառ ձայնիւ կը
մըմնջէր .

— Այն մարդը , ո՛հ , այն սեւեր հա-
գած մարդը , տղայութեանս այն յիշա-
տակն , ահա՛ , ահա՛ :

— Հանդարտեցէ՛ք , յանձնն Երկնից ,
այդ բաները մի՛ մտածէք , գոչեց խնամա-
ծուն : Չէ՛ք գիտեր թէ՛ այդ մտածում-
ներն ո՛րքան վնասակար են ձեզ :


— Ո՛հ , գոչեց նորատի աղջիկը կատա-
րելապէս ցնորած , այն մարդն ալ , այն
մարդն ալ ահարկու էր իր կատաղու-
թեանն ու բարկութեանը մէջ , երբ . . .
ո՛հ , շատ տարի է անկից ի վեր , այո՛ ,
շատ փոքր էի , բայց կարծես դեռ կը տես-
նեմ զայն իւր լայն գլխարկովը , սեւ բաճ-
կոնովն և սպիտակ իրանովը . տարօրինակ
հագուստ . դամբանական համազգեստի
պէս սեւ ու ճերմակ : Իրիկուն էր , հայրս
տունը չէր . այն ատեն այս մարդը մեր
տունը մտեր էր , չեմ գիտեր ուսկից . եր-
բեք տեսած չէի զինքն . այն մարդը կը
սպառնար մօրս , որ զիս թելերուն մէջ
բռներ էր : Այն ատեն լաւ կը յիշեմ թէ
լալով ըսաւ անոր . « Ե՛նձրհ զաւկիս հա-
մար » . — բայց ինքն մօրս վրայ յարձակե-
լով գոչեց . « Չէ՛ք բռնե՛ր « ր բարկութեանս մէջ
մէն բան կ'ընե՛մ » : Այն ատեն վաղեց : Եւ
մայրս , ո՛հ , մայրս , մեռա՛ւ , և ես . . .

Նորատի աղջիկը չի կրցաւ շարու-
նակել . Ղղային տաղնապի մը մէջ ին-

կաւ , ինչ որ ստէպ կը պատահէր իրեն
իւր մանկութեան այս սոսկալի յիշատակը
միտքն եկած ատեն , աղետալի՛ արկած ,
որմէ կը սկսէր իւր Ղղային դիւրագգա-
ցութիւնն և այն ակամայ ու անորոշ սար-
սափն , որու ենթակայ էր խեղճը տղա-
յութենէն ի վեր :

Այս տաղնապը շուտով հանդարտե-
ցաւ խնամածունն շնորհիւ , որ վարժուած
էր ստէպ զայն խնամելու : Նորատի աղ-
ջիկն , որու բնաւորութիւնը զարմանալի
խառնուրդ մ'էր տկարութեան և հաս-
տատամտութեան , ինքզինքին գալով՝ խըպ-
նեցաւ որ չէր կրցած ինքզինքն զսպել
ծովահէնին փախստեան պատմութեանն
ատեն , պատմութիւն մը որ թէ՛ սոսկում
և թէ՛ տեսակ մը հետաքրքրութիւն կը
ներշնչէր իրեն : Ուստի , հակառակ Օնէ-
զիմի երկչոտ թախանձանաց , անպատճառ
ուզեց որ ընդհատեալ ընթերցումը շա-
րունակուի :

Խնամածունն նորա պնդելը տեսնելով և
վախնալով որ եթէ դէմ դնելու ըլլան
խեղճ աղջկան Ղղային կազմութիւնը վտան-
գաւոր ազդեցութիւն մը կը կրէ , Օնէ-
զիմի ըսաւ որ Անտի-ր-ի նաւապետին փա-
խըստեան պատմութիւնը շարունակէ :



Օնէզիմ՝ այսպէս շարունակեց Անտի-ր-ի
նաւապետին գրած նամակը .

« Իմ փախստեան դիտաւորութիւնս գոր-
ծադրելու համար՝ նախ պէտք էր կապերս
խզէի : Չկարենալով զանոնք բերնիս հաս-
ցընել՝ որպէս զի ակռայներովս կրծեմ , ու-
րիշ միջոց մը փնտռեցի . փորի վրայ սո-

ղալով և երեսս շորս դի քսելով՝ երկաթի խոշոր կարթ մը դտայ, որ գետինը գամուած էր : Այդ կարթին մտենալով՝ անոր կռթնեցայ և սկսայ կապերս մաշեցընել երկաթին քսելով : Երկու ժամ վերջը

ղալիք մ'էր :

« Կայծահանս, ծխամուրճս, քիչ մը արեթ, ծրար մը ծխախոտ և ձկնորսինոր դանակ մը կար քովս. ծունդերուս կապերը կարեցի և բոլորովին ազատ ըլլա-



... գայն գարկի ... Երես 50 :

բաւական մաշեցուցած ըլլալով՝ բունն ցնցմամբ մը խզեցի դանոնք, վասն զի քար-կոթի-նն անխմանալի ոյժ մը կուտար ինձ :

« Երբ ձեռքերս ազատեցան և որոշումս հաստատ ըրի, մնացեալն ա՛լ խա-

լով՝ ծունդի վրայ շրջեցայ շտեմարանին մէջ, որովհետեւ ոտքի վրայ չէի կրնալ կենալ :

« Հին առագաստի կտորներէ և քանի մը շուանի մասերէ դատ բան չի գտայ .

միայնակ ելքն, որմէ կրնայի դուրս ելլել, քառակուսի դռնակով մը գոցուած էէ. այս ճեղքուածքէն տեսայ լուսնի լոյսը. այն ատեն ձեռքերս ծունդերուս կռթընցընելով, ջանացի կռնկովս այս դռնակն վեր հանել: Բայց ի զո՛ւր, դրսէն երկու հաստ երկաթի ձողերով գոցուած էր:

« Այն ատեն խարխարելով առի քանի մը կպրազօծ չուանի կտորներ, զանոնք մանրեցի, շիւղերու բաժնելով՝ դիզեցի. ապա հին առագաստէն փոքր կտորներ կտրեցի և կպրազօծ չուաններուն վրայ դրի, և ամէնքը մէկէն զետեղեցի դռնակին ծակին տակ. չոր ծխախոտս ալ այն կտորին վրայ լեցուցի, որպէս զի աւելի դիւրավառ ըլլայ, կայծհանս զարկի, արեւթը վառելով՝ դէզին վրայ նետեցի և սկսայ ուժով փչել:

« Չուանները բռնկեցան, ինչպէս նաև հին առագաստի կտորուանքը. մէկ վայրկենի մէջ շտեմարանը լեցաւ թանձր մուխով մը, որու մէկ մասը դռնակին ճեղքէն դուրս կ'ելլէր. սկսայ բոլոր ուժովս կրակ կայ պօռալ: Իմ աղաղակներս և խանձի հոտն ահաբեկեցին նաւաստիները. վախցան որ մի գուցէ հրդեհ պատահի: Կամուրջին վրայ մեծ իրարանցում մը լըսեցի. դռնակը բացուեցաւ և ծակէն ելնող մուխն այնպէս կուրցուց հոն ժողուուողները որ, կրցի դուրս ցատկել՝ դաշոյն ի ձեռին: Բարձրահասակ մարդ մը ելաւ դէմս. զայն զարկի, և գնաց ծովն ինկաւ. այն ատեն տապար մը տեսնելով կախուած՝ յսփշտակեցի և ուրիշ մարդ մ'ալ գետին փռեցի, և մէկ ոստումով. . . »

Օնէզիմ կեցաւ, վասն զի ուզածէն աւելի կարգացեր էր. կը վախնար որ այս կոտորածի պատմութիւնն շատ չի գրգռէ նորատի աղջիկը:

Արդարեւ սա մեծ ճիգ մը կ'ընէր իւր

զգացած սոսկումը ծածկելու համար, թէ և այս սպանութիւնն անհրաժեշտ էր փախչելու. սակայն ինքզինքը բռնեց, թէ՛ խպնելուն և թէ՛ այս պատմութեան ահամայ իրեն ներշնչած հետաքրքրութիւնը գոհացնելու համար. սա ալ ըսենք թէ չէր ուզեր խնամածուն զրկել ասանկ հետաքրքրական դէպքի մը ընթերցումէն:

— Իրաւունք ունիս կենալուդ, տըղա՛ս, ըսաւ մօրաքոյրն իր քեռորդուոյն, պէտք էր որ աւելի առաջ լռէիր:

— Սիրելիս, պատասխանեց աղջիկն, եթէ ինձ համար կ'ըսես այդ բանն, անօգուտ է: Կուզեմ ինքզինքս վարժեցնել այս տեսակ բաներու:

— Իրա՛ւ, աղջի՛կս, պիտի կարենա՞ս. Լաւ ուրեմն, աւելի աղեկ, վասն զի կը խոստովանիմ թէ կը փափագիմ վերջը հասկընալ: Եւ քանի որ այս պատմութիւնը քեզ շատ չի յուզեր. . . . :

— Բարեհաճեցէ՛ք շարունակել, ըսաւ աղջիկն Օնէզիմի:

Երիտասարդը կարդաց.

« . . . Ուրիշ մարդ մ'ալ գետին փռեցի և մէկ ոստումով սուր ի ձեռին վըրաս վազող մարդու մը թեւը կտրեցի: Բոլոր ասոնք մէկ ակնթարթի մէջ տեղի ունեցեր էին: Նաւաստեաց ապշութենէն օգտելով և ինքզինքս աւելի հանդարտ զգալով, որովհետեւ երկար ատեն շրջթայուած բարկութիւնս ու կատաղութիւնս պայթեր էին, ուզեցի հասկնալ թէ ո՛ւր եմ:

« Լուսինը սքանչելի լոյս մը կ'արձակէր. հովը զով էր և ծովը գեղեցիկ. ըսպիտակահեր ձերնաւաստի մը զեկը բռնեց էր. չորս նաւաստիք նաւուն յառաջակողմը ապաստաներ էին և իմ ուսնոնց մէջը դռնակին ծակը կար. տապարի

հարուածով տապալած մարդս չէր շար-
ժեր . վիրաւորեալն ծունդի եկած՝ իւր աջ
թելը ձախ ձեռքին մէջ բռներ էր :

« Հաշիւ ըրի որ դեռ դէմս ունէի ե-
րեք առողջ մարդ , տղայ մը և ծերունի
մը . բայց այս մարդիկն իմ յանկարծական
յարձակմամբս շուարած կ'երեւնային :

« Այս միջոցին նշմարեցի որ զոյգ մը
ատրճանակ կախուած էին ղեկին քով .
երեք նաւաստիներէն մին շարժում մը չը-
րած՝ այն զէնքերուն վրայ վազեցի . տա-
պարը ահռաներուս մէջ և ատրճանակները
ձեռքս , որով երեք մարդոց երկուքն ձեռ-
քըս էին , և մէկ հոգի միայն կը մնար
անդին : Եթէ հարկ ըլլար ես ղեկին գը-
լուխը կ'անցնէի , ծեր նաւաստին և տը-
ղեկն ալ չուաններուն նայելով՝ կրնային
նաւել . վասն զի օդը սքանչելի էր եւ
Փռանսայի ծովեզերքէն 10 — 12 մղոն մի-
այն հեռու էինք :

« Իմ կացութիւնս այսպէս քննելով՝
ատրճանակները լեցուցի և երեք մարդոց
վրայ վազեցի , որք հազիւ թէ կը սթա-
փէին , վասն զի ասոնք բոլոր առ առաւելն
երկու վայրկենի մէջ տեղի ունեցեր էին :

« — Երեքդ ալ շտեմարանը պիտի իջ-
նէք , ըսի անոնց , եթէ ոչ երկուքնիդ ա-
տրճանակնակով կ'սպաննեմ և միւսը տա-
պարով կը ջարդեմ :

« Այս մարդոց և իմ մէջ տեղս դըռ-
նակին ծակը միայն կար , այսինքն շուրջ
չորս ոտք միջոց . կրնայի ապահովաբար
կրակ ընել անոնց վրայ : Նոքա շտեմարանը
նետուեցան , ուր տեղի վառած քիչ մը
այրելի նիւթերս սպառեր էին . վիրաւորն
ալ հոն իջաւ . դռնակը գոցեցի , ձողերը
դրի և նաւուն ետեւի կողմն եկայ :

« — Զողն ինձ տո՛ւր , ըսի ծեր նա-
ւաստիին անոր տեղն անցնելով . դու և
սա տղան առագաստները գործածեցէ՛ք

և ուղիդ գործածեցէ՛ք , ապա թէ ոչ գան-
գերնիդ կը փչրեմ :

« Այս մարդուն ձեռքէն ձողը կ'առ-
նէի , երբ ետ քաշուելով գոչեց .

« — Անիւրի նաւապետն է :

« — Զիս կը ճանչնա՞ս :

« — Հապա՛ , նաւապետ : Թիղըն «Ան-
Ֆերէ վրայ երկու անգամ ճամբորդեր եմ :

« — Անո՞ւնդ :

« — Տիւնքէրքցի Սիմօն :

« — Կը յիշեմ , դէմքդ միտքս եկաւ :
Ա՛հ , թշուառակա՛ն , կ'ուզէիր զիս անկ-
լիացուց ձեռքը տալ , հէ՞ , զի՞ս , քու նախ-
կին նաւապետդ :

« — Այս վայրկենիս հրացանի բըռ-
նուիմ , եթէ դուք ըլլալնիդ գիտէի , նա-
ւապետ :

« — Ուրեմն այս երկկայմը քուկդ չէ՞ :

« Ոչ , նաւապետ . Պէզէլէքլինն է :

« — Ո՞ւր է ինքը :

« — Ծովուն յատակը , նաւապետ .
առաջին զարկած մարդերնիդ այն էր :

« — Եւ ի՞նչպէս դու և ինքն հաւա-
նեցաք իմ յափշտակութեանս մեղսակից
ըլլալ :

« — Նաւապետ , մենք մաքսանենդու-
թիւն կ'ընենք :

« — Գիտեմ :

« — Երէկ չէ առջի օր երկու անկիւ-
ցի եկան . ահա՛ անոնց մին :

« Եւ գետինը փռուած դիակ
տուաւ :

« — Սա ծովը նետէ՛ , ըսի :

« Ծերունի նաւաստին , տղեկին
թեամբ , մարմինն եզերքէն վար նետ-
եցաւ :

« — Հապա մի՛ւսը , ըսի ծեր նա-
տիին :

« — Նա շտեմարանին մէջն է ,
ւապետ . այն մարդն է , որու մէջ ի
կտրեցիք :

« — Այս մարդիկն ի՞նչպէս ձեզ իրենց մեղսակից ըրին :

« — Այդ անկլիացիներն ըսին . Պէզէլէք՝, քեզի 50 կինէ կայ , եթէ մեր քերելիք մէկ մարդն անկլիա անցընես . մենք անոր գէշութիւն ընել չենք ուզեր , բայց եթէ դէմ դնէ , պէտք է որ դու և քու մարդիկդ օգնէք մեզ որ զայն կապենք և քու նաւուդ յատակը նետենք : Քսան և հինգ կինէն առաջ կը վճարենք և քսան և հինգն ալ Ֆօլքէշթըրը ելած ատեննիս : Որովհետեւ գործին մէջ սպաննութիւն չկայ , Պէզէլէք սակարկութեան հաւնեցաւ , ամէն ինչ որոշուեցաւ , և ձեզ բերին , նաւապետ : Բայց կ'երգնում թէ գուք ըլլալնիդ չէի գիտեր . եթէ գիտնայի՛ այս գործին չէի խառնուեր :

« Դուրս ելլելէս չորս ժամ վերջը հասանք Մօրայի փոքր նաւահանգիստն , ուր ելայ ողջ առողջ : »

« Մեր ընթերցողք անշուշտ գոհ պիտի ըլլան (կը յաւելուր Կայսրութեան Օրագրէր), քաջ ծովահէնին նամակն հրատարակելնուս : Փա՛ռք Աստուծոյ . Անդրէն նաւապետն իր անվեհերութեամբն յաջողեցաւ ազատիլ վատ որոգայթէ մը : Կը յուսանք որ իր անունն գեռ երկար ատեն սարսափ պիտի ազդէ Ֆրանսայի նամեաց : »

« Եղիմ ընթերցումն աւարտելով՝ ըրրը սեղանին վրայ դրաւ :

« Ի՞նչ մարդ , ըսաւ խնամածուն հիւնամբ . ինչ մ'օրդ : Առանձին կապուած , սչկանդուած ըլլալ և նորէն ասանկ վրոտնդէ մը ազատելու միջոցը գտնել :

« Բայց ո՞րքան արիւն թափուեր է , ըսաւ նորատի աղջիկը դողալով : Անգուշը ամենեւին ցաւակից խօսք մը չըներ

իր զոհերուն համար : Ի՞նչ կատաղի անտարբերութեամբ կը խօսի սպաննած մարդերուն վրայ , որք անպաշտպան էին :

« — Իրաւ է , ըսաւ Օնէզիմ ցած ձայնիւ : Մօրաքոյրը չի լսեց , և խօսքը նորատի աղջկան ուղղելով՝ ըսաւ .

« Ինձ նայեցէ՛ք , աղջիկս , աղիկայ ըսելը դիւրին է , բայց նմանօրինակ կացութեան մը մէջ մարդ իրաւունք ունի . . .

« Սիրելի՛ս , անշուշտ հիմայ պիտի ապացուցանես թէ այդ մարդը վատ մատնութեան մը զոհ եղեր էր և իւր ազատութիւնը կուզէր ձեռք ձգել , թէ այս սպաննութիւններն իր իրաւունքն էին , թէ ուրիշին կեանքն այսպէս անգթաբար առոչինչ գրելը քաջութիւն , գիւցազնութիւն կը կոչուի , չէ՞ մի : Ատոնք կարելի են , թերեւս ես գեշ կը դատեմ : Ես իմ ըզգացած տպաւորութիւնս է որ կ'ըսեմ . վասն զի այս պատմութեան միջոցին , որն որ կը խոստովանիմ թէ ակամայ հետաքրքրութիւն կը ներշնչէր ինձ , հակակրութիւն և սոսկում միայն զգացի : Մանաւանդ մէկ մտածում մը և խօսք մը կայ , որ ամենէն աւելի ահաբեկեց զիս :

« — Ո՞րը :

« — Այս մարդը այն թշուառներուն երկուքը սպաննելէն և մին վիրաւորելէն ետքը՝ չ'ըսե՛ր թէ « Այն ատեն ինքզինքս աւելի հանգիստ զգացի » : — Աւելի հանգիստ , տէ՛ր Աստուած : Ըսել է իրեն արիւն և սպաննութիւն պէտք է մարելու համար իւր բարկութիւնն , որ նորա գըլխաւոր կիրքն ըլլալ կ'երեւի , գարշելի կիրք մը , որու օգնութիւնը կը հայցէ գողցես յուսահատ վայրկեաններու մէջ , ինչպէս այլք Աստուծոյ օգնութիւնը կը խնդրեն :

« — Բայց զաւակս , մտածէ՛ որ վերջապէս ծովահէնը ծովահէն է , սուրբ չ'է : Ամէն մարդուն արուեստը զատ է :

— Է՛Ն , մօրաքոյր , գոչեց Օնէզիմ , որ մինչեւ այն ատեն լուռ կեցեր է , դահճին արուեստը գլուխ կտրել է , և սակայն սոսկալի արուեստ մ'է :

— Ա՛Ն , ըսաւ աշխուժիւ նորատի աղջիկն , ապահով էի որ Պ. Օնէզիմ ինձ համակարծիք է :

— Հարկա՛ւ , պատասխանեց խնամածուն խնդալով , նա կնամարդիին մէկն է : Միթէ անոր մնացեր է պատերազմի վրայ խօսիլ :

— Խոնարհաբար կը խոստովանիմ , մօրաքոյր , թէ դիւցազնի մը յատկութիւնները չունիմ բնաւ , յարեց Օնէզիմ ժրպտելով . ուստի կը խոստովանիմ որ , եթէ ես գերի ըլլայի և հարկ ըլլար իմ ամենէն կատաղի թշնամուս մահուամբն իմ ազատութիւնս դնել , ես ազատութենէ կը հրաժարէի :

— Լա՛ւ , լա՛ւ , պարոն Օնէզիմ , ահա այդ է ճշմարիտ քաջասրտութիւնն , որ պատերազմի և կոտորածի մարդոց քաջասրտութեանն չի նմանիր , պատասխանեց նորատի աղջիկն եռանդեամբ . վասն զի պատերազմիկներու համար զգացած հակակրութեան պատճառը դուցէ այն էր որ Օնէզիմ թէ՛ բնաւորութեամբն և թէ պակասութեամբը չէր կրնար այնպիսի մարդ մը ըլլալ :

— Օնէզիմ քաջասիրտ , ըսաւ խնամածուն խեղճ կարճատեսին պաշտպանուհւոյն ի պատասխանի . օն ա՛նդր , այդ կատակ է :

Եւ խօսքը քեռորդւոյն ուղղելով՝

— Չե՞ս հասկնար որ օրիորդը քեզ կը ծաղրէ՛ , ըսաւ : Բայց սա հիւսուածքը սեղանին վրայ դի՛ր , քաջ դիւցազն , և գործի տուփս ինձ տուր՝ առանց փորձանք մը հանելու , եթէ կարելի է :

Այսպէս ըսելով՝ երկու ձեռքը մէկտեղ Օնէզիմի երկնցուց , մէկով հիւսակէնը բռնած եւ միւսը տուփն առնելու համար :

Երիտասարդն ալ ստիպուեցաւ երկու ձեռքը մէկտեղ երկնցնել , մէկով տուփը տալու և միւսով հիւսուածքն առնելու համար : Կանթեղին լոյսը ամբողջապէս զարնելով սեղանին վրայ՝ անգութ մօրաքոյրն այն ատեն միայն նշմարեց Օնէզիմի սոսկալի այրուածքը և գոչեց :

— Աստուած իմ , ադ ձեռքդ ի՞նչ է , տղաս :

— Ո՛չինչ , մօրաքոյր , պատասխանեց երիտասարդը՝ ձեռքն աշխուժիւ քաշելով , մինչդեռ նորատի աղջիկն անհանգստութեամբ անոր երեսը կը նայէր :

Բայց անողոք մօրաքոյրը շտապաւ ոտքի ելաւ և քեռորդւոյն ձեռքէն բռնելով՝ քննեց զայն :

— Ա՛Ն , խեղճ տղայ , գոչեց անձկութեամբ , սոսկալի կերպիւ այրեր է : Բայց ըսել է անտանելի ցաւեր քաշեցիր . աս նոր բան է : Ե՛րբ պատահեցաւ այս դէպքը :

Եւ աշխուժիւ դառնալով նորատի աղջկան , որ անհանգստութեամբ կը մօտենար , անոր ըսաւ .

— Աստուծոյ սիրուն , մի՛ նայիք , աղջիկս , չէք կրնար դիմանալ : Ապա յարեց , ա՛Ն , հիմայ հասկցայ : Քիչ մ'առաջ եղաւ , անանկ չէ՛ , Օնէզիմ , եռացող ջուրը պարպած ատենդ սխալեցար , և վախնալով որ վրայդ կը խնդանք , առանց ձայն հանելու տոկացիր այս սոսկալի ցաւերուն : Ա՛Ն , Աստուած իմ : Եւ ի՞նչպէս ալ կրցիր դիմանալ և լրագիր կարդալ :

Օնէզիմի լութիւնը նշանակիչ էր :

— Ա՛Ն , գոչեց նորատի աղջիկը խօսքը խնամածուին ուղղելով՝ անբացատրելի այ-

լայլութեամբ և աչքերն արցունքներով լեցուած, ես չըսի՞ որ քաջասիրտ է Ս. յո՛ւ, այս է ճշմարիտ քաջասրտութիւնն, չէ թէ այն կատաղի քաջասրտութիւնն, որ բարկութեան արդիւնք է և արիւն ու սպանութիւն միայն կը փնտռէ, այլ ազնիւ սրտերու քաջասրտութիւնն, որք զիրենք սիրողները դող չի հանելու համար՝ անմեռնջ կը համբերեն սոսկալի ցաւերու:

Նորատի ազջկան այլայլութիւնն, որ ձայնին շէշտէն յայտնի կ'ըլլար, լիուրի վարձատրեց ազնիւ երիտասարդին ցաւերըն. մինչ իսկ այս անգամ նորա դիմաց սրտագրաւ անուշութիւնը կատարելապէս տեսնելու դերագոյն երջանկութիւնն ալ ունեցաւ, վասն զի նորատի ազջիկն ուղեց անպատճառ խնամածուին օգնել՝ Օնէզիմի ձեռքը դարմանելու համար. և այս պատճառաւ պարտաւորեցաւ շատ մօտենալ խեղճ կարճատեսին. ասով, գոնէ քանի մը վայրկեան, Օնէզիմ կրցաւ դիտել այս չքնաղ դէմքը, զոր ընդհանրապէս անորոշ կերպիւ միայն կը տեսնէր, գողցես կէս քօղարկեալ:

Դարմանումը կ'աւարտէր և Օնէզիմ կը ցաւէր մէկ ձեռքը միայն այրելուն, երբ սրահին դուռը բացուեցաւ և սպասուհի մը շտապաւ ներս մտնելով՝ ըսաւ.

- Տիկին Ռօպէ՛ռ . . . տիկին Ռօպէ՛ռ . . . :
- Ի՞նչ կայ:
- Տիկին, պարոն, Սըկօֆէն եկաւ:
- Հապա հա՛յրս, գոչեց նորատի ազջիկը, դէմքն գունաւորուելով և դէպ ի դուռը վազելով, հայրս ալ եկա՞ւ:
- Ո՛չ, օրիորդ, Պ. Սըկօֆէն ըսաւ թէ ուրիշ նամակատունը իջեր էր, բայց անմիջապէս պիտի դար:
- Սիրելի՛ս, ես վար իջնեմ, ըսաւ նորատի ազջիկն իր խնամածուին: Երթամ

անդրասենեկին մէջ սպասեմ հօրս, որպէս զի վայրկեան մը շուտ դրկեմ զինքն: Գալով ձեզ, Պ. Օնէզիմ, կ'աղաչեմ որ ձեռքերնիդ լաւ խնամէք:

Եւ նորատի ազջիկը փութաց հօրը դէմ վազել:

— Տղա՛ս, ըսաւ տիկին Ռօպէ՛ռ երիտասարդին, սենեակդ մտիր, և ձեռքդ պաղ ջուրով լուա՛. ես չի պառկած կուգամ քեզ տեսնելու և իմաց տալու ինչ որ Պ. Քլօարէք ըսէ ինձ քու մասիդ, վասն զի պէտք է դիտնայ թէ ինչո՞ւ համար եւ ո՞րքան ատենէ ի վեր քեզ իր տունն ընդուներ եմ: Բայց իւր բարեսրտութիւնն դիտեմ և ապահով եմ որ քեզ համար ըրած իս պիտի հաւնի:

Օնէզիմ իւր սենեակը քաշուեցաւ՝ տըխուր և անստոյգ անհանգստութեան մը ենթակայ:

Հազիւ թէ սրահէն դուրս էր ելեր, երբ Պ. Սըկօֆէն ներս մտաւ:

Ժ.

Ընթերցողին մտքին վրայ կասկածիլ է ենթադրել թէ շատոնց ի վեր չէ հասկըցած որ Օնէզիմի պաշտպանուհին օրիորդ տը Քլօարէքն է, որ հինգ տարեկան էր մօրը մեռած ատենը. կը յուսանք որ ընթերցողը ճանչցած է նաև խնամածուն, այն է Սիւզան Ռօպէ՛ռը, որ ատենով Սպլինի դայեակն և տիկին Քլօարէքի սպասուհին էր:

Գալով Անտիօնի նաւապետին և իւր հաւատարիմ թնդանօթապետին . . . բայց պէտք է լուել, որպէս զի ընթերցողին արժանապատուութիւնը չի վիւաւորենք:

Պ. Սըկօֆէն մտաւ այն սրահն , ուսկից դուրս ելեր էին օրիորդ Քլօարէք և Օնէզիմ , և ուր կը գտնուէր տիկին Բօպէն :

Սըկօֆէն , տասն երկու տախտան մէջ որ զինք չենք տեսած , քիչ փոխուեր էր . իւր երկար , դալուկ և անտարբեր դէմքն նոյնը մնացած էր : Ժամանակին կամ թէ դէպքերու այս դէմքին վրայ ըրած փոփոխութիւններն էին՝

1. Խոր սպի մը՝ որ ձախ քունքէն կը սկսէր և այտին տակ կ'աւարտէր , և որու համար կ'ըսէր թէ շիշերու վրայ իյնալէն եղած էր :

2. Աչքին մէկուն կորուստը , որու պատճառն հարկաւ ուրիշ ձախաւերութիւն մ'էր :

Պ. Սըկօֆէն , հակառակ իւր բնական ճրից այս կորուստներուն , դարձեալ գըտախը բարձր կը բռնէր . իւր արագիլի վզին շուրջը փաթթուած էր անկլիական ճերմակ մուսլինէ փողպատ մը , որու ծայրերը կ'երեւնային իւր սեւ չուխայէ բաճկոնին վրայ . ճերմակ մետաղեայ կոճակներով երկայն հագուստը կաղինի գոյն էր , ինչպէս նաև իւր անդրավարտիքն , որ իր սեւ գուլպաներուն և փայլուն կօշիկներուն վրայ վայելչաձեւ կ'իյնար . իւր աջ ձեռօքն (որու երկու մատերը մեքենայ մը առեր տարեր էր) , իբր թէ կռթներ էր խոշոր գաւազանի մը , որովհետեւ շատ կը կաղար , ինչ որ ուրիշ ձախորդութեան մը հետեւանքն էր : Վերջապէս Պ. Սըկօֆէնը տեսնողը՝ զայն պիտի կարծէր (առանց սպին հաշուի առնելու) նօտարի ծերուկ աշկերտ մը կամ դաւառական դատաւոր մը , և իւր խաղաղ երեւոյթն կատարելապէս կը համաձայնէր Պ. Քլօարէք կերպասեղենի վաճառականին գործակապարի պաշտօնին հետ :

Տիկին Ռօպէր թէև տարիներէ ի վեր Սըկօֆէնն իւր հեղնութիւններովը կը հա-

լածէր , սակայն զայն տեսնելուն պէս չի ջանաց իւր ուրախութիւնը ծածկել . ինքզինքը բոլորովին իւր ուրախութեանը տըռած՝ առջի բերան չի նշմարեց թէ Սըկօֆէն կ'աշխատէր անանկ մը կենալ որ դէմքին կէսը , կամ առ առաւելն երեք քառորդը միայն տեսնուի . ասանկով կուզէր կարելի եղածին չափ ուշացնել իւր աչքին կորստեանը վրայօք տալիք բացատրութիւնները . բայց ինամածուն , իւր նախկին պաշտօնակիցը դիմաւորելով , շուտ մը նշմարեց թէ Պ. Քլօարէքի գործակապարը գացած ատեն երկու աչք ունէր , որք թէև մեծ ու գեղեցիկ չ'էին , բայց բաւական կրակոտ էին . սակայն հիմայ աչքին մէկուն վրայ ահագին կպտակ մը կար . ուստի գոչեց .

— Ա՛հ , Աստուած իմ , աչքիդ վրայ ադ ի՞նչ է , Սըկօֆէն :

— Ո՛ւր :

— Ի՞նչպէս ուր . աջ աչքիդ վրայ :

— Աջ աչքիս վրայ :

— Այո՛ , այդ սեւ կպտակը :

— Հա՛ , ըսաւ մեր մարդը պաղարիւնութեամբ , հասկցա՛յ . գիտեմ ինչ է :

— Հարկաւ գիտես , և ես ալ կը վախնամ որ մտքէս անցածը չ'ըլլայ :

— Օ՛ն , գտէ՛ք նայիմ :

— Դարձեալ վէ՞րք մ'է արդեօք :

— Բի՛ւհ , ըսաւ Սըկօֆէն , մէկ աչքս , ուրիշ բան չ'է :

— Ի՞նչ կ'ըսես : Աչքիդ մէկը կորուսի՞ր :

— Եղածն եղած է :

— Ահա՛ այդ պակաս էր : Ըսել է հիմայ ալ միականի ես :

— Այո՛ , և պատրաստ եմ ձեզ ծառայելու :

— Շնորհակալ եմ :

— Կը տեսնե՛նք , կը տեսնե՛նք . ըլլալիքը կ'ըլլայ :

— Երկար ատեն է որ այդ գուշակութիւնը կ'ընէք, խեղճ Սըկօֆէնս :

— Օր մը պիտի իրականանայ :

— Շիտակը աղուոր ապագայ . վասն զի կուզէի գիտնալ թէ, եթէ այսպէս շարունակուելու ըլլայ, քանի մը տարիէն ձեր մարմնոյն ո՞ր մասը պիտի մնայ : Վասն զի Պ. Քլօարէքի գրեթէ մէն մի ճամբորդութեանը, մէկ տեղերնիդ պակաս կը վերադառնաք : Այո՛, պարտը վաճառականութեան սկսելէն և ձեզ իր դործակատարն ընելէն ի վեր, ապահով եմ թէ ապիկար զինուորաց մէջ ձենէ նուազ վիրաւոր զօրականներ կան :

— Ի՞նչ ընենք, ամէնուն բաղդն եւ արուեստը մէկ չ'է :

— Էյ դուք ձեր արուեստին պատճառա՞ւ կորուսիք, աչքերնիդ :

— Հապա՛ :

— Հետաքրքիր եմ գիտնալու թէ ի՞նչ պէս :

— Շատ պարզ է : Պ. Քլօարէք երկար ատենէ ի վեր կը յանդիմանէր զիս որ հաշիւներուս մէջ սխալներ կ'ընեմ : Իրաւ ալ տեսողութիւնս շատ կը տկարանար . ուստի ինքնիրենս ըսի . ասոր ճարը ակնոց դնելն է . աղէկ գտեր եմ, անանկ չ'է՞, սիրելիս :

— Հարկաւ : Ետքը՞ :

— Ուստի ակնոց մը գնեցի Լիօնի մէջ . Ա՛հ, սրիկայ խանութպան, ըսաւ Սըկօֆէն կռուփը ցոյց տալով . ա՛հ, անիծա՛ծ, վա՛տ :

— Օ՛ն, Սըկօֆէն, խաղաղէ և շարունակէ :

— Սքանչելի արեւ մը կար . այս ակնոցավաճառին խանութը Ռօնի գետափին վրայ էր և դէպ ի արեւելք կը նայէր, սիրելիս . ճիշդ ալ կէս օրին էր, ասոր լաւ ուշադրութիւն ըրէք :

— Ի՞նչ կայ որ :

— Մեծ բան կայ . Ուստի ակնոցներ ուղեցի որ փորձեմ : Սրիկայն հասա մը տըռաւ, ես ալ քիթս անցուցի : Այս միջոցին գետափին վրայ աղաղակներ լսուեցան, ես ալ հետաքրքրութեամբ դուռը վազեցի :

— Ադ քու բնաւորութիւնդ է :

— Դուռը վազեցի՝ ակնոցը քիթս : Ասոր ուշադրութիւն ըրէք :

— Ետքը՞, ետքը՞ :

— Սկսայ ասդին անդին, վար վեր նայի՛լ հասկնալու համար թէ այդ աղաղակներն ո՞ւսկից կ'ելլեն . երբ յանկարծ վեր նայած ատենս . . . ա՛հ, սիրելիս . . .

— Լ'մոցո՛ւր :

— Այլ աչքիս վրայ անանկ սաստիկ ցաւ մը զգացի որ, կարծես թէ կարմրցած երկաթ մը կը մխէին :

— Ա՛հ, Աստուած իմ . էյ ի՞նչ է եղեր :

— Այն աւանակ ակնոցավաճառը սըխալեր և ակնոցին մէկ աչքին անդիլի ծայր խոշորացուցիչ ապակի մը դրեր է, ըսաւ Սըկօֆէն ողբալի ձայնիւ, խոշորացուցի ապակի մը, և որովհետեւ երեսս վեր վերցուցեր էի, կէս օրուան արեւը, կատարելապէս զարնելով ակնոցիս վրայ, ապակիներէն մին այն աղդեցութիւնն ըրեր էր աջ աչքիս վրայ, ինչ որ կ'ընէ խոշորացոյց մը արեթին վրայ . աչքս այրեր, կրացեր էր, սիրելիս, Ֆ'է'է' մը ըրաւ և ես միականի մնացի :

— Կարելի՞ է, գոչեց տիկին Ռօպէր, դժուարաւ կարենալով հաւատալ խոշորացուցի այս աղդեցութեանն, աչքերնիդ այսպէսով կորուսիք, հէ՞ :

— Եղածն եղած է : Բայց սա ալ պէտք է ըսեմ թէ աչքիս մէկը կորսուելէն ի վեր միւսն երկուքի ոյժ ստացաւ . կարծես տասն եւ հինգ տարու երիտասարդի մը

աչքն է : Օրինակի համար զքեզ տասն և հինգ տարեկան եղած ատենուանդ պէս գեղեցիկ կը տեսնեմ :

— Դժբաղդաբար , խեղճ Սըկօֆէնս , իմ աչքերս , որ քառասուն տարեկան ան-

ջինը կ'ըլլայ , վասն զի պարոնն օրիորդին ըսաւ թէ հաւանականաբար ա՛լ չպիտի ճամբորդէ , և ձեր գլխուն ալ ճամբորդութեան ատեն միայն փորձանք կը պատահի . վերջապէս , ի բաց առեալ ձեր



Ա. Կ. Մ.

. . . աչքս այրեր , կրացեր էր . . . (Երես 36 :

ձի մ'աչքերն են , ձեզ այնպէս կը տեսնեն՝ ինչպէս որ էք . բայց ուրիշ բանի վերայ խօսինք : Կը ցաւ իմ ձեր այս նոր դրժբախտութեանը , բայց յուսամ որ վեր-

աչքի կորուստն , ուրիշ ամէն բան լաւ գնաց :

- Խիստ լաւ :
- Պարտնք գոհ եղա՛ւ իւր գործերէն :

— Շատ գոհ, առեւտուրը սքանչելի եղաւ :

— Պարոն ի՞նչպէս է :

— Խիստ լաւ :

— Դարձեալ կը տխրի՞ երբ խեղճ տիկնոջ մահը միտքը գայ :

— Ա.յո՛ : Ա.յն ատեն սենեակ մը կը քաշուի, քանի մը ժամ առանձին կը կենայ և դուրս ելած ատեն յայտնի կ'ըլլայ որ լացեր է : Ապա կ'անցնի և ատեն առտեն նորէն կուգայ :

— Հապա բնաւորութիւնն :

— Ես անոր բաղդատմամբ վառօդ եմ :

— Ըսել է ինչպէս հոս, նոյնպէս նաև ճամբորդութեան ատեն բնաւ չի բարկանար :

— Ամենեւին :

— Շիտակը մարդ երբ Պարոն ին տասն երկու տարի առաջուան բնաւորութիւնը միտքը բերէ, հէ՛, Սըկօֆէն :

— Մեծ տարբերութիւն կայ :

— Ա.յս բանը միտքս կը բերէ թէ դեռ այսօր խեղճ օրիորդ Սապին ջղային տաղնապի մը մէջ ինկաւ՝ իւր մօրը մահը յիշելով : Վերջապէս գոնէ սա բարեբախտութիւնը կայ որ այն սոսկալի իրիկունը խեղճ աղջիկն իւր հայրը չ'է ճանչցեր՝ հագուստին պատճառաւ : Խեղճը կը կարծէ թէ մայրը սպաննողն օտար մ'է և այս աղիտաբեր յիշատակն երբեմն կը ցնորեցընէ զինքն :

— Բարեբախտաբար ա՛լ այդ գաղտնիքը միշտ չպիտի գիտնայ, ըսաւ Սըկօֆէն հառաչելով : Իրաւցնէ տխուր գիշեր մ'էր այն գիշերն :

— Ա՛հ, այն ատենէն ի վեր ի՞նչ բաներ անցան, Սըկօֆէն : Ո՛րչափ հոգեր քաշեցի այս խեղճ աղջկան եւ Պարոն ին համար :

— Ես երբեք հոգ ըրի՛, սիրելիս :

— Միթէ դուք բնաւ բան մը հոգ կ'ընէ՞ք :

— Վերջապէս երբեք յուսահատեցայ :

— Ո՛չ, այդ իրաւ է :

— Երբ տեսայ որ Պարոն իւր կնոջը մահուան պատճառ ըլլալուն համար կը յուսահատէր և վերջէն ալ իւր դատաւորական պաշտօնը ձեռքէն առնուեցաւ, ի՞նչ ըսի ձեզ, սիրելիս, երբ դուք ապագայն հոգ կ'ընէիք. Անուրճ Գալին, «լատնոյը՝ Կարակին ըսի :

— Ատ ալ իրաւ է. բայց որովհետեւ ինչպէս ատենօք, նոյնպէս և այսօր այդ խօսքին իմաստը չ'եմ հասկնար, բնական է որ ատով չ'էի կրնար ապահով ըլլալ :

— Կարելի է. բայց ես կը հասկնայի և կը հասկնամ. Ուստի Պարոնը ձեռքը մնացած քիչ մը բանը ձեզ յանձնեց՝ աղջրկանը պէտքերը հոգալու համար, և ինքն ու ես մեկնեցանք :

— Ա.յո՛, և երկու տարի ձեր վրայօք լուր չ'առինք :

— Է՛հ, Պ. Քլօարէք, թէև երեսուն տարեկան էր, պարտաւորեցաւ նոյնքան ժամանակ վաճառականական տան մը մէջ ծառայել՝ վաճառականութիւն սովորելու համար, վասն զի առեւտուրի համար առաջուց ի վեր մեծ տրամադրութիւն ունէր, պատասխանեց Սըկօֆէն խորամանկ կերպով մը. հարկաւ դուք ալ նշմարած էք, սիրելիս :

— Իրաւոր չ'է, և ձեր խորատեսութիւնը հարկ է այս բանը հասկնալու համար, Սըկօֆէն :

— Եւ սակայն ըսածիս պէս է, սիրելիս. Պարոն ինքնիրեն ըսաւ. «Ահա՛ դատաւորութիւնս գնաց, աղջիկս հապիւ քանի մը տարուան ապրուստ ունի : Ես իրաւազիտութեան համար ստեղծուած չ'եմ, բայց առեւտուրի փափագ ունիմ, ուրեմն

վաճառական ըլլանք » . և նշանաւոր վաճառական մ'եղաւ , վասն զի աղջկանք համար կըրիկ հարստութիւն մը դիզեց , առանց հաշուելու որ ինքն , ատենով այնքան բարկացոտ ըլլալէ վերջն՝ այսօր գառնուկի մը նման հեղ է : Աս ալ ճշմարիտ է :

— Այո՛ , Սըկօֆէն , և կը խոստովանիմ թէ զիս ամենէն աւելի զարմացնողը Պարոն ին հարստութիւնը չէ . վասն զի առեւտրը վիճակահանութեան պէս բան մ'է . զիս զարմացնողը Պարոն ին բնաւորութեանն այս փոփոխութիւնն է :

— Բէ՛հ , բրաւ Սըկօֆէն խորամանկ կերպով մը , առեւտուրի հետեւանքն է այն :

— Դու ի՞նչ կ'ըսես , Սըկօֆէն :

— Հարկաւ , սիրելիս , ըսաւ մեր մարդըն , առեւտուրը մարդոց մէջեւ կապ մ'է . վասն զի յայտնի է որ եթէ վաճառական մը իւր վաճառքին հետ կռուրի հարուածներ տայ , կամ յաճախորդները կից զարնելով ընդունի , առեւտուրն առատ չ'ըլլար :

— Սակայն , Սըկօֆէն , խօսք հասկընանք . դատաւորութիւնն ալ կարծեմ վաճառականութեան չափ հեղ բնաւորութիւն մը կը պահանջէ . ի՞նչպէս կ'ըլլայ ուրեմն որ վաճառականութիւնն այսպէս մեզմէ Պարոն ին բնաւորութիւնը . կը յիշէք , Սըկօֆէն , նա ատենօք այնքան կըքոտ էր որ նախագահները պատուհանէն վար կը նետէր :

Այս բարձրագոյն հոգեբանութեան խընդիւրը պահ մը մեր մարդը շուարեցուց . սակայն , որովհետեւ դժուար էր զայն յանկարծակիի բերել , ըսաւ .

— Ատ շատ պարզ է , և անմիջապէս պիտի հասկնաք , սիրելիս :

— Տեսնենք ինչպէս :

— Տղայ մ'իսկ կրնայ հասկնալ զայս :

— Ըսէ՛ տեսնենք :

— Ահա՛ , ըսաւ Սըկօֆէն . Անպարտ Գայ-Գային՝ աղանոցը

— Դուն երբէք փոխուելիք չունիս , Սըկօֆէն , միշտ միւսնոյն անտանելի արարածն ես , գոչեց խնամածուն՝ իր նախկին պաշտօնակցին խօսքն ընդմիջելով . տարիները , ճամբորդութիւնն և առեւտուրը քեզ չի փոխեցին , այսինքն բարոյապէս չի փոխեցին , Ֆիզիզապէս ուրիշ բան է :

— Ահա՛ , ապերախտ բարեկամուհի՛ , ըսաւ Սըկօֆէն գրպանէն մասնաւոր ձեւ տուփ մը հանելով և Սիւզանի տալով (քիչ շատ նաւարկու կամ թնդանօթածիզ եղող մը այս տուփին պարոյզի պատ մ'ըլլալը պիտի հասկնար) , ահա՛ ես իմ վրէժս այսպէս կ'առնեմ :

— Աս ի՞նչ է , Սըկօֆէն , հարցուց Սիւզան :

— Փոքր նուէրները բարեկամութիւնը կ'ամրացնեն , և դուք վերջապէս բարեկամութիւն կզգաք ինձ համար :

— Հարկաւ , և դու խիստ լաւ դիտես այս բանն , ըսաւ խնամածուն տուփը բանալով եւ մագաղաթի մեծկակ կտոր մը պարզելով , որու մէջ էր Սըկօֆէնի նուէրը : Գործակապարն առաջուց կը ժպտէր իր նուէրին ընելիք ազդեցութեանը վրայ :

— Ահ , Աստուած իմ , գոչեց Սիւզան գրեթէ սոսկմամբ , այս մագաղաթին մէկ ծայրն երած է , և մէկ ծայրն ալ արիւն եղեր է :

— Հա՛ , այո՛ , յարեց անտարբերութեամբ Պ . Բլօարէքի Գործակապարն , ասիկայ չ'եմ գիտեր ինչ բանի մը կտորն էր . . . որով մոմս վառեցի , և մէջի օղերն ու ոսկի ասեղը պլլած ատենս՝ մատս խայթեցի . կը տեսնէք որ միշտ անյաջողակ եմ : Ուստի չպիտի զարմանամ եթէ մէջի գոհա-

րեղէններն ալ քիչ մը արիւնոտած ըլլան , բայց կտոր մը ջուրով կը լուացուի :

Խնամածուն այս մագաղաթէն (որ վառօղի տոպրակի մը կտորն էր) հանեց երկու ահագին ոսկի օղեր , որք կապուած պարանի մը ձեւն ունէին , և խոշոր ոսկի գնդասեղ մը , որու վրայ խալխալ մը և թագաւորական թագ մը կտր : (Իբր տեղեկութիւն ըսենք նաև որ ասկից երեսուն տարի առաջ անկլիական արքունի նաւուց նաւաստիներէն շատերն օղեր կը կրէին և իրենց բրդէ շապիկներն ոսկի կամ արծաթ գնդասեղներով կը բռնէին) :

Խնամածուն՝ աւելի զինքը յիշելուն քան թէ ընծային ուրախանալով , վասն զի բընաւ փափագ չէր զգար այն ահագին օղերն ականջներէն կախելու , գնդասեղը կուրծքը խոթեց և Սըկօֆէնի ըսաւ .

— Շիտակը շատ ազնիւ ես . այս օղերը , մանաւանդ սա գնդասեղը խիստ գեղեցիկ են . և որովհետեւ մենք ալ ծովուն մօտ կը բնակինք , այս խարսխաւոր գնդասեղը շատ յարմար է :

— Ես ալ այդ մտածեցի , պատասխանեց Սըկօֆէն , վասն զի այս փոքր նուէրները նաւու մը նաւապետին կնօջն են . ասոնց փոխարէն Պարսին ինձ տուած կերպաններէն կտոր մը բան տուի :

— Առէ՛ք , Պ . ճանապարհօ՛րդ , ըսաւ Սիւզան սեղանին վրայէն առնելով կարմիր բրդէ հիւսուածքն , որու աշխատեր էր այն իրիկուն , կը տեսնէք որ միայն պուք չէք որ բացակայ եղողը կը մտածէք :

— Ի՛նչպէս , Սիւզան , այս հիւսուածքը

— Ձեզ համար ձմրան երկայն ու տաքուկ փողպատ մը ըլլալու սահմանուած է ,

— Ա՛հ , Սիւզա՛ն , ըսաւ մեր մարդն իրաւցնէ գորովելով , Սիւզա՛ն , բնաւ չպիտի մոռնամ

Դժբաղդարար Պ . Սըկօֆէնի երախտագիտութեան արտայայտութիւնն ընդմիջուեցաւ Պ . Բլօարէքի և իւր աղջկան ներս մտնելովն , որք թեւ թեւի մտած էին :

Իվօնի դէմքն , որ այն ատեն քառասուն երկու տարեկան էր , շատ չէր փոխուած . սակայն մաղերն կը սկսէին ճերմըկնալ և դէմքը շատ թուխցեր էր . սակայն կարծես ոյժն ու ճարպիկութիւնն աւելցեր էին . դէմքն ուրախ էր , աչքերն անուշ արցունքներով լի , և ներս մտած ատեն գոչեց .

— Լո՛յս , շատ լո՛յս բերէք , որպէս զի սիրեցեալ աղջիկս աղէկ մը տեսնեմ :

Այն ատեն կամաց մը Սապինի թեւերէն ելնելով՝ ետ քաշուեցաւ կանթեղին լուսովը դիտելու համար զայն :

Այն ատեն ոտքի վրայ , սրտատրոփ , երկու ձեռքերը յառաջ պարզած , աղջիկն ընդդրկեց սիրալիր նայուածքով մը , ապահով ըլլալու համար թէ իր պաշտելի զաւկին տկար և փափուկ առողջութիւնը բարւոքութիւն էր մի իր երթալէն ի վեր : Այս մէկ վայրկենին մէջ բոլոր հայրական անձկութիւնք , յոյսք և սէրք յայտնի երեւցան իվօնի կեցուածքին , շարժմունքին , մինչև իսկ չբժանցը շղաձգական դողին մէջ , վասն զի չափազանց այլայլեալ ըլլալով՝ բաւ մը չէր կրնար արտաբերել :

Սապին ալ , որու դէմքը գունաւորուեր էր ուրախութեան շիկնութեամբ , հօրը երեսը կը նայէր անուշ անյագութեամբ մը : Իվօնի դէմքին ուրախութենէն հասկըցաւ որ՝ երջանկութեան և այլայլութեան արգասիք եղած վաղանցիկ շիկնութիւնը նա առողջութեան վարդեր կը կարծէր . ուստի շատ ուխախ եղաւ տեսնելով որ հօրն այս մասին ունեցած վախերը կը փարատին , և վերջապէս թէև համոզուած էր որ Բլօարէք իր վաճառականութեանը

համար հարկ եղած համբորդութիւնները միայն կ'ընէր, բայց դարձեալ շատ անգամ անհանգիստ կ'ըլլար նոյն իսկ ամենէն հանգարտ համբորդութեանց մէջ հրնարաւոր եղած արկածները միտք բերելով. ասոր համար երջանիկ էր տեսնելով որ հայրն առաջուան պէս քաջառողջ էր:

Այս քանի մը վայրկենի լռիկ նկատողութենէն վերջը, իվօն՝ գլխովն Սապինը թեւերուն մէջ կոչեց և զայն սրտին վրայ սեղմելով ըսաւ.

— Եկո՛ւր, եկո՛ւր, սիրելի՛ զաւակս, կը տեսնեմ որ սրտի բովանդակ ապահովութեամբ կրնամ գրկել զքեզ, վասն զի այսօր շատ աւելի քաջառողջ ես քան թէ ասկէց մեկնած օրս:

Այն ատեն առաջին անգամ ըլլալով խօսքը տիկին Ռօպէրի ուղղեց և գորովանօք անոր ձեռքը սեղմելով՝ ըսաւ.

— Սրտանց շնորհակալ եմ քու ազնիւ խնամօցդ, Սիւզան, գիտեմ որ անոնք շատ նպաստած են Սապինի առողջութեանն:

Նորէն իւր աղջկանը երեսը նայելով՝ Քլօարէք թեւերն անոր երկնցուց և ըսաւ.

— Նորէ՛ն, աղջիկս, նորէ՛ն:

Եւ հայր ու աղջիկ նորէն իրարու բազկաց մէջ նետուեցան:

— Սիրելիս, ըսաւ Սըկօֆէն ցած ձայնիւ խնամածունիւ, հայր մ'ու աղջիկ մը գոհ կ'ըլլան եթէ առանձին մնան բաւական բացակայութենէ մը վերջը զիրար գանոզ սիրահարներու պէս:

— Իրաւունք ունիք, Սըկօֆէն, պատասխանեց խնամածուն գէպ ի դուռը երթալով:

— Ա՛հ, Սիւզան, ըսաւ Պ. Քլօարէքի գործակատարը տիկին Ռօպէրի ետեւէն քովի սենեակը երթալով, ի՛նչ աղւոր առիթ մ'էր այն սիրային տեսակցութեան մը . . . :

— Դժբաղդարար սէրը կոյր է, սիրելիս Սըկօֆէն, և դուք դեռ կէս կոյր կը սեպուիք:

— Ասով հանգերձ օր մը տիկին Սըկօֆէն պիտի ըլլաք, ըսաւ մեր մարդը խորէն համոզման ձայնով մը: Ըլլալիքը կ'ըլլայ:

Եւ այն երկու անձինք դուռը կամաց մը գոցելով՝ Քլօարէք և աղջիկը առանձին մնացին:

ԺԱ.

Երբ իվօն իւր աղջկանը հետ առանձին մնաց՝ նորէն համբուրեց զայն և աւելի ևս գորովանօք, իբրու թէ մինչեւ այն ատեն տիկին Ռօպէրի ներկայութիւնը թումբ մը կանգնած ըլլար հայրական սիրոյ հոսանքին գէմ:

Ապա Սապինը իր քով թիկնաթուռի մը վրայ նստեցնելով և անոր երկու ձեռքերն իր ձեռացը մէջ առնելով՝

— Տեսնե՛նք, սիրելի՛ աղջիկս, ըսաւ, նախ կարեւոր բաներուն նայինք: Երեք ամսէ ի վեր ի՛նչպէս ես:

— Շատ լաւ:

— Իրաւցնէ ալ աւելի առողջ կը գըտնեմ զքեզ, ըսաւ իվօն: Ասկէց զատ . . .

— Ի՛նչ կայ, հայր:

— Չեմ գիտեր ի՛նչպէս ըսեմ՝ քեզ այս բանը կարելի է ալ որ ասի հօր գաղափար մ'ըլլայ:

— Ի՛նչ գաղափար:

— Ինձի անանկ կուգայ որ առաջուրնէ գեղեցիկ ես:

— Ա՛հ, աղ իրաւ հօր գաղափար մ'է: Նախ հարկ կ'ըլլայ ենթադրել թէ առաջ գեղեցիկ էի:

— Էյ ո՞վ կը կասկածի ատոր , օրիորդ :

— Նախ եւ առաջ ես :

— Դու չես հասկնար կամ թէ հայեւիներդ գէշ են : Բայց որքան որ երեսդ կը նայիմ , այնքան հրապուրիչ բան մը կը գտնեմ վրայդ : Ի՞նչ կուզես որ ըսեմ . ա՛լ մեծցեր ես : Ո՛չ , ո՛չ , ներէ՛ զքեզ վիրաւորելուս , օրիորդ , միայն սա կուզեմ ըսել թէ առաջուան չափ տղայ չես :

— Իրա՞ւ , հա՛յր . էյ տեսնենք այդ փոփոխութիւնն ի՞նչ բանի վրայ կը կայանայ :

— Չեմ գիտեր , վասն զի դէմքդ նոյնն է . բայց տեսակ մը անուշ ծանրութիւն եկեր է վրան :

— Կրնա՞յ ուրիշ կերպ ըլլալ , հա՛յր իմ , բանի որ ձեզ կը տեսնեմ նորէն : Իմ զգացածս ուրախութիւն չէ՛ այլ երջանկութիւն , և երջանկութիւնը լուրջ բան է :

— Ա՛հ , եթէ այդպէս խօսիս , աչուըներս պիտի լեցունին և բնաւ չպիտի տեսնեմ : Վերջապէս դարձեալ ըսածիս պէս է : Բայց անցնինք : Դու առողջ էիր , կարեւորն այս է . բայց չի ձանձրացա՞ր . սիրելիս . ձմեռը շատ տխուր է գիւղի մէջ : Բու առողջութեանդ համար ըսին որ ծովուն մօտ բնակի՞նք , և իրաւցնէ ալ օգուտ ըրաւ : Սակայն հոս զուարճալի չէ :

— Վայրկեան մ'իսկ չձանձրացայ , հա՛յր իմ : Միթէ գրքերս , դաշնակս , ձեռագործս , չըջագայութիւնը դբօսանքներ չեն :

— Իրա՞ւ չձանձրացար :

— Բնա՛ւ :

— Իսկ Սիւղա՞ն հարկ չէ՛ որ հարցնեմ թէ ամէն ատենուան պէս լաւ վարուեցաւ հետդ :

— Չէ՞ք ճանչնար զինքը :

— Եւ . . .

Իվօն մէկէն ի մէկ կեցաւ :

Կուզէր հարցնել Սասիկի թէ իւր ջը-

ղային դիւրագորգութիւնն քիչ մը հանդարտե՞ր էր մի . թէ այն անորոշ վախերը քիչ մը քիչցե՞ր էին մի . բայց վախցաւ որ աղջիկը կը տխրեցնէ և լաւագոյն համարեց այս բանը խնամածուին հարցընել :

Ուստի իր լռութեանը պատրուակ մը տալու համար՝ ըսաւ .

— Ըսել է դու այս երկրէն և այս տունէն կ'ախորժիս . դիտես որ մէկ խօսքդ բաւ է : Հիւսիսէն հարաւ Թրանսայի ծովեզերքը տարածուած է . կրնաս ընտրութիւն մ'ընել , և եթէ կուզես տեղդ փոխել . . . :

— Ո՛չ , հա՛յր իմ , բնդհակառակն այս երկիրը շատ հաճոյ է ինձ . չըջակայները գեղեցիկ են . այս քաղաքին հետ բարեկամացայ արդէն . ապերախտ կ'ըլլամ եթէ թողում դայն . բայց եթէ դուք կ'ուզէք . . . :

— Ե՞ս , քու փափագիդ հակառակ իղձ մ'ունենամ , ըլլալ՞ու բան է :

— Ասոնք բոլոր խօսքով գեղեցիկ են , հա՛յր իմ :

— Ինչպէ՞ս :

— Բայց ձեր գործերն քիչ մը կը ժըխտեն այդ գեղեցիկ խօսքերը :

— Ի՞նչ գործ :

— Կ'ըսէք թէ իմ փափագներս ձեր ալ փափագներն են :

— Դու դատէ՛ :

— Քանի՞ անգամ խնդրեր եմ ձենէ որ ճամբորդութենէ հրաժարիք , որպէս զի միշտ մօտս գտնուիք :

— Ա՛ , ադ ուրիշ բան էր : Որովհետեւ քեզի համար կը ճամբորդէի , սիրելի դաւակս , ուստի մասնաւոր պատճառներ ունէի ուզածիս պէս վարուելու :

— Ազնի՛ւ հա՛յրս . գիտեմ , զիս հարըստացնելու համար է որ այդքան կ'ըզ-

բաղիք : Է՛հ , աստուած իմ , ի՞նչ օգուտ ունի այդքան ստակը : Բայդ դուք մի միայն իմ խօսքս կ'ընէք ինձ : Հապա ձեր ճանապարհորդութիւնն ի՞նչպէս եղաւ :

— Աքանչելի :

— Ճամբան նեղութիւն քաշեցի՞ք . կառքի մէջ մսեցա՞ք : Անցեալ ամիս շատ ձիւն եկաւ : Երբ հոս կրակին շուրջը կը նստէինք , Սիւզանի կ'ըսէի . « Խեղճ հայրս այս միջոցին թերեւս ճամբան է . կառքի մէջ կը դողդղայ , մէկ փարօսխ տեղը մէկ ժամէն կ'երթայ : »

— Մի՛ վախնար , սիրելի զաւակս , իմ ճամբորդութիւնս վերջին ծայր հանգիստ եղաւ , և սովորականէն աւելի չի յոգնեցայ :

— Իրա՞ւ :

— Անշուշտ :

— Բայց ինչո՞ւ վերադարձնիդ ուշ մընաց , հայր իմ . վտանգաւոր բան մը չըկայ , չէ՞ մի :

— Ո՛չ . աղջիկս , գործի խնդիր մը :

— Գիտնայիք թէ ո՞րքան անհանգիստ կ'ըլլամ հոս չեղած ատեննիդ : Բայց վերջապէս այս անհանգստութիւններն , այս չափազանց վախերն ա՛լ չպիտի զգամ , վասն զի խօսքերնիդ պիտի պահէք , չէ՞ մի :

— Ի՞նչ խօսք :

— Ա՛լ չպիտի ճամբորդէք , ինձմէ չպիտի դատուիք :

— Խոստացայ , բայց ըսի որ եթէ անակնկալ պարագայ մը . . . :

— Ես անակնկալ պարագայ չեմ գիտեր , այդ պատրուակ "մ" է :

— Օ՛ն , զիս մի՛ յանդիմաներ :

— Պիտի կենա՞ք :

— Միշտ :

— Կ'երդնո՞ւք :

— Այո՛ , կ'երդնում :

— Ա՛հ , ըսաւ Սապին՝ Քլօարէքի վիզը

ներսուելով , այս երջանկութեան կը յուսայի և սակայն չեմ կրնար ըսել թէ ո՞րքան ուրախ կ'ընէք զիս : Ուստի զձեզ վարձատրելու համար . . .

— Է՛ , ըսաւ Քլօարէք ժպտելով և աղջրկանը սրտագրաւ խօսքերէն յուզուելով . է՛յ , զիս վարձատրելու համար . . .

— Ձենէ բան մը պիտի խնդրեմ , քանի որ կ'ըսէք թէ բնաւ բան մը ուզած չունիմ ձենէ :

— Ադկից մեծ հաճոյք մը չէիր կըրնար պատճառել ինձ , աղջիկս : Է՛յ տեսնենք , խնդրելիքդ ի՞նչ է :

— Ձեր պաշտպանութիւնը :

— Որո՞ւ համար :

— Ո՛հ , այնպիսի մէկուն համար որ արժանի է և որու վրայ Սիւզան ալ պիտի խօսի ձեզ : Բայց տեսէ՛ք ինչպէս նախանձոտ եմ . կ'ուզեմ իմ պաշտպանեալս ամենէն առաջ ես յանձնարարել ձեզ :

— Ձեր պաշտպանեալը :

— Այո՛ , երկուքնուս պաշտպանեալն :

— Շիտակը այդ անձը թող ապահով ըլլայ թէ ինձմէ ուզածք պիտի ընդունի : Ի՞նչ կը խնդրէ նայինք :

Ինքը բան մը խնդրելու չի համարձակիր , վասն զի շատ վախկոտ է . բայց ես ու Սիւզան իր կողմէն պիտի խնդրենք , իւր կացութիւնն շատ տաժանելի և կարեկցական է :

— Խեղճ տղայ , աղնի՛ւ սիրտ , ի՞նչպէս այլայլած կ'երեւիս , ի՞նչպէս կը կարմրիս : Այդ անձը շատ թշուառ է :

— Ո՛հ , այո՛ , հայր իմ , ասկից զատ երբ մէկն ամէն օր տեսնես և կարենաս լաւ եւս դնահատել զայն , բնականաբար կարեկցութիւնը կ'աւելնայ :

— Բայց , զաւակս , որո՞ւ համար կ'ըսես :

— Պ . Օնէզիմի համար :

— Պ. Օնէզիմն ո՞վ է : Կեցի՛ր , Պ. Օնէզիմ . . . կարծեմ այդ անունն անծանօթ չէ ինձ :

— Սիւզանի քեռորդին է :

— Ճիշդ : Շատ հեղ անոր խօսքն ըրած է ինձ . անունն անորոշ կերպով միտքըս մնացեր էր . կարծեմ քոյրը երկու տարի է որ մեռաւ :

— Այո՛ , հայր իմ , որք է : Լիլի մէջ փոքր պաշտօն մ'ունէր և ատով կ'ապրէր , բայց ստիպուեցաւ այդ գործէն ելնել : Այն ատեն որովհետեւ ապրելու ուրիշ միջոց չունէր , Սիւզան , որ ձեր բարութիւնը գիտէ , զայն հիմակուհիմայ հոս բերել տուաւ :

— Ա՛ , հո՞ս է :

— Այո՛ , հայր իմ :

— Տանը մէջ կը բնակի :

— Այո՛ , հայր իմ , երկու ամիս է :

— Օ՛ն , նորէն կարմրեցար :

— Ե՞ս , հայր իմ . բայց ո՛չ :

— Զաւա՛կս , արդեօք կը կարծես թէ ինձ անախօրթ պիտի դայ որ քու խնամածուդ , որու այնքան երախտապարտ ենք , հոս հիւրընկալեր է իր քեռորդին , որ անշուշտ բարեբարոյ և կրթեալ տղայ մ'է , քանի որ Սիւզան զայն իր քով բերել տուեր է :

— Ո՛հ , աղնի՛ւ հայրս . երբ որ տեսնէք զինքն՝ այն ատեն կը հասկնաք :

— Էյ ինչո՞ւ . իր պաշտօնէն ելեր է :

— Պ. Օնէզիմ գրադիր էր . բայց այնքան կարճատես է որ աշխատութիւնը շատ կը ծանրանար . այն ատեն զինքը ճամբեր են , Կրնաք ըմբռնել թէ ասի ո՛րքան տաժանելի եկած է իրեն , վասն զի շատ աղնիւ և քաջասիրտ է , սքանչելի դաստիարակութիւն մ'առած է և անգործութեանը համար կը վշտանայ : Իւր կարճատեսութիւնը գուցէ ո՛ր է գործի ար-

դելք ըլլայ . ուստի ես և Սիւզան յոյսերնիս ձեր վրայ դրինք , հայր իմ , Պ. Օնէզիմի օգնելու , անոր խորհուրդներ տալու համար և կը կրկնեմ թէ շատ համեղ և բարի տղայ է , և երբ զինքը ճանչնաք , դուք ալ ամենուն պէս պիտի սիրէք զինքն ու վրան պիտի ցաւիք :

Անհնար է բացատրել թէ Սապին ի՛նչ անմեղ այլայլմամբ ըսաւ այս վերջին խօսքերը՝ նորէն կարմրելով , մինչդեռ իւր կուրծքը կամաց մը կը բարախէր և խեղճ կարճատեսին վրայ ունեցած համարումն երեւան կը հանէր :

Քլօարէք պահ մը լուռ և մտախօհ մընացեր էր . կը սկսէր աղջկանը դէմքին փոփոխութեան պատճառը հասկնալ : Սապին , իվօնի լուռութեանը զարմանալով և միանգամայն վախնալով՝ յարեց .

— Հայր իմ , ինձ պատասխան չէ՞ք տար :

— Ըսէ՛ տեսնեմ , աղջիկս , Սիւզանի քեռորդին քեզ եւ իւր մօրաքրոջն հետ հոս բնակելէն ի վեր ի՛նչ ըրաւ , ի՛նչ կեանք անցուց :

— Հայր իմ , մեր կեանքն անցուց : Մեզ հետ դուրս կ'ելլէր՝ երբ շրջագայելու երթայինք . եթէ տունը կենայինք՝ ինքն ալ կը կենար , և մեզի բան մը կը կարգար . տեսնէիք ի՛նչ լաւ և զգայուն կերպիւ կը կարգայ . կամ թէ կը նուազէինք , վասն զի երաժշտութիւն աղէկ գիտէ . պատմութեան ալ խիստ հմուտ է և շատ լաւ կը պատմէ . ասկից զատ կը ջանար կրցածին չափ ծառայութիւններ մատուցանել մեզ , թէև շատ հեղ չ'էր յաջողեր , վասն զի իւր կարճատեսութիւնը սխալներ գործել կուտար իրեն : Իւր միակ պակասութիւնն այս է , հայր իմ , յաւել Սապին միամտօրէն , և այս ակամայ պակա-

սութեան համար Սիւզան միշտ կը ծաղրէ զինքը :

— Ո՛հ . հա՛յր իմ , ադ անգթութիւն է , վասն զի կը ջանայ նախ և առաջ ինք խնդալ իր ըրածներուն . բայց սրտին մէջէն կը վշտանայ : Ո՛րքան տխուր բան է գրեթէ կոյր ըլլալ : Դեռ այս իրիկուն (և ասի իւր քաջասրտութեանն ապացոյցն է) ձեռքն այրեց եռացող ջրով : Տեսնէք ի՞նչ սոսկալի վէրք մ'է , հա՛յր իմ : Բայց Պ. Օնէզիմ ինքզինքը բռնեց և առանց ճիշ մ'իսկ հանելու՝ ընթերցանութիւնը շարունակեց , մենք ժամ մը վերջը նշմարեցինք այս բանն , այն ալ դիպուածաւ :

— Անիծած , բայց այդ Պ. Օնէզիմն դիւցազն մ'է ուրեմն :

— Դիւցա՞զն մը . ո՛չ , հա՛յր իմ , վասն զի ինչպէս որ կ'ըսէինք այս իրիկուն իրեն հետ , Գեօրգի կոչուողները մարդ կը սպաննեն և արիւն կը թափեն , մինչդեռ Պ. Օնէզիմ . . .

— Եռացող ջուր կը թափէ :

— Ա՛հ , հա՛յր իմ :

— Տէ՛ր Աստուած , ի՛նչպէս երեսս կը նայիս :

— Վասն զի դուք որ ընդհանրապէս այնքան իրաւախոհ էք . . .

— Է՛յ հիմայ ինչ անիրաւութիւն ըրի որ :

— Ասանկ տխուր բան մը կատակի կը զարնէք , վասն զի Սիւզան՝ Պ. Օնէզիմի սոսկալի վէրքը տեսնելով՝ սոսկումէն դեղնեցաւ և սակայն Սիւզան ալ շարունակ կը ծաղրէ զայն . միշտ խեղճ կարծասեա , ապէկար շինուոր կը կոչէ զայն : Բայց այս բնական է . Սիւզան մեծ համարում ունենալով զինուորականաց և պատերազմողաց վրայ , տրամադիր է ամէն ատեն Պ. Օնէզիմը ծաղրելու , վասն զի նա արիւնէ կը սոսկայ : Դեռ այս իրիկուն մեծ վէճ մ'ու-

նեցանք Սիւզանի հետ և Պ. Օնէզիմ իմ կարծիքէս էր , վասն զի ես իրաւունք ունէի : Ապահով եմ թէ դուք ալ ինձի պէս պիտի խորհիք :

— Այդ վիճաբանութիւնն ի՞նչ բանի վրայ էր , զաւակս :

— Պ. Օնէզիմ սա սեղանին վրայի լրագրին մէջ կը կարդար Անտի-Կրիստոսի ծովահէնին փախստեան պատմութիւնը , կարելի է դուք ալ կարդացիք , հա՛յր իմ :

— Ո՛չ , ըսաւ Քլօարէք՝ զարմացման և անհանգստութեան շարժում մ'ընելով , ո՛չ , զաւակս : Է՛յ տեսնենք դու և Պ. Օնէզիմ ի՛նչ կը մտածէիք այդ ծովահէնին վրայ :

— Իւր անգթութիւնը սոսկում կը պատճառէր մեզ , հա՛յր իմ . վասն զի երեւակայեցէ՛ք որ ազատութիւնը ձեռք ձգելու համար երկու հոգի սպաններ և մէկն ալ վիրաւորեր է : Յայտնի է որ Սիւզան ծովահէնին կողմը կը բռնէր , ըսելով որ իբր քաջ , իբր դիւցազն վարուած էր . Պ. Օնէզիմ ալ կ'ըսէր թէ , (և ասի իւր սրտին վեհանձնութեանն ապացոյցն է) . . .

— Ի՛նչ կ'ըսէր նայինք Պ. Օնէզիմ :

— Կ'ըսէր թէ իրեն համար աւելի լաւ էր ցմահ գերի մնալ , քան թէ մարդասպանութեամբ ազատիլ : Չէ՞ մի որ , հայր իմ , Պ. Օնէզիմ և ես իրաւունք ունէինք , և դուք ալ մեզի պէս կը խորհիք :

— Աղջիկս , ի՛նչ կուզես որ ըսեմ . ինձի պէս վաճառականի կտոր մը պատերազմական գործերու մէջ շատ լաւ դատաւոր չի կրնար ըլլալ : Սակայն կարծեմ թէ Պ. Օնէզիմ և դու շատ խստիւ դատեր էք այն խեղճ ծովահէնն :

— Ո՛հ , հա՛յր իմ , կարդացէք այն սոսկալի պատմութիւնն և կը տեսնէք :

— Լա՛ւ , բայց մտիկ ըրէ՛ , այդ ծովա-

հէնը կարելի էր ընտանիք մ'ունէր , զոր գորովանօք կը սիրէր և կը յուսար քիչ օրէն անօր միանալ և գուցէ յուսահատութենէն . . .

— Ընտանիք , այս կոտորածի մէջ ապրող մարդիկ ընտանիք մը ունենան և զայն սիրեն : Այդ կարելի՞ բան է , հայր իմ :

— Օ՛ն , չա՛ր աղջիկ , միթէ գայլերն ալ իրենց ձագերը չե՞ն սիրեր :

— Չեմ գիտեր , բայց եթէ կը սիրեն ալ՝ գայլի պէս կը սիրեն , այսինքն պըղտիկ եղած ատեննին արիւնոտ մտի կտոր մը բերելով անոնց և վերջէն առաջնորդելով զանոնք որ խեղճ ոչխարներուն վըրայ յարձկին ու զանոնք լափեն :

Յաւալի և դառն այլայլութիւն մը ամպի մը պէս անցաւ Քլօարէքի ճակատին վրայէն :

Ապա ժպտելով յարեց .

— Վերջապէս , կարելի է դու և Պ. Օնէզիմ իրաւունք ունիք : Եթէ կերպարներէ կամ Լիճի Դոստոնի վրայ խօսելիք ինձ , դիւրաւ չէի յազթուեր . բայց կը խոստովանիմ թէ ծովահէններ դատելու մէջ շատ աջողակ չեմ :

— Ո՛հ , ապահով էի թէ դուք ալ իմ կարծիքէս պիտի ըլլաք : Դուք , որ այնքան կը սիրէք զիս և որու սիրան այնքան վեհ ու կարեկից թէ , չէիք կրնար ուրիշ կերպ մտածել , կամ թէ ես անշուշտ ձեզի պէս պիտի մտածէի , վասն զի եթէ կը սոսկամ դեշութենէ , և բարին ու դեղեցիկը կը սիրեմ , զայն ձեզ , ձեր օրինակին պարտաւոր եմ . ինչպէս նաև մօրս առաջին խրատներուն զոր գորովանօք կը սիրէիք , վասն զի ամէն օր մօրս համար ձեր ունեցած սէրը կը պատմէ :

Խնամածուն Քլօարէքի և աղջկանը խօսակցութիւնն ընդմիջեց :

Չեռքն աշտանակ մը բռնած ներս մտաւ և խօսքն իվօնի ուղղելով՝ ժպտուն և ընտանի կերպով մը ըսաւ .

— Պարո՛ն . կը ցաւիմ , բայց ժամը տասն է :

— Ի՞նչ կայ որ , Սիւզան :

— Ժամը տասնին օրիորդը պէտք է պառկի . գիտէք թէ բժիշկը պատուիրեց որ շատ արթուն չի մնայ . արդէն այս իրիկուն բաւական այլայլեցաւ , ուստի ամենեւին չե՛մ ներեր որ . . .

— Սիրելի՛ս Սիւզան , քառօրդ մը միայն , ըսաւ Սապին :

— Եւ ոչ իսկ վայրկեան մը , օրի՛որդ :

— Ի՛նչպէս , Սիւզան , գոնէ իմ վերադառնալուս համար այնքան զոհողութիւն մը չէ՞ք թոյլադրեր :

— Փա՛ռք Աստուծոյ , օրիորդը կրնայ ուղածին չափ ժամանակ գտնել հետերնիդ տեսնուելու . բայց անկարելի է որ ժամը տասնէն վերջը պառկի . ապա թէ ոչ վաղը հիւանդ կ'ըլլայ :

— Ատոր ուրիշ բան չ'ունիմ ըսելիք , բայց եթէ՝ գիշեր բարի , սիրելի դաւակս , ըսաւ Քլօարէք աղջկանը գլուխն երկու ձեռացը մէջ առնելով և գորովանօք համբուրելով : Վաղն առտու կըտեսնուինք , լաւ քնացիր , որպէս զի արթնցած ատենըդ թարմ ու զուարթ գտնեմ զքեզ :

— Ո՛հ , հանդարտ եղի՛ք , հայր իմ , գիտեմ որ դուք հո՛ս իմ մօտս էք և թէ ա՛լ չպիտի մեկնիք : Այս անուշ մտածմամբ աչքերս պիտի դոցեմ և երջանիկ անձի մը քունը պիտի քաշեմ : Գիշեր բարի , սիրելի հայրս , ցվա՛ղն , ըսաւ Սապին Քլօարէքն համբուրելով :

Ապա ցած ձայնիւ ըսաւ .

— Սիւզան , Պ. Օնէզիմի խօսքը պիտի ընէ ձեզ : Ո՛րքան գոհ եմ առաջ ես ընելուս : Գիշեր բարի , հայր իմ :

— Գիշեր բարի, աղջիկս. հանգիստ քնացի՛ր :

— Ապահով եղի՛ք թէ երկար ատենէ ի վեր ասանկ հանգիստ գիշեր մը անցուցած չպիտի ըլլամ: Յվա՛ղն, հա՛յր իմ:

— Յվա՛ղն, զաւա՛կս:

Այն ատեն Քլօարէք խօսքը խնամածուն ուղղելով՝ ըսաւ .

— Անմիջապէս կուգար, չէ՞ մի, Սիւզան: Չեղի խօսելիք ունիմ:

— Լա՛ւ, պարո՛ն: Ես ալ ձեզի ըսելիք ունէի:

Քլօարէք առանձին մնալով՝ սկսաւ սրբահին մէջ պտտիկը մտախոհութեամբ:

Պատած ատենը կայսրութեան Օրաֆերն, որ սեղանին վրայ մնացեր էր, իւր ուշադրութիւնը գրաւեց. առաւ, աչքէ անցուց և դժկամակութեամբ ըսաւ .

— Ի՞նչ անխոհեմութիւն է սա ապուշ վէրտիւրօնի ըրածն, որ առանց ինձի իմաց տալու՝ մտերմօական նամակ մը լրագրի մէջ հրատարակել կուտայ: Ամէն ատեն մտքէս կ'անցնէր որ այս մարդը անմիտ շահասէրին մէկն է: Բարերազգաբար ծովու վրայ չ'եղած ատենս ո՛ւր բընակիլս չ'եմ յայտնած իրեն: Ա՛հ, աղջկանս բարոյական վիճակն ամէն ատենէ աւելի պարտք կը դնէ վրաս որ այս բանը ծածկեմ իրմէ: Խեղճ զաւակ, եթէ իմանայ՝ կը մեռնի . . . :

Այս միջոցին խնամածուն Սապինէն զատուելով՝ սրահը եկաւ Պ. Քլօարէքը գտնելու:

Ժ Բ.

— Սիրելի՛ս Սիւզան, ըսաւ Պ. Քլօարէք խնամածուն, երբ անոր հետ առանձին մնաց. նախ և առաջ կուզեմ շը-

նորհակալ ըլլալ քեզ աղջիկս լաւ խնամելուդ:

— Խեղճ օրիորդ Սապին, միթէ ես չի՞ մեծցուցի զայն, միթէ քիչ մը իմ զաւակս չի՞ սեպուիր:

— Գիտեմ որ աղջկանս համար երկրորդ մայր մ'եղար: Ուստի անոր վրայ ունեցած սիրոյդ պատճառաւ կուզեմ ծանր բանի մը վրայօք խօսիլ հետդ:

— Ի՞նչ կայ, պարո՛ն:

— Չեր քեռորդին ձեր քովը կանչեր էք. երկու ամսէ ի վեր հոս կը բնակի եղեր:

— Այո՛, պարո՛ն, և ես ալ այդ խեղճ տղուն վրայօք կուղէի խօսիլ ձեզ այս իրիկուն:

— Ես ալ անոր վրայ պիտի խօսիմ հիմայ, Սիւզա՛ն:

— Բացատրեմ ձեզ, պարո՛ն, թէ ի՛նչու համար . . .

— Սապին ըսաւ ինձ:

— Պարո՛ն, արդեօք սրդողեցա՛ք:

— Ո՛չ, ո՛չ, Սիւզան, բայց կը վախնամ:

— Ի՞նչ բանէ, պարո՛ն:

— Չեր քեռորդւոյն այս տանը մէջ գտնուելէն:

— Ա՛հ, պարո՛ն, եթէ գիտնայի որ այս բանն անախորժ պիտի ըլլայ ձեզ, խեղճ տղան բերել չէի տար, Բայց նա այնքան թշուառ և դուք այնպէս բարի էք որ . . .

— Դուք ինձ շատ մեծ ծառայութիւններ մատուցած էք, Սիւզան, և ձեր ընտանեաց մէն մի անհատն ամէն ատեն իրաւունք ունի իմ պաշտպանութեանս և օգնութեանս: Իմ ըսածս աս է որ մեծ անխոհեմութիւն մը ըրեր էք:

— Ներեցէ՛ք, պարո՛ն, չեմ հասկնար:

— Չեր քեռորդին երիտասարդ է:

— Քսան և հինգ տարեկան:

— Բարեկիրթ և ուսեալ է եղեր :

— Իր վիճակին համար չափէն աւելի , պարո՛ն . խեղճ քոյրս և իւր ամուսինը մեծ զոհողութիւններ ըրին իրեն համար : Որովհետեւ այնքան կարճատեւ է որ տասը քայլ անդին չի տեսներ , որով շատ մը արուեստից անյարմար էր , ընտանիքն ուղեց զայն լաւ դաստիարակելով՝ կղերականութեան պատրաստել . բայց անհնար եղաւ : Օսեղիմ այդ կոչումըն չ'ունէր . այն ատեն հարկ եղաւ զինքը գրասենեակ մը մտցնել . փոքրիկ պաշտօն մը գտաւ և . . .

— Մնացեալը գիտեմ . արտաքին ձեն ի՛նչպէս է :

— Պարո՛ն , խեղճ տղան ո՛չ գեղեցիկ է և ոչ տղեղ . շատ համեղ դէմք մ'ունի , միայն թէ կարճատեսութեանը պատճառաւ նայուածքն անստոյգ է : Բայց ինքըն աշխարհի լաւագոյն արարածն է . հարցուցէ՛ք օրիորդին , պարո՛ն , տեսէ՛ք ինչ կ'ըսէ :

— Շիտակը , Սիւզան , ասանկ կուրութեան մը խելքս չի հասնիր :

— Ի՞նչ կուրութիւն , պարո՛ն :

— Ի՛նչպէս . դուք , Սիւզան , որ թէ՛ միտք և թէ՛ փորձառութիւն ունիք , ի՛նչպէս չզգացիք թէ ձեր քեռորդին հոս բերել տալն և ազջկանս հետ մինաւոր կեանքի մը կատարեալ մտերմութեանը մէջ պահելը չեմ ըսեր անվայել , այլ մեծ անխոհեմութիւն է :

— Պարո՛ն , գիտեմ որ ես ծառայ մը եմ և իմ քեռորդիս . . .

— Խնդիրն հող չէ : Միթէ ես ու աղջիկս աշխատած չե՞նք քեզ ապացուցանել թէ դու մեզ համար սպասուհի մը չես , այլ մտերմուհի մը :

— Այն ատեն , պարո՛ն , ձեր յանդիմանութեանց պատճառը չեմ հասկնար :

— Է՛հ , դժբաղդաբա՛ր , վասն զի եթէ հասկցած ըլլայիք . եթէ աւելի խորատես եղած ըլլայիք , պիտի նշմարէիք ի՛նչ որ ատկից ծագեր է :

— Ա՛հ , Աստուած իմ , պարո՛ն , ի՞նչ ծագեր է որ :

— Սապին քու քեռորդիդ կը սիրէ :

— Օրիորդը՞ :

— Այո՛ :

— Օրիորդը Օնէզիմը սիրէ՞ : Պարոնը կատակ կ'ընէ :

— Ի՛նչպէս , երբ ազջկանս վրայ կը խօսիմ :

— Ո՛չ , ո՛չ , պարո՛ն , ապահով եմ թէ լըջօրէն կը խօսիք , բայց խիստ կը սխալիք :

— Նորէն կ'ըսեմ թէ Սապին ձեր քեռորդին կը սիրէ :

— Պարո՛ն այդ անհնար է :

— Ի՞նչու համար :

— Վասն զի խեղճ տղան ազջկան մը պէս երկչոտ է , վասն զի գեղեցիկ չէ , վասն զի աղէկ չի տեսներ և այդ պատճառաւ օրը քսան անգամ անյաջողութիւններ կ'ընէ , որոց վրայ օրիորդն երբեմն ամենէն առաջ կը խնդայ : Ա՛հ , միթէ ասանկ տղայ մը կրնայ վիպասանութեան մը դիւցազն ըլլալ : Ո՛չ , ո՛չ , պարո՛ն , վստահ եղիք : Իրաւ է թէ օրիորդը բարութեամբ և ազնուութեամբ վարուեցաւ Օնէզիմի հետ , վասն զի իմ քեռորդիս է և գլխաց անոր վրայ , բայց . . .

— Է՛հ , կոյր կին , չի կրցի՞ք դուշակել թէ Սապին , որ այնքան զգայուն և հրեշտակի նման բարի է , նախ գուրթ և ապա աւելի փափուկ զգացում մը պիտի զգար ձեր քեռորդւոյն վրայ , եւ անայն բանը պատահեցաւ :

— Ի՞նչ կ'ըսէք , պարո՛ն , կարելի՞ է

միթէ : Օրիորդը անոր պէս խեղճ տղու մը վրայ դարձէ՛ աչքերը :

— Բայց նոյն իսկ խեղճ , տկար և երկչոտ ըլլալուն , նոյն իսկ իւր պակասութեամբք տաժանելի և բացառիկ վիճակի մը մէջ գտնուելուն համար Սապին զայն սիրած ըլլալու է : Գուք որ ինձմէ լաւ կը ճանչնաք զինքն , ի՞նչպէս այս բանը չի գուշակեցիք : Տա՛ր երկինք որ ձեր կուրուծիւնը ցաւալի հետեւանքներ չ'ունենար :

— Ա՛հ , պարո՛ն , ըսաւ խնամածուն ամօթապարտ , ձեր խօսքերը միտքս կը բանան , բայց ո՛ւշ : Այո՛ , շատ անխոհեմ եւ յանցաւոր եմ : Բայց ո՛չ , ո՛չ , դեռ ըսածնուդ չ'եմ կրնար հաւատալ : Օրիորդ Սապին խոստովանեցա՞ւ ձեզ որ Օնէզիմը կը սիրէ :

— Անշուշտ ո՛չ , բան մը չ'ըսաւ , բայց ես հասկցայ : Խե՛ղճ զաւակ , ո՛րքան անմեղ և անկեղծ է : Իւր սիրտը բաց գրքի մը պէս կը կարդացուի . ասկից զատ անոր խօսքն ըրած ատեն նշմարեցի որ կարմրեցաւ և կուրծքն սկսաւ տրոփել . տեսայ որ կը դժկամակէր , գրեթէ իսկ կը տխրէր , երբ զինքը փորձելու համար՝ քեռորդւոյդ ձեռքն այրելուն վրայօք կատակ մ'ըրի : Կը սիրէ զայն , եւ այս բանն իմ դիտաւորութիւններս կը տապալէ : Բայց ի՞նչ ունիք . ի՞նչու կուլաք և կը հեծկլտաք : Սիւզան , Սիւզան , ոտքի ելէ՛ք , գոչեց Քլօարէք՝ տեսնելով որ խնամածուն իր ծունգերուն կ'իյնայ . ի՞նչ այլայլութիւն : Բայց ի՞նչ ունիք :

— Ա՛հ , պարո՛ն , սոսկալի վախ մը ունիմ :

— Ի՞նչ բան :

— Պարո՛ն , արդեօք կը կարծէ՞ք որ քեռորդիս հոս բերելու և օրիորդին մօ-

տեցնելու պատճառն՝ ամուսնութեան մը յոյսն էր :

— Ա՛հ , Սիւզան , ինձ համար նախատինք մ'է կարծել որ զձեզ ասանկ վատութեան մը կարող համարիմ :

— Կը պաղատիմ , պարո՛ն , ըսէ՛ք , ո՛հ , ըսէ՛ք թէ այդ բանը մտքերնուդ չ'անցնիր :

— Կը կրկնեմ թէ ձեր ըրածն անխոհեմութիւն է , ահա՛ այսքան : Բայց կարծել որ ատանկ ցած գաղափար մը ունեցած էք՝ այդ անմտութիւն է : Կ'ըմբռնեմ իսկ որ ձեր քեռորդւոյն կեանքին մէկ քանի պարագայներն բաւական երաշխաւորութիւն մը երեւցած ըլլան ձեզ , եւ զայն կարեւորութիւն չ'ունեցող անձ մը սեպելով՝ կասկածած չ'ըլլաք թէ վտանգաւոր է զայն աղջկանս մօտեցնել :

— Աւա՛ղ , պարո՛ն , ճշմարտութիւնն այդ է . ես կը կարծէի թէ նա տղէ մը աւելի նշանակութիւն չ'ունի :

— Կը կրկնեմ թէ այդպէս ըլլալուն կը հաւատամ : Բայց վերջապէս շարիքն եղած է :

— Բարեբաղդաբար , պարո՛ն , եղած շարիքը կրնայ դարմանուիլ : Վաղն առտու լուսնալուն պէս Օնէզիմ կը մեկնի ասկից՝ մէկ մ'ալ հոս ոտք չի կոխելու պայմանաւ :

— Չեմ ուզե՛ր , գոչեց Քլօարէք , հապա Սապին :

— Ի՞նչպէս :

— Բայց նորա մեկնիլը կրնայ այս տըկար հիւանդոտ վիճակին մէջ հարուած մը ըլլալ իրեն և մեռցնել զինքը : Ա՛հ , ճիշդ իւր խեղճ մօրը պէս զգայուն է :

— Աստուած իմ , Աստուած իմ , կը տեսնեմ թէ շատ յանցաւոր եմ , ըսաւ խնամածուն լալով : Ի՞նչ ընելու է , պարո՛ն , ի՞նչ ընելու է :

— Միթէ ես ինքս գիտեմ :

Քլօարէք քանի մը վայրկեան լուռ եւ յուզուած կերպարանքով պտտկեցաւ :

Ապա մէկէն ի մէկ ըսաւ Սիւզանի , որ նոյնպէս ցաւալի թմրութեան մը մէջ ինկեր էր :

— Քեռորդիդ ո՛ւր է :

— Հոս , կապոյտ սենեակն է , պարո՛ն . ըսի իրեն որ երթայ հոն ինձ սպասէ . իւր մասին ձեզ հետ ունենալիք խօսակցութեանս հետեւանքն իմաց պիտի տայի իրեն :

— Բերել տո՛ւր զինքը :

— Հո՞ս , պարո՛ն :

— Այո՛ :

— Ա՛հ , պարո՛ն , ներեցէ՛ք , ներեցէ՛ք իրեն , գոչեց Սիւզան անձկութեամբ ձեռքերը կցելով , վասն զի իվօն թէև այս խօսակցութեան միջոցին բնաւ չէր կատաղած , խնամածուն կը վախնար որ մէկէն ի մէկ անցեալ բարկութեան մէջ կիյնայ , ուստի յարեց .

— Կ'երդնում , պարո՛ն , թէ ինքը յանցանք չ'ունի . խեղճ տղան բոլորովին անմեղ և ամէն բանէ անտեղեակ է , ասոր ստոյգ եմ : Ա՛հ , գթացէ՛ք իրեն :

— Զայն բերել տո՛ւր ըսի :

— Պարո՛ն , նա այս գիշեր , եթէ կուզէք՝ անմիջապէս կը մեկնի :

— Հապա աղջիկս : Կուզէ՞ք որ նա վշտէն մեռնի :

— Պարո՛ն , մէկ բառ մը միայն ըսեմ : Կարելի է որ օրիորդին Օնէզիմի համար զգացածը թեթեւ համակրութիւն մ'ըլլայ , զոր բացակայութիւնը կրնայ մոռցընել :

— Հապա թէ որ չի՞ մոռնայ . եթէ այդ սէրը ճշմարիտ և խոր է , ինչպէս որ ըլլալու է . եթէ Սապինի հոգւոյն մէջ արմատացած է , այն ատե՞ն : Ո՛չ , ո՛չ , նա-

խատինք մ'է կարծել թէ նա կրնայ հաբեւանցի սէր մ'ունենալ : Նա ճիշդ իւր մայրն է , և նորա անձնուէր զգայութիւնը ժառանգած է :

— Աւա՛ղ , պարո՛ն , ըսածնիդ կը վըշտացնէ եւ կը յուսահատեցնէ զիս , եւ պարտաւոր եմ խօստովանիլ թէ իրաւունք ունիք : Միայն այն միջոցին կը տեսնեմ անխոհեմութեանս աղետալի հետեւանքները , վասն զի դժբաղդաբար ամէնն այս չէ :

— Ի՞նչ ըսել կուզէք :

— Պարո՛ն

— Բայց խօսեցէ՛ք , խօսեցէ՛ք . . .

— Խե՛ղճ տղայ , պէտք չէ սակայն իրեն ոխ պահել :

— Ոխ պահե՛լ , բայց ի՞նչու համար :

— Վասն զի վերջապէս , պարո՛ն , կըրնայ ըլլալ որ իր օրիորդին ներշնչած սիրոյն մասնակից չ'ըլլայ ինքը , կարելի է որ Օնէզիմ զայն չի սիրէ :

— Անէ՛ծք , գոչեց Քլօարէք :

Ապա , պահ մը լուռ կենալէ վերջը , խնամածուն ըսաւ .

— Քեռորդիդ հոս բե՛ր :

— Պարո՛ն , գոչեց Սիւզան ահաբեկ , այդ բանը մի՛ պահանջէք ինձմէ :

— Հնազանդէ՛ :

— Եթէ զիս սպաննէք ալ , պարո՛ն , պատասխանեց Սիւզան , զայն հոս չեմ բերեր . զինքը կը ճամբեմ , և չեմ կրնար հնթարկել . . .

— Ի՞նչ բանի :

— Պարո՛ն

— Իմ՝ կատաղութեանս և բռնութեանս , անանկ չէ՞ :

— Կը պաղատիմ , պարոն . . .

— Բայց չէ՞ք հասկնար որ աղջկանս անոր համար զգացած սէրն զայն նուիրական կ'ընէ ինձ :

— Բայց եթէ ինքը զայն չսիրէ՛ , պարո՛ն :

— Եթէ չի սիրէ՛ , գոչեց Քլօարէք՝ ահարկու դեղնութիւն մը գալով վրան :

Ապա առանց բառ մ'ըսելու և խնամածուն շարժում մ'ընելու ժամանակ շունեցած , սրահէն ելաւ , և երկու վայրկեանէն հասաւ կապոյտ սենեկին առջև , ուր կը գտնուէր Օնէզիմ :

Այս սենեկին դուռը բանալ , ներսէն կղպել , որպէս զի Սիւզան չի կարենայ ներս մտնել և Օնէզիմ՝ դուրս ելլել , ասոնք մէկ վայրկենի գործ եղան Քլօարէքի համար , որ առանձին մնաց Սիւզանի քեռորդոյն հետ :

ԺԳ.

Օնէզիմ՝ Քլօարէքի դուռը բանալ ու գոցելու աղմուկէն՝ զարմանօք ոտքի ելաւ . նա իւր մօրաքրոջը կը սպասէր և ներս մտնողին ծանրակշիռ քայլերէն հասկըցաւ թէ եկողն օտարական մ'էր :

Քլօարէք վերստին իւր հանդարտութիւնը գտնելով՝ լռութեամբ Օնէզիմը կը դիտէր անձկալի հետաքրքրութիւնով մը . ի սկզբան նորա դէմքն անուշ և հաճելի երեւցաւ իրեն . բայց ապա , մոռնալով խեղճ կարճատեսին տկարութիւնն որ , իրմէն քանի մը քայլ հեռու եղած բանն անորոշ կերպիւ նշմարելով՝ ակնայեռ կը նայէր իվօնի՝ առանց նորա դէմքն որոշելու , Քլօարէք , կըսէնք , Օնէզիմի վրայ լիրբ և յանդուգն կերպարանք մը գտաւ :

Սիւզանի քեռորդին , զարմանալով օտարականին լռութեանն՝ երկու քայլ յառաջ անցաւ նոր եկողին դէմքը տես-

նելու համար և վարանմամբ ու մեղնիւ ըսաւ .

— Ո՞վ է ան :

Քլօարէք վերստին մոռնալով երիտասարդին տկարութիւնն՝ այս հարցումն լիրբ համարեց և պատասխանեց .

— Ո՞վ է մի . այս տանը տէրն է , պարո՛ն :

— Պարոն Քլօարէք , գոչեց Օնէզիմ՝ երկչոտութեամբ և ակնածութեամբ ետ քաշուելով և մեքենարար աչքերն խոնարհեց , իբր թէ նոքա կարող էին Սապինի հօրը նայուածքներուն հանդիպիլ :

Արդարև Քլօարէքի հնչիւնը խիստ նըշանակիչ ըլլալով , Օնէզիմ , առանց իւր ներշնչած հակակրօթեան պատճառ հ դիտնալու , հասկցաւ թէ իւր ներկայութիւնը շատ անախորժ էր Սապինի հօրն . ուստի դողդոջուն և անուշ ձայնով մը ըսաւ .

— Մօրաքոյրս զիս հոս կանչած ատեն՝ իւր փափագին համակերպելով , կարծեցի , պարո՛ն , թէ՛ դուք ալ կը հաւանիք այս բանին , կամ թէ գոնէ նա ապահով էր որ ինձ ըրած բարութիւնն անախորժ չպիտի երեւնար ձեզ . ապա թէ ո՛չ երբէք չէի համարձակեր իր առաջարկութիւնն ընդունիլ :

— Ատոր կը հաւատամ , պարո՛ն :

— Միայն սա կը խնդրեմ որ ներէք ինձ ակամայ այս անխոհեմութեան մեղսակից դատուիլս , պարո՛ն : Վաղը կը մեկնիմ :

— Էյ ո՛ւր պիտի երթաք , ի՞նչ պիտի ըլլաք :

— Չգիտնալով թէ ի՞նչ զգացմամբ այս հարցումները կ'ընէք ինձ , պարոն , յարեց Օնէզիմ՝ անուշ արժանապատուութեամբ մը , չպիտի զարմանաք եթէ քիչ մը վարանիմ ձեզ պատասխանելու :

— Իմ ձեր մասին ունեցած զգացումներս կրնան շատ բարեսիրական ըլլալ, ինչպէս նաեւ բոլորովին հակառակը: Վերջէն կը հակսնանք թէ ի՞նչ պէտք եմ ընել ձեզ համար:

— Եթէ իմ վիճակիս բացարձակ տէրն ըլլայիք, պարո՛ն, դոչեց Օնէզիմ ակնածու հաստատամտութեամբ մը, հազիւ այսպէս պիտի խօսէիք:

— Ի՞նչէն գիտէք որ ձեր վիճակն իմ ձեռքս չէ:

— Ի՞նչ իրաւամբ, պարո՛ն:

— Ինչ իրաւամբ, դոչեց Քլօարէք կատաղութեամբ: Դուք ի՞նչպէս իմ վիճակիս տէրն եղաք:

— Ե՛ս, ե՛ս, ներեցէ՛ք, պարո՛ն, չեմ հասկնար:

— Համարձակեցէ՛ք տեսնեմ, դոչեց Քլօարէք, աչքերուս մէջ նայիլ և այդպէս պատասխանել:

Խեղճ կարճատեսն, փոխանակ այս հրամանը կատարելու, իւր տխուր և անորոշ նայուածքը շուրջն յածեց և սրբտակեղիք ձայնով մը ըսաւ.

— Աչքերնուդ մէջ նայիմ, պարո՛ն: Աւա՛ղ. ես ալ կ'ուզէի, բայց այսքան հեռաւորութեան մէջ՝ դեմքերնիդ չեմ կրնար զանազանել:

— Իրա՛ւ, պատասխանեց Քլօարէք փոքր ինչ մեղմանալով, ձեր տկարութիւնը մոռցայ, պարո՛ն: Բայց քանի որ դուք չէք կրնար տեսնել զիս, ապահով եղէ՛ք թէ իմ աչքէս բան մը չ'վրիպիր: Իմաց կուտամ ձեզ թէ այս առաւելութիւնն ունիմ ձեր վրայ:

— Շնորհակալ եմ, պարո՛ն. բայց այդ առաւելութիւնն իմ մասիս օգտակար չպիտի ըլլայ ձեզ, վասն զի կեանքիս մէջ երբէք բան մը ծածկած չեմ մէկէն:

Այս հեղութեան և անկեղծութեան,

մելամաղձոտութեան և արժանապատուութեան խառնուրդը Քլօարէքն այլայլեց, սակայն այս տպաւորութիւնը մէկդի ըրաւ, վախնալով որ երեւոյթներէ կը խաբուի և չկրնար պաղութեամբ և ապահովութեամբ գնահատել աղջկանը սիրած մարդուն բարոյական արժանիքը:

— Ես շատ հեռատես չեմ, պարո՛ն, յարեց Օնէզիմ. բայց ձեր հարցումները, ձայներնուդ շեշտը, ձեր մէկ քանի խօսքերն ինձ կ'իմացնեն թէ ինձի դէմ բան մը ունիք, որու պատճառին անտեղեակ եմ դժբաղդարար:

— Դուք աղջիկս կը սիրէք, ըսաւ Քլօարէք՝ ջանալով նորա մտքին խորը կարգալ:

Օնէզիմ դեղնեցաւ և կարմրեցաւ, դողաց՝ և զգալով որ պիտի նուաղի՝ փոքրր սեղանին քով նստաւ և դէմքը ձեռացը մէջ առաւ՝ առանց բառ մը արտասանելու:

Օնէզիմ դէմքը դոյցելու համար բրած շարժմանը միջոցին, վէրքին կապն ինկաւ և երեւան ելաւ Սապինի յիշած սոսկալի այրուածքը. Քլօարէք երկար ատենէ ի վեր վարժուած էր շատ մը վէրքեր տեսնելու, սակայն, թէեւ Օնէզիմի հետ ունեցած խօսակցութիւնը խիստ ծանր էր, սարսուռ մը եկաւ վրան և ըսաւ ինքնիրեն.


— Ա՛հ, թշուա՛ռը, ո՛րքան կը ցաւի արդեօք: Այս ցաւին այսպէս դիմանալու համար շատ քաջասրտութիւն հարկ է: Այս քաջասրտութիւնն, ինչպէս նաև բընաւորութեանն անուշութիւնը, արի սրտի մը տէր ըլլալը կը յայտնեն:

Իվօն՝ Օնէզիմի լուութիւնը տեսնելով ըսաւ.

— Ի՞նչ մեկնութիւն տամ ձեր լուութեանը. պատասխան չէ՛ք տար:

- Ի՞նչ կրնամ ըսել, պարո՛ն :
- Ուրեմն կը խոստովանի՞ք :
- Այո՛, պարոն :
- Աղջիկս գիտէ՞ այդ սէրն :
- Ո՛չ : Ա՛հ պարո՛ն, աւելի կ'ընտրէի

- որ ես ինքզինքմէս իսկ պահել կը ջանայի :
- Այս սէրը ի՞նչ բանէ յառաջ եկաւ :
- Նախ և առաջ երախտագիտութենէ,
- պարո՛ն :
- Ի՞նչպէս չ'աշխատեցաք յազմել այն-



Օրիորդ Սապին

մեռնիլ, քան թէ այդ բանն ըսել իրեն . այս գաղտնիքն ես միշտ սրտիս խորը պահեցի : Ուստի չեմ գիտեր թէ ի՞նչ դժբաղդութեամբ դուք կրցիք գուշակել, ինչ

պիտի զգացման մը, որ ձեզ համար մեծ թշուառութիւն մ'էր :

— Կարծելով թէ ո՛չ ոք գիտէ այդ զգացումը՝ հաճութեամբ ինքզինքս տուի

աւոր: Մինչեւ այսօր թշուառութենէ զատ
բան տեսած չեմ: Այս սէրը կեանքիս ա-
ռաջին երջանկութիւնն էր, ինչպէս որ իմ
տխուր ապագայիս միակ մխիթարութիւնը
պիտի ըլլայ:

— Վաղ կամ անագան ի հարկէ օր մը
պիտի զատուէիք իմ աղջիկէս. այս բանը
չի մտածեցի՞ք:

— Ո՛չ, բան մը չի մտածեցի, պարո՛ն.
Ես սիրելու երջանկութեանը համար էր որ
կը սիրէի, առանց յոյսի կը սիրէի, բայց
նաև առանց վախի եւ առանց խղճի կը
սիրէի:

— Ըսել է չէիք վախնար որ օր մը ես
կ'իմանամ այդ սիրոյ գոյութիւնն:

— Արդէն ըսի ձեզ. ես բան մը չէի
մտածեր, միմիայն կը սիրէի: Ա՛հ, պա-
րո՛ն, ինձի պէս աղետարեր տկարութեամբ
մը արտաքին առարկաներէն բոլորովին
զատուած եւ նոցա պատճառած զուար-
ճութիւններէն զուրկ եղողի մը համար
գիտնայի՞ք թէ ո՛րքան դիւրին է միակ և
խոր զգացման մը մենաւոր վայելքին մէջ
ընկղմիլ բոլորովին:

— Բայց քանի որ այդքան կարճատես
էք, ըսել է աղջկանս դէմքն անկատար
կերպիւ միայն տեսած էք:

— Այս տանը մէջ բնակելէս ի վեր դեռ
այս իրիկուն կրցի օրիորդ Սապինի դէմքը
որոշակի տեսնել:

— Ի՛նչպէս:

— Օրիորդ Սապին ձեռքիս վէրքն ու-
ղեց դարմանել մօրաբրոջս հետ և ատով
ինձի մօտենալուն՝ կրցի կատարելապէս
տեսնել իւր դէմքը:

— Ուրեմն անոր ի՛նչ բանն կը սիրէք,
քանի որ իւր դէմքը հազիւ թէ կը ճանչնաք:

— Ի՛նչ կը սիրեմ. պարո՛ն. գոչեց Օ-
նէզիմ. իւր ազնիւ ու վեհանձն սիրտը,
մտքին գեղեցկութիւնը, բնաւորութեանն

անուշութիւնը. իւր ներկայութիւնը, ձայ-
նըն, այն անուշ ձայնն, որ այնքան սրը-
տագրաւ է՝ երբ կարեկցական կամ մխի-
թարական բառ մը կ'ուղղէ ինձ:

— Ըսել է երբեք մտքերնիդ եկած չէ
որ օր մը կրնաք Սապինի ամուսինն ըլլալ:

— Ո՛հ, պարո՛ն, ես զինքը չափազանց
կը սիրեմ:

— Ի՛նչ ըսել կուզէք:

— Կը մոռնա՞ք որ, պարոն, ես կէս
կոյր եմ, և այս տկարութեամբս առ յա-
ւէտ մատնուած եմ դթութեան, հեզու-
թեան, չքաւորութեան և նուաստացուցիչ
դատարկութեան: Ես որ զիս սիրողներուն
բռն մ'ըլլալէ զատ օգուտ մը չ'ունիմ,
համարձակի՞մ. . . . ա՛հ, պարո՛ն, չ'չեմ
կրնար խօսքս աւարտել: Ո՛չ, ո՛չ, կը կըրկ-
նեմ և կ'երդնում թէ ես օրիորդ Սապինը
սիրեցի և կը սիրեմ ինչպէս որ մարդ կը
սիրէ բարին ու գեղեցիկն առանց ուրիշ
յուսոյ՝ բայց եթէ բարւոյն և գեղեցիկն
երկնային երանութիւնն. ահա՛ այս էր և
է, պարո՛ն, իմ զգացածս: Հիմայ եթէ
իմ անկեղծութիւնս հաճոյ է ձեզ, հաճե-
ցէ՛ք խոստանալ ինձ, պարո՛ն, թէ այս
տունէն գացած ատենս ձեր համարումը
հետս պիտի տանիմ գոնէ:

— Դուք այդ համարումը վաստկեցաք,
վասն զի արժանի էք, Օնէզիմ, պատաս-
խանեց Բլօարէք այլայլեալ ձայնիւ, ուստի
հիմայ կը ներէք անշուշտ որ հարցնեմ ձեզ
թէ՛ ասկից ելլելնուդ վերջը ի՛նչ ընելու
դիտաւորութիւն ունիք:

— Պիտի ջանամ առջի պաշտօնիս պէս
պաշտօն մը ձեռք ձգել. վիճակս թո՛ղ ու-
ղածին չափ համեստ և ծանր ըլլայ, մի-
այն թէ կարենամ ապրուստս ճարել, այն
բաւ է ինձ:

— Բայց չէ՞ք վախնար որ ձեր առջի

պաշտօնին արդեւք եղող պատճառները վերստին երեւան ելլեն :

— Աւա՛ղ , պարո՛ն , եթէ մտածէի բոլոր այն ցաւերուն և պատրանաց , որք ի հարկէ պիտի դան դլխուս , քաջասրտութիւնս կը կորսնցնէի , յարեց Օնէզիմ տրխութեամբ :

— Ապահով եղի՛ք թէ ո՛չ գրեզ տրխութեցնելու և ո՛չ վհատցնելու համար ըրի այս առարկութիւնն : Ընդհակառակն կը փափագիմ և կը յուսամ որ դառն վիճակէն ազատելու միջոցն գտնեմ ձեզ :

— Ս՛հ , պարո՛ն , ո՛րքան բարի էք , ի՛նչպէս արժանի եղայ . . .

Օնէզիմի և Քլօարէքի խօսակցութիւնն ընդմիջուեցաւ դրան ուժգին զարնուելովն մէկ մ'ալ Սիւզանի ձայնը լսուեցաւ որ կ'ըսէր .

— Բացէ՛ք , պարո՛ն , յանո՛ւն Աստուծո՛յ բացէ՛ք :

Քլօարէք փութաց դուռը բանալու :

Սիւզանը տեսնելով դեղնած և ահաբեկ նախ Սապինը միտքը եկաւ և գոչեց :

— Ի՛նչ կայ , միթէ աղջիկս . . .

— Մի՛ վախնաք , պարո՛ն , օրիորդը կարծեմ քնացած է :

— Ուրեմն ի՛նչ կայ :

— Դեռ հոս չ'եկած՝ դացի Սըկօֆէնի դուռը զարկի , բայց անոր քունը շատ ծանր է , անկարելի եղաւ դայն արթնցնել :

— Բայց ըսէ՛ք , ի՛նչ կայ որ :

— Թէրէզ ըստ սովորութեան դացեր էր գետնայարկին պարտէզին կողմի փեղկերը դռցելու . պատուհաններէն մին բացեր էր . . .

— Է՛յ . . .

— Ներեցէ՛ք , պարո՛ն , խիստ այլայլեր եմ :

Եւ Սիւզան ճշմարիտ կ'ըսէր , վասն զի իւր պատմութեան այլայլութեանը կը

միանար նաև Քլօարէքի և Օնէզիմի խօսակցութեան հետեւանքին վրայ ունեցած վախը : Ուստի յարեց .

— Թէրէզ սեղանատան մէկ պատուհանը բացեր էր երբ լուսնի լուսով երկու մարդու գլուխ տեսաւ դէպի ծովը նայող պատշգամին պատին վրայէն :

— Օ՛ն անգը , յարեց Քլօարէք ուսերը ցնցելով , Թէրէզ երկչոտին մէկն է , իր շուքէն վախցած ըլլալու է :

— Ապահով եղի՛ք թէ ո՛չ , պարո՛ն , Թէրէզ կատարելապէս տեսեր է երկու մարդերն : Երկուքն ալ պատէն մագլցեր էին և անշուշտ կը պատրաստուէին պարտէզը մտնելու . բայց պատուհանը բացուելու աղմուկէն լսելով աներեւութացեր են :

— Թէև այդ վախերն անտեղի կերեւնան ինձ , յարեց Քլօարէք , չ'ըլլայ որ վաղը Սապինին բան մը ըսէք : Խեղճ տղան սաստիկ կը վախնայ . միեւնոյն բանը ձեզ ալ կը պատուիրեմ , Օնէզիմ , ըսաւ անուշութեամբ խօսքը Սիւզանի քեռորդւոյն ուղղելով :

Իվօնի ձայնը այնքան մեղմ էր որ Օնէզիմ զարմանքէն սարսուաց :

Պ. Քլօարէք քանի որ ասանկ պատուեր մը կուտար իրեն Սապինի վրայօք , ըսել է կը հաւանէր որ երկու երիտասարդք նորէն տեսնուին ու խօսակցին :

Սիւզան ալ , իւր քեռորդւոյն չափ զարմանալով , միեւնոյն մտածումներն կ'ընէր , երբ Քլօարէք յարեց .

— Սքանչելի լուսնի լոյս կայ , պարտէզ իջնեմ և նայիմ . . .

— Պարտէ՛զ իջնէք , գոչեց Սիւզան ահաբեկ , ի՛նչ կ'ըսէք , պարո՛ն , գուցէ վտանգ մը կայ :

— Խենթութիւն պէտք չէ , սիրելիս Սիւզան , ըսաւ Քլօարէք դէպի դուռը

երթալով . դու ալ թէրէզի պէս վախկոտ ես եղեր :

— Կ'աղաչեմ , պարո՛ն , գոնէ թոյլ տուէ՛ք որ երթամ Սըկօֆէնը արթնցնեմ , այնպէս ուժով կը զարնեմ որ՝ ա՛լ այս անգամ հարկաւ կ'արթնայ :

— Բայց ատով աղջիկս ալ կ'արթնայ և այն ատեն տան մէջ իրարանցում մը տեսնելով՝ կը վախնայ :

— Իրաւունք ունիք , պարո՛ն , բայց այդպէս առանձին երթալ ալ չ'ըլլար :

— Ի՛նչ կ'ընէք , Օնէզիմ , ըսաւ Քլօարէք՝ տեսնելով որ երիտասարդը կարասեաց զարնուելով դէպ ի դուռը կուգար : Ո՛ւր կերթաք :

— Չեզի հետ գամ , պարո՛ն , եթէ կուզէք :

— Ի՞նչ բանի համար :

— Մօրաքոյրս վտանգ մը կայ կ'ըսէ , պարո՛ն :

— Դո՛ւք , սիրելի տղաս , ըսաւ Իվօն անուշութեամբ ժպտելով , վասն զի Օնէզիմի անձնուիրութիւնը իւր սիրտը կը շարժէր . ի՛նչ օգուտ կրնաք ունենալ ինձ :

— Իրա՛ւ է , պարո՛ն , կը մոռնամ թէ բնաւ օգտակար չեմ կրնար ըլլալ ձեզ , պատասխանեց խեղճ կարճատեսն մելամաղձոտ հառաչանքով մը , բայց վերջապէս եթէ վտանգ մը կայ՝ ձեր քովը կը գտնուիմ և ես ալ կը մասնակցիմ . ասկից զատ տեսողութիւնս շատ տկար է , բայց իբր փոխարինութիւն՝ Աստուած խիստ սուր ականջ մը տուած է ինձ : Ասով կարելի է կրնանք գտնել այդ մարդոց ձեռք առած ուղղութիւնն , եթէ այս տեղուանքն կեցեր են :

Այս առաջարկութիւնն անանկ անկեղծութեամբ մը կ'ըսէր որ , Քլօարէք՝ Օնէզիմի համար կարեկցական նայուածք մը փոխանակելով Սիւզանի հետ՝ ըսաւ .

— Ենորհակալ եմ առաջարկութեանդ տղաս , և յօժարութեամբ կ'ընդունէի , եթէ ձեր ձեռքին վէրքը Սիւզանի խնամոցն պէտք չ'ունենար , անշուշտ շատ կը ցաւի : Ուրեմն , Սիւզան , դուք զիս մի մտածէք և ձեր քեռորդին նայեցէ՛ք :

Քլօարէք սենեակէն ելաւ ու պարտէզ գնաց :

Լուսինն ի հեռուստ կը լուսաւորէր այն պահուն անշարժ ալիքներն , վասն զի այս բարձրաւանդակէն ծովը կը տեսնէր ծովեզերեայ ժայռերուն մէջ տեղէն :

Քլօարէք , որ դրեթէ համոզուած էր որ սպասուհին լուսոյ և ստուերի խաղէ մը խարուեր էր , բարձրաւանդակին եզերքին մօտեցաւ :

Բասն ոտք լայնութեամբ և տասներկու ոտք բարձրութեամբ փոս մը պատին ուղղութեամբն պարտէզին այս կողմը կը շրջապատէր : Այս փոսն ուղղահայեաց հիւսուած էր ներսէն , բարձրաւանդակին կողմը շեղակի ձեւ մ'ունէր :

Իվօն այս ահագին փոսին մէջ նայեցաւ . բան մը չի տեսաւ . լուսնի լուսովն աշխատեցաւ նշմարելու թէ՛ խոտին վրայ ոտքի հետքեր կային մի : Այս նոր դիտողութիւնն ալ հետեւանք մը չունեցաւ :

Ուշադրութեամբ ականջ դրաւ . հեռուէն ուրիշ ձայն չի լսեց , բայց եթէ ովկիանու մեծ ալեաց խոր մռուռնն , որք աւաղներու վրայ կը փշրէին : Վերջապէս հաւատաց որ սպասուհին անտեղի երկիւղ մը զգացեր էր , վասն զի այն կողմերն կատարելապէս հանգարտ էին , և Սապինի հօն բնակուելէն ի վեր , բնաւ օր մը գողութիւն մը լսուած չէր :

Քլօարէք բարձրաւանդակէն իջնելով տուն պիտի գար , երբ յանկարծ բաւական հեռուն ծառոց թփի մը ետեւէն տեսաւ որ կը բարձրանայ այն ումբիկներէն

մին, որք նաւարկութեան մէջ՝ գիշերային նշաններու կը գործածուին :

Լուսաւոր գնդակն շուտ մը իւր կիսաբոլորակը գծեց, հրոյ ալօսն պահ մը երեւցաւ երկնից մութ կապուտին վրայ, ապա մարեցաւ :

Այս դէպքն ի սկզբան տարօրինակ երեւցաւ Քլօարէքի, անմիջապէս ետ դառնալով՝ աչքերն ծովուն կողմն դարձուց՝ տեսնելու համար թէ նաւ մը կա՞ր որ ցամաքէն մեկնող նշանին պատասխան տար :

Քլօարէքի նայուածքն որչափ տեղ որ կրցաւ ընդգրկել՝ բնաւ նաւ մը չի տեսաւ. ուրիշ բան չի նշմարեց՝ բայց եթէ անհուն ծովն, որու անշարժ և մութ կապոյտ սաւանն լուսնոյ լոյսն կը բեկբեկէր :

Քանի մը վայրկեան այս տարօրինակ դէպքն հասկնալու աշխատելէն վերջը, կարծեց որ ասի որոշեալ նշան մ'է մաքսանենգներու միջև, և ապա տուն դարձաւ :

Այս արկածն որ, ուրիշ պարագայից մէջ թերևս մեծ մտմտուք պիտի պատճառէր ծովահէն նաւապետին, յեշեցնելով իրեն այն յանդուգն յափշտակութիւնըն, որու զոհ պիտի երթար քիչ մնաց, այս արկածն շուտով մոռցուեցաւ և անոր յաջորդեցին ծանր մտածումներ, որք այն իրիկունն Օնէզիմի հետ ունեցած խօսակցութեան բնական հետեւանքներն էին :

ԺԴ.

Քլօարէք գիշերուան մէկ մասը Օնէզիմի հետ ունեցած խօսակցութեանը վերայ մտածելով անցընելէ վերջը, առաւօ-

տուն իւր աղջկանը սենեակը գնաց. զայն ելած, ժպտուն և երջանիկ դատաւ. Սապին իւր վիզը նետուեցաւ գորովանօք :

— Նայի՛նք աղջիկս, ըսաւ Քլօարէք, հանգիստ քնացա՛ր :

— Խիստ հանգիստ, հա՛յր իմ: Ոսկի երազներ տեսայ. վասն զի ձեր գալուստն քունիս մէջ իսկ ուրախութիւն կը պատճառէ ինձ :

— Ուրեմն այդ գեղեցիկ երազներդ պատմէ՛ ինձ, աղջիկս: Յնորք կամ իրականութիւն, կուզեմ բոլոր քեզ երջանկացնող բաներն գիտնալ, ըսաւ Քլօարէք՝ ջանալով Օնէզիմի վրայօք Սապինի հետ ունենալիք խօսակցութեանն ծայրը բրցընել: Օ՛ն, մտիկ կ'ընեմ: Հարկաւ Հալաբ — Դի Գիշերներ — արժանի երազ մ'էր :

— Ո՛հ, հա՛յր իմ, ես երազի մէջ իսկ փառասիրութիւն չունիմ: Իմ փափագներս շատ համեստ են :

— Երազդ պատմէ՛ նայինք :

— Ո՛հ, շատ պարզ էր: Կ'երազէի լոր կեանքս ձեզի հետ կ'անցնէի :

— Ատիկայ երազելու պէտք չ'կար, աղջիկս :

— Ձեզի և սիրելի Սիւզանի հետ :

— Լա՛ւ, բայց այդ ալ շատ պարզ է :

— Եւ աղնիւ Սըկօֆէնի հետ, որ այնքան անձնուէր է ինձ :

— Եւ . . . ըսաւ Քլօարէք՝ տեսնելով որ թեթև կարմրութիւն մը կը ծածկէր աղջկանը շնորհալի դէմքը, ա՛յսքան :

— Կը մոռնայի . . .

— Մէկը՝ մոռցար. ան ալ թէրէզն ըլլալու է :

— Ո՛չ, հա՛յր, թէրէզը միտքս չ'եկաւ :

— Է՛յ ո՞վ է նայինք այդ մոռցուողը :

— Պ. Օնէզիմ:

— Պ. Օնէզիմ մի. չեմ հասկնար :

— Հայր իմ, երազս չի հարցուցի՞ք ինձ, ահա՛ ես ալ պատմեցի :

— Այո՛, բայց վերջապէս այս երազին մէջ Պ. Օնէզիմ ինչո՞ւ մեզի հետ կը ապրէր :

— Շատ պարզ է այս, հայր իմ, ամուսնացեր էինք :

Սապին այս բառերն անանկ միամիտ և զուարթ ձայնով մ'ըսաւ որ, Բլօարէք չի կրցաւ աղջկանը պատմածին անկեղծութեանը տարակուսիլ. մտածեց թէ այս եղական երազին ուրախանալո՞ւ էր թէ ոչ. ուստի տեսակ մը անձկութեամբ յարեց .

— Վայ, դուք և Պ. Օնէզիմ ամուսնացեր էիք, հա՛ :

— Այո՛, հայր իմ :

— Ես ալ հաւանե՞ր էի այդ ամուսնութեան :

— Անշուշտ, քանի որ ամուսնացեր էինք : Բայց իմ երազս մեր ամուսնութեանէն քիչ վերջը կսկսէր : Վերի պզտիկ սրբահն էինք, երեքս ալ նստեր էինք մեծ բազմոցին վրայ. դուք, հայր իմ, մեր երկուքին մէջ տեղ, Սիւզան պատուհանին քով կ'աշխատէր, մինչդեռ Սըկօֆէն, վառարանին առջեւ ծունգի եկած, կրակը կը փչէր և Սիւզան ալ, ըստ սովորութեան, խեղճ մարդը կը ծաղրէր : Դուք, հայր իմ, քանի մը վայրկեանէ ի վեր լուռ կեցեր էիք : Յանկարծ Պ. Օնէզիմի և իմ ձեռքերն ձեր ձեռքերուն մէջ. առնելով այլադեպ ձայնով մը ըսիք մեզ . « Գիտէ՞ք, տղաքս, ի՞նչ կը մտածէի : — Ո՛չ, հայր իմ, ըսինք ես ու Պ. Օնէզիմ, վասն զի բնականաբար ինքն ալ իւր հայրը կը կոչէր զձեզ : — Լա՛ւ, պատասխանեցիք, կը մտածէի թէ աշխարհի վրայ ինձ մէ երջանիկ մարդ չ'կայ : Գովս ունիմ երկու զաւակ, որ զիրար կ'պաշտեն, երկու հին ծառաներ, կամ թէ ձեր բարե-

կամներ, և անոնց հետ խաղաղ ու երջանիկ կեանք մը կ'անցնեմ : Պէտք է միշտ շնորհակալ ըլլանք Աստուծոյ : « Եւ այս խօսքերն ըսած ատեն՝ աչուրնիդ արտասուօք լեցուցեր էին. հայր իմ : Այն ատեն Պ. Օնէզիմ և ես մեր բազկաց մէջ սեղմեցինք զքեզ և ըսինք . « Ո՛հ, այո՛, Աստուած բարի է : Փա՛ռք, փա՛ռք Աստուծոյ : » Այսպէս պահ մը գրկախառն կեցանք, և ապա լալով արթնցայ :

Բլօարէք չի կրցաւ այս անմեղ պատմութեան ատեն արցունքներն բռնել և Սապինի ըսաւ .

— Իրաւցնէ դու աղջկանց լաւագոյնն ու ազնուագոյնն ես : Բայց երազիդ մէջ բան մը կայ որ զիս շատ կը զարմացնէ :

— Ի՞նչ բան :

— Կըներե՞ս :

— Հարկա՛ւ, հայր իմ : Նայինք ի՞նչ բան է զքեզ զարմացնողը :

— Պ. Օնէզիմի հետ ամուսնութիւնդ :

— Իրա՞ւ :

— Այո՛ :

— Զարմա՛նք, այս բանն այնքան բընական երեւցաւ ինձ որ բնաւ չի զարմացայ :

— Նախ եւ առաջ, աղջիկս, Պ. Օնէզիմ հարուստ չէ, թէ և անպատեհութեանց մեծագոյնն կը խոստովանիմ թէ այս չէ՛ :

— Բայց շատ անգամ ըսեր էք ինձ թէ, ձեր ճանբորդութիւններն և բացակայութիւններն, որք այնքան ցաւ կը պատճառեն ինձ, ձեր աղջկան գեղեցիկ օժիտ մը դիզելու համար է :

— Անշուշտ :

— Ուստի կը տեսնէք որ երազիս մէջ Պ. Օնէզիմ հարստութեան պէտք չ'ունէր :

— Երազի մէջ ամուսնութեան համար ընչից հաւասարութիւնն անհրաժեշտ չէ :

— Իրական ամուսնութեանց մէջ անհրաժեշտ է ուրեմն :

— Անհրատեշտ չէ, աղջիկս, բայց վայելուչ է: Վերջապէս ուրիշ բանի անցնինք:

— Վա՛յ, դեռ կա՛յ,

— Ո՛հ, տակաւին չի լմնցաւ: Բայց քանի որ թոյլ կուտաս:

— Խօսեցէ՛ք, խօսեցէ՛ք, հա՛յր իմ:

— Պ. Օնէզիմ արուեստ մը չ'ունի, և հետեւաբար ո՛չ ալ ընկերական կացութիւն:

— Խեղճ երիտասարդ, այդ պատճառաւ աւելի ցաւալի է: Ո՛վ կրնայ յանցանք մը համարել անոր ակամայ դատարկութիւնն: Միթէ կամք, դաստիարակութիւն կամ ընդունակութիւն չ'ունի: Իւր տկարութիւնն է որ ո՛ր և է դործի ձեռնարկելու արդելք կ'ըլլայ իրեն:

— Շատ իրաւունք ունիս, աղջիկս, այդ աղետաբեր տկարութիւնն անյաղթելի արդելք մ'է, որ դժբաղդաբար ամէն ատեն պիտի արդիլէ զինքն ո՛ր և է ասպարեզի մէջ ընթանալէ, որով երբեք չպիտի կարենայ դիրք մը ձեռք ձգել և ամուսնանալ, ի բաց առեալ երազի ամուսնութիւնն:

— Հիմայ ալ ես ձեր ըսածը չեմ հասկընար, հա՛յր իմ:

— Իրա՞ւ:

— Ո՛հ, ամենեւի՛ն, ամենեւի՛ն չեմ հասկնար:

— Ի՛նչպէս, աղջիկս, չե՞ս հասկնար թէ անկարելի է որ երբեք կին մը ելլէ յիմարաբար ամուսնանայ կէս կոյր տղու մը հետ, որ հազիւ թէ տասը քայլ հեռուն կը տեսնէ և որ միշտ տղայ մը պիտի ըլլայ դողցես: չե՞ս հասկնար որ այն ատեն դերերը կը փոխուին և թէ Պ. Օնէզիմ փոխանակ իւր կինը պաշտպանելու, ինչ որ ամէն մարդու պարտքն է, իրեն հետ ամուսնացող կնոջ պաշտպանութեանըն պէտք պիտի ունենայ:

— Բնական չէ՛ որ՝ երկուքէն որն որ կրնայ միւսը պաշտպանել՝ պաշտպանէ՛:

— Անշուշտ. բայց այդ դերը, այդ պարտքը էրիք մարդունն է:

— Ա.յո՛. երբ կարենայ կատարել. բայց երբ չի կարենայ՝ այդ պարտքը կընոջ կ'իյնայ:

— Եթէ ասանկ տխուր ապագայի մը ենթարկուելու խենթութիւնն ունենայ:

— Խենթութի՛ւն.

— Ա.յո՛: Օ՛ն, այդ անուշ աչքերդ մի ծումուկեր՛ր:

— Հա՛յր իմ, զիս մտիկ ըրէ՛ք:

— Լա՛ւ:

— Դուք չափազանց բարութեամբ մեծցուցիք զիս, բոլոր փափազներս կատարեցիք, կարելի եղածին չափ բարեկեցիկ վիճակ մը պատրաստեցիք ինձ, վերջապէս ինձ համար ձեր վաճառականական ճամբորդութեանց բոլոր տաղտկութեանց յանձնառու եղաք, չէ՞ մի:

— Ասի ինձ համար ո՛չ միայն երջանկութիւն մը, այլ և պարտք մ'էր, աղջիկս:

— Պա՛րտք մը:

— Ա.յո՛, պարտուց ամենէն նուիրականն:

— Ձիս պաշտպանելը, իմ առաջնորդըս և նեցուկս ըլլալն, չէ՞ մի:

— Հայրութիւնն այնպէս կը պահանջէ:

— Ես ալ հող կուղէի դալ, ըսաւ Սապին յաղթական կերպով մը: Հօրը դերը և պարտականութիւնն է իւր զաւակը պաշտպանել, անանկ չէ՞

— Անշուշտ:

— Հիմայ, հա՛յր իմ, ենթադրեցէք որ ձեր մէկ ճամբորդութեանն ատեն խեղճ Սրկօֆէնի պէս դժբախտութեամբ մը կամ ձախաւելութեամբ մը, Աստուած հեռի ընէ՛, ձեր դիտողութիւնն կորսնցու-

ցած ըլլայիք, միթէ ես յիմար կամ խենթ կ'ըլլայի, եթէ սրտիս ու մտքիս բովանդակ զօրութիւնն գործածէի ձեր ինձ համար ըրածն հատուցանելու և ձեր նեցուկն, առաջնորդն, պաշտպանը ըլլալու համար: Գերերնիս պիտի փոխուէին, ինչպէս որ կ'ըսէք: Եւ սակայն ո՞ր աղջիկ երջանիկ և հպարտ չպիտի ըլլար իմ ձեզ համար ընելիքս իւր հօրն ընելով: Լա՛ւ ուրեմն, ինչո՞ւ կ'ին մը իւր ամուսնոյն համար չ'ունենայ այն անձնուիրութիւնը, զոր աղջիկ մը կրնայ ունենալ իւր հօրը համար: Հա՛, հա՛, տեսա՞ք, ապահով էի որ ասոր չպիտի կարենաք պատասխանել, հայր իմ:

— Սիրելի՛ զաւակս, նախ գիտցի՛ր թէ անոր համար չեմ պատասխաներ որ ըսածներդ զիս կը յուզեն և քու սրտիդ հազուագիւտ բարութիւնը կ'ապացուցանեն. բայց այդքան մի՛ աճապարեր յաղթելու:

— Տեսներ՛նք:

— Հիմայ պիտի զգաս որ քու բաղդատութիւնդ, թէև խիստ սրտաշարժ, բայց ճիշդ չէ: Կ'ընդունիմ որ ձախորդ դէպքերու յաջորդութեամբ աղջիկ մը ստիպուի իւր հօրը նեցուկն և պաշտպանը ըլլալ: Ասի գեղեցիկ ու ազնիւ է: Բայց վերջապէս նա իւր հայրն՝ ընտրութեամբ չէ առած, նա նուիրական պարտք մը կը կատարէ, մինչդեռ կատարեալ յիմար մ'է այն կ'ինն, որ իրեն ամուսին կ'ընտրէ . . .

— Խեղճ արարած մը, որ փափուկ խնամոց պէտք ունի, գոչեց Սապին՝ հօրը խօսքը ընդմիջելով: Այսպիսի ընտրութիւն մը յիմարութիւն է: Կրկնեցէ՛ք, հայր իմ, և այն ատեն կը հաւատամ: Այո՛, դուք որ այդքան անձնուէր էք ձեր զաւակին և կը կարեկցիք նորա ակարութեանն, դուք որ անոր համար ամէն զո-

հողութիւն ըրիք, ըսէ՛ք որ յիմարութիւն է երջանկութիւն սեպել թշուառ էակի մ'անձնուէր ըլլայն. ըսէ՛ք թէ անմտութիւն է մօտենալ այն անձին, որու դժբաղդութիւնը զամէնքը կը հեռացնէ քովէն. ըսէ՛ք այս բանը և կը հաւատամ:

— Ո՛չ, ազնիւ և վեհանձն զաւակս, չեմ ըսեր, վասն զի սուտ պէտք է խօսիմ, գոչեց Քլօարէք՝ Սապինի վեհանձն եռանդեանն չկրնալով դիմադրել, ո՛չ, չեմ տարակուսիր թէ անձնուիրութեան մէջ աստուածային երջանկութիւն մը կայ, մանաւանդ սիրեցեալ անձի մը: անձնուէր ըլլալուն մէջ. ո՛չ, կը հաւատամ թէ ազնիւ հոգիներն մեծ սէր մը կզգան քաջասիրտ և միանգամայն տառապող անձանց համար:

— Կը տեսնէք որ, հայր իմ, երազս ըսածնուդ չափ տարօրինակ չէր, յարեց մատղաշ աղջիկը խնդալով, և յուսամ թէ ամէն բանի լաւ պատասխանեցի:

— Ո՛հ, դու ուժով փաստարան մ'ես և ես ինքզինքս բոլորովին պարտեալ պիտի խոստովանիմ, եթէ կարենաս այնքան լաւ պատասխանել սա վերջին առարկութեանս. իբր ամենէն ուժով փաստ՝ զայն պահեօտի պահած էի:

— Տեսներնք այդ առարկութիւնն, անոր ալ ճարը կը գտնենք:

— Գիտե՞ս որ դու սոսկալի ես:

— Խնդացէ՛ք, խնդացէ՛ք, հիմայ կը տեսնէք:

— Երբ մարդ անձի մը համար այդքան անձնուէր ըլլայ, ըսել է թէ զայն շատ կը սիրէ, չէ՞ մի:

— Հարկաւ:

— Եւ հարկ է ենթադրել որ այդ անձն ալ շատ սիրէ միւսը:

— Բնականաբար:

— Հոգևով և մտքով սիրէ, իրեն

անձնուէր եղող կնոջ ներկայութիւնը հը-
րապուրէ զինքն, զայն տեսնելով և ձայնը
լսելով երջանիկ ըլլայ, վասն զի սիրեցեալ
կնոջ մը շնորհալի դէմքը դիտելն այնքան
անուշ է, որքան որ քաղցր է նորա ար-
ժանեացն ու առաքինութեացը վրայ հիա-
նալ: Ա՛րդ, քու երազային ամուսնու-
թեանդ մէջ ինձ ամենէն աւելի տարօրի-
նակ երեւցածը սա է որ . . .

— Ինչո՞ւ կեցաք, հայր իմ:

— Կեցի՛ր, միտքս աւելի լաւ բացատ-
րելու համար, դէպք մը պատմեմ քեզ:
Երեկ իրիկուն, քու յանձարարութեանդ
համեմատ, Պ. Օնէզիմի հետ տեսնուե-
ցայ, և . . .

— Ո՛հ, չէ՞ մի որ անհնար է անոր
վրայ չիցաւիլ և . . .

— Այո՛, բայց թո՛ղ որ խօսիմ: Բնա-
կանաբար Պ. Օնէզիմը խօսեցուցի անոր
զգացումներն ու միտքը դատելու համար:
Արդ . . .

— Խոստովանեցէ՛ք որ իւր զգացմանց
նման բարձր զգացումներ, իւր մտքին
պէս ազնիւ միտք . . .

— Բայց անիծեա՛լ շողակրատ, թո՛ղ
որ խօսքս լմնցնեմ: Այդ երիտասարդէն
գոհ եղայ, միայն թէ . . .

— Չըսի՛, ես ապահով էի:

— Սապի՛ն, Սապի՛ն . . .

— Ներեցէ՛ք, հայր իմ,

— Ուստի երկար բարակ խօսեցանք
Պ. Օնէզիմի հետ և չեմ գիտեր ինչպէս
խօսքին կարգն եկաւ, հարցուցի իրեն թէ
քանի մը քայլ անդին որոշակի կը տեսնէ՞
մի: Պատասխանեց թէ ո՛չ, և թէ, օ-
րինակի համար, հոս ըլլալէն ի վեր մէկ
անգամ միայն կատարելապէս տեսեր էր
զքեզ, այն ալ երեկ, երբ դու Սիւզանի
օգներ ես՝ նորա ձեռքի վէրքը դարմա-
նելու:

— Խեղճ Պ. Օնէզիմ՛, իրա՛ւ է, վա-
սըն զի Սիւզանին օգնելու համար՝ պար-
տաւորեցայ խիստ մօտենալ իրեն:

— Ուստի քու երազային ամուսնու-
թեանդ մէջ ամենէն անհեղեղ երեւցա-
ծըն՝ երբէք կնոջը երեսը չի տեսնող ա-
մուսին մը ունենալդ է:

— Երբէ՞ք, միթէ նա բոլորովին կո՛յր է:

— Ո՛չ, բայց վերջապէս ամբողջ կեան-
քը կնոջը քով պիտի անցնէ և դիպուա-
ծաւ միայն պիտի տեսնէ զայն:

— Լա՛ւ, հայր իմ, ի բաց առեալ
ասանկ տկարութեան մը ցաւալի մասե-
րըն, ես այդ բանն գեղեցիկ կը գտնեմ:

— Ատ քիչ մը տարօրինակ է:

— Ես կ'ապացուցանեմ:

— Չես կրնար:

— Հայր իմ, չեմ գիտեր ո՛ւր կար-
դացեր եմ թէ մեծ սրբապղծութիւն է
սիրեցեալ անձանց կենդանագիրն միշտ
աչքի առջեւ թողուլ, վասն զի երբեմն
մարդուս աչքերը այնպէս կը վարժուին
այդ պատկերներուն որ նոցա ազդեցու-
նը, փոխանակ միշտ սաստիկ ըլլալու,
երթալով կը տկարանայ:

— Այդ դիտողութեան մէջ ճշմար-
տութիւն կայ, բայց չեմ հասկնար թէ
քու դատիդ ի՛նչ օգուտ ունի:

— Եթէ ընդհակառակն այդ կենդա-
նագիրներն պահուին և այն ատեն միայն
երեւան ելլեն՝ երբ տրամագրութիւն կըզ-
գամք գորովանօք դիտելու այն սիրական
պատկերներն, տպաւորութիւնն շատ ա-
ւելի ուժով կ'ըլլայ, անանկ չէ՞, հայր իմ:

— Այո՛, օրիորդ: Վերջէն՞:

— Արդ, որովհետեւ ես ձեզ շատ կը
սիրեմ, հայր իմ, եթէ Պ. Օնէզիմի վի-
ճակին մէջ ըլլայի, պիտի մխիթարուէի
ըսելով. « ամէն անգամ հայրս գրկելուս,
իւր ազնիւ և բարի դէմքին տեսքը ան-

ջինջ երեւոյթ մը պիտի ըլլայ ինձ համար, ապա այդ դէմքն նորէն պիտի քողարկուի իմ աչքերէս, բայց դոնէ անոր քովս ըլլալը պիտի գիտնամ, և . . . »

— Լուէ՛, սատանա՛, չ'ելլես փափազներջնչես ինձ որ զքեզ կարճատես տեսնեմ :

— Ա՛հ, ձեզ համոզելուս ապահով էի :

— Կեցի՛ր, դեռ անձնատուր չ'եղայ :

— Ա՛հ, ի՛նչ յամառ հակառակորդ էք, հա՛յր իմ :

— Ենթադրենք որ մեր կարճատեսն այսպիսով մխիթարուի . կ'ընդունիմ որ տեսակ մը հրապոյր զգայ իւր սիրելին այսպէս ատեն ատեն տեսնելով :

— Իմ մտքս ալ այդ էր :

— Ես ալ այդ կետին վրայ պիտի բռնեմ զքեզ : Սոսկալի որոգայթ մ'էր որ լարեցի քեզ, փառասէ՛ր :

— Տեսնենք այդ որոգայթը, հա՛յր իմ :

— Այդ վիճակին մէջ կարճատեսին գործը աղէկ է . բայց միւսը, այսինքն յարակառու պէտք է ուրեմն աչքերը գոցէ՛ ինքն ալ իւր ամուսինն ատեն ատեն տեսնելու համար :

— Ի՛նչ, այս առարկութիւնն առանց կատակի՞ կ'ընէք :

— Հապա՛ :

— Շիտակը, հա՛յր իմ, կը զարմանամ :

— Իրա՞ւ :

— Բայց անշո՛ւշտ . վասն զի եթէ պահ մը ես ինքզինքս Պ. Օնէզիմի տեղը դրի, ասի պատճառ մը չէ որ իմ սքանչելի աչքերէս զրկուիմ . չեմ վախնար որ երբէք ամուսնոյս երեսը նայելով ձանձրանամ, և ասոր հակառակն ըլլալուն ապահով եմ : Ասոր ապացոյց ահա՛ ձեզ տեսնելով զգացած երջանկութիւնս, հա՛յր իմ . (թէ և ձեր ճամբորդութեանց պատճառաւ զձեզ ալ ամէն ատեն չեմ տես-

ներ) , բայց , հա՛յր իմ, եթէ հարիւր տարի աչքերս ձեր աչքերուն վրայ յառեմ, դարձեալ չպիտի կշտանամ այդ ազնիւ դէմքին վրայ կարդալով ձեր ինձ համար զգացած բովանդակ սէրն :

Եւ Սապին գորովանօք իւր հայրն համբուրեց :

— Սիրելի՛ զաւակս, ըսաւ Քլօարէք իւր աղջկանը գորովանացը պատասխանելով, սիրոյ տրամաբանութիւնը քու կողմէ, խոնարհաբար կը խոստովանիմ թէ յաղթուեցայ, և երազդ բոլորովին անհեղեղ չէ . և կարելի է կարճատեսի մը հետ ամուսնանալ, երբ այդ կարճատեսն ազնիւ ու անձնուէր է և մենք զինքը կը սիրենք :

— Ա՛հ, հա՛յր իմ, ըսաւ Սապին աշխուժիւ, և Քլօարէքի ձեռքն իր ձեռացը մէջ սեղմելով :

— Միայն թէ, յարեց Իվօն, թէ և դու բանաստեղծական տեսակետով կը դիտես կարճատեսութիւնն, ես նախամեծար կը համարէի որ այս խեղճ Օնէզիմն Բայց լաւ կը յիշեմ :

— Ի՛նչ բան, հա՛յր իմ :

— Վաճառականական ճանբորդութեանցս մէջ սաստիկ վարպետ վիրաբոյժ մը ճանչցայ . այս մարդն մէկ պակասութիւն մը ունէր, այն էր անդիլի ծայր որկրամուլ ըլլալն . հիմայ Բարիդ կը բնակի, ուր իր համբաւը տիեզերական եղած է և ինքն այս միջոցին գիտնական աշխարհին զարդերէն մին է : Թերեւս նա կարենայ այս խեղճ տղուն տեսողութիւնը շտկել :

— Տէ՛ր Աստուած, գոչեց Սապին ուրախութեամբ . ըսել է յոյս կայ :

— Չեմ գիտեր, աղջի՛կս . բայց տօքթօր կասթէրինիի նշանաւոր բժշկութիւնները տեսեր եմ . այսօր կը գրեմ անոր,

և կը խնդրեմ որ գայ անգամ մը Օնէզի-
մը տեսնէ, եթէ կրնայ քսանւոյն ժամ
իւր յաճախորդներէն հեռանալ:

— Ա՛հ, հայր իմ, ո՞րքան բարի էք:
Վասն զի վերջապէս Պ. Օնէզիմի վրայօք
խորհած բարիքնիդ . . .

— Ի՞նչ է որ:

— Կուզէք զինքն առողջացնել, վասն
զի չէք ուզեր գուցէ կարճատես փեսայ
մ'ունենալ, ըսաւ Սապին շիկնելով և աչ-
քերը խոնարհելով:

— Չէ՛, ես այնքան չուտ հաւանու-
նութիւն չեմ տար: Օ՛ն, հանգիստ եղի՛ր,
բոլորովին չէ չըսի, և իմ հաւանութեա-
նըս լաւագոյն ապացոյցը . . .

— Ի՞նչ է:

— Անգամ մ'ալ գրկէ՛ զիս, ըսաւ Ի-
վօն: Ապա դէպ ի դուռը երթալով՝ ը-
սաւ .

— Ժամէ մը հոս սպասէ՛ ինձ:

— Դո՞ւրս պիտի ելլէք, հայր իմ:

— Շատ կարեւոր գործի մը համար:

— Ատկէց աւելին չէ՞ք ըսեր ինձ:

— Եւ ոչ իսկ բառ մը: Ես սոսկալի
մարդ մ'եմ: Սպասէ՛ ինձ և անհանգիստ
մի՛ ըլլար:

Քլօարէք Սապինի սենեակէն ելնելով՝
Օնէզիմի սենեակը գնաց, և որպէս զի
իրենց խօսակցութիւնն աւելի գաղտնի և
անվրդով ըլլայ, աղաչեց երիտասարդին
որ նախաճաշէ առաջ իրեն հետ դէպ ի
ծովեզերքը շրջագայութիւն մ'ընէ:

Իվօնի բացակայութեանն ատեն, ա-
նակնկալ և ձախորդ այցելու մ'եկաւ իր
տունն:

ԺԵ.

Երբ որ Պ. Քլօարէք Օնէզիմի հետ կը
հեռանար, Սըկօֆէն, անշարժ կեցած
պարտէզին բարձրավանդակին վրայ, ուս-
կից ծովը կերեւնար, հին հեռագիտակ
մը ուղղեր էր դէպ ի այնպիսի առարկայ
մը, որ կարծես իւր բովանդակ ուշն կը
դրաւէր և անդի ծայր դարմանքն ու հե-
տաքրքրութիւնը կը շարժէր:

Այս առարկայն երկկայմ նաւ մ'էր,
որ շատ հեռուն կը տեսնուէր. բայց ո-
րովհետև այս նաւն քանի մը վայրկեանէ
ի վեր ինքզինքն հովուն տուած՝ կ'երթար,
քիչ մը վերջը Սըկօֆէնի աչքէն պիտի ա-
ներեւութանար: Սըկօֆէն հետեւեալ մե-
նախօսութիւնն կ'ընէր ինքնիրեն .

— Անհաւատալի՛ բան: Երա՛զ է, թէ
ան է: Այո՛, ան ըլլալու է: Ահա՛ իւր
կայմերն, իւր առագաստներն, իւր քալ-
ուածքը, և սակայն ո՛չ, ան չի կրնար ըլ-
լալ, կեղեւն անորը չէ: Նա իւր թնդա-
նօթներովն ջուրին երեսը նաւակի մը չափ
հազիւ բարձրութիւն ունէր, մինչդեռ ա-
սիկայ ծաղրելու աստիճան բարձր է.
ասկից զատ վրան թնդանօղի մը բերանն
իսկ չ'երեւնար: Ո՛չ, ո՛չ, ան չէ: Միթէ
այս մոխրագոյն և դեղնորակ ներկն, որ
խղճալի ազդեցութիւն մը կ'ընէ, բնաւ
յարաբերութիւն չ'ունի՞ այն սեւ գոյնին
հետ, որ անանկ վեհ և ծովային դիրք
մ'ունէր: Նորէն կ'ըսեմ թէ ան չէ: Սա-
կայն այս բարձր կայմերը, որք վայելչա-
պէս դէպ ի ետի ծռած են, այս սարդի
ոտայնի նման նուրբ շուանները . . . աչ-
խարհի մէջ թի՛ղծն «Մեֆէր էն զատ նաւ
չկայ այսպիսի կայմեր ունեցող, որք հո-
վու արագութիւն մը կուտան իրեն: Բայց
ես ի՛նչ աւանակ եմ. սքանչելի միջոց մը
կայ ապացոյցանելի նոյնութեանը գոնելու, ինչ-

պէս որ կ'ըսէր Պ. Իվօն դատաւոր եղած
ատենն , երբ նախագահները պատուհա-
նէն վար կը նետէր . շատ դիւրին է , ա-
հա՛ կը դառնայ և հիմայ պիտի հասկնամ
թէ . . .

Սըկօֆէնի մենախօսութիւնն ու նաւա-
յին դիտողութիւններն ընդհատեցին՝ ըն-
տաներար զարնելով այն թեւին , որով
հեռագիտակը բռներ էր : Աշխուժիւ
ետին դարձաւ և դէմ առ դէմ գտնուե-
ցաւ Սիւզանի հետ . զբաղած ըլլալուն՝
նորա ոտքի ձայնը չէր լսած :

— Եղածն եղած է , բայց խերդ անի-
ծեմ որ եկար վրդովեցիր զիս , սիրելիս ,
ըսաւ Պ. Քլօարէքի Գործակապարը կամ Բնդա-
նօժապարը , շուտ մը իւր դիտակը շտկելով
և դիտակէտը բնառելով :

Դժբաղդարար երկկայմը դարձեր և ա-
ներեւութացեր էր , որով անկարելի կ'ըլ-
լար Սըկօֆէնի համար՝ նշնա-ճիւղը հասարակ :

— Ի՛նչպէս , խերս անիծե՞ս մի . կո-
պիտ դո՛ւ ալ , յարեց Սիւզան . ասա՞նկ
բարելոյս կ'ըսես ինձ :

— Մեզի պէս հին բարեկամաց մէջ
անկեղծութիւնը պարտք մ'է , ըսաւ Սը-
կօֆէն ցաւագին նայուածք մ'ալ նետե-
լով ծովուն վրայ և հեռագիտակին խո-
ղովակներն իրարու մէջ քշելով : Ես ըսե՛ն
էրայ Կարդ Գործի նախնեքը դիտելով կը ըզ-
բօսնուի , ինչպէս որ կ'երգէինք ատենով,
և դուք եկաք վրդովեցիք զիս :

— Իրաւունք ունիք . մեր մէջ անկեղ-
ծութիւնը պարտք մ'է , Սըկօֆէն . ուստի
ներեցէ՛ք որ ըսեմ ձեզ թէ երբէք խուլ
մը ձեզի պէս ծանր քուն չի քնանար :

— Դուք ի՛նչ գիտէք : Դժբաղդարար ,
Սիւզան , երբէք եկած չէք տեսնելու թէ
ի՛նչպէս կը քնանամ , պատասխանեց թըն-
դանօթապետն զտարթութեամբ , և մա-

նաւանդ թէ ի՛նչպէս չեմ քնանար , սի-
րելիս :

— Կը սխալեք , վասն զի երեկ իրի-
կուն եկայ դուռերնիդ զարկի :

— Վերջապէ՛ս , գոչեց Սըկօֆէն իւր
մէկ հատիկ աչքը յաղթական կերպիւ
շարժելով , ես չէի՞ ըսեր ձեզ որ պիտի
գաք . ահա՛ եկաք :

— Ինչի՞ , յարեց խնամածուն չ'ուզելով
իւր ընկերոջն յանդուգն մտածումն հաս-
կընալ . ինչի՞ եկայ :

— Առանձին ու մութ տեղը եկաք սե-
նեկիս մէջ ինձ քծնելու :

— Պ. Սըկօֆէն , դուք լիրբ մէկն էք :

— Կ'երդնում , սիրելիս , որ մարդու
բան չեմ ըսեր , և եթէ քունս տարած
չ'ըլլար , ձեզ թագուհիի պէս պիտի ըն-
դունէի և կը խոստովանիմ որ ուրիշ ան-
գամ . . .

— Որովհետև դուք կէս խենթ , և
թէ՛ աչօք և թէ՛ մտօք միականի էք , ձեր
յիմարութեանց կարեւորութիւն չեմ տար :
Միայն սա կ'ըսեմ թէ ձեր դուռն եկայ
զարկի՝ ձենէ օգնութիւն խնդրելու հա-
մար :

— Որո՞ւ դէմ :

— Բայց որովհետև դուք նապաստա-
կի պէս վախկոտ էք , քնանալ ձեւացու-
ցիք և ինձ չի պատասխանեցիք :

— Օ՛ն , Սիւզան , կատակը մէկդի՛ . ի՞նչ
եղաւ այս գիշեր : Արդեօք իրա՞ւ ինձ
պէտք ունեցաք :

— Շիտակը դուք շատ օգտակար էք ,
եթէ տունը կրակի ալ տայինք՝ դուք ձեր
անկողնէն չէիք ելլեր :

— Բայց ի՛նչ կուզէք ըսել :

— Ըսել կուզեմ թէ այս գիշեր երկու
հողի փորձեցին հոս մտնել : Ահա՛ այսքան :

— Օ՛ն , սիրելիս , դուք արթուն ար-
թուն կ'երազէք :

— Երկու հոգի փորձեցին հոս մտնել սա փոսէն, որու առջեւ կեցեր ենք. հասկցա՞ք, Սըկօֆէն:

— Կեցի՛ր, երկու հոգի՞ էին:

— Ա,յո՛:

— Հոս մտնե՞լ փորձեցին:

— Ա,յս փոսէն:

— Ես դիտեմ ի՛նչ է, սիրելիս:

— Ի՛նչպէս:

— Ձեր սիրահարներէն երկու հոգի ըլլալու են:

— Սըկօֆէն:

— Կ'երևնայ որ դուք թուականի սըխալ մը գործեր էք, ուստի . . .

Թնդանօթապետն յանկարծ լռեց և կատակը չի կրցաւ ամբողջացնել:

Իւր սովորաբար անտարբեր դէմքը մէկէն ի մէկ ապշութեան, վախի և անձկութեան երեւոյթ մ'առաւ. իր կերպարանքն անանկ ակներեւ կերպիւ այլայլեցաւ որ տիկին Ռօպէր, մտնալով իւր ընկերոջը լրբութիւնները, գոչեց.

— Տէ՛ր Անտուած, Սըկօֆէն, ի՛նչ ունիք, ի՛նչ կը դիտէք այսպէս:

Եւ ծեր սպասաւորին աչքին ուղղութեամբն նայելով, տեսաւ որ վախկոտ սպասուհւոյն ետեւէն երրորդ անձ մը կուգար:

Ահա՛ այս անձին գալուստն էր թնդանօթապետին սոսկման և ապշութեան պատճառը: Սակայն այս նորեկն ամենեւին ահարկու կերպարանք մը չ'ունէր:

Ասի կարճահասակ, գեր և փորսուղ մարդ մ'էր. սքանչելի կապոյտ հագուստ մը և կաղնեգոյն անդրավարտիք մը հագած էր. ոտքը գեղեցիկ երկայն կօշիկներ անցուցած էր և զգեստին տակէն հագած էր մեծ սպիտակ բաճկոն մը, որու վրայ կը տատանէին ժամացոյցի երկու ոսկի շղթայ, գոհարներով զարդարուն:

Ա,յս մարդը մէկ ձեռքը փոքր գաւա-

ղան մը ունէր, որով իւր կօշիկներուն փոշին կը թոթուէր, և միւս ձեռքն զըլխարկը բռներ էր, զոր քաղաքավարութեամբ հեռուանց հաներ էր՝ տիկին Ռօպէրը տեսնելով: Ասանկով կը տեսնուէր իւր մազերուն վայելուչ սանտրուածքն, ինչպէս նաև թանձր կիսամօրուքներն, որոց վրայ սպիտակ փոշի ցանուած էր. ճերմակութիւնը աւելի եւս երեւան կը հանէր այս մարդուն լայն և ուռուցիկ դիրքին կարմրութիւնն. և մեր թնդանօթապետն այս դէմքն շատ հեղ բաղդատեր էր վրան շաքար ցանուած խոշոր զղեարի մը:

Բայց այս միջոցին Սըկօֆէնի մտքէն կատակը շատ հեռու էր, նորա զգացած երկիւղն կարծես կ'աւելնար՝ ցորչափ այդ մարդն կը մօտենար:

Ա,յս անձը, որու անունն էր Ֆլօրիտօր Վէրտիւրօն, նաւատէրն էր Թիւրքի «Անֆէր երկկայմին», որու կը հրամայէր ընդհանրապէս Ասիայի նաւապետը:

Արդ, մինչեւ այն ատեն՝ ծանօթ պատճառներով Քլօարէք իւր ճշմարիտ անունը պահեր էր նաւատէրէն, մանաւանդ նայելով որ ցամաքի վրայ ո՛ւր բնակիլն չ'իմանայ. Պ. Ֆլօրիտօր Վէրտիւրօնի և նաւապետին թղթակցութիւնը կը կատարուէր բարեկամի մը միջնորդութեամբ:

Ա,յս էր ահա թնդանօթապետին սարսափը. կը մտածէր որ նաւատէրն իմանալով ծովահէնին բնակարանն և ճշմարիտ անունն, բայց չգիտնալով անշուշտ անոր խաղացած կրկնակի դերն, խօսքի սկսելուն պէս այս ամենակարեւոր գաղտնիքն երեւան պիտի հանէր առանց գիտնալու որ գեշութիւն մը կ'ընէ:

Նաւատէրին ներկայութիւնը մասամբ կը բացատրէր նաեւ քանի մը վայրկեան առաջ Սըկօֆէնի ունեցած կասկածներն՝

Ժովու՛ն վրայ երեւցող երկկայմի մը մասին :

Թնդանօթապետին այս վշտադին խորհրդածութեանց միջոցին՝ Պ. Ֆլորիտոր Վէրտիւրօն երթալով մօտեցեր էր , մինչդեռ Սիւզան ծեր սպասաւորին կ'ըսէր .

— Այս պարօնը ո՞վ է : Դէմքը ի՞նչ կարմիր է : Երբէք տեսած չ'եմ զինքը . բայց պատասխան չտա՞ս , Սըկօֆէն : Ատ ի՞նչ զարմանալի կերպարանք է : Իրաւոր սովորականէն աւելի դեղներ ես :

— Այս դէր մարդուն կարմրութիւնն է որ զիս այնպէս կ'երեւցնէ , սիրելիս , ըսաւ մեր մարդն ինքզինքն այնպիսի վրտանգի մը դէմ տեսնելով , ուսկից ի՛նչպէս ազատելիքը չ'էր գիտեր :

Սպասուհին , որ նաւատէրէն քանի մը քայլ յառաջ կուգար , Սիւզանի ըսաւ .

— Տիկին Ռօպէր , պարօնը մեր տէրը տեսնելու եկեր է շատ կարեւոր գործերու համար :

— Գիտէք որ պարօնը դուրս ելաւ :

— Ես ալ այնպէս պատասխանեցի , բայց ըսաւ որ կը սպասէ , վասն զի անպատճառ մեր տէրն պէտք է եղեր տեսնել . այն ատեն հոս բերի , որ դուք խօսիք իրեն հետ :

Թէրէզ այսպէս կը բացատրէր Պ. Վէրտիւրօնի գալուստն , երբ սա , որ բաւական կրթուած մարդ էր , տիկին Ռօպէրէն հինգ քայլ անդին կեցաւ և առաջին խոնարհութիւն մ'ըրաւ , թեւերը ծալած , արմուկները դուրս , կռունկներն իրարու կից և ոտքերն V-ի ձեւ դրած :

Տիկին Ռօպէր այս խոնարհութեան հաւնելով , ինքն ալ խոնարհեցաւ և յանդիմանական ձայնով մը ըսաւ Սըկօֆէնի .

— Տե՛ս , սովրէ՛ թէ կրթուած մարդ մը ի՛նչպէս կը մօտենայ կնկան մը :

— Ես դեռ ինչերո՛ւ մօտեցեր եմ որ , ինչպէս որ պիտի ըսէ գժբաղդաբար սա

աւանակ նաւատէրը , մրմուռաց թնդանօթապետն ակռաներուն մէջէն և յուսահատութենէն եղունգները կրծելով :

Պ. Ֆլորիտոր Վէրտիւրօն երկու քայլ յառաջ անցնելով՝ երկրորդ բարեւ մ'ալ տրուաւ . Սիւզան ալ երկրորդ խոնարհութեամբ մը պատասխանեց եւ Սըկօֆէնի ըսաւ ցած ձայնիւ .

— Այս մարդը իշխանի , դեսպանի ձեւեր ունի :

Թնդանօթապետը փոխանակ պատասխանելու՝ կարելի եղածին չափ ծածկուեցաւ ծառի մը ետին , կարծես թէ ուղեւորով վտանգը հեռացնել իրմէն :

Նաւատիրոջ երրորդ և վերջին բարեւը (երեք բարեւն անհրաժեշտ էր) առջի երկուքին նման եղաւ , և վերջապէս խօսքը Սիւզանի պիտի ուղղէր , երբ թնդանօթապետը տեսաւ .

— Վա՛յ , դու հո՞ս ես , ըսաւ նաւատէրը գլխովը նշան մը ընելով : Իեղ չ'էի տեսեր , ծերուկ ծովու գայլ :

— Բէ՛օ՛հ , յարեց Սըկօֆէն՝ ժպտել կարծելով , մինչդեռ ուրիշ բան չ'էր ըրածը , բայց եթէ քիթը բերանը սոսկալի կերպիւ ծռմուկել , եթէ ծովու մօտ բնակելուս համար ծովու գայլ եմ , տիկինը , ըսաւ Սիւզանը ցուցունելով , պէտք է ծովու գայլնի՛ կոչուի :

— Միշտ նոյն կատակաբանն ես , պատասխանեց նաւատէրն : Աչքդ ի՛նչպէս է տղաս :

— Ինչպէս որ էր , պարօն՛ն Վէրտիւրօն , ամենեւին չեմ տեսներ , բայց կ'աղաչեմ , ատոր խօսքը չընենք . մասնաւոր պատճառներ ունիմ այս մասին :

— Հարկա՛ւ , խեղճ ծերուկս , վասն զի մեծ գժբախտութիւն մը չէ՞ մի , տիկին , ըսաւ նաւատէրն խօսքը Սիւզանի ուղղե-

լով, նիզակի հարուածով մը աչքին մէկը կորսնցնել:

— Ի՛նչպէս, գոչեց տիկին Ռօպէր ապշութեամբ Սըկօֆէնի երեսը նայելով, ի՛նչպէս նիզակի հարուած:

— Բառախաղութիւն մ'է ըրածն, ըսաւ դիւցազնաբար թնդանօթապետն՝ դէմքը ևս քան զևս ծռմուկելով: Պ. Վէրտիւրօն կ'ուզէ բսել թէ ես շատ քաջասիրտ ըլլալուս արեւու ճառագայթ մը կրնայ նիզակ մը համարուիլ, որ ուղղակի աչքիս զարկաւ Լիօնի սրէկայ անոցաժամարին սպակիին պարճառան:

Այս վերջին խօսքերն, զորս Սըկօֆէն ցած ձայնիւ կ'ըսէր, Սիւզան միայն լսեց, և նաւատէրն + + կը խնդար այն ամիեղ ցփեղ խօսքերուն, զորս Սըկօֆէն թող կուտար իւր յուսահատ կացութեանը մէջ:

— Ա՛հ, անիծած, հա՛, հա՛, հա՛, շատ կատակարան չէ՞ մի, կ'ըսէր Պ. Վէրտիւրօն: Ինքը միայն կրնայ ասանկ խօսքեր հնարել: Նիշակի հարուած մը, արեւու ճառագայթը, հա՛, հա՛, հա՛:

— Իրաւ է թէ, պարոն, յարեց տիկին Ռօպէր, որ այս բառախաղին չէր հաւնած, բայց բարեբաղդաբար ա՛լ ևս չէր մտածեր նիշակի վրայ, իրաւ է թէ Պ. Սըկօֆէն, իւր լուրջ դիմօքք, Նաբոփաթանայի կոտորել կը նմանի, ինչպէս որ կ'ըսեն, բայց զուարճանալու փափաք չ'ունի չէ՛: Սակայն սպասուհին ըսաւ ինձ թէ կարեւոր գործերու համար կուզէք Պ. Քլօարէքը տեսնել:

— Այո՛, տիկին, շատ կարեւոր, ըսաւ նաւատէրը, Անշուշտ իւր տիկին ամուսնոյն հետ է որ խօսելու պատիւն ունիմ . . .

— Ներեցէ՛ք, պարո՛ն, ես օրիորդ Քլօարէքի խնամածուն եմ . . .

— Ի՛նչպէս, նա . . .

Հազիւ թէ նասպետ բառին առաջին վանկն նաւատիրոջ բերնէն ելեր էր, թընդանօթապետն ուժով մը Սիւզանի թևին զարկաւ և բոլոր ուժովը պօռաց:

— Ա՛հ, անիծած, նայեցէ՛ք, նայեցէ՛ք:

Խնամածուն այնքան ապշեցաւ Սըկօֆէնի ձայնին ու շարժումին որ, սուր ճիչ մ'արձկեց, և նաւատիրոջ ըսած այն ահարկու վանկն ալ չի լսեց: Ապա, փոքր ինչ խաղաղելով՝ ծերունի սպասաւորին ըսաւ.

— Անտանելի՛ ես, զիս սաստիկ վախցուցիր: Ամբողջ մարմնովս կը դողամ:

— Բայց նայեցէ՛ք, հունա՛, ըսաւ թընդանօթապետն իւր երկայն թելը դէպի ծովեզր ուղղելով: Հաւատալիք բան չէ, գերբնական բան է:

— Ի՞նչ բան, ըսաւ նաւատէրն աչօք նայելով Սըկօֆէնի ցոյց տուած կողմը, ի՞նչ կայ որ:

— Ո՛չ, եթէ երդում ընէին ինձ որ այս բանն կարելի է, ըսաւ մեր մարդն, ես գլուխս կուտայի թէ չի կրնար ըլլալ:

— Բայց ի՞նչ, յարեց Սիւզան, որ, հակառակ իր սրտնեղութեանն, սկսեր էր հետաքրքիր ըլլալ. ի՛նչ բանի համար կ'ըսէք:

— Աս հրաշք է, շարունակեց թնդանօթապետն տեսակ մը հիացմամբ. մարդ կը մտածէ թէ արթո՞ւն է թէ քուն:

— Բայց ի՞նչ կայ, գոչեց նաւատէրն խնամածունին չափ հետաքրքիր ըլլալով՝ ի՛նչ բանի վրայ կը խօսիք. ո՞ւր նայելու է:

— Հունա՛, ըսաւ Սըկօֆէն անտարբերութեամբ, սա ծառը կը տեսնէ՞ք, ձախ կողմը:

— Ձախ կողմը, ըսաւ նաւատէրն միամտօրէն. ի՞նչին ձախ կողմը:

— Ի՞նչին պիտի ըլլայ, միւսին ձախ կողմը, ըսաւ Սըկօֆէն :

— Ո՞ր միւսը, ըսաւ մեր մարդն :

— Հունա՛ մեծ ու սպիտակ ծառ մը չէ՞ք տեսներ, որ գմբեթի մը կը նմանի :

— Ա,յո՛, կը տեսներմ, ըսաւ նաւատէրը :

— Ե՛տքը, ըսաւ Սիւզան :

— Չէ՞ք տեսներ նաև հո՛ն, վերը . . .

— Վե՛րը մի :

— Ա,յո՛, բոլորովին վերը, կուշտին վրայ . . .

— Կուշտին վրայ :

— Ա,յո՛, կապոյտ լոյսի պէս բան մը չէ՞ք տեսներ :

— Կապոյտ լո՛յս մը, կրկնեց նաւատէրն աչքերը շփելով և ձախ ձեռքը ընթուիններուն վրայ դնելով. կապոյտ լո՛յս մը :

— Ա,յո՛, հո՛ն, և ահա՛ հիմայ ալ կարմրցաւ, գոչեց Սըկօֆէն : Կը տեսնէ՞ք. զարմանալի չէ՞ միթէ : Բայց եկէ՛ք, Պ. Վէրտիւրօն, մօտէն նայինք, յաւել Սըկօֆէն՝ նաւատիրոջ թեւէն բռնելով և քաշել ուղելով : Եկէ՛ք, եկէ՛ք :

— Կեցի՛ր նայինք, յարեց Պ. Վէրտիւրօն թնդանօթապետին ձեռքէն ճողոպրելով. մարդ բան մը հեռուէն տեսնելու է որ, վերջէն ալ երթայ մօտէն տեսնելու, և ես բան մը տեսած չունիմ : Հապա դո՞ւք, տիկին :

— Ես ալ ձեզ պէս, պարո՛ն :

Սըկօֆէն կարելի է ջանար նոցա վախն դեռ երկարել. բայց նոր վտանգի մը մօտենայն իւր եռանդն մարեց :

Իրմէ քիչ հեռուն Սապինի ձայնը լսեց :

Նորատի աղջիկն, առանց տեսնելու Պ. Վէրտիւրօն, որ Սըկօֆէնի և Սիւզանի ետին կեցեր էր, վազելով կ'ըսէր իր խնամածունին .

— Ի՞նչ կը դիտես այդպէս, սիրելի Սիւզան :

— Օրիորդ Սապին, մտածեց Սըկօֆէն յուսահատութեամբ. ամէն ինչ կորսուեցաւ : Խեղճ տղայ. այս գաղտնիքը կրնայ իր մահուանը պատճառ ըլլալ :

ԺԶ.

Պ. Ֆլօրիտօր Վէրտիւրօն՝ Սապինը տեսնելով՝ իւր յարգական խոնարհութիւնները նորէն սկսաւ : Նորատի աղջիկը կարմրելով բարեւեց դայն, վասն զի չէր կարծեր որ պարտէզին մէջ օտարական մը պիտի գտնէ :

Սըկօֆէն սոսկմամբ մտածելով թէ Քըլօարէքի գաղտնիքն երեւան պիտի ելլէր Սիւզանի առջեւ, որոշեց յուսահատ միջոցի մը դիմել : Ուղելով անպատճառ նաւատէրն հեռացնել, անոր ըսաւ .

— Հիմայ, Պ. Վէրտիւրօն, հետս եկէ՛ք. ձեզ պարոնին քով տանիմ :

— Բայց, Սըկօֆէն, ըսաւ Սապին, չէ՞ք գիտեր որ հայրս դուրս ելաւ :

— Անհող եղիք, օրիորդ, ես զինքը կը գտնեմ :

Եւ թնդանօթապետն ճամբայ ելլելով՝ նաւատիրոջ գլխու նշան մ'ըրաւ և ըսաւ .

— Եկէ՛ք, եկէ՛ք :


— Պարոնը աւելի աղէկ կ'ընէ եթէ հօս սպասէ հօրս վերադարձին, յարեց նորատի աղջիկն անուշութեամբ. ըսաւ որ չուտ պիտի դառնայ. զինքը ճամբան պիտի պատահիք, Սըկօֆէն, և անօգուտ շրջագայութիւն մը ընել տուած պիտի ըլլաք պարոնին :

— Ո՛չ, ո՛չ, օրիորդ, հանդիստ եղի՛ք, օդը սքանչելի է : Ես աղւոր ճամբայ մը գիտեմ և ապահով եմ թէ ձեր հայրն այն ճամբէն պիտի վերադառնայ :

— Հապա ուրիշ ճանրէ մը գա՛յ, ըսաւ Սիւզան, որ նաւատիրոջ քաղաքավարութեանն շատ հաւնե՛ր էր, պարոնն աւօգուտ և յոգնեցոնցիչ շրջագայութիւն մը ըրած պիտի ըլլայ :

տես որ ես բաւական կրթուած և անձնասէր ըլլալով՝ ի հարկ է այս գեղեցիկ տիկնանց դիտողութեանցն պիտի համակերպիմ, և հոս պիտի սպասեմ սիրելի . . .

— Շատ աղէկ . գոչեց Սըկօֆէն աշ-



Սըկօֆէն Պ. Վերտիւրօնի մեջքէն բռնեց, (Երես 92

— Բայց, ըսաւ Սըկօֆէն անհամբարութեամբ, կը կրկնեմ թէ . . .

— Սիրելիս, ըսաւ Պ. Վերտիւրօն թընդանօթապետին խօսքն ընդմիջելով, գի-

խուծիւ . շա՛տ աղէկ, ա՛լ չխօսինք, ես ձեզ աղեկութիւն մ'ընել կուզէի . բայց, աղէկ միտքս եկաւ, Պ. Վերտիւրօն, ըսաւ՝ Սապինէն և Սիւզանէն ետ քաշուե-

լով և նաւատիրոջ նշան ընելով որ իւր քովը գայ, ձեզի մասնաւոր ըսելիք մ'ուսիմ:

— Ինձի նայէ՛, բարեկամս, ըսաւ նաւատէրն, կ'երեւնայ որ անպատճառ զիս այս տիկնանց քովէն հեռացնել կ'ուզես: Ըսել է ինձի դէմ դաւ մը կը նիւթես:

— Պատուոյս վրայ կ'երդնում, Պ. Վէրտիւրօն, գոչեց Սըկօֆէն՝ վախնալով որ այս նոր փորձն ալ չի յաջողիր, շատ կարեւոր բան մը ունիմ ձեզ ըսելու, երկու վայրկեան միայն շնորհեցէ՛ք ինձ:

— Երկու վայրկեան. կը լսէ՞ք, տիկնայք, յարեց նաւատէրն խնդալով, ուզածը միայն այս է եղեր, իբր թէ ասանկ սիրուն ընկերութենէ մը հեռու անցուած երկու վայրկեանն երկու դար չ'արժեր:

— Ա՛հ, պարո՛ն, ըսաւ Սիւզան՝ խիստ հաւնելով այս նոր շողքորդութեան:

— Կը տեսնէ՞ք, խեղճ Սըկօֆէն, ըսաւ Սապին, որ սկսեր էր Պ. Վէրտիւրօնն զուարճալի դտնել, պէտք է համբերէք:

— Բայց, պարո՛ն, գոչեց Թնդանօթապետն իրաւցնէ շփոթելով, կ'ըսեմ որ պէտք է անմիջապէս խօսիմ ձեզ հետ գաղտնի:

Պ. Վէրտիւրօն երկու տիկնանց աչքը մտնել ուղելով՝ չէր կրնար Սըկօֆէնի փափագը կատարել, մանաւանդ որ կարեւորութիւնն չէր զգար: Ուստի զուարթութեամբ պատասխանեց.

— Օ՛ն, սիրելիս, ատանկ խոշոր եւ սոսկալի ձայներ մի՛ հաներ, այս տիկնայք կը վախնան, կը խոստանամ տեսակցիլ քեզի հետ քիչ մը վերջը:

— Լա՛ւ ուրեմն, գոնէ կեցի՛ք որ ըսեմ ձեզ թէ . . . գոչեց խեղճ Սըկօֆէն մօտենալով և ցած ձայնիւ նաւատիրոջ

խօսիլ ուղելով:

Բայց նա ետ քաշուեցաւ և խնդալով ըսաւ.

— Կանանց առջեւ ականջէ ականջ փարտա՛լ, ի՞նչ, դու զիս վայրենի՞ կարծեցիր: Ա՛հ, տիկնայք, կ'երեւայ թէ այս չարաճճին կուզէ անպատճառ վարկուտրել ձեր առջեւ:

— Ա՛հ, կ'երեւնայ որ դուք Պ. Սըկօֆէնի յամառութիւնն չէք գիտեր, ըսաւ Սիւզան, երբ միտքը բան մը դնէ, անկարելի է անոր դաղափարը փոխել տալ:

Թնդանօթապետը պատասխան չի տրուաւ և երեք անձանց մօտեցաւ այնպիսի մարդու մը դէմքով՝ որ յուսահատ կացութեան մը մէջ է:

— Ըսել է, յարեց նաւատէրն խօսքը Սիւզանի ուղղելով, օրիորդ Գլօարէքի հետ է որ պատիւ ունիմ խօսելու:

— Այո՛, պարո՛ն, պատասխանեց աղջիկը, և դուք ալ հարկաւ հօրս բարեկամներէն էք:

— Ձեր հայրն ինձմէ անձնուէր բարեկամ չ'ունի. օրիորդ, և շատ ապերախտ պիտի ըլլայի՛ եթէ անձնուէր չըլլայի իրեն:

— Ըսել է հայրս ձեզ մէկ քանի ծառայութիւն մատուցանելու բարեբաղդութիւնն ունեցած է, պարո՛ն:

— Քանի մը ծառայութի՛ւն մի. նա զիս հարստացուց, օրիորդ:

— Հարստացո՛ւց, ըսաւ Սապին զարմանօք. ի՞նչպէս նայինք, պարո՛ն:

— Բայց՛, օրիորդ, շատ պարզ է. նա . . .

— Այո՛, օրիորդ, փութաց ըսել Սըկօֆէն նաւատիրոջ խօսքը ընդմիջելով, պարոնին հաշտոյն համար էր որ ձեր հայրը այնքան ճամբորդութիւններ քրաւ:

— Ճշմարիտ է, օրիորդ, պատասխանեց նաւատէրն. գրեթէ ամէն մէկ ան-

գամուն լեցուն բաժին մը կ'իյնար ինձ : Բայց ձեր հօրն պարտաւոր եղած շնորհացրս մեծագոյնը այն է որ իմ յարգանքներս կրնամ այսօր ձեզ մատուցանել, օրիորդ :

Մինչդեռ Սապին կրցածին չափ կը պատասխանէր Պ. Վէրտիւրօնի խօսքերուն, Սըկօֆէն, գլուխը Սապինի և Սիւզանի մէջ խօթելով՝ ըսաւ .

— Ասի հարուստ գործարանապետ մ'է : Մեր ճամբորդութեանց մէջ իւր կերպաններն կը ծախէինք, որով շատ ըստակ շահեցաւ :

— Ուրեմն, պարո՛ն, ըսաւ Սապին, հօրս բացակայութեանցն ատեն զգացած անհանգստութեանցս մէկ պատճառն ալ դուք էք :

— Եւ այս մասին օրիորդը ամենեւին խօսք մտիկ չ'ընէր, պարո՛ն, ըսաւ Սիւզան : Երեւակայեցէ՛ք որ շարունակ ահուգողի մէջ էր, իբր թէ իւր հայրն ամենափոքր վտանգի մը տակ ըլլար :

Նաւատէրն զարմանօք Սիւզանի երեսը նայելով՝ ըսաւ .

— Վտանգ մի . ուրեմն կը կարծէք թէ . . .

— Բայց ո՛չ, զարմանալի բան է, փութաց ըսել Սըկօֆէն՝ նորէն Պ. Վէրտիւրօնի խօսքն ընդմիջելով, զարմանալի բանէ, թէ մարդիկ երբեմն ի՛նչպէս կը սխալին այլ և այլ բաներու վրայ : Կը կարծեն որ մեր արուեստին մէջ ամեն բան դիւրին է, և որովհետեւ շատ շահ կը բերէ, կը կարծեն թէ բաւ է ծռիլ և առնել, իբր թէ երբեք մեր դէմն ալ խեռ յաճախորդներ չեն ելլեր . բայց ինչպէս որ կրսէ առածը Մովսէսին՝ ծովահէնուհէս, վասն զի երբեմն անանկ վաճառականներու (*) կը հանդիպինք

(*) Մովսէսէնք վաճառական կը կոչեն վաճառականական նաւերն, և շատ անգամ պա-

որ, թէև դրսէն բան մը չեն երեւնար, բայց մեծ դժուարութիւններ կը հանեն դէմերնիս :

— Այս ճշմարիտ է, օրիորդ, ըսաւ նաւատէրը Սապինի . չէք կրնար կարծել թէ այն չարաճճիներու արտաքին երեւոյթըն շատ անգամ ի՛նչ խաբէական է :

— Ասոր համար, պատասխանեց նորատի աղջիկն ժպտելով, երեւոյթներու վստահելու չէ :

Ըսել է, յարեց Սիւզան հեզնօրէն, ասոնք են այն վտանգներն, որոց վրայ կը խօսի Պ. Սըկօֆէն անանկ պարծենկոտ կերպով մը :

— Շիտակը, տիկին, իրաւունք ունի, և կ'ապահովեմ ձեզ թէ վերջին կռիւն . . .

— Կռիւ մը, ըսաւ Սապին աշխուժիւ՝ նաւատիրոջ խօսքը ընդմիջելով և զարմանօք անոր երեսը նայելով . կռիւ մը :

— Ի՛նչպէս յարեց, Սիւզան ալ ապշած, ի՛նչ կռիւ ըսել կուզէք, պարո՛ն :

— Կռիւ մը, չարաչար կռիւ մը, յարեց Սըկօֆէն նորէն ընդհատելով նաւատիրոջ խօսքը, որ տեղի ունեցաւ մեր և սրիկայ յաճախորդի մը մէջ տեղ, որ մեր կերպասեղեններուն չէր հաւներ . բայց Պ. Քլօարէք և ես այնպէս մը համոզեցինք զինքը որ, հարիւր ծրար կերպաս առաւ, և . . .

— Հա՛, հա՛, տիկնայք, այս տղան ի՛նչ ամեղ ցփեղ կը խօսի՝ կերպասեղէն և ծրար ըսելով, ըսաւ Պ. Վէրտիւրօն, որ քանի մ'անգամ փորձեր էր Սըկօֆէնի խօսքն ընդմիջել, բայց ի զո՛ւր : Խենդեցա՞ք, սիրելիս :

— Ի՛նչպէս, խենդեցա՞յ մի, դուչեց Սըկօֆէն որոտալի ձայնիւ :

տերազմական նաւերն վաճառականական նաւերու ձեւ կ'առնեն՝ ծովահէնները խաբելով՝ իրենց ետեւէն բերելու համար :

Եւ մէկէն ի մէկ դէմքին ձեւը փոխելով՝ Պ. Վէրտիւրօնի մօտեցաւ և սպառնալով ըսաւ .

Դուք ինձ խենդ կ'ըսէք, հա՞, ծեր փրփկայ :

— Արդարեւ թնդանօթապետին ճարը հատնելով և չի յուսալով որ դեռ երկար ատեն կարենայ շարունակել այս երկիմաստ խօսակցութիւնն, դիւցազնական միջոց մը գործադրել որոշեր էր, իւր տիրոջը գաղանիքը ազատելու համար : Ուստի նաւատիրոջ լռութենէն և շուտօրումէն օգտելով՝ Սըկօֆէն ևս քան զևս որոտընդաստ ձայնիւ գոչեց .

— Այո՛, դուք անամօթ մ'էք, Պ. Վէրտիւրօն, և եթէ գլուխս տաքցնէ՛ք ձեր ականջները կը քաշեմ :

— Սըկօֆէն, գոչեց Սապին սարսափահար, յանձն երկնից, ի՛նչ կ'ըսես :

— Ի՛նչպէս, գոչեց վերջապէս նաւատէրն, կը համարձակի՞ս այդպէս վարուիլ ինձ հետ այս տիկնանց առջեւ :

— Օրիորդը տարէ՛ք, ըսաւ Սըկօֆէն ցած ձայնիւ Սիւզանի . գործք պիտի մեծնայ, ան չդիմանար . շո՛ւտ, շո՛ւտ :

Ապա, վերստին նաւատիրոջ մօտենալով, ստիպեց զայն որ մինչեւ փոսին եղերքը երթայ և ըսաւ .

— Խռփած փոշո՛տ դու ալ, չեմ՝ գիտեր թէ ի՛նչու քեզ սա փոսին մէջ չեմ նետեր :

Եւ բռնեց Պ. Վէրտիւրօնի օձիքէն, որ ի գուր կը ջանար ազատիլ և կը գոչէր .

— Բայց այս թշուառականը կապելու խենդ է եղեր : Ասանկ յիմար տեսնուած է :

— Յանձն երկնից, օրիորդը տարէ՛ք, չի վայել որ սա ծեր ցնդածն անոր առջեւ փոսը նետեմ, յարեց Սըկօֆէն խօսքը խնամածուին ուղղելով :

Սիւզան թնդանօթապետին խրատին

չէր սպասած Սապինի ըսելու համար որ իւր սենեակը քաշուի, վասն զի տեսեր էր որ կը սկսէր դեղնիլ և ամբողջ մարմնովն դողալ, բայց նորատի աղջիկը, առանց բանի տեղ դնելու իր սարսափն և խնամածուին աղաչանքները՝ չուզեց հեռանալ, վասն զի վատութիւն կը համարէր հօրը մէկ բարեկամն այսպէս նորա գործակաւորին ձեռքը ձգել . ուստի Սիւզանի ձեռքէն պրծելով, երկու արանց մօտեցաւ, և գոչեց .

— Սըկօֆէն, ըրածնիդ անվայել է : Հօրս անուամբն կը հրամայեմ՝ քեզ որ վերջ տաս այդ անամօթութեան :

— Օգնութիւն, զիս կը խեղդէ, կը մեմուար տկար ձայնիւ Պ. Փլօրիտօր Վէրտիւրօն՝ փոսին պատին կռթնած : Ահ, թշուառական ծերուկ, նաւապետը քեզ . . .

Այս վերջին նաւապետը, որ այնքան խեղդուկ ձայնիւ ըսաւ որ՝ բարեբաղդարար Սապին չի լսեց, նաւատիրոջ դատապարտութիւնն եղաւ :

Սըկօֆէն Պ. Վէրտիւրօնի մէջքէն բռնեց մէկէն ի մէկ, ետի ծռեց երեք ոտքէն աւելի բարձր պատին վրայէն, և երկու ըմբիշք դալարապատ պատին եզերքէն մինչեւ փոսին տակը գլտորեցան, առանց մէկտեղերնին ցաւցնելու, մինչդեռ Սապին, չկարենալով այլ ևս իւր սոսկումն զսպել, Սիւզանի բաղկաց մէջ կը նուազէր :

— Թէրէ՛ղ, օգնութիւն . օրիորդը կը մարի, գոչեց խնամածուն, օգնութիւն :

— Նորատի սպասուհին վաղելով եկաւ և իւր օգնութեամբն՝ Սապին ներս տարուեցաւ : Խնամածուին այսպէս օգնութեան կոչելը լսեր էր Սէկօֆէն որ այն պահուն փոսին յատակը տարածուած՝ իր տակը բռնեց էր նաւատէրն, որ կը սկսէր իւր անկման արագութենէն յառաջ

եկած առաջին մուկնութենէն սթափիլ :

— Օրիորդ Սապին կը մարի , ա՛լ վախնալու բան չկայ . գաղտնիքնիս ազատեցաւ , ըսաւ Սէկօֆէն :

Այն ատեն շեղորմին վրայ նստելով սկսաւ պաղարիւնութեամբ Պ. Ֆլորիտոր Վէրտիւրօնին նայիլ . ասի քրտնած , շնչապառ , զարդերն աւրուած դժուարութեամբ ոտքի ելաւ և դողալով կռթնեցաւ փոսին պատին : Նաւատէրն այնպէս զարմացեր ու բարկացեր էր որ՝ առջի բերան չի կրցաւ բառ մ'արտասանել , սյտերն , կուրծքին շնչառութեանն համեմատ , մէկ մը կ'ուռէին և մէկ մ'ալ կը պարպուէին . բայց թէեւ լուռ կեցեր էր , իւր նայուածքը կարծես կը խօսէր և կուզէր շանթահար ընել զՍըկօֆէն : Սա , նաւատիրոջ լռութենէն օգտելով՝ անուշ ձայնով մ'ըսաւ անոր , այնպէս մը որ կարծես հանդարտ խօսակցութիւն մը կը շարունակէր :

— Հիմայ , սիրելիս Պ. Վէրտիւրօն , եթէ կը բարեհաճիք բացատրեմ ձեզ թէ ի՛նչու աղաչեցի որ հետս այս առանձնակի տեղը գաք :

— Թշուառակա՛ն , գոչեց նաւատէրն՝ թնդանօթապետին պաղարիւնութեանն կատղելով , զիս նախատե՛լ . . . վրաս ձեռք վերցնե՛լ :

— Յանցանքը ձերն է , սիրելիս Պ. Վէրտիւրօն :

— Ի՛նչ յանդգնութիւն :

— Մասնաւոր գործի մը համար երկու վայրկեան խօսակցութիւն ուզեցի ձեռնէ , և դուք մերժեցիք : Ուստի հարկ եղաւ ծանր միջոցներու դիմել՝ ձեռք ձգելու համար այն յարմար առիթը , զոր կը վայելենք այս վայրկենիս :

— Աղէ՛կ , աղէ՛կ , ըրածներդ չի բաւեց , հիմայ ալ ծաղրէ՛ . նաւապետը կը հասկը-

ցընէ քեզ , ծեր աւագա՛կ , գոչեց նաւատէրն կատաղութեամբ :

Ապ.ս շեղորմին ի՛նչ աստիճան ցից ըլլալը տեսնելով՝ ըսաւ .

— Ես այս մարմնովս անհնար է որ վեր ելլեմ . պիտի ստիպուիմ օգնութեան կանչել , երնարան մը ուզել կամ չուանով վեր ելլել : Ա՛հ , թշուառական Սըկօֆէն , զիս տիկնանց առջեւ ասանկ ծաղրելի կացութեան մը ենթարկե՛լ :

Թնդանօթապետն պահ մը իւր յաղթանակն վայելելու զբաղեր էր , մտածելով որ այն ձախորդ կացութենէն դուրս յաջողեր էր ելլել , բայց այս փառասիրական գոհունակութիւնն անցնելէ վերջը , լըջօրէն ըսաւ նաւատիրոջ :

— Պ. Վէրտիւրօն , ըրածիս համար ներումն կը խնդրեմ . բայց պատուոյս վրայ կ'երդնում որ ստիպուած էի :

— Ի՛նչպէս , դեռ կը համարձակի՞ս . . . :

— Մտիկ ըրէ՛ք , Պ. Քլօարէք մինչեւ ցայսօր այլ և այլ պատճառներով պահած է աղջիկէն թէ ինք ծովահէն է :

— Իրա՛ւ , գոչեց նաւատէրն , որու բարկութիւնը զարմանքի փոխուեցաւ . ըսել է ատոր համար ինէ ալ կը ծածկէր՝ իւր բուն անունն և բնակութիւնը , զոր այնքան դժուարաւ կրցի գտնել :

— Ճի՛շդ և ատեն ատեն բացակայութեանցն պատրուակ ցոյց կուտար թէ այլ և այլ կերպասեղինաց առեւտուր կ'ընէ :

— Կարելի՞ է :

— Ուստի երեւակայեցէ՛ք թէ ո՛րքան շփոթեցայ և վախցայ , երբ ձեր գալը տեսայ :

— Ըսել է գաղտնիքը երեւան չի հանելու համար պիտի աղաչէիք ինձ . . . :

— Եւ ատոր համար ուզեցի առանձին խօսել հետերնիդ :

— Տէր Աստուած : Ի՛նչ բարեբաղդու-
թիւն որ նաւապետին գաղտնիքը երեւան
չի հանեցինք : Հիմայ որ միտքս կը բերեմ
այն կցկտուր խօսակցութիւնն՝ կը հասկը-
նամ թէ . . . :

— Բայց որովհետեւ ատանկ խօսակ-
ցութիւն մը շարունակելն վառ ածուխնե-
րու և ածելիներու վրայ կօխելու կը նը-
մանի , որոշեցի ձեզ այս փոսին յատակը
իջեցնել , որպէս զի օրիորդ Քլօարէքէն և
իւր խնամածուէն հեռացնեմ զձեզ . միջո-
ցը քիչ մը կոպիտ էր , բայց եղածը ե-
ղած է :

— Սըկօֆէն , կը ներեմքեզ , ըսաւ Պ.
Վէրտիւրօն մեծանձնութեամբ . կը խոս-
տովանիմ իսկ որ բաւական ալ վարպետ
ես եղեր , վասն զի . . . :

Երկու խօսակցաց խօսակցութիւնն ընդ-
միջուեցաւ գահալէժ քայլերու աղմուկով
մը և Պ. Քլօարէքի ձայնիւն , որ կը գոչէր .

— Ո՛ւր են :

— Երկուքն ալ փոսին մէջ ինկան ,
պարո՛ն , կը պատասխանէր թէրէզի ձայնն :

Մէկ մ'ալ իվօն երեւցաւ պատին վրայ :

Նաւատէրն տեսնելով՝ ապշած մնաց ,
ապա , մտածելով թէ Պ. Վէրտիւրօնի ներ-
կայութիւնն կրնար երեւան հանել այն
գաղտնիքը , զոր ինքն կը ծածկէր , վա-
խէն և բարկութենէն դեղնելով գոչեց .

— Անէ՛ժք . դուք հո՛ս , պարո՛ն , ինչ-
պէս համարձակեցաք . . . :

Սըկօֆէն որ , հակառակ իւր կաղու-
թեան շատ դիւրաշարժ էր , շուտ մը վեր
ելաւ և Քլօարէքի ըսաւ .

— Պ. Իվօ՛ն , մի՛ վախնաք , օրիորդ
Սապին և Սիւզան բան մը չ'են գիտեր :

— Ա՛հ , փա՛ռք Աստուծոյ , ըսաւ Քլ-
լօարէք , շունչ կ'առնում :

ԺԷ .

Քլօարէք իւր նաւատիրոջ այցելութեա-
նրն անհաճոյ հետեւանքներուն վրայ այլ
եւս վախ չ'իմանալով , ուզեց գալուն
պատճառն հասկնալ . բայց նաեւ հարկ էր
զայն փոսէն հանել : Սըկօֆէն գնաց շուան
մը բերաւ , մէկ ծայրը Պ. Ֆլօրիտօր Վէր-
տիւրօնի նետեց , որ բռնեց զայն և յա-
ջողեցաւ անոր օգնութեամբն շեղորմէն
վեր ելլել :

— Սենեակս եկէ՛ք , ըսաւ Քլօարէք՝ ա-
ռանց իւր դժգոհութիւնը ծածկելու .
պէտք է դիտնամ թէ , պարո՛ն , ի՞նչու
համարձակեցաք մինչեւ հոս ետեւէս գալ՝
ամենամեծ վտանգներու առիթ ըլլալնիդ
բանի տեղ չ'ի դնելով :

— Կ'իմանաք , սիրելի նաւապետս ,
պատասխանեց Պ. Ֆլօրիտօր Վէրտիւրօն :

Եւ մինչդեռ այս մարդն կրցածին չափ
կը շտկէր իւր զարդարանքին անկարգու-
թիւնն , Սըկօֆէն տիրոջը կը պատմէր՝
ինչ որ պատահեր էր նաւատիրոջ գալէն
ի վեր :

— Գու միշտ անձնուէր ու խելացի ես ,
սիրելիս Սըկօֆէն , ըսաւ Քլօարէք այլայ-
լելով : Գու վարպետութեամբդ մեր գաղտ-
նիքն ազատեցիր :

— Օրիորդը ի՛նչպէս է , Պ. Իվօն : Կը
ցաւիմ որ զինքն այնպէս վախցուցի : Բայց
երկու չարեաց փոքրագոյնն պէտք էր
ընտրել :

— Աղե՛կ է . իմ եկած ատենս՝ նա
քանի մը վայրկեանէ ի վեր սթափեր , բայց
դեռ շատ տկար էր . Սիւզան , որ բար-
կացեր է քեզ , պատմեց ինձ թէ բարե-
կամներէս վաճառականի մը հետ հան-
դարտ խօսակցութիւն մը ունենալէդ վեր .

ջը, մէկէն ի մէկ խենթի պէս անոր վրայ
յարձկեր ես և երկուքդ մէկէն փոսը ին-
կեր էք: Այս պատմութենէն բան մը չի
հասկնալով հոս վազեցի, և հասկցայ որ
մեծ ծառայութիւն մը մատուցեր ես ինձ:

— Սիրելի՛ նաւապետս, ըսաւ նաւա-
տէրն իւր զարդարանքը լմնցնելով, կ'ա-
զաչեմ որ զիս տիկնանց առջեւ չի հանէք.
փոսին յատակը տիղմով լի էր և կը խըպ-
նիմ ձեր չքնաղ աղջկանն առջեւ ելլելու:

— Մի՛ վախնաք, ըսաւ Քլօարէք սըրտ-
նեղութեամբ, ես ալ չեմ ուզեր ձեզ իւր
առջեւ հանել:

Եւ Քլօարէք՝ վէրտիւրօնն մասնաւոր
նրբուղիէ մը անցընելով, իւր սենեակը
տարաւ:

Սըկօֆէն կը պատրաստուէր հեռանալ,
երբ նաւատէրն ըսաւ անոր.

— Նաւապետին թոյլտուութեամբն դու
ալ կեցիր. քու կարծիքդ կարելի է շատ
օգտակար կ'ըլլայ մեզ:

— Ատ ի՞նչ կը նշանակէ, հարցուց Քլ-
օարէք:

— Ըսէք ծերուկ Սըկօֆէնի, որ դուռը
դոցէ, սիրելի նաւապետս, և ապա կ'ի-
մանաք:

Իվօն, զարմանօք եւ անհամբերու-
թեամբ, նշան ըրաւ իւր թնդանօթապե-
տին որ կենայ և նաւատիրոջ ըսաւ.

— Վերջապէս պիտի բացատրէ՞ք թէ
ի՞նչու մինչեւ հոս ետեւէս եկաք և ին-
չո՞ւ չի յարգեցիք իմ փափագս, որ կու-
զէի անձանօթ մնալ:

— Ձեր բոլոր հարցումներուն պիտի
պատասխանեմ, սիրելի՛ նաւապետս, պա-
տասխանեց Պ. Վէրտիւրօն, որ քիչ քիչ իւր
զուարթ կերպարանքը կ'առնէր: Սրդ սա
ըսեմ ձեզ թէ մենք հիմայ հոս փոքրիկ
պատերազմական խորհուրդ մը պիտի ձե-
ւացնենք:

— Պատերազմական խորհուրդ մը, ը-
սաւ Քլօարէք. խենթեցա՞ք:

— Ո՛չ, սիրելի նաւապետս, վասն զի
եկայ ձեզ այնպիսի պատառ մ'առաջար-
կել, որմէ առնուազն է — Տ հարիւր հա-
զար Փռանք միայն ձեզ բաժին կ'իյնայ:

— Նորէն գործի սկսի՛մ, ըսաւ Քլօա-
րէք գլուխը ցնցելով: Ես ծովահէնութենէ
քաշուեցայ:

— Այո՛, այդ ցաւալի որոշումնիդ ի-
մաց տուիք ինձ, սիրելի նաւապետս, և
փոխանակ Արտիւրի հռչակաւոր նաւապե-
տին նաւատէրն ըլլալու համար Տիէրի
նաւատեարց թագաւորն ըլլալու, հի-
մայ

— Կեցի՛ք, ըսաւ Քլօարէք Պ. Վէրտիւ-
րօնի խօսքն ընդմիջելով, ի՞նչ իրաւամբ
հրատարակել տուիք այն մտերմական նա-
մակն, որու մէջ իմ յափշտակութիւնս և
փախուստս կը պատմէի ձեզ:

— Ի՛նչպէս, նաւապե՛տ, բայց ատի
մեծ բաղդ մ'էր կոչուր Նեան Օրտիւր կար-
գացողներուն համար, որք բնականաբար
շատ հետաքրքիր են աշխարհի ամէնէն նշա-
նաւոր ծովահէնին վերաբերեալ բաներն
իմանալու:

— Բայց ձեր այդ անխոհեմութիւնը
մեծ դժգոհութիւն պատճառեց ինձ:

— Քանի որ ձեր համեստութիւնն այդ
նամակէն վիրաւորուեցաւ, սիրելի նաւա-
պետս, ըսել է այսօրուան յօդուածին շատ
պիտի վշտանաք:

— Ի՛նչպէս, ի՞նչ յօդուած:

— Դարձեալ ձեր խօսքը կայ կոչուր Նեան
Օրտիւր մէջ, զոր այս առտու տեսայ:

— Ի՞նչ գրուած է, գոչեց Քլօարէք՝
վախնալով որ իւր գաղտնիքն երևան կ'ել-
լէ, որովհետեւ այդ լրագիրն իր տունը
կուգար: Պարո՛ն, միթէ նորէն ձեր մէկ
անխոհեմութիւնն է:

հագուեր էր Պ. Քլօարէք տիկնոջ մեռած
իրիկունը . . .

— Ա՛հ, գոչեց Սըկօֆէն՝ խնամածուին
խօսքը ընդմիջելով, կը հասկնամ: Օրիորդ
Սապին կարծեց թէ այդ ծովահէնն է իւր
մարջը սպաննողը:

— Այո՛, Սըկօֆէն, ասոր համար,
տեսակ մը ցնորքի մէջ ինկած, Պ. Քլօա-
րէքի ըսաւ «Հա՛յր իմ, մօրս սպաննիչը
ողջ է, նորա վրէժը չպիտի՞ առնէք:»
Երեւակայեցէ՛ք անգամ մը Պ. Քլօարէքի
յուսահատութիւնը:

— Բայց ըսել է օրիորդը Պ. Իվօնի
գալէն վերջը՝ կարդաց այս առտուան լը-
րագիրը:

— Այո՛, տեսէ՛ք ի՛նչպէս եղաւ. ձեր
այս առտուան շփոթութեան պատճառած
այլայլութիւնն արդէն անցեր էր, բայց
խեղճ աղջիկը կգգար տակաւին այն ջը-
ղային սարսուռներն որ միշտ կը յաջոր-
դեն այսպիսի տաղնապներու: Ժամը
տասնևմէկի միջոցները պարօնը վերադար-
ձաւ, ուրախ կ'երեւնար, քեռորդիս հե-
տըն էր: «Աղջիկս իր սենեա՛կն է, ըսաւ
Պ. Քլօարէք զուարթութեամբ, աղուոր
լուր մ'ունիմ իրեն տալու:» Այն ատեն,
Սըկօֆէն, ի՛նչ մեղքս պահեմ, ստիպուե-
ցայ պարօնին պատմել այս առտուան
փոսին գործը:

— Հարկաւ, բայց շարունակեցէ՛ք:

— Պարօնը օրիորդին սենեակը վազեց,
զայն գրեթէ բոլորովին շտկուած գտաւ,
խնդրեց որ հանգիստ կենայ և ձեր քոփս
եկաւ. քեռորդույս ըսաւ որ անմիջապէս
իւր սենեակը երթայ և չեմ գիտեր ինչ
բան պատրաստէ. խեղճ տղան դեռ հոն
է. չուղեցի օրիորդին գլխուն եկածը
պատմել իրեն և զինքը վշտացնել: Բայց
ասոնք ձգենք. ես օրիորդին քով կեցայ:
Թէրէզ լրագիրը բերաւ, այն ատեն, օ-

րիորդը զուարճացնելու համար, անոր
տուի որ կարդայ. մէկ մ'ալ ի՛նչ պատա-
հեցաւ. այս ծովահէնին հագուետը նը-
կարագրուած կտորին՝ սոսկալի աղաղակ
մ'արձկեց . . . բայց կեցի՛ք, ըսաւ Սիւ-
զան լռելով, ահա՛ պարօնը եկաւ:

Սրդարեւ Քլօարէք դեղնած և տժգոյն
դուրս ելաւ իւր աղջկանը սենեակէն:

— Սիւզա՛ն, քովը գնա՛, կ'աղաչեմ,
ըսաւ խնամածուին այլայլեալ ձայնիւ.
քեզ կուզէ:

Ապա՛ խօսքը Սըկօֆէնի ուղղելով՝

— Եկո՛ւր, ըսաւ:

Ծեր սպասաւորն առանց ձայն հանե-
լու տիրոջը ետեւէն անոր պառկելու սեն-
եակը գնաց:

Այն ատեն Քլօարէք թիկնաթուռի մը
վրայ նետուելով՝ աղատօրէն սկսաւ լալ,
վասն զի Սապինի ներկայութեան ինքզին-
քը բռներ էր. դէմքը ձեռքերուն մէջ
ծածկեց և խուլ հառաչներ արձկեց:

Սէկօֆէն, որ շատ քիչ անգամ կը
խանդաղատեր, զայս տեսնելով՝ սկսաւ
լալ և տիրոջը քով ոտքի վրայ կեցաւ
գլխիկոր:

Քանի մը վայրկեան վերջը Քլօարէք
կցկտուր ձայնով մ'ըսաւ.

— Ո՛հ, ո՛րքան տառապեցայ և ո՛ր-
քան ալ կը տառապիմ:

— Այո՛, գիտեմ, պարո՛ն իվօն, ը-
սաւ Սըկօֆէն. Սիւզան պատմեց ինձ:
Այդ լրագիրը . . . ի՛նչ տժբախտութիւն:

— Ո՛չ, գոչեց Քլօարէք յուսահատու-
թեամբ, ո՛չ, անհնար է երեւակայել թէ
այն աղետալի դիշերուան յիշատակը ի՛նչ-
պէս անչինչ մնացեր է այս խեղճ աղջը-
կան մտքին մէջ: Դեռ կը սարսուամ միտ-
քըս բերելով թէ ի՛նչ սոսկմամբ զիս
սեղմելով՝ կը գոչէր, «Հա՛յր, հա՛յր, այն
մա՛րդը, մօրս սպաննիչը, ո՛ղջ է:» Եւ ո-

ըովհետեւ ես ապշած երեսը կը նայէի նա ատելութեամբ շարունակեց . « Բայց , հայր , մայրս սպաննողը , քու կինդ ըսպաննողն ողջ է : Այդ սպաննութիւնը վրէժ կը գոչէ , և այն մարդը ողջ է : » Եւ առաջին անգամն էր որ աղջկանս ա՛նուշ գէմքին վրայ ատելութիւն կը կարգայի , ատելութիւն մը , որու առարկայն ես էի : Ա՛հ , այս սոսկալի տեսարանը վերքս բացաւ , խղճի խայթերս սրեց , և սակայն գիտես թէ ես մէկ վայրկեանի մոլեգնութիւնս ինչպէս քաւեցի :

— Պարո՛ն Իվօն , ասոնց ամէնէն գեշը , ըսաւ Սըկօֆէն պահ մը լռելով , այն գետինն անցնելու նաւատիրոջ լարած որոգայթն է :

— Խենթենալու բան է , վասն զի եթէ աղջկանս քով կենամ , երկկայմին նաւատիք հոս պիտի գան :

— Անպատճա՛ռ . դուք ձեր մարդիկը գիտէք :

— Այո՛ , և այն ատեն Սապին պիտի հասկնայ թէ Ա՛րտիւրն նաւապետն իւր մօրը սպաննիչն է և Ա՛րտիւրն նաւապետն ալ ես եմ . և այդ աղջիկն , որու վրայ կեդրոնացուցած եմ այսքան տարիէ ի վեր իմ սէրս , այդ աղջիկն որ իմ կեանքս , միակ մխիթարութիւնս , մէկ հատիկ յոյսս է , այդ աղջիկը սոսկում և զզուանք պիտի զգայ ինձ համար և սակայն դու , դո՛ւ միայն գիտես այն կենաց գաղտնիքը , զոր աղջիկս ոճիր մը պիտի համարի ինձ . եւ սակայն եթէ այդ գաղտնիքն երեւան ելլէ , գուցէ իրաւունք ունենամ հպարտանալու : Բայց ո՛չ , նա պէտք չէ իմանայ այդ գաղտնիքը , վասն զի չեմ կրնար անցեալ կենացս համար զաւկիս զգալիք զզուանքը փարատելու . ո՛հ , սոսկալի բան , գոչեց Բլօարէք սրտակիզիք ձայնիւ :

Եւ քանի մը վայրկեան մտածելէ վեր-

ջը , աչքերը մոլեգին , շրթունքը դժոխաւորին ժպտով մը կծկուած և ինքնիրենն խօսելով՝ ըսաւ .

— Պահ , նա հարուստ է , պարկեշտ մարդ մը կը սիրէ և կը սիրուի անկեց . Սիւզան և Սըկօֆէն ալ քովը պիտի մնան : Փոխանակ ատելու զիս՝ վրաս պիտի լայ և մահս ալ կեանքիս պէս գաղտնիք մը պիտի ըլլայ իրեն համար :

Բլօարէք այս խօսքերն ըսելով կը յառաջանար դէպ ի սեղան մը , որու վրայ զոյգ մը ատրճանակ կար դրուած :

Սըկօֆէն աչքերը չէր վերուցած տիրոջը վրայէն . նաւապետէն առաջ ատրճանակներուն վրայ ցատկելով՝ շուտ մը բացաւ զանոնք ու պարպեց , ապա պաղարիւնութեամբ զէնքերն իրենց տեղը դրաւ :

— Չուա՛ռ , գոչեց Բլօարէք ինքնիրմէն ելլելով և ծեր սպասաւորին օձիքէն բռնելով , յանդգնութիւնդ սուղի պիտի նըստի քեզ :

— Օ՛ն , պարո՛ն Իվօ՛ն , տղայութիւն չուզեր . ինքզինքնուդ եկէ՛ք :

— Այդ ատրճանակներն ինչո՞ւ պարպեցիր , գոչեց Բլօարէք :

Եւ ուժգին թոթուեց զՍըկօֆէն , որ պատասխանեց .

— Պարոն Իվօ՛ն , ժամանակը կ'անցնի : Ի՛նչ օգուտ ունի ձեր ծերուկ Սըկօֆէնն թոթուել ծառի մը պէս , որու պտուղներն կուղէք թափել . ժամանակը կ'անցնի , ան նայինք :

Թնդանօդապետին պաղարիւնութիւնն Բլօարէքի խելքը գլուխը բերաւ . ուժաթափ իյնալով իր աթոռին վրայ՝ մրմնջեց .

— Իրաւունք ունի՛ս , ես անմիտ եմ : Ո՛հ , Սըկօֆէն , գթա՛ ինձի :

— Օ՛հ , պարո՛ն , ձեզ չի վայլեր որ այսպէս խօսիք :

— Հապա ի՛նչ կուզես որ ըսեմ , ի՛նչ

կուզես որ ընեմ. գլուխս կը բռնկի, աչքերս կը դառնան :

— Իմ կարծիքս կուզես :

— Այո :

— Հավրը երթալու է :

— Սապինը այս վիճակին մէջ ձգե՛լ, աճապարանօք երթալովս իւր վախն կըրկնապատկե՛լ: Վերջապէս թողո՛ւլ զինքը ճիշդ այն վայրկենին՝ որ խնամոցս և սիրոյս կարոտ է. ձգե՛լ զինքը ամուսնանալիք միջոցին :

— Օրիորդ Սապինը :

— Այո՛. այս ամուսնութիւնն ի սկզբան անհաճոյ եղաւ ինձ, բայց հիմայ զաւկիս ապագային համար յոյսս այն է. բայց պէտք է որ կարենամ առաջնորդել զինքը. հայրական յարատեւ գորովանօք շըրջապատեմ այն երկու տկար էակներն, և այսպիսի վայրկենի մը մէջ վերստին վրտանգի դնե՛մ կեանքս, որ ամեն ատեն ուրնէ աւելի կարեւոր է Սապինի, այո՛, պաղարիւնութիւնս գտայ հիմայ, խելքս գլուխս եկաւ և կզգամ թէ խենթ էի որ քիչ մը առաջ կուզէի ինքզինքս սպաննել: Շնորհակալ եմ, իմ հաւատարիմ ծերո՛ւկս, ոճրագործութենէ մ'ազատեցիր զիս :

— Կուզեմ նաև նաւաստեաց հոս գալէն ազատել զքեզ, Պ. Իվօն. այս վտանգն ալ չի մոռնանք: Եթէ դուք իրենց չ'երթաք, իրենք ձեզ կուգան :

— Ես կ'երթամ իրենց, գոչեց Քլօարէք՝ մէկէն ի մէկ միաքը բան մը գալով. այո՛, հիմայ անմիջապէս Հավրը կ'երթամ եւ իմ նաւաստեացս կ'իմացնեմ որ ա՛լ գործէ քաշուեցայ. չեմ կարծեր որ հակառակին: Գիտեն որ բնաւորութիւնս բուռն է և տեղի չեմ տար: Դու հետս եկո՛ւր, վասն զի դու ալ անոնց վրայ ազդեցութիւն ունիս: Վտանգը հեռացնելու

միակ միջոցն այս է. ժամը երկուքն է, երեքին Հավրը կը հասնինք, և շատ շատ հինգին հոս կը վերադառնանք. աղջիկս քիչ մը կը հանդի, բացակայութիւնս չի նշմարեր իսկ: Օ՛ն, եկո՛ւր: Հոս բնաւ կասկած չի յարուցանելու համար՝ պանդոկէն կառք մը կը վարձենք:

Երբ Քլօարէք դէպ ի դուռը կ'երթար, թնդանօթապետը, որ չէր կրցած անոր խօսքն ընդմիջել, կեցուց զայն և ցած ձայնով մ'ըսաւ.

— Պ. Իվօն, սխալ քայլ կ'առնէք :

— Ի՞նչ ըսել կ'ուզես :

— Եթէ ոտքերնիդ Հավրը կոխէք՝ առանց արշաւանք ընելու չէք կրնար վերադառնալ :

— Դու խենթ ես :

— Խենթ չեմ :

— Նաւաստիք զիս բռնի պիտի յափըշտակեն, անանկ չէ՞ :

— Հաւանական է :

— Հապա իմ կամքս :

— Ես ալ ձեր կամքէն կը վախնամ :

— Առեղծուածներուդ վերջը պիտի բերե՞ս :

— Երբ միանգամ ձեր նաւաստեաց դէմ գտնուիք՝ չպիտի կարենաք դէմ դընել անոնց :

— Ե՞ս :

— Այո՛ :

— Հապա ցոյց տուած պատճառներս :

— Օգուտ չունին, հաւատացէ՛ք խօսքիս: Դուք դէմ առ դէմ պիտի գտնուիք այս կատաղիներուն հետ, որք քանիցս ձեզ հետ առ ոչինչ գրած են ծովս ու փոթորիկը, հուրն ու առմբերը: Դուք ևս վառօդի հոտ պիտի առնէք. այն սատանաներն Պէք նաւապետին խօսքը պիտի բնեն ձեզ և այն ատեն... դուք ահամայ ԻՆՔՁԻՆՔՆԻԳ ՊԵՏԻ ԶԳԱՔ ԻՆԶՊԷՍ ՈՐ ԳԻՏԷՔ:

եւ երբ դուք այն վիճակին հասնիք, ո՛չ Աստուած և ո՛չ սատանայն իշխանութիւն չունին ձեր վրայ :

— Ըսի որ ժամը հինգին հոս պիտի վերադառնամ, որպէս զի աղջիկս իմ բացա-

— Ըլալիքը կ'ըլլայ, ըսաւ Սըկօֆէն՝ տիրոջը ետեւէն երթալով և գլուխը ցընցելով :

Քլօարէք՝ Սիւզանի հարցնելով թէ Սապին ի՛նչպէս է, և իմանալով որ դեռ չկը



Անտիւրսի Գառապետը

կայութիւնս չի նշմարէ : Այդ ըսածներդ անտեղի են : Եկ'ուր :

- Կը պահանջէք :
- Այո՛ :

Կը հանդչի, իւր թնդանօթապետին հետ տունէն ելաւ և Հավրը գնաց :

Ժ Թ .

Երեք օր անցան այն վայրկեանէն ի վեր որ իվօն Իլօարէք տունէն մեկնեցաւ՝ առանց աղջկանն իմաց տալու :

Այս բնակարանն , որ ընդհանրապէս հանդարտ և գեղածիծաղ երեւոյթ մ'ուներ . ամենուրեք նոր տակնուվրայութեան մը հետքերն ցոյց կուտայ :

Գլխաւոր շէնքին կից մասերէն մին ամբողջապէս հրոյ ճարակ եղեր է . սեւ բեկորներ , ածխացեալ մոյթեր պարտէզին մէկ մասը կը ծածկեն :

Գետնայարկին դուռն ու պատուհաններէն շատերն , որ տապարի հարուածով տապալած են , տախտակներով դոցուեր են . կարմրագոյն մեծ բիծեր պատին վերայ կեցեր են և տեղ տեղ վերին յարկերու պատուհաններէն շատերը հրացանի հարուածներով ծակծկեր են :

Կէս գիշեր է :

Տանը ննջարաններէն միոյն մէջ կանթեղ մը կը վառի և Օնէզիմ պառկեր է . պառկած անկողնոյն սաւանն տեղ տեղ արիւնտտած է :

Սիւզանի բեռորդին կարծես կը քնանայ . սաստիկ դեղնած է . ատեն ատեն թեթեւ և ցաւազին ժպիտ մը կը պտակի իւր կիսաբաց չրթանց վրայ :

Գեղջուկի հագուստով տարիքոտ կնիկ մը անոր անկողնոյն սնարքը նստած , վերան կը հսկէ :

Այս սենեկին բացարձակ լռութիւնն ընդհատուեցաւ դրան աղմուկէն , զոր սաստիկ զգուշութեամբ բացին : Քիչ մը վերջը տիկին Ռօպէր ներս մտաւ նշանացի հրամայելով գեղջուկոջն որ տեղէն չ'ելլէ , մատերուն ծայրը կոխելով մինչև բեռ-

որդւոյն անկողնոյն քով եկաւ . այն ատեն վարագոյրներէն մին կէս մը բանալով՝ լռուիկ անձկութեամբ սկսաւ դիտել զայն :

Երեք օրուան մէջ Սիւզանի գէմքն չի ճանչցուելու աստիճան փոխուեր էր , վիշտոն , անձկութիւնք եւ արտասուք զայն հալեցուցեր են :

Քանի մը վայրկեան Օնէզիմը դիտելէ վերջը՝ Սիւզան կամայ մը ետ քաշուեցաւ , հիւանդապահին նշան ըրաւ որ քովը գայ և ցած ձայնիւ ըսաւ .

- Երթալէս ի վեր ի՞նչպէս է :
- Կարծես այնքան ցաւ չ'ունէր , բայց աւելի յուղեալ էր , տիկին :
- Չայն չի հանե՞ց :
- Շատ քիչ : Քանի մ'անգամ տեղեկութիւն հարցուց ինձ դէպքերուն վրայ . բայց ես , ձեր հրամանին համեմատ , բան մը ըսել չ'ուզեցի :
- Փա՛ռք Աստուծոյ , խեղքը գլուխը կուգայ ըսել է :
- Ո՛հ , բոլորովին , տիկին : Կ'երևնայ որ դեռ պիտի խօսի ալ , եթէ իւր բոլոր հարցմանց պատասխան տրուի :
- Զիս հարցո՞ւց :
- Ո՛հ , այո՛ , տիկին . քանի մ'անգամ ըսաւ . « Մօրաքոյրս պիտի գայ , անանկ չէ՞ : Շուտ կուգա՞յ » : — Պատասխանեցի թէ գրեթէ կէս ժամը հեղ մը կուգաք : Գլխովը նշան ըրաւ թէ չ'սորհակալ է ինձ . մէ , և ապա ընկողմանեցաւ , բայց քանի մ'անգամ ընդոստ արթնցաւ :
- Վէրքին ցաւն աւելցած չ'երեւնար :
- Ո՛չ , տիկին , միայն թէ մէկ երկու անգամ քիչ մը դժուար շունչ առաւ :
- Աստուած իմ , ըսաւ Սիւզան ձեռքեռն կցելով եւ արտասուածոր աչքերն երկինք վերցնելով , կը բաւէ որ մահառիթ դէպք մը չ'պատահի :

— Վիրաբոյժն այս մասին զձեզ ապահովեց, տիկին :

— Ըսաւ թէ յոյս ունի, ահա՛ այսչափ :

— Տիկին, կարծեմ կ'արթննայ, ըսաւ գեղջկուհին ականջ տալով :

Վասն զի Սիւզան եւ ինքն անկողնոյն վարագոյրներուն ետեւ քաշուեր էին :

Արդարեւ Օնէզիմ թեթեւ շարժում մը ըրաւ իր անկողնոյն վրայ եւ խոր հառաչ մ'արձկեց :

Սիւզան գլուխը երկնցուց, տեսաւ որ Օնէզիմ չ'էր քնանար, գեղջկուհոյն ըսաւ .

— Դու գնա ընթրէ, վերջէն կը կանչեմ :

Հիւանդապահը դուրս ելաւ և Սիւզան եկաւ անոր տեղը նստաւ :

Օնէզիմ մօրաքրոջը ձայնը լսելով՝ գոհունակութեան դող մը զգացեր էր. զգալով որ իր մօտը նստեր է՝ ըսաւ .

— Եկա՛ք, ո՛հ, աղէկ :

— Սիրելի՛ գաւակս, ըսաւ խնամածուն, չկարենալով իր այլայլութիւնը ծածկել, քու հառաչելդ լսեցի. ըսել է ցաւ կզգաս, եւ թերեւս իսկ առաջուրնէ աւելի :

— Ո՛չ, ապահով եղէ՛ք, շատ աղեկ եմ :

— Զիս հանգստացնելու համար կ'ըսես այդ խօսքերը :

— Ահա՛ ձեռքս, բռնեցէ՛ք : Գիտէ՛ք որ առաջ շատ տաք էր, հիմայ տեսէ՛ք :

— Իրա՛ւ, այնքան տաք չէ : Վէրբդ շատ ցաւ կը պատճառէ՞ տակաւին :

— Ո՛չ, միայն քիչ մը դժուարաւ շունչ կ'առնեմ. այն ալ կ'անցնի :

— Ա՛հ, Աստուած իմ, դաշոյնի հարուած մը ճիշդ կուրծքիդ :

— Աղնի՛ւ մօրաքոյրս :

— Ի՞նչ է :

— Օրիորդ Սապին ի՞նչպէս է :

— Ամէնքն ալ աղէկ են, շատ աղէկ. արդէն ըսի :

Օնէզիմ չհաւատալու կերպով մը գլուխը ցնցեց և յարեց .

— Հապա Պ. Բլօարէ՛ք :

— Ինձի նայէ՛, գաւակս, այս դէպքերուն վրայ չի խօսինք, ինձի բան մի՛ հարցնէր, վասն զի չեմ կրնար պատասխանել : Երբ բոլորովին աղէկնաս՝ այն ատեն :

— Մտիկ ըրէ՛ք, մօրաքոյր իմ, չէք ուզեր ինձ պատասխանել, վասն զի կը վախնաք որ չափէն աւելի կ'այլայլիմ. բայց կ'երդնում որ օրիորդ Սապինի և Պ. Բլօարէքի վիճակին վրայ ունեցած անբարեբախտութիւնս մեծ վիշտ կը պատճառէ ինձ :

— Նորէն կ'ըսեմ թէ ամէնքը աղէկ են :

— Ո՛չ, մօրաքոյր իմ, ո՛չ, ամէնքը աղէկ չեն կրնար ըլլալ այն սոսկալի դէպքէն վերջը, որ մինչեւ այսօր անհասկանալի մնացած է ինձ :

— Բայց, սիրելի՛ս, կը կրկնեմ թէ . . . Ահա՛ սկսար յուզուիլ, այլայլիլ. Օնէզիմ, տղայութիւն պէտք չէ. կ'աղաչեմ, հանդարտէ՛ :

— Ի՞նչ ընեմ, յանցանքն իմն է միթէ : Ինչո՞ւ օրիորդ Սապինի և Պ. Բլօարէքի մասին զիս այսպէս անձկութեան մէջ կը ձգէք :

— Բայց հազար անգամ ըսի ձեզ թէ ամէնքն ալ աղէկ են :

— Ես ալ կ'ըսեմ որ անկարելի է, գոչեց երիտասարդն եռանդեամբ : Ի՞նչպէս այն աղետաբեր երեկոյին որ այս տան վրայ յարձակեցան եւ քիչ մը կատաղի դազաններ հրազինուց շառաչմամբ և հրդեհի լուսով մտան այն սենեակն ուր կը գտնուէինք ես, դուք և օրիորդ Սապին, ինչպէս կ'ըլլայ որ օրիորդը սոս-

կալի, գուցէ իսկ մահառիթ տագնապի մը մէջ ինկած չըլլայ, ինքը որ ամենափոքր աղմուկ մը լսած ատեն կը դողար:

— Օնէզիմ, յանուն երկնից, զիս մըտիկ ըրէ:

— Եւ ի՞նչէն գիտնամ որ մեռած չէ:

— Խաղաղէ:

— Մեռած, գոչեց մոլեգին դէմքով մը, և կը պահէք ինէ: Մեռած, եթէ այնպէս ըլլար . . . ո՛հ, Աստուած իմ:

— Տղա՛ս, կը պաղատիմ:

— Հապա պարոն Քլօարէ՛ք ինչ եղաւ, եթէ աղջիկը մեռած է, ինքը որ այնքան կը սիրէ զայն. ո՛ր է, ի՞նչ ըրած կրնայ ըլլալ ասանկ թշուառութենէ մը վերջը: Ես կը պնդեմ որ այս տանը մէջ գերեզմանական լուծիւն մը կը տիրէ:

— Խե՛նդ տղայ, բայց այդ ցնորք է:

— Ո՛չ, ցնորք չէ: Աւա՛ղ, հիմայ խելքս բոլորովին գլուխս է. բոլոր վախերըս և կանխազգացումներս արթնցան, ու այս բանն մահ է ինձ, մրմնջեց Օնէզիմ՝ ուժաթափ իյնալով անկողնոյն վրայ, վասն զի իւր յուզմանն ատեն կարծես ելնել նստելու զօրութիւն զգացեր էր:

Սիւզան իւր քեռորդոյն վրայ ծռեցաւ, վերուց նորա ծանր գլուխն և հոտեր հոտոտել տուաւ անոր. քիչ քիչ անոր տըկարութիւնն փարատեցաւ և Սիւզանի հեծկլտալը լսելով՝ ըսաւ.

— Ներեցէ՛ք, ներեցէ՛ք ձեզ վշտացընելուս: Բայց գիտնայի՛ք թէ ի՞նչ անձկութեանց մէջ եմ, գիտնայի՛ք թէ ո՛րքան սոսկալի է ինձ համար մտածել թէ՛ նոյն իսկ այն օրհասական աւուր առտուն Պ. Քլօարէք անանկ մեծ երջանկութիւն մը յուսացնել տուեր էր ինձ որ, չէի կըրնար հաւատալ: Եւ հիմայ իմ յոյսերս արցունքի և մոխրի փոխարկուեցան:

— Բայց ես ի՞նչ կրնամ ընել ատոր:

— Ամէն բան ինձմէ ծածկելով՝ աղէկ ընել կը կարծէք, գիտե՛մ, աղնի՛ւ մօրաքոյրս, բայց կ'երդնում թէ կը սխալիք, և իրականութիւնն ո՛րքան ալ որ սոսկալի ըլլայ՝ այս անձկութեան չափ չի կրնար տառապեցնել զիս, երբ քնանամ՝ սոսկալի երազներ կը տեսնեմ և ընդոստ արթննալով՝ կ'իյնամ անտանելի երկիւղներու մէջ: Ո՛չ, ո՛չ, հաւատացէ՛ք թէ ասի ապրիլ չէ: Մահը հազար անգամ աւելի աղէկ է, վասն զի գոնէ ստուգութիւն մ'է:

Սիւզան՝ Օնէզիմի ևս քան զևս այլայլելէն վախնալով, և մտածելով թէ մի՛ գուցէ այդ տարակոյսներն մահաբեր արդիւնք մ'ունենան, գոչեց.

— Լա՛ւ ուրեմն, մտիկ ըրէ՛, բայց խոստացի՛ր որ քաջ ըլլաս:

— Քաջ ըլլա՛մ, ա՛հ, ես գիտէի որ մեծամեծ աղէտներ կան:

— Տեսա՛ր, ես հիմայ ի՞նչ կրնամ ըսել, գոչեց թշուառ կինը. ահա՛ բերանս բացի թէ չէ՝ սկսար յուսահատիլ:

— Ո՛հ, Աստուած իմ, գոչեց Օնէզիմ՝ սոսկմամբ. ես կ'զգայի թէ նա մեռած է:

— Ո՛չ, ողջ է, յարեց խնամածուն, հոգւոյս փրկութեանը վրայ կ'երդնում թէ ողջ է: Իրաւ է թէ շատ տառապեցաւ, բայց կեանքը վտանգի տակ չէ ալ:

— Ուրեմն վտանգի տա՛կ էր:

— Այո՛, երկու օր, բայց դեռ քիչ մը առաջ հետը խօսեցայ: Իւր վիճակը կարելի եղածին չափ գոհացուցիչ է:

— Ծնորհակա՛լ եմ, Աստուած իմ, շնորհակա՛լ եմ, ըսաւ Օնէզիմ ջերմեռանդութեամբ: Ձեզ ալ շնորհակա՛լ եմ, մօրաքոյր իմ: Ա՛հ, եթէ կարենայիք գիտնալ թէ ո՛րքան բարիք կ'ընէք ինձ և ո՛ր-

չափ հանգստութիւն կզգամ՝ երջանիկ կ'ըլլայիք :

— Ես ալ երջանիկ եմ, զաւակս :

— Պ. Քլօարէք հո՞ս է :

— Ո՛չ :

— Աղջկանը քով չէ՞ :

— Ո՛չ, տղա՛ս, ո՛չ :

— Ո՞ւր է :

— Գիտցող չկայ :

— Ո՛հ, Աստուած իմ, բայց այն աղետարեր երեկոյին . . .

— Եկաւ, և թեթեւ մ'ալ վերաւորուեցաւ :

— Անկեց վե՛րջը :

— Մէկ մ'ալ զինքը տեսնող չ'եղաւ :

— Բայց ի՞նչպէս իւր աղջկանը քով չի կեցաւ : Անհասկանալի բան, օրիորդն մեծ մտատանջութեան մէջ ըլլալու է :

— Այո՛, շատ տխուր է, պտտասխանեց խնամածուն շփոթելով :

— Հապա այն սոսկալի յարձակո՛ւմն և օրիորդ Սապինի այն ահարկու խօսքե՛րն, զոր կարծես ահեղ երազի մը մէջ էր որ լսեցի, երբ կզգայի որ արեանս հետ կեանքս ալ կ'երթար. ո՛հ, խօսեցէ՛ք, խօսեցէ՛ք, այնպիսի բաներ կան, որք խելքս կը ցնդեցնեն : Նորէն կ'ըսեմ թէ ի՞նչպէս կ'ըլլայ որ Պ. Քլօարէք իւր աղջկանը քով չի գտնուի :

— Սիրելի՛ զաւակս, չ'ուզելով է որ քու փափագիդ կը համակերպիմ, վասն զի այդ այլայլեալ վիճակիդ մէջ եթէ խընդիրդ մերժեմ, գուցէ վտանգաւոր հետեւանք մ'ունենայ :

— Այո՛, այո՛, շատ վտանգաւոր :

— Գիտեմ, բայց կը կրկնեմ թէ քաջասրտութիւն պէտք է, վասն զի հոգւոյ վէրքերն մարմնոյ վէրքերէն ծանր կ'ըլլան եւ այն խեղճ օրիորդն ու հայրը սրտեր-

նուն, հոգինուն վիրաւորուեցան գլխաւորաբար :

— Մորաքոյր, կը տեսնէք որ հանդարտ եմ. քաջասիրտ պիտի ըլլամ :

— Անշուշտ կը յիշես որ այն սոսկալի գիշերուան երեկոյին Պ. Քլօարէք, որ առանց մէկուն իմաց տալու Հավրը գացեր էր, անկեց մարդ զրկեց աղջկանը որպէս զի անհանգիստ չ'ըլլայ. օրովհետեւ կարեւոր գործով մը այն գիշերը դուրսը պիտի կենար. կը յիշես, անանկ չ'է :

— Այո՛, պատասխանեց Օնէզիմ հառաչելով : Օրիորդ Սապին կարծեց թէ իւր ամուսնութեան վերաբերեալ կանխապտտութեանց համար է, ահուսնութիւն մը, որ երազ կ'երեւնար ինձ : Աւաղ, այո՛, ասի չափազանց դեղեցիկ, չափազանց անյոյս էր, եւ ի հարկէ երազ մը պիտի ըլլար :

— Տղա՛ս, խոստացար որ քաջասիրտ ըլլաս :

— Այո՛ : Շարունակեցէ՛ք, կ'աղաչեմ :

— Կը յիշե՞ս նաև Պ. Քլօարէքի եկած իրիկուան շփոթութիւնն :

— Այո՛, թէրէզ երկու հոգի տեսեր էր իբր թէ . . .

— Խեղճ աղջիկը շատ լաւ տեսեր է եղեր : Վերջէն իմացուեցաւ թէ արդարև երկու հոգի պարտէզը մտեր են՝ չէ թէ տանը վրայ յարձակելու, այլ ճամբաները հասկնալու համար :

— Ըսել է այդ երկու հոգին ալ այն զինեալ շոկին մէջ էին :

— Մին անոնց գլուխն էր, տղա՛ս : Գեղջկուհին ներս մտնելով, Օնէզիմի և իւր մօրաբրոջը խօսակցութիւնն ընդմիջեց, և Սիւզանի նշան ըրաւ որ իրեն մօտենայ :

— Ի՞նչ կայ, հարցուց Սիւզան ցած ձայնիւ :

— Պ. Սըկօֆէն եկաւ :

— Հապա որ ո՞ր :

— Պ. Սրկօֆէն առանձին է . ուզեց ան միջապէս օրիորդին հետ խօսիլ : Թէրէզ դնաց իմաց տալու , և օրիորդն ալ ըսեր է որ Պ. Սրկօֆէնը ներս տանին :

— Պարոնին վրայ ամենեւին լուր չէ տուեր :

— Ամենեւին :

— Թէրէզին ըսէք որ օրիորդին իմաց տայ թէ , եթէ ինձի պէտք ունի , անմիջապէս կ'երթամ :

— Լա՛ւ , տիկին Ռօպէր :

Հիւանդապահը դուրս ելաւ :

Սիւզան իր քեռորդուոյն քով վերադարձաւ խօսակցութիւնը շարունակելու համար :

Ի .

— Սիրելի՛ զաւակս , ըսաւ Սիւզան՝ Օնէզիմի քով նստելով , հիմայ որ պատմելիքս հասկնալու համար անհրաժեշտ եղած այս դէպքերն յիշեցուցի քեզ , շարունակեմ :

— Այս կնոջ քեզ ըսածը գեշ լուր մը չ'էր :

— Ո՛չ , տղաս , ընդ հակառակն . այն ալ կ'ըսեմ քեզ վերջէն . բայց գա՛նք իմ պատմութեանս . կը յիշես որ Թէրէզ հըրդեհին առաջին ցուքն տեսնելով եւ տանը դրան տապարի հարուածներով տապալիլը լսելով՝ սոսկալով վազեց մեզ ըսելու թէ՛ խոտամբարը բռնկեր էր և զինեալ մարդիկ տան վրայ կը յարձկէին : Կը յիշե՞ս ամէնուս սոսկումը :

— Այո՛ : Ո՛հ , ի՛նչ գիշեր , ի՛նչ գիշեր :

— Բայց ես սոսկամբ և միանգամայն

հիացմամբ միտքս կը բերեմ այն երեկոյնը . քու ցոյց տուած աներկիւղութիւնդ :

— Ի՞նչ օգուտ ունի ատոր վրայ խօսիլ :

— Ի՞նչ օգուտ մի ունի : Սա օգուտն ունի որ հպարտութեամբ սիրտս կը խայտայ : Սիրելի և քաջ զաւակս . դեռ ականջիս կուգայ ձայնդ որ կ'ըսէր մեզ . « Ահա՛ կուգան , փախչիլն անկարելի է , ձեզ վտանգէն չ'եմ կրնար պահել , վասն զի իմ տկարութիւնս չի թողուր որ այդ վտանգը տեսնեմ , բայց գոնէ կրնամ մարմնովս պատնէշ մը կանգնիլ ձեզ » : Եւ դիպուածաւ փեղկերէն մէկուն երկաթի ձողն ձեռք առնելով՝ դէպ ի դուռը վազեցիր այն վայրկեանին որ խորտակեցին զայն և հոն առանձինն մուտքն արդիւեցիր մէկ քանի վայրկեան՝ գերբնական քաջութեամբ մը :

— Կ'աղաչեմ , հօրաքոյրս , այդ մասին այսչափը բաւ է :

— Բա՛ւ է մի՞ , մինչդեռ քու վերքը տեսած ատենս իմ միակ մխիթարութիւնս է , քու քաջութիւնդ և անձնուիրութիւնդ յիշել : Ո՛չ , ո՛չ , կուզեմ կրկնել թէ ամենէն քաջերու արիութիւնն իսկ բան մը չ'էր քուկինիդ քով : Դրանը անկիւնն ամրացած , այն երկաթի ձողն սոսկալի զէնք մ'եղաւ քու ձեռացդ մէջ և թէև կարճատեսութեամբդ չի կրցիր հարուածներդ լաւ ուղղել , բայց բոլոր մօտեցողներն ոտքիդ տակ կը փռէիր :

— Ա՛հ , այս մէկքանի վայրկեանի կռուի միջոցին օրիորդ Սապին ո՛րքան վախցաւ արդեօք : Ասանկ տեսարան մը հազար անգամ մեռնիլ է իրեն համար , որ այնքան երկչուտ է :

— Կը սխալիս բարեկամս :

— Ի՞նչ կ'ըսէք :

— Այո՛ , իւր անվախութիւնն անխնայի էր , և դեռ ցայսօր կը մտածեմ թէ

ի՞նչ հրաշքով կրցաւ այնքան ատեն դիմանալ :

— Օրիորդ Օսպի՞ն :

— Հաւատա՛ որ չըլլալիք բան էր . մինչդեռ դու արուժեամբ կը պաշտպանէիր մեր պատսպարանն , այն խեղճ ու սիրուն աղջիկը (կարծես դեռ աչքիս դէմն է) ոտքի վրայ կանգնած էր : Իւր առաջին խօսքն սա եղաւ . — Շնորհակա՛լ եմ , Աստուած իմ , հայրս հոս չէ , ես առանձին պիտի մեռնիմ :

— Ո՛հ , ի՛նչ մեծ և ազնիւ սիրտ :

— Ապա , ապահով , գրեթէ իսկ պարծենկոտ կերպիւ քեզ նայելով , ըսաւ ինձ . « Հիմայ կը հաւատա՛ս անոր քաջութեանն : Մեզի համար պիտի մեռնի . բայց դոնէ մենք ալ իրեն հետ պիտի մեռնինք » :

— Այդքա՛ն արուժիւն , ըսաւ Օնէզիմ՝ ձեռքերը թաց աչքերուն տանելով , այդքա՛ն քաջութիւն իր վրայ . կը շուարիմ :

— Թերեւս այս երկշտ սրտերը , որք սովորաբար չնչին բաներէ կ'երկնչին , մեծ վտանգներու մէջ կ'արիանան : Վերջապէս սա ստոյգ է թէ Սապին դիւցազնուհի մ'էր գողցես . տեսաւ քու իյնալդ : Երբ վերջապէս բազմութեան չդիմանալով և գրեթէ մահացու հարուածով մը զարնուելով՝ նուազած ինկար իր դրանը սեմին վրայ , այն աւաղակաց չորսն , որոց գլխաւորն դեղնած մարդ մ'էր երկայնահասակ և կարմիր մազերով ու մէկ թեւն կապեր էր , այդ անձերէն չորսը սենեակը նետուեցան : — « Օնէզիմ մեզի համար մեռաւ : Հիմայ կարգը մերն է : Մընաս բարո՛վ , Սիւզան . » ըսաւ ինձ Սապին զիս գրկացը մէջ սեղմելով և ցած ձայնիւ մըմնջելով — « Մնաս բարո՛վ , հայր իմ , մնաս բարո՛վ : »

— Մինչեւ վերջը քա՛ջ և սիրալիր , ըսաւ Օնէզիմ աչքերը սրբելով :

— Ես իրեն չափ արի չէի : Իրանը սեմին վրայ տեսայ որ ինկար արիւնաթաթաւ . այս սպանչաց գլխաւորին ոտքը ինկայ գոչելով , « Շնորհ , շնորհ : » Ձեռքը երկնցուց իւր մարդոցը որ կենան և սպառնալի ձայնով մը ըսաւ ինձ . — Անտի-բո՛ւ նաւապետն ո՛ւր է :

— Անտի-բո՛ւ նաւատե՛տը , յարեց Օնէզիմ՝ ապշութեամբ Սիւզանի երեսը նայելով , այն ծովահէնը չէ մի , որու փախուստն կը կարդայինք քանի մ'որ առաջ : Ինչո՞ւ այդ մարդն կը հարցնէին հոս : Բաց յաստի այն մարդիկ անկլիացի էին , հիմայ կը յիշեմ :

— Հիմայ կ'ըսեմ քեզ այս մասին ինչ որ գիտեմ , տղա՛ս : Արդ՝ այդ թեք կապած մարդն հարցուց ինձ թէ Անտի-բո՛ւ նաւապետն ո՛ւր է : Ես այն մարդուն ոտքը նետուեցայ և գոչեցի . « Այս տունը Պ. Բլօարէքինն է , պարո՛ն , և ինքը հոս չէ : Ահա՛ իւր աղջիկն . գթացէ՛ք իրեն :

« Իւր աղջիկը , ըսաւ այս մարդն կատաղորէն խնդալով . իւր աղջիկն է , լա՛ւ : Հապա դո՛ւ , ըսաւ ինձ , դու ալ կի՞նն ես :

« — Ո՛չ , պարո՛ն , աղջկանը խնամածուն եմ :

« — Վա՛յ , իւր աղջիկն է՛ » — յարեց նորէն :

— Եւ մօտեցաւ խեղճ օրիորդին , որու քաջասրտութիւնը կարծես վտանգին հետ կ'աւելնար : Երկու թեւն սրբուհեոյ մը պէս կուրծքին վրայ ծալած , ակնալեռ կը նայէր այն հրոսակաց գլխաւորին երեսը :

« — Հայրդ ո՛ւր է , ըսաւ այն աւաղակը :

« — Փա՛ռք Աստուծոյ , հոսկից հեռու

է, պատասխանեց քաջաբար խեղճ աղջիկը:

« — Հայրդ երեկ եկաւ. դեռ քիչ մը առաջ այս տան մէջ էր: Ո՛ւր է, ո՛ւր է»

— Գոչեց այն թշուառականն սպառնալեօք:

Սապին լուռ կեցեր էր. մարդը սուկալի ժպտով մը յարեց.

« — Հայրդ ձեռքս չ'անցաւ, բայց եթէ քեզ տանիմ՝ այն ալ ձեռք կը ձգեմ:

Զքեզ անկլիա պիտի տանիմ և անկից կը գրես իրեն: Ուր ըլլալդ կ'ըսես իրեն. այն ատեն նա ամեն բան կ'անարդէ քեզ ազատելու համար: Յոյսս այս է և ձեռք պիտի անցնեմ: Օ՛ն, հետս եկո՛ւր:

« — Հետդ գա՛մ, գոչեց Սապին, կը մեռնիմ չեմ գար:

« — Քեզ չեմ մեռցնէր, կամայ ալամայ պիտի գաս, ընտրէ՛:

« — Երբե՛ք. » — գոչեց խեղճ աղջիկը:

— Այն ատեն աւազակապետը իր մարդոցը դարձաւ, քանի մը խօսք ըսաւ անոնց և այն հորոսակներն Սապինի վրայ յարձկեցան: Ուզեցի պաշտպանել զայն, զիս գետին ձգեցին, և հակառակ իւր արտասուացն ու ճիչերուն, կապեցին զայն:

— Սոսկալի՛ բան: Բայց Պ. Քլօարէքի դէմ այս մարդոց կատաղի ատելութեան պատճառն ի՞նչ էր:

— Դեռ մտիկ ըրէ՛: Սապինը նոր կապեր էին, երբ հեռուէն հրազենի պայթիւններ և սոսկալի աղաղակներ լսուեցաւ: Դրսէն երկու հոգի ներս եկան, մէկ երկու խօսք ըսին, իրենց գլխաւորին, որ անոնց հետ սրահէն դուրս նետուեցաւ. միայն Սապինը կապողները մնացին: Այն ատեն միայն կրցի ձեզ մօտենալ, զաւա՛կըս: Քեզ վերցուցի:

Եւ Սիւզան, այս բաներն յիշած ատեն

դողալով, իւր քեռորդոյն անկողնին վրայ ծռեցաւ՝ զայն բազկացը մէջ սեղմելու համար:

— Խեղճ բարեկա՛մս, յարեց, նախ զքեզ մեռած կարծեցի. ուստի Սապինը մոռնալով՝ քու վրագ կ'ողբայի և յոյս չ'ունէի քեզ ի կեանս դարձնելու, երբ յանկարծ . . .

Եւ Սիւզան, այլայլութեանն չդիմանալով՝ խօսքն ընդմիջեց:

— Ո՛հ, խօսեցէ՛ք, խօսեցէ՛ք:

— Ո՛հ, երբե՛ք, երբե՛ք, չպիտի մոռնամ այն տեսարանը: Սրահին խորը այն թշուառականաց երկուքն կը ջանային Սապինը տանելու, հակառակ իւր սրտակիզիք աղաղակներուն: Միւս երկու մարդիկն, դրսի աղմուկին շատնալէն վախ զգալով, դէպ ի դուռը կը վազէին, երբ երկուքն ալ տապարի հարուածներով զարնուելով՝ տախտակամածին վրայ փրուուեցան: Սապինը քաշողներուն մին ալ նոյն վիճակն ունեցաւ:

— Բայց ո՞վ զարկեր էր զանոնք:

— Ո՞վ, յարեց Սիւզան դողալով եւ ձայնը յաւելցնելով. տարօրինակ հագուստներով մարդ մը. լայնեզր գլխարկ մը դրեր էր և երկար սեւ բաճկոն մը հագեր էր: Տապար ի ձեռին սրահը նետուեցաւ քանի մը նաւաստեաց հետ:

— Ո՛հ աստուած իմ, գոչեց Օնէզիմ՝ ուզելով յիշատակներն ամփոփել. բայց կարծեմ թէ օրիորդ Սապին իւր սոսկման վայրկեաններուն երբեմն այդպէս հագուած մարդ մը կը յիշեր և կ'ըսէր թէ նա սպաններ էր իւր մայրը:

— Աւա՛ղ, աւա՛ղ, ըսաւ Սիւզան լալով, այդ յիշատակն դեռ իւր միտքն էր:

— Բայց ո՞վ էր այդ մարդը, որ այդպէս հագուած, օրիորդ Սապինի օգնութեան կուգար:

— Այդ մարդն , պատասխանեց Սիւզան , Անտի-րոյ ծովահէնն էր , այդ մարդը Պ. Քլօարէքն էր :

— Ի՛նքը , դոչեց Օնէզիմ՝ անկողնոյն վրայ կանգնելով : Ի՛նչ գաղտնիք . Ի՛նքըն , Պ. Քլօարէք : Այո՛ , ձեռքը տապար մը բռներ էր , հագուստներն արիւնաթաթաւ էին , դէմքը . . . ո՛հ , երբեք այնպիսի սոսկալի և ահարկու դէմք չեմ տեսած : Ներս մտաւ . Սապին առջի բերան նորա երեսը չի տեսնելով՝ սոսկման ճիչ մ'արձկեց : Սե- ճարդը՝ , սե- ճարդը՝ : Պ. Քլօարէք դէպի իւր աղջիկը վիտեց . օրիորդը ահիւ ետ քաշուեցաւ և դոչեց . — Հայրս , ա՛հ , մայրս սպաննողը դուք էիք : — Եւ խեղճ աղջիկը նուազած ինկաւ :

— Այո՛ , այո՛ , այդ « Հայրս , ա՛հ , մայրս սպաննողը դուք էիք , » բառերն երազի պէս լսեցի : Ա՛հ , սոսկալի՛ բան : Ի՛նչ ահարկու գաղտնիք . ապագային համար ո՛րքան արտասուք և յուսահատութիւն պահուած են : Այն գորովագութ հայրը , այն սիրալիր աղջիկն յաւիտենական անդունդով մ'իրարմէ զատուած : Ո՛հ Աստուած իմ , իրաւունք ունիք . այսպիսի գաղտնիք մը երեւան ելնելն իմանալու համար քաջասրտութիւն պէտք է : Բայց օրիորդ Սապին ի՛նչ եղաւ վերջէն :

— Արդէն ըսի թէ խեղճ աղջիկը երկու օր ծանր վիճակի մէջ էր :

— Իսկ Պ. Քլօարէք :

— Աւա՛ղ , անոր վրայ տեղեկութիւն չկայ . կ'ըսեն թէ լսելով որ աղջիկը զինքը կը յանդիմանէ մօրը մահուանն համար , մեծ աղաղակ մ'արձկեր է , խենթի մը պէս փախեր է և մէկ մ'ալ զինքը տեսնող չկայ :

— Ո՛հ , ո՛րքան աղէտք , Աստուած իմ , ո՛րքան աղէտք : Բայց Պ. Քլօարէք ի՛նչպէս իմացեր է այս յարձակումն և այդ անկլիացիք ի՛նչ ատելութիւն ունէին անոր դէմ :

— Կ'ըսուի թէ արդ ծովեզերքին վրայ ելեր էին երկու երեք տեղ , քանի մը մե՛նաւոր աւաններ ասպատակեր են և ապա , իրենց նաւն երթալով , կը յուսային ձեռք ձգել Պ. Քլօարէքը որ , Անտի-րոյ նաւանուամբ , ամենամեծ չարիք կը հասցընէ անկլիական նաւորդաց :

— Պ. Քլօարէք ծովահէն : Բայց ի՛նչպէս ընդգրկեր է այս վտանգներու և մաքառմանց ասպարէզը , ի՛նչու այս բանն կը ծածկէր աղջիկէն :

— Ես ալ չեմ գիտեր , տղաս , այն սոսկալի իրիկուրնէ ի վեր չ'երեւցաւ : Իւր նաւուն նաւաստիք , որք իրեն հետ եկեր էին և որոց մէջ էր նաեւ Սըկօֆէն , ողջ մնացող անկլիացիները գերի տարին : Սոսկումն քիչ մը փարատելով՝ սկսայ Սապինն ու քեզ խնամել , մինչդեռ Սըկօֆէն և քանի մը նաւաստիք հրդեհը կը մարէին և կը ջանային այս աղետից ակներեւ հետքերն աներեւութացնել :

— Սըկօֆէն ալ լուր չ'ունի Պ. Քլօարէքի վրայ :

— Չեմ գիտեր , բայց քիչ մ'առաջ եկան ըսին ինձ թէ Սըկօֆէն , որ երեկ ատու մեկներ էր , եկաւ . այս միջոցին օրիորդին հետ կը խօսակցի : Կարելի է հօրը վրայ լուր բերաւ իրեն :

— Աստուած տայ : Բայց եթէ Պ. Քլօարէք ողջ ալ մնայ , այս գաղտնիքն ո՛րքան ցաւոց և արտասուաց յաւիտենական աղբիւր պիտի ըլլայ իր և աղջկանն միջեւ :

— Ի՛նչ ըսեմ , տղա՛ս : Ապագայն ո՛ր կողմէն ալ որ դիտեմ , միշտ մթին կ'երեւնայ ինձ :

— Ա՛հ , իրաւունք ունէիք , մօրաքոյր , քաջասրտութիւն , քաջասրտութիւն : Ո՛հ , այո՛ , աւելի քաջութիւն պէտք է մեր սիրած անձանց տառապանքը տեսնելու համար :

Հիւանդապահը այս վայրկենիս ներս մտնելով Սիւզանի ըսաւ :

— Տիկին Ռօպէր , Պ. Սըկօֆէն կուզէ ձեզ և Պ. Օնէզիմի հետ խօսիլ , եթէ կըրնայ տեսնուիլ իրեն հետ :

— Անշուշտ , պատասխանեց աշխուժիլ երիտասարդը՝ անկողնոյն վրայ նստելով :

Քիչ վերջը ծերունի ծառայն սենեակ մտաւ :

Սա այլ եւս չէր այն դալուկ , երկար եւ ծիծաղելի դէմքը , այն հեգնող կերպարանքը , որ Սիւզանի կատակաց առիթն էր շարունակ . ազնիւ մարդուն դէմքը խիստ ախուր էր . իւր փոքր աչքն արտասուքներով կարմրեր էր և թաց հետքեր կը տեսնուէին նաեւ իւր սեւ կպտակին վրայ , վասն զի իւր տիրոջը քով պատերազմելով կորուսած աչքը թէեւ լոյսէ զուրկ էր , բայց արտասուքներէ զուրկ չ'էր :

Տիկին Ռօպէր սովորականին պէս չ'ընդունեցաւ , այսինքն հեգնութեամբ , այլ մերամաղձութեամբ դիմաւորեց զայն :

— Է՛յ , խեղճ Սըկօֆէն , ըսաւ անոր , ի՞նչ լուր , լա՛ւ թէ գէ՛շ :

— Աղէկ մը չ'եմ գիտեր , սիրելիս Սիւզան , ըսաւ թնդանօթապետն հառաչելով , այդ բանն ասկից կախումն ունի :

Եւ գրպանէն հանեց կնքուած պահարան մը :

— Ատ ի՞նչ է , հարցուց Սիւզան :

— Պ. Քլօարէքէն նամակ մը :

— Փա՛նք Աստուծոյ , ըսել է ողջ է , գոչեց Օնէզիմ :

— Առողջութի՞ւնը , հարցուց Սիւզան :

— Է՛հ , աղջկէն հեռու և այն դէպքերէն վերջն՝ պարոնը առանց հոգիի մարմին մ'է դարձեր , պատասխանեց Սըկօֆէն : Վերջապէս իւր յետին յոյսն այս նամակին վրայ է , և այս նամակն ձեզ ուղղեալ է , Պ. Օնէզիմ :

— Ինձի՞ :

— Ահա՛ ըսեմ ձեզ թէ ի՛նչ պէտք էք ընել : Բայց նախ սա ըսէք թէ կրնա՞ք ոտքի ելլել :

— Այո՛ , գոչեց երիտասարդը շարժում մ'ընելով , ո՛հ , այո՛ :

— Իսկ ես կ'ըսեմ թէ ո՛չ , Օնէզիմ , յարեց Սիւզան , ատի սոսկալի անխոհեմութիւն մ'է :

— Ներեցէ՛ք , սիրելիս Սիւզան , ըսաւ Սըկօֆէն , ես ալ ձեզի շփի թշնամի եմ անխոհեմութեանց , բայց (հիմայ կրնամ խոստովանիլ ձեզ) որովհետեւ տասներկու տարիէ ի վեր ամէն տեսակ վէրքեր տեսեր եմ , քիչ շատ փորձառութիւն ունիմ այս մասին :

— Աւա՛ղ , այո՛ , խեղճ ծերուկս , և ե՛ս որ ձեզ կը ծաղրէի ձեր վէրքերուն համար , որք ձեր քաջասրտութիւնն և անձնուիրութիւնն կ'ապացուցանեն :

Եւ Սիւզան սիրտը շարժելով միտքը կը բերէր թէ թնդանօթապետն ի՛նչ գաղտնապահութեամբ երկար ատեն տոկացեր էր այն հեգնութեանց , զորս կը տեղարդիւն իւր կարծեցեալ ձախաւելութեանն համար , որով երբեմն երկու մատը , երբեմն ալ մէկ աչքը կը կորսնցնէր :

— Է՛յ , Սիւզան , ըսաւ , մի՛ վախնաք , ձեր քեւորդւոյն շնչերակներն կը նայիմ հիմայ և անոր քօքախոռոչներն կը համբեմ , ինչպէս որ կ'ըսէր մեր վերաբուժապետը , և եթէ այս քաջ տղան ոտք ելլելու և ժամ մը սրահը իջնելու վիճակին մէջ գտնեմ , ուր կը սպասէ օրիորդ Սապին . . . : Ա՛հ , ո՛չ , ո՛չ , կեցէ՛ք , յարեց Սըկօֆէն՝ հուժկու ձեռօք կեցնելով զՕնէզիմ՝ որ , Սապինի անունը լսած ատեն , կ'ուզէր անկողնէն դուրս ցատկել . — Ներեցէ՛ք , դեռ իմ բժշկական քննութիւնս չ'ըրի . կ'աղաչեմ որ հանդարտ կենաք , սպա թէ ոչ նա-

մակը կ'առնեմ կը տանիմ և դուռը վրանուդ կը կղպեմ :

Օնէզիմ հառաչեց , լուեց և անհամբերութեամբ տոկած Սըկօֆէնի ուշադիր քըննութեանն , որ կանթեղն անկողնոյն մօտեցընել տալով՝ ապահով եղաւ թէ արդարեւ երիտասարդն կրնար ժամ մը անկողնէն ելնել :

— Բայց , Սըկօֆէն , ըսաւ տիկին Ռօպէր , ապահով էք թէ վտանգ մը չկայ :

— Այո՛ , մի՛ վախնաք :

— Ի՞նչու համար այս տեսակցութիւնն չէք յետաձգեր :

— Ի՞նչու , յարեց թնդանօթապետն այլայլեալ ձայնիւ , ա՛հ , վասն զի ասկից քիչ հեռուն մարդ մը կայ , որ ժամերը և վայրկեանները կը համրէ :

— Ի՞նչ կ'ըսէք , գոչեց Սիւզան , Պ. Քլօարէքի վրայ կը խօսիք :

— Կ'ըսէի թէ , յարեց Սըկօֆէն առանց այս հարցման պատասխանելու , կ'ըսէի թէ մարդ մը կայ , որ կենաց կամ մահուան կը սպասէ :

— Մե՛ծդ Աստուած , գոչեց Օնէզիմ , կենաց կամ մահուա՛ն :

— Կամ թէ յուսոյ կամ անյուսութեան , յարեց Սըկօֆէն՝ ծանր ձայնիւ , և այդ յոյսն կամ անյուսութիւնը այս նամակին ընթերցումէն կախեալ է . ասոր համար , Սիւզան , կը խնդրեմ ձեր քեռորդիէն որ ամբողջ ոյժը ամփոփէ սրահ իջնելու համար , վասն զի , յարեց Սըկօֆէն եւս քան զեւս յուզեալ ձայնիւ , մինչեւ ժամ մը Պ. Իվօնի ճակատագիրն պիտի վճռուի :

— Այս նամակին ընթերցմա՞նն համեմատ , հարցուց Սիւզան զարմանօք և անձկութեամբ :

— Այո՛ , պատասխանեց Սըկօֆէն սարսրաւով , և այս նամակն Պ. Օնէզիմ պիտի կարդայ օրիորդին , ձեր և իմ ներկա-

յութեանն , վասն զի Պ. Իվօն յանձնարարեց ինձ հարկ եղած բացատրութիւններն տալ : Օ՛ն , Պ. Օնէզիմ , հանդարտեցէ՛ք և քաջ եղիք . օրիորդին իմաց տուի . եղած է եղած է և բարեւէ՛ք : Սիւզա՛ն , դուք գացէք օրիորդին քով մեզ սպասեցէք . ես ձեր քեռորդւոյն օգնեմ որ հագուի :

Տասը վայրկեան վերջը Օնէզիմ , որ շափազանց տկար էր , Սըկօֆէնի թեւին կրթընած՝ սրահ կը մտնէր , ուր կը սպասէր իրեն Սապին :

Ի Ա .

Երբ Օնէզիմ , Սըկօֆէնի և Սիւզանի հետ սրահը մտաւ , տեսաւ որ Սապին դեղնած , ոյժասպառ , բայց հանդիսաբար իրեն կը սպասէ . իւր տկարութեանն պատճառաւ ստիպուեր էր երկար աթոռի մը վրայ ընկողմանիլ :

— Պ. Օնէզիմ , ըսաւ , հաճեցէ՛ք նըստիլ , դուք ալ , սիրելի՛ս Սիւզան , դուք եւս Սըկօֆէն :

Այս տեսարանին դերակատարք լուռու տխուր նստան :

— Այս խօսակցութեան չի սկսած , ըսաւ Սապին դառն ժպտով մը , կ'ուզեմ իմացնել ձեզ թէ ես շատ փոխուեցայ : Ալ չեմ զգար այն ակամայ , անտեղի և անըստոյգ վախերն , որք ստէպ կը պաշարէին զիս : Սոսկալի իրականութիւն մը բուժեց զիս : Անոր առջեւ ցնդեցան բոլոր այն ցնորքներն , որք տղայութենէս ի վեր կը հալածէին զիս : Ասի ձեզ ըսելուս պատճառն այն է , բարեկամներս , որ ինձմէ բնաւ չի քաշուիք և ճշմարտութիւնն ըսէք ինձ , որքան ալ որ ահարկու լինի , Հիմայ ամէն բան լսելու պատրաստ եմ : Բառ-

մ' ալ : Կ' երդմնցնեմ զձեզ , Սիւզա'ն և ձեզ , Սրկօֆէ'ն , յանուն այն սիրոյն զոր կզգաք իմ և . . . ընտանեացս վրայ , որ անկեղծօրէն պատասխանէք բոլոր հարցմանցս . կը խոստանամ ք :

— Կը խոստանամ , ըսաւ , Սիւզան :

— Կը խոստանամ , ըսաւ , Սրկօֆէն :

Ապա պահ մը լռութիւն տիրեց :

Խնամածուն , ծերունի ծառայն և մա : նաւանդ Օնէզիմ կը զարմանային Սապինի հաստատամիտ խօսուածքին . ամէն ինչ գուշակել կուտար թէ , այս խօսակցութենէն վերջը ինչ որ ալ որոշէ , այդ որոշումն անդրդուելի պիտի լինի :

Նորատի աղջիկն յարեց :

— Սիւզա'ն , դուք իմ ծնիլս տեսաք , ձեր անձնութեամբն ու խնամօքն մօրս մտերմութեան եղաք . ուստի յանուն այդ մտերմութեան կ'երդուրնցնեմ ձեզ ըսել թէ իմ մանկութեան յիշատակներս զիս կը խաբե'ն մի , թէ իմ հայրս , տասներկու տարի առաջ՝ երեկ չ'է առջի աւուր պէս հագուած . . . մօրս մահուանն պատճառ եղա՞ւ մի :

— Աւա՛ղ , օրիորդ :

— Յանուն մօրս սուրբ և օրհնեալ յիշատակին , Սիւզա'ն , ճշմարտութիւնն ըսէք ինձ :

— Ճշմարտութիւնը սա է որ , օրիորդ , յարեց խնամածուն դողդոջուն ձայնիւ , ճշմարտութիւնը սա է որ տիկինին և պարոնին միջեւ բաւական բուռն դէպք մը պատահեցաւ , որմէ վերջը մայրերնիդ մեռաւ . բայց . . . :

— Բա՛ւ է , սիրելիս Սիւզա'ն , ըսաւ Սապին նորա խօսքն ընդմիջելով :

Եւ ձեռքը հրակէզ ճակտին դնելով՝ պահ մը լռու մնաց :

Տխուր լռութիւն , զոր ոչ ոք համարձակեցաւ խզել :

Նորատի աղջիկը շարունակեց :

— Սրկօֆէ'ն , դուք իմ պապուս ծառայն էիք , հօրս ծնիլն տեսաք և ամէն ատեն ու ամէն պարագայի մէջ կուրօրէն անձնուէր գտնուեցաք իրեն : Ի՞րաւ է որ հայրս , փոխանակ վաճառականութիւն ընելու , ինչպէս որ կ'ըսէր , ծովահէն էր և արշաւանքներ կ'ընէր Անտի-Բի Նասպի անուամբ :

— Այո՛ , օրիորդ , իրաւ է , պատասխանեց Սրկօֆէն հառաչելով :

Վերստին պահ մը լռութենէ վերջը՝ Սապին շարունակեց :

— Պարո'ն Օնէզիմ , պարտաւոր եմ իմ որոշումս իմացնել ձեզ : Աւելի բարեբաստիկ ժամանակաց մէջ մեզ համար ամուսնութեան դիտաւորութիւններ յղացուեցան . բայց այս դէպքերէն և իմացածներնուդ վերջը յուսամ թէ չպիտի զարմանաք , եթէ ըսեմ թէ կեանքս այլ եւս այս աշխարհի չպիտի պատկանի :

— Աստուած իմ , օրիորդ , գոչեց Օնէզիմ , ի՛նչ կ'ըսէք :

— Արոշեցի վանք մը քաշուիլ և կեանքըս հոն վերջացնել :

Օնէզիմ ձայն չի հանեց , գլուխը կուրծքին վրայ ծռեց , արցունքներն կը խեղդէին զինքը :

— Օրիորդ , ո՛չ , ո՛չ , ադ անկարելի է , գոչեց Սիւզան լալով . ո՛չ , այդպէս կենդանւոյն գերեզման՝ մտնե՛լ . . . :

— Արոշումս եղած է , պատասխանեց Սապին անվրդով ձայնիւ , բայց եթէ վանքըն չափազանց տխուր չ'երեւնար ձեզ , Սիւզան , երջանիկ պիտի ըլլամ եթէ դուք ալ հետս ըլլաք :

— Ես երբեք չ'եմ կրնար ձենէ զառուիլ , օրիորդ , դուք արդէն գիտէք . բայց դուք չպիտի . . . :

— Սիւզա'ն , ըսաւ Սապին՝ խնամա-

ծուին խօսքն ընդմիջելով, երկու օրէ ի վեր խորհեցայ ընելիք որոշմանս վրայ, տեսայ որ ուրիշ ճամբայ չկայ. ուստի նորէն կ'ըսեմ, որոշումն անդրդուելի է:

— Հապա հայրերնիդ, օրիորդ, ըսաւ Սըկօֆէն, իրմէն առյաւէտ չի բաժնուած, և Սըկօֆէն շեշտեց այս «այս» բառն, գոնէ անգամ մը պիտի տեսնէք զինքը:

Սապին բուռն և ցաւադին ոգորում մ'ունեցաւ սրտին մէջ. ապա այլայլեալ ձայնիւ պատասխանեց:

— Ո՛չ:

— Ուրեմն, յարեց Սըկօֆէն, ուրեմն այսօրուրնէ դուք մեռած էք իրեն համար, նա մեռած է ձեզ համար, այնպէ՞ս է:

Սապին նորէն բուռն ճիգ մ'ըրաւ և յարեց:

— Հայրս այն ատեն միայն պիտի տեսնեմ, երբ ցմիշտ միանանք մօրս:

— Ա՛հ, օրիորդ, մրմնջեց ծերուկ ըսպասաւորն յուսահատ, այդ անգթութիւնըն . . .:

— Ո՛չ, ասի անգթութիւն չէ, պատասխանեց նորատի աղջիկը, այլ ըրածս որդիական պարտականութիւնն մ'է. զաւակ մը իր հօրը մօտեցած ատեն՝ պէտք է սիրտը սիրով և յարգանօք լի ըլլայ, պէտք է զայն աշխարհի վրայ ամէն բանէ աւելի սիրէ ու յարգէ. մինչեւ հիմայ այսպէս էր հօրս ու իմ մէջս: Այս մտածումն իրմէն հեռու անցընելիք կենացս մխիթարութիւն պիտի ըլլայ:

— Ա՛հ, օրիորդ, եթէ գիտնայիք իւր վիշտը . . .:

— Սըկօֆէն, ըսաւ Սապին իւր այլայլութիւնն զսպելով, Սիւզանի ըսածս ձեզ ալ կը կրկնեմ. երկու օրէ ի վեր մրտածեցի ընելիք որոշմանս, ուստի այդ որոշումն անդառնալի է:

Սապինի այս խօսքերուն յաջորդեց տը-

խուր և յուսահատական լռութիւն մը: Քանի մը վայրկեան՝ հեծկլտուքներ միայն լսուեցան:

Ամենէն առաջ Սըկօֆէն սկսաւ խօսիլ և ըսաւ Սապինի:

— Գոնէ բարեհաճեցէք Պ. Քլօարէքի սա նամակին ընթերցումն մտիկ ընել, օրիորդ: Ձեռնէ սպասած վերջին բանն այս է, վասն զի կը գուշակէր թէ դուք իրմէ զգուանք պիտի զգայիք:

— Չգուանք, գոչեց Սապին, մահացու անձկութեամբ:

Ապա, ինքզինքն զսպելով՝ յարեց:

— Ճակատագիրն ըրաւ ամէն բան:

— Վերջապէս, ըսաւ ծերուկ ծառայն հառաչելով, միեւնոյն բանն է: Պ. Քլօարէք այլ եւս զձեզ չպիտի տեսնէ, գոնէ հաճեցէ՞ք Պ. Օնէզիմի յանձնած նամակիս ընթերցումն մտիկ ընել:

— Սըդէն ըսի ձեզ թէ, Սըկօֆէն, հօրըս այս կամքը կատարելն պարտականութիւն մ'է ինձ համար: Պ. Օնէզիմ, կարգացէք:

Երիտասարդը բացաւ Սըկօֆէնի իրեն յանձնած պահարանը:

Քլօարէքի իւր աղջկանը գրած նամակին հետ կար հետեւեալ տոմսն:

« Կաղաչեմ որ ներփակեալ նամակը կարգաք աղջկանս, սիրելիս Օնէզիմ, կուզեմ սիրոյ և համարման այս վերջին փորձը տալ ձեզ:

« Ո՛ւր էր թէ յուսահատ հօր մը գրած այս անկեղծ պատմութիւնն մտերիմ ձայնէ մը կարգացուելով՝ իւր աղջկանը սրտին ազդէր: »

Չերդ

Ի. ՔԼՕԱՐԷՔ

Օնէզիմ այս տոմսն կարդալով Սապինի, հարցուց թէ կրնա՞յ միւս նամակին ընթերցումն սկսիլ:

Նորատի աղջիկն հաստատական նշան մ'ըրաւ գլխովն :

Երիտասարդը հետեւեալը կարդաց :

ԱՂՋԿԱՆՍ

« Ճակարակներն այսպէս կ'ուզէ , պէտք է առյաւէտ բաժնուիմ քենէ , զաւակս , վասն զի հիմայ ա՛լ իմ ներկայութիւնս անտանելի է քեզ :

« Անակնկալ դէպք մը երեւան հանեց քեզ այն սոսկալի դաղտնիքը :

« Այո՛ , այն տարօրինակ հազուստներով մարդն , որ յիշատակիդ մէջ տողորուած է իբրեւ մօրդ սպաննիչը , ես էի :

« Այն ծովահէնն , որու արկածներն այնքան սոսկում կը պատճառէին քեզ , ես էի :

« Մայրդ յղի էր , տաք վէճ մ'ունեցանք , և կ'երգնում թէ մեր առաջին վէճըն էր այս . բարկացայ և բարկութիւնս այնքան ահարկու եղաւ որ , թշուառ մայրրդ , այն վտանգաւոր վիճակին մէջ , սոսկումէն մեռաւ :

« Իմ ոճիրս կրկին եղաւ . մօրդ մահուանն պատճառ եղած սոսկումն դու ալ զգացիր , աղջիկս : Տղայութեանդ այդ ցաւագին տպաւորութիւնն առողջութեանդ և ամբողջ կեանքիդ վրայ ազդեցութիւն ունեցաւ :

« Ահա՛ իմ ոճիրս այս եղաւ :

« Այս ժամուս որ պէտք է առյաւէտ բաժնուիմ քենէ , հարկ է ըսեմ նաեւ թէ այդ ոճիրն ի՛նչպէս քաւեցի :

« Երբ տեսայ որ դու որք ձագիր , ինքնիրենս մտածեցի թէ ի՛նչ պիտի ըլլայիր :

« Մօրդ ու իմ ունեցած դոյզն ինչ անձնական հարստութիւնն գրեթէ ամբողջապէս կորսուեր էր այլ և այլ ձախորդութեանց և դատերու պատճառաւ . իմ դատաւորական պաշտօնս , որ գլխաւոր

ապաւէնս էր , ձեռքէս առին , վասն զի իմ բարկութիւնս մեծամեծ գայթակղութեանց առիթ եղեր էր :

« Ունեցած քիչ մը բանս դրամի վերածեցի , որն որ գրեթէ 6,000 ֆռանք բռնեց :

« Սիւզան Ռօպէր սնուցեր էր զքեզ : Այս ազնիւ կինն իւր ձիրքերովն ու անձնուիրութեամբն մօրդ համարմանն ու սիրոյն արժանացած էր : Ուստի Սիւզանին ըսի .

« — Ահա՛ հինգ հազար ֆռանք , առի հինգ տարի կը բաւէ աղջկանս ու ձեր ապրուստին , թէեւ չափաւոր կերպիւ . աղջիկս ձեզ կը յանձնեմ , եթէ հինգ տարի վերջն երեւան չ'ենեմ , սա ձգած նամակս իր հասցէին հասուցէք :

« Այդ նամակն , աղջիկս , ուղղեալ էր Ֆռանսայի մեծ և հին ընտանիքներէն անձի մը , որ Ալմանեա քաջուած էր : Յեղափոխութեան ատեն ես այդ մարդուն կեանքն ազատեր եմ : Ապահով էի թէ այս մարդն կամ իւր ընտանիքն , որ շատ հարուստ էր , իբր որդեգիր պիտի ընդունէր զքեզ : Բայց կ'ուզէի որ գթութեան դառն հացը այն ատեն միայն ընդունիս , երբ ա՛լ ամէն յոյս կորսուէր :

« Այս պատրաստութիւններն տեսնելով՝ բունիդ մէջ վերջին անգամ մ'ալ գրքկեցի զքեզ , սիրելի՛ զաւակս , ճամբայ ելայ , հետս 1000 ֆռանքէն ուրիշ ստակ չ'ունենալով :

« Սրկօֆէն , այն հաւատարիմ սպասաւորն , ուզեց իմ բաղդիս մասնակցիլ . ուստի ետեւէս եկաւ :

« Երթալէս քանի մ'օր առաջ՝ տխրօրէն մտածեցի անցելոյն և ապագային վրայ :

« Անաչառութեամբ հարցաքններ և դատեր էի ինքզինքս :

« Իմ աղբտիցս և ոճրագործութեանս

պատճառաւը բնաւորութեանս կատաղութիւնն էր : ինչ որ հակառակ կուգար իմ զգացմանցս կամ համոզմանցս , ինչ որ արգելք կ'ըլլար իմ կամացս , արիւնս կ'եռացընէր , զիս կը բորբոքէր և ոյժերու այս բորբոքումն կատաղութեամբ և բռնութեամբ միայն կը ցրուէր :

« Վերջապէս իմ գլխաւոր մոլութիւնս ԲԱՐԿՈՒԹԻՒՆՆ էր :

« Ուստի այսպէս ինքզինքս քննելով յիշեցի թէ բարկացած ատենս բարոյական և ֆիզիքական անհաւատալի ոյժ մը կուգար վրաս :

« Շատ հեղ անիրաւ բաներու և հարրատահարութեանց կատղելով , իմ Բարկութեան մէջ գրեթէ գերբնական ոյժ մը կը գտնէի տկարները պաշտպանելու և հարրատահարիչներն պատժելու համար . այսպէս օր մը առանձինն յաղթեցի երեք հուժկու սրիկայներու որք անպաշտպան խեղճ էակ մը կը բռնաբարէին . և սակայն հանդարտ ժամանակս հաղիւ թէ կրնայի կրուուիլ այդ երեք աւազակներէն մէկուն դէմ միայն :

« Գարձեալ ասանկ բարկութեան միջոցի մ'էր որ մահուրնէ ազատեցի այն իշխանն որու պաշտպանութեանն յանձնելու զեր էի քեզ ատենով :

« Բարոյական կարգին մէջ վատութիւնը , նենգութիւնը , խաբերայութիւնն կը կատղեցնէին զիս . բայց այդ բարկութիւնն կը մղէր զիս բռնութիւն բանեցնելու այդ վատերուն , նենգաւորներուն և խաբերայից դէմ :

« Աւաղ , զաւակս , այսպէս անաչառաբար ինքզինքս քննելով տեսայ թէ բարկութիւնս միշտ արդարանալի պատճառներ չ'էր ունեցած . օրինաւոր հակասութիւն մը զիս կատաղի ցասման մէջ կը ձը-

գէր : խեղճ մօրդ մահը ասոր մէկ սուկալի ապացոյցն է :

« Վերջապէս , աղջիկս , այսպէս երկարօրէն քննելով ինքզինքս և անցեալն աչքիս առջիւ բերելով , սա եզրակացութիւնն հանեցի :

« Բարկութեան անանկ բուռն կիրք մ'է իմ վրայս որ , միշտ իմ բարոյական և ֆիզիքական ոյժս կը տասնապատկէ :

« Արեան բորբոքումն , բնաւորութեանս կատաղութիւնն , իրենց բարձրագոյն աստիճանին մէջ , մէկ խօսքով՝ Բարկութեան ոյժ մ'է ուրեմն :

« Երբ այս ոյժն վեհանձն պատճառներով երեւան ելնէ , անանկ բաներ ընել կուտայ ինձ , որոց վրայ կրնամ պարծենալ :

« Բայց երբ ընդհակառակն անվայել պատճառներէ դրդուի , վատ ու ոճրագործական բաներ ընել կուտայ ինձ , ինչպէս այն՝ որ կենացս յաւիտենական վիշտըն պիտի ըլլայ :

« Բարկութեան եղաւ իմ կորուստս և յուսահատութիւնս . նա սպաննեց իմ կինս . պէտք է որ , ըսի ինքնիրենս , Բարկութեան իմ և աղջկանս փրկութիւնն ըլլայ :

« Այս խօսքերն անշուշտ տարօրինակ կ'երեւին քեզ , աղջիկս . մտիկ ըրէ՛ :

« Իմ դատաւորական պաշտօնիս մէջ բարկացոտութիւնս ինձ կը մնասէր . իմ բռնաւորութիւնս , միտքս , բարեխառնութիւնս չ'էին համաձայներ պաշտօնիս :

« Ուրեմն պէտք էր անանկ ասպարէզ մ'ընտրէի որ , բնութեանս մոլութիւնն կամ ըսենք , արմատական ոյժն կարենայ ազատօրէն տարածուիլ և օգտակար ըլլալ ինձ , իմիններուս և այլոց :

« Այդ ասպարէզն գտայ :
« Իմ պապս նաւորդ էր , ինչպէս ենք մենք ընդհանրապէս , ծովեզերեայ , Պրիմօնքս :

« Հօրս վատառողջութիւնն չի թողլով որ նոյն ասպարէզն ընդգրկէ , դատաւոր եղեր էր : Բայց ես մեր մենաւոր ծովեղերաց վրայ մեծցայ , և ծովուն տեսքը , մեր ձկնորսներուն բարքն , նոցա չարքաշ , բաղդախնդիր և անկախ կեանքն անջինջ յիշատակներ թողուցին սրտիս մէջ :

« Աննշան պարագայ մը զանոնք արծարծեց և ճակատագրիս երկրորդ բաժինն սկսաւ :

« Ահա՛ ինչպէս :

« Սըկօֆէն , այն հաւատարիմ ծառայն , որ քու ծնիդ տենած է , գիտես որ սովոր է շարունակ մեր երկրին մէկ երկու առածները յառաջ բերել և զանոնք յարմարցընել իր կամ ուրիշին կենաց բոլոր պարագայներուն . այդ ասացուածոց մինսա է .

« Անոսաւ Բայլն , և աղանոցը՝ Կարրակին :

« Մեր երկրին մէջ այս խօսքին տրուած աւանդական նշանակութիւնն , որ ճիշդ կ'երեւնայ ինձ , այս է :

« Ահն ճարդ իւր բնասորսութեան համայն ասպարէզէ մը մէջ պէտք է և կրնայ սպրել :

« Երբ իմ կարողութիւններս ի՛նչպէս գործածելիքս կը խորհէի և աչքիս առջեւ բերելով իմ անցեալս՝ յիշեցի մանկութիւնըս , զոր ծովուն եզերքը անցուցեր էի իմ պապուս քով, Սըկօֆէն , որ զիս յուսահատ տեսնելով՝ երբեք քովէս չ'էր զատուեր , չեմ գիտեր ի՞նչ առթիւ , զրուցեց իր սիրելի առածը :

« Անոսաւ Բայլն , և աղանոցը՝ Կարրակին :

« Այս բառերն զիս խոր մտմտութի մէջ ձգեցին և ճշմարտութիւնն ցուցուցին ինձ :

« ԾՈՎԱՀէ՛ն . ծովահէ՛ն ըլլալ : Երբ այս գաղափարն միտքս եկաւ՝ յոյսէս սարսըռացի :

« Ասի վայրկենական յայտնութիւն մ'էր :

« Ձիս լափույն այն էր թէ ի՛նչի գործածելու էր իմ եռանդս :

« Իմ ուզածս ի՛նչ էր նախ և առաջ . քեզ չքաւորութենէ զերծ ընել , խեղճ զաւակս , քեզ համար երջանիկ կեանք մը պատրաստել , թէ ներկայիդ և թէ՛ ապագայիդ մէջ . վերջապէս անանկ հարստութիւն մը դիզել որ , կարենաս օր մը ուզած անձիդ հետ ամուսնանալ և ընտրած անձիդ անկախութիւնն ու երջանկութիւնըն ապահովել :

« Ուրիշ ի՛նչ կուզէի : Անանկ ասպարէզ մը գտնել , յորում իմ բովանդակ ոյժս իւր ազատ թռիչն կարենայ առնուլ :

« Ծովահէ՛ն , ծովահէ՛ն ըլլալ : Կըրնայի՞ միթէ լաւագոյն գաղափար մը ունենալ :

« Ծովահէններու առած աւարներն շատ հեղ մեծամեծ գումարներ կը բերեն իրենց : Ուրեմն կրնայի օր մը հարստացընել զքեզ , զաւակս :

« Ծովահէնի կեանքն վտանգներու և ոգորմանց կեանք մ'է . կեանք մը որում մէջ քաջութեան կատաղութիւնն , բնաւորութեան բռնութիւնն շատ մարդու տեղ կը բռնէ , վասն զի ծովահէնն գրեթէ միշտ ստիպուած է իրմէ շատուոր թշնամեաց դէմ յարձկել :

« Նորէն կըսեմ , լաւագոյն բան մը կըրնայի՞ գտնել :

« Կուրք , պատերազմն ճիշդ իմ գործս է . դիմագրութիւնը զիս կը կատղեցնէ , վտանգն կը գրգռէ զիս և կ'արհամարհեմ զայն . վտանգին դէմ արիւնս կ'եռայ , չեմ գիտեր ի՛նչ ցնորք կուգայ վրայս և կարծես թշնամեացս թուոյն համեմատ կ'աւելնայ :

« Ամէնն այս չէ . արդէն ըսի քեզ թէ հարստահարութիւնն , նենգութիւնն , անգթութիւնը զիս կը բարկացնեն , և եթէ

ծովահէն ըլլայի՝ որո՞ւ դէմ պիտի կռուէի :
Ատելի երկրի մը դէմ որ , իւր ատելու-
թեամբը , ոսկւովն ու անողոր փառասի-
րութեամբը յարուցած սոսկալի պատե-
րազմներէն ի վեր կատաղութեամբ կը հա-

սերով մեզ սնանկացնելու համար , երբեմն
ալ դահիճ ու բանտապահ կ'ըլլայ մեր քա-
ջազոյն զինուորներն սպաննելու , լկելու
համար , Անկէ՞ դէմ , վերջապէս :

« Ո՛հ , Անկէ՞ » : Դեռ այս ժամն , որ քեզ



Հայրս . ա՛ն , մայրս սպաննողը դուք էիք : (Երես 115) :

լածէր Յուանսան և ամէն ինչ կը գործա-
ծէր անոր դէմ , օրինակի համար , մատ-
նութիւն , նենգութիւն , սուտ , անգթու-
թիւն , բանէ մը չ'ընդգրկիր , օր մը դրա-
մանենգութիւն կ'ընէ կեղծ դրամատում-

կը գրեմ , թէեւ չափազանց յուսահատ եմ ,
սակայն լսելով այդ երկրին անունը , զոր
կատաղորէն կատեմ իւր վերջին նենգու-
թենէն ի վեր , որու զոհ պիտի երթայիր
քիչ մնաց , բարկութեան հուրն այտերս

կ'այրէ, ներսիդիս ամէն բան կը յուզուի ու կը բորբոքի, կատաղութիւնս կ'արթըննայ և . . .

« Բայց ներէ՛, ներէ՛, զաւա՛կս, ներէ՛ որ իմ ցամաքս կը վշտացնեմք ու անուշ և փափուկ հոգիդ, այդ սիրալիր և անմեղ հոգին, որ ատելութիւն չի ճանչնար և չարիքէ զատ ուրիշ բանէ մը զգուանք չզգար :

« Սակայն պէտք էր հասկցնէի քեզ թէ ի՛նչ պատճառներով որոշեցի մտնել իմ առջեւ բաց գտնուած միակ ճանքուն մէջ, վասն զի այդ ճանքուն մէջ միայն կրնայի ազատ ասպարէզ տալ իմ բնական անդուսպութեանս :

« Որոշումս ընելով, քնացած ատենդ վերջին անգամ մ'ալ համբուրեցի և արտասուքս թրջեցի զքեզ ու Սըկօֆէնի հետ մեկնեցայ . . . »

Օնէզիմի ընթերցումս ընդմիջուեցաւ սրտակիզիք հառաչանքով մը, զոր Սապին չի կրցաւ զսպել :

ԻԲ .

Սապին իւր հօրը նամակին առաջին տողերն լսած ատեն խիստ այլայլեր էր, մանաւանդ որ Օնէզիմ սրտաշարժ ձայնով մը կը կարդար զայն :

Քլօարէքի պարզ ու անկեղծ խոստովանութիւններն, բարկութեամբ կնոջը մահուանն պատճառ ըլլալուն համար զգացած խղճի խայթերն, իւր ոճերն քաւելու կամ թէ ըսենք, աղջկանն ապագայ երջանկութեանը համար, իւր ներսիդին զգացած անդուսպ եռանդն օգտակար ընելու որոշումն, հայրական սէրն, որ ամէն որոշմանցն նախազահեր էր, ամէն

ինչ Սապինի սիրտն կարեկցութեամբ կը ընուր այնպիսի աղէտից համար, որոց գլխաւոր պատճառն էր հօրը բնաւորութեանն եռանդը :

Սըկօֆէն, Սիւզան և Օնէզիմ խեղճ աղջկան այսպէս զգածուիլը տեսնելով՝ յուսոյ նշոյլ մ'ունեցան :

Թնդանօթապետն ու խնամածուն նըշանակիչ ակնարկ մը փոխանակեցին, որ ըսել կ'ուզեր թէ՛ այս ընդհատմանը միջոցին ձայն հանելու չէր և ձգելու էր որ Սապին իւր խորհրդածութեանց տպաւորութեանը ներքև մնայ :

Քանի մը վայրկեան վերջը Սիւզան իւր քեռորդւոյն ականջն ի վար ըսաւ ցած ձայնիւ .

— Ձի յուսահատինք : Շարունակէ՛, շարունակէ՛, տղաս :

Օնէզիմ այսպէս շարունակեց :

« Սըկօֆէն և ես Տիէբ գացինք : Այն ատեններն ամենէն բաղդախնդիր ծովահէնք անկեց ճանբայ կ'ելլէին, և երկուքըս ալ նաւ մը մտանք երբեւ պարզ նաւաստի : Պէտք էր այս արուեստին աշկերտութիւն ընէի :

« Այսպէս քանի մը արշաւանքներ ըրինք : Մեր հանգստեան կամ դադարի ժամանակներուն յարատելութեամբ շափաղխտութիւն և նաւային արուեստին տեսութիւններն կը սորվէի, որպէս զի երբ գործնական փրձոռութիւն ունենամ, կարենամ նաւու մը հրամանատարութիւն ընել :

« Այս աշկերտութիւնն երկու տարի տեւեց, և այդ միջոցին շաա արիւնահեղ կռիւներ ըրինք :

« Գուշակած » եղաւ :

« Այս վտանգներու և կռիւներու կեանքն իմ տարրս էր : Երբ անկլիացւոց

վրայ յարձկելու ատենն կուգար, սոսկալի Բարկութեան մը բոլոր նշաններն կզգայի: Երբ մէկ մը կուին սկսէր, այդ կատաղութիւնն շանթի նման կը պայթէր և ոյժս կը տասնապատուէր:

« Բան մը կայ որ տարօրինակ պիտի երեւի քեզ, աղջիկս, և սակայն այն ալ անբացատրելի չէ:

« Երբ այսպէս ազատ թռիչ տայի իմ եռանդիս, երկար ատեն աւելի հանգիստ և խաղաղ կզգայի ինքզինքս:

« Այնպէս որ կենաց սովորական յարաբերութեանց մէջ այն դժկամակութիւնք, և ջնջին դիմադրութիւնք, որք ատենով զիս կը կատարեցնէին, ամենեւին ազդեցութիւն չէին ըներ իմ վրայս. և քանի մը տարիէ ի վեր շատ հեղ դու ինքքդ իմ բնաւորութեանս անուշութիւնն ու համբերութիւնս գովեցիր, զաւակս:

« Այս փոփոխութիւնն արդեօք տարիքս առնելու վերադրենք: Զգիտեմ, բայց կարելի ալ է որ բարկացոտ մարդիկ ալ ճիշդ այն կրակոտ և եռանդուն ճիերուն պէս են, որք անգործութեան մէջ աննուաճ և վտանգաւոր կ'ըլլան, բայց պատերազմի և որսի մէջ աննման են, վասն զի հոն կրնան իրենց բովանդակ եռանդն սպառել:

« Չեմ ուզեր տխրեցնել զքեզ, զաւակքս, պատմելով ինչ որ այլք քու հօրդ յաղթանակներն կը կոչեն:

« Միայն սա կ'ըսեմ թէ երկու տարի իբր նաւաստի ծառայելէ վերջն՝ առաջարկեցին որ նշանաւոր ծովահէնի մը երկրորդն ըլլամ:

« Տասն և ութ ամիս ալ այս պաշտօնը վարելով այնքան համբաւ ստացայ որ, նաւատէր մը առաջարկեց ինձ զիս իւր ԹԻՉՅՆ ՏՄՆՃԷՐ նաւուն հրամանատար կարգել: Այն օրէն ի վեր միշտ իբր նա-

ւապետ ծառայեցի և իմ հրամայած առաջին նաւուն տարօրինակ անունն կրեցին նաև բոլոր միւս նաւերս:

« Դիպուածն այնպէս բերաւ որ երբէք չվիրաւորուեցայ. առաջին վերքանցեալ իրիկուն ընդունեցի, երբ քեզ օգնութեան եկայ:

« Չեմ համարձակիր խոստովանիլ թէ այնքան արիւնահեղ ճակատամարտներէ անվնաս ելլալս ինչ քանի կը վերադրեմ. . . . վասն զի հարկ պիտի ըլլայ մօրդ անունն յիշել և այս բանն քու ցաւերդ պիտի նորոգէ:

« Ազնիւ Սըկօֆէն երբէք ինէ չի զատուեցաւ. իւր քաջասրտութեամբն ու բընական պաղարիւնութեամբն սքանչելի թնդանօթապետ մ'եղաւ, վասն զի այս արուեստն ընելու համար՝ կուռի խառնակութեան և վտանգներուն մէջ չի դողալ և ճիշդ նշանն առնել պէտք է:

« Դժբաղդարար բաղդն, որ միշտ կը պաշտպանէր զիս, աննպաստ գտնուեցաւ Սըկօֆէնի. շատ մը ծանր վէրքեր առաւ և մեր վերջին ճակատամարտին մէջ ինձի հետ թշնամի նաւը ցատկած ատեն, նիզակի մը հարուածով մէկ աչքը կորոյս, անկարելի է բացատրել քեզ, աղջիկս, այն աղնիւ մարդուն հիանալի անձնութիւնն. նա այլ եւս ծառայ մը չէ ինձ համար, այլ բարեկամ մը:

« Այս պատերազմներուն մէջ մեծամեծ կողոպուտներ ունեցայ և կրցայ քու վիճակդ ապահովել և կարելի եղած բարեկեցութիւնն շնորհել քեզ, ինչպէս որ կը յուսայի:

« Վերջին բացատրութիւն մ'ալ, աղջիկս,

« Դիտեմ ինձ համար ունեցած սէրդ, առաջին անգամ քովդ վերադառնալուս նշմարեցի թէ, խեղճ մօրդ մահուանն ատեն սաստիկ վախնալով, տեսակ մը ջղա-

յին հիւանդութիւն մնացեր էր վրայդ . որով շատ հեղ աղամայ սոսկմանց ենթակայ կ'ըլլայիր . վերջապէս գիտէի որ դու ալ, իմ խեղճ ժէննիիս պէս, չափազանց դժբախտն ես . ուստի Սըկօֆէնի հետ միաբան որոշեցինք իմ վտանգաւոր արուեստս չ'իմացնել քեզ . վասն զի քեզ համար, սիրելի՛ զաւակս, շատ ծանր պիտի ըլլար շարունակ անհանգստութեանց և վախերու մէջ մնալ, զորս պիտի աւելցնէր նաեւ իմ վրայս ունեցած որդիական սէրդ :

« Ուստի որոշեցինք որ քեզ և Սիւզանի ըսենք թէ մենք կերպասեղէնի առեւտրով կզբաղինք . այնպէս մը կարգադրեր էի որ քու ինձ դրկելիք նամակներդ Տիէրգան . երբ արշաւանքէ մը հոն վերադառնայի, այդ նամակներն կ'առնէի և իմ նամակներուս վրայ այլ և այլ տեղերու անունն կը գրէի :

« Ահա այսպիսի մանրամասն զգուշութիւններ կը տանէի գաղտնիքս քեզ չ'իմացնելու և քեզ կասկած չտալու համար :

« Ներէ՛ սուտերուս, վասն զի կը տեսնես թէ նոքա կարեւոր էին :

« Երկու տարի առաջ բժիշկներն ըսին ինձ թէ ծովեզերեայ օդն օգտակար կ'ըլլայ քու առողջութեանդ . Օրլէանէն բերել տուի զքեզ . այդ տունն գնեցի և քեզ մէջը տեղաւորեցի : Այդ գիւղն Տիէրէն բաւական հեռու գտնուելով, իմ գաղտնիքս հաւատարմաբար պահուեցաւ ցայսօր, ի շնորհս իմ Անտի-Էնի նաւապետ անուանս . երբեք քու և Սիւզանի մտքէն չ'անցաւ թէ այն ահարկու ծովահէնն, որու արիւնահեղ յաղթութիւններն այնքան վախ կը պատճառէին քեզ, քու հայրդ, Իվօն Քլօարէքն էր :

« Հիմայ, սիրելի՛ զաւակս, ամբողջ կեանքս իմացար . այս խոստովանութիւններն քու որոշումդ փոխելու համար չ'եմ

ըներ : Կզգամ թէ յայսմհետէ իմ ներկայութիւնս անտանելի է քեզ . բայց չ'եմ ուզեր իմ վարմանցս գաղտնիքն չի յայտնած բաժնուիլ քեռէ :

« Հիմայ առ յաւէտ մնաս բարո՛վ, անո՛ւշ և սիրելի՛ զաւակս :

« Իմ վերջին մխիթարութիւնս սա է որ քեզ երջանկութեան միջոցներ կը թողում : Ազնիւ մարդ մը կը սիրես, նա եւս զքեզ կը սիրէ . ընտրած սիրտդ վեհանձն ու բարի սիրտ մ'է : Սիւզան քու երկրորդ մայրը պիտի ըլլայ և իմ բարի ու հաւատարիմ Սըկօֆէնս ալ քեզ կը ձգեմ :

« Ամուսնութեանդ հարկ եղած հրամաններն տուի իմ նօտարիս :

« Կուզեմ որ ամուսնութիւնդ կատարուի յառաջիկայ ամսուան առջե՛ս օրը, որպէս զի կարենամ գեթ հեռուէն մաղթանքներ ընել քու երջանկութեանդ համար :

« Մնաս բարո՛վ, առյաւէտ մնաս բարո՛վ պաշտեցեալ աղջիկս, աչքէս արցունքներ կը վազեն : Ա՛լ չ'եմ կրնար գրել քեզ, մնաս բարո՛վ :

« Հայրդ որ ամէն ատենուան պէս կը սիրէ զքեզ :

Իվօն Քլօարէք

« Սըկօֆէն պիտի ըսէ քեզ իմ աճապարանօք Հավրը երթալուս պատճառն, և թէ ի՛նչպէս կրցի ժամանակին հասնիլ զքեզ այն թշուառականաց ձեռքէն ազատելու համար : »

Այս նամակին ընթերցումէն յետոյ, որու վերջին մասն ստեպ ընդհատուեցաւ Օնէզիմի և ունկնդրաց արտասուելովն, Սապին, գեղնած և սաստիկ գորոված, դէմքը ձեռքերուն մէջ ծածկեց և հեղձամիտ կ'հեծկլտանքներ արձկեց :

Սըկօֆէն նորէն ակնարկ մը փոխանակեց Սիւզանի հետ, և այլայլութիւնն զրսպելով՝ ըսաւ .

— Հիմայ, օրիորդ, եթէ կը բարեհա-
ճիք երկու խօսքով բացատրեմ՝ ձեզ թէ Պ.
Իվօն ի՛նչպէս ժամանակին հասաւ ձեզ
փրկելու համար :

Սապին պատասխան չտալով, թնդա-
նօթապետը շարունակեց :

— Անցեալ օրուան տեսած դեր մար-
դերնիդ, օրիորդ Սապին, մեր նաւատէրն
էր : Եկեր էր Պ. Իվօնն համոզելու որ նոր
արշաւանքի մ'երթայ . խնդրոյն մէջ երկու
միլիոնի աւար մը և փափաքելի ճակատա-
մարտ մը կար . բայց Պ. Իվօն մերժեց,
վասն զի ձեզի խօսք տուեր էր որ ա՛լ քո-
վերնուդ չի հեռանայ, այն ատեն նաւա-
տէրն ըսաւ ձեր հօրը թէ՛ նաւաստիք հոս
պիտի դան զինքը կամայ ակամայ տանե-
լու : Ուստի Հավրը դացինք, որպէս զի մի՛
գուցէ անոնք ելլեն դան և դուք ամէն
բան իմանաք . մեր երկկայմն հոն էր . նա-
ւաստեաց մէկ մասն գինետուն մը ժող-
վրվեր էին : Պ. Իվօնն ի՛նչ ուրախութեամբ
ընդունեցին : Վերջապէս, օրիորդ, կար-
ծես խենթեցեր էին, և ամէն ատեն զին-
քը տեսնելուս միեւնոյն բառը կ'ընէին .
վասն զի հայրերնիդ ո՛րքան որ սիրելի է
իւր տան մէջ, նոյնքան ալ սիրելի է այն
դժոխային ծովահէններուն, որովհետեւ
անաչառ, արդար, բարի և գթասիրտ է :
Անկլիոյ մէջ շատ մը վաճառականական
նաւուց նաւապետներ կան, զորս Պ. Իվօն
բռնած և ապա ազատ ձգած է, տալով ա-
նոնց իրենց անձնական ստացուածքն, զի-
տէ՛ք ինչու . վասն զի հայրերնիդ ամենէն
առաջ սա հարցումն կ'ընէր գերիներուն :

— « Աղջիկ ծ'անէ՛ք : »

— Եթէ ո՞ր պատասխանէին, շարու-
նակեց Սրկօֆէն՝ կարծես առանց նշմարե-
լու Սապինի մէկ շարժումն : Եթէ ո՞ր պա-
տասխանէին՝ գործերնին աղեկ էր և Պ.
Իվօն կ'ըսէր ինձ .

— « Ես ի՛մ փորիկ Սապինն շատ կը սիրե՛մ և
չե՛մ ուզեր աղջիկ ծ'անեցողն քերէ պահել : »

— Ս, յսպէսով, օրիորդ Սապին, առանց
գիտնալու շատ մը անկլիացի հայրերու և
աղջիկներու երջանկութեանը պատճառ ե-
ղած էք : Բայց, ներեցէ՛ք, խնդիրն այս
չէ, Պ. Իվօն ծովահէններուն քով գնաց
ըսինք, որք առաջ շատ ուրախ էին, բայց
մէկէն ի մէկ կատղեցան, երբ իմացան թէ
չ'ուզեր իրենց հետ արշաւանքի սկսիլ : Ա-
մէնքը մէկ բերան կը պօռային . — « Կողո-
պուտէն մեզ ինկած բաժինն ալ նաւապե-
տին կը թողունք : Մենք ստակի համար չէ
որ կուզենք կուսիլ, այլ սա գետին անց-
նելիք Բանաստեանաց ճարակարարը ձեռք ձգելու
համար : » (Ս, յսպէս կը կոչէին այն անկ-
լիացի անվեհեր նաւապետն, որու նաւուն
դէմ պիտի յարձկէին :) Օրիորդ Սապին,
ես Պ. Իվօնը շատ վտանգներու մէջ տե-
սեր էի, օրինակի համար անգամ մը որ
թէ՛ փոթորիկ կար, թէ՛ նաւերնիս բռն-
կեր էր և թէ՛ թշնամւոյն դէմ մարտնչել
պէտք էր . բայց երբեք անցեալ իրիկուան
չափ քաջութիւն ցոյց չէր տուած, երբ
մերժեց այս փառաւոր ձեռնարկն՝ ձեզի
խօսք տուած ըլլալուն համար :

— « Ա, յո՛, ըսաւ ինձ, աղջկանս խօսք
տուի իբրեւ հայր : Ասի պատուոյ վրայ խոս-
տանալէ աւելի սրբազան է : » — Ամէնն
այս չէ : Պ. Իվօնի մերժումն այնքան կատ-
ղեցուց նաւաստիներն որ ամենէն յանդը-
գունք համարձակեցան ըսել ձեր հօրը թէ՛
եթէ մերժէր, պիտի կարծէին որ կը լե՛ւ-
նար կուսելու այն անկլիացի հռչակաւոր նա-
ւապետին հետ : Պ. Իվօն վախնա՛ր . . .
Ա, յն ատեն, օրիորդ Սապին, հայրերնիդ
գիտէ՞ք ինչ ըսաւ ինձ տխուր ժպտով մը,
զոր երբեք չպիտի մոռնամ :

— « Առաջին անգամն է որ աղջկանս
համար ունեցած սէրս կը փորձուի . հի-

մայ կ'երգնում թէ չկայ հայր մը որ ինձի չափ սիրէ իւր աղջիկը : »

— Ո՛հ, ո՛չ, գոչեց Օնէզիմ եռանդեամբ, աւելի քաջ և սիրալիւր հայր մը չկայ աշխարհի վրայ :

— Շարունակեցէ՛ք, շարունակեցէ՛ք : Սրկօֆէն, ըսաւ Սապին, որու այլայլութիւն ու խանդաղատանքն անբացատրելի կ'ըլլային :

— Պ. Իվօն երբ այս յանդիմանութիւնն լսեց, պազարիւնութեամբ պատասխանեց թէ իր որոշումն տրուած էր. այն ատեն ուրիշ տեսարան մը բացուեցաւ : Մովահէնք գոչեցին. « Նաւապետը բռնի նաւ տանինք, տեղակալը ճամբան կը շարունակէ, և երբ մի անգամ բանտանաւուց մատակարարին դէմ գտնուինք, նաւապետն անշուշտ իր որոշումը կը փոխէ : »

— Թէև ես ու ուրիշ մէկ երկու հոգի ջանացինք խօսք հասկցնել այս խենդերուն, բայց չեմ գիտեր թէ ի՞նչ պիտի պատահէր, երբ նաւահանգստի պաշտօնակալաց մին, գիտնալով որ թիւզ «Անֆէրի» նաւապետն այն գիտնետան մէջ էր, վազելով եկաւ իմաց տալ Պ. Իվօնի թէ ձկնորսի նաւ մը ըսեր էր որ կասկածելի երեւոյթով մեծ միակայմ մը ծովեզերաց դէմ կը նաւէր, և կարծես կուզէր ցամաքին մօտենալ, ինչպէս որ քանի մ'օրէն ի վեր այդ բանն պատահեր էր ուրիշ տեղուանք : Նաւահանգստի պաշտօնակալն եկեր էր թիւզ «Անֆէրի» նաւապետին հրամայելու որ երթայ այդ միակայմին վրայ յարձկի, եթէ իրաւցնէ նորա գիտաւորութիւնն գէշ է, որովհետև ուրիշ պատերազմիկ նաւ չկար նաւահանգստին մէջ : Պ. Իվօն պարտաւոր էր հնազանդիլ, վասն զի ասի երկիրը պաշտպանել էր : Մակոյկներուն գլուխը

վազեցինք և մեր երկկայմն ելանք. հովը յաջող էր. խարխալը քաշեցին և ծովեզերքն ի վեր սկսանք նաւել միակայմն գտնելու համար : Հոս, օրիորդ Իվօն, այնպիսի բան մը պիտի ըսեմ ձեզ. զոր Պ. Իվօն չէ յամարձակեր խոստովանիլ իւր նամակին մէջ, միայն սա չափ յիշելով որ երբեք չվիրաւորվիլն անպաշտական գաղտնարի մը կը վերադրէ. պէտք է գիտնաք, օրիորդ, թէ ձեր խեղճ հօրը կեանքը գողցես երկու մասի բաժնուած է. մին բոլորովին երջանիկ, այն է ձեր քովեկզած ատենն կամ ինձի հետ ձեր վրայօք խօսած ժամանակն. միւսն բոլորովին վըշտակիր, այն ալ երբ ձեր սիրելի մօրը վրայ կը մտածէր, զոր ձեզի չափ կը սիրէր. արդէն Սիւլան և ես հազար անգամ ըսած ենք ձեզ այս բանն : Վերջապէս գիտնալու էք որ նորա մեռած իրիկունն տարօրինակ հագուստներ հագեր էր՝ ծպտեալ պարահանգիսի մը երթալու համար :

Ինքը շատ փոքր ըլլալով այն ատեն չի կրցիք ճանչնալ զինքը : Երբ այս աղէտէն վերջն նաւաստի գրուեցանք ծովահէնի նաւերու մէջ, ուր ամէն մարդ ուղածին պէս կը հագնուի, Պ. Իվօն ըսաւ ինձ. « Քանի որ գործած մէկ սփիւս քաւելու համար նաւաստի եղայ, կուզեմ ծովու վրայ եղած ատենս միշտ այն հագուստներն հագնիլ, նոքա նուիրական եղան ինձ համար. վասն զի վերջին անգամ իմ մահամերձ կինս թեւերուս մէջ սեղմած աղետաբեր գիշերս այնպէս հագուեր էի : — Անկեց վերջն Պ. Իվօն ըսածն ըրաւ հակառակ իմ աղաչանացս, վասն զի անկիոյ մէջ համբաւ ելլելով թէ Անֆէրի նաւապետն Պրըթոնի հագուստ կը հագնէր, միշտ կատաղութեամբ Պ. Իվօնի վրայ կրակ կ'ընէին, վասն զի զգեստներ

րէն կը ճանչէին զինքը : Արդ , օրիորդ Սապին , թէև հայրերնիդ մեզմէ շատ յանդրդնօրէն կը կռուէր . բայց բնաւ չի վերաւորուեցաւ . և որովհետև մեր արուեստին մէջ քիչ շատ սնապաշտ կ'ըլլայ , Պ. Իվօն վերջապէս հաւատաց թէ մեր ազգային հագուստն պաշտպանողական յատկութիւն մ'ունի : Մեր նաւաստիք ալ կը երեւակայէին թէ այդ զգեստներն նաւուն բաղդը կը բանար և Պ. Իվօնի վրայ այնքան վստահութիւն չպիտի ունենային , եթէ ուրիշ հագուստներով հրամայէր իրենց . ասոր համար Պ. Իվօն երբ երկկայմն ելաւ միակայմին դէմ՝ քալելու համար , իւր զգեստներն հագաւ , չի կարծելով որ անկեց ուղղակի իր տունն պիտի երթայ :

Երեք քառորդէ ի վեր ծովու վրայ էինք , երբ ծովեզերքէն մեծ կրակ մը տեսանք մէկէն ի մէկ : Պ. Իվօն նաևն այն կողմը դարձուց , Տարակոյս չկար , իր տունըն էր որ կ'այրէր : Գրեթէ անմիջապէս տեղական գիշերային հեռադէտ մ'առնելով՝ տեսաւ որ միակայմն պարայի ծովեզերքին դէմ կայներ էր և իւր մեծ նաւակներն ցամաքին եզերքն էին , ուր հաներ էին անշուշտ անկլիացիներն : Այդ տեղն ասկից կ'երեւնայ . Պ. Իվօն վախնալով՝ անմիջապէս մակոյկ մ'իջեցնել տուաւ և ինձի ու քսան հոգւոյ հետ մէջը նետուեցաւ : Մէկ քառորդ վերջը հոս էինք , Պ. Իվօն առաջին անգամ ըլլալով վիրաւորուեցաւ՝ ոտքին տակ փռելով այն աւազակաց զլուխն , Բուսէլ նաւապետը , որ արդէն Պ. Իվօնն գողնալու փորձ մ'ըրեր էր , զոր լրագրին մէջ կարդացիր . ձեր հօրմէն վիրաւորուելով և Տիէրի մէջ բանտարկեալ մնալով , փախչելու և այս նոր նենգութեան ձեռնարկելու միջոցը գտեր էր : Ահա՛ , օրիորդ , ճշմարտութիւնն : Հայրերնիդ շատ տառապեցաւ այս երեք աւուր մէջ և գեռ

այս ոչինչ է մինչև ձեր ամուսնութեան օրն քաշելիք տառապանաց բաղդատմամբ , վասն զի անկեց վերջը , գիտնալով որ դուք երջանիկ էք և ա՛լ եւս տառապանաց դիմանալու ոյժ չ'ունենալով . . . :

— Հա՛յրս , գոչեց Սապին ցաւէն անձկութենէն եւ գորովանքէն դողդղալով , հա՛յրս ո՛ւր է :

— Օրի՛որդ , ըսաւ Սըկօֆէն յոյսէն սարսըռալով , չ'եմ գիտեր թէ . . . :

— Հա՛յրս . . . կրկնեց աղջիկը , հո՞ս է :

— Թերեւս հեռուն չէ , պատասխանեց Սըկօֆէն՝ ուրախութենէն խենթեանալով , բայց եթէ գալու ըլլայ , մէկ մ'ալ չ'երթար :

— Ո՛հ , թո՛ղ ներէ ինձ որ պահ մը չի ճանչցայ իմ վրայս ունեցած սէրն և իւր ապաշխարանքն : Թող ներէ՛ ինձ և ամբողջ կեանքս իրն ըլլայ : Կը լուէ՛ք , կուլա՛ք ամէնքդ . աչքերնիդ այս կողմ կը դառնան . հո՞ն է , ո՛վ երկինք , հա՛յրս հոն է , գոչեց Սապին ուրախութեամբ վաղելով դէպի քովի սենեկին դուռը :

Այդ դուռն մէկէն ի մէկ բացուեցաւ : Հայր ու աղջիկ անբացատրելի գրկախառնութեամբ մը միացան :

.

Ամիս մը վերջը Պ. Իվօն Քլօարէրի ձեռքին տակ կրկնակի ամուսնութեամբ մը Սիւզան՝ Սըկօֆէնի և Սապին՝ Օնէզիմի հետ կ'ամուսնանային :

Հռչակաւորն տօբթօր Կասթէրինի , որ ծովահէնին հետ բարեկամ , և ո՛րքան մեծ բժիշկ՝ նոյնքան ալ մեծ որկրամուկ էր , հրաշալի բժշկութիւն մը գործելով՝ Օնէզիմի աչքերն շտկեց :

Պատարագէն վերադառնալնուն Սըկօֆէն յաղթական կերպով մը ըսաւ Սիւզանի :

— Է՛յ , սիրելիս , իրաւունք ունի՞մ ե-

ղեր քեզ ըսելու թէ՛ Ըստիւ՛ն կ'ըլլայ, դուք
օր մը տիկին Սըկօֆէն պիտի ըլլաք: Հի-
մայ եղա՞ք թէ չէ:

— Ի՛նչ ընեմ, անիծա՛ծ մարդ, պա-
տասխանեց տիկին Սըկօֆէն հեգնական

ժպիտով մը, թէև այնքան կը հպարտա-
նար իւր ամուսնայն թեւն ըլլալով, որքան
որ պիտի հպարտանար եթէ Մեծ Բանակն
դէպքանց մէկուն հետ ամուսնացած ըլլար,
պէտք է համակերպիլ, ելածը ելած է:

1901
1902
1903

2013

